Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2864

Lcuu
953

2013
PA
953
324

ԳԷՈՐԳ ՋՈՒԲԱՐ.

ՎԷՊԵՐ

ԵՒ

ՊԱՏԿԵՐՆԵՐ

БИБЛИОТЕКА ЛАЗАРЕВСКАГО ИНСТИТУТА
1746
2864
2864

ՌՈՍՏՈՎ (Դօնի վերայ)
ՏՊԱՐԱՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՏԷՐ-ԱԲՐԱՀԱՄԵԱՆ
1889.

ԱԶԳԱՅԻՆ
953-2013
Հ.Ք.948

Дозволено Цензурою. С.-Петербургъ, 26 Августа 1888 года.

ԻՒՐ ՍԻՐԵԼԻ ԵՂԲՕՐ

Ի. Մ. ՇԱՊՇՆԻԿԵԱՆՑԻՆ

ՆՈՒԻՐՈՒՄ Է

ՀԵՂԻՆԱԿԸ

ՆԻՒԹԵՐԻ ՑԱՆԿԸ·

1) *Բարեգործներ* . . . . 1—146

2) *Մի վարդի պատմութիւնը* . . . . 147—158

3) *Մահտեսի Սարգիս* . . . . 159—263

4) *Նա սպասում է դեռ* . . . . 264—282

5) *Ցիմար ուչխարներ* . . . . 283—289

6) *Մոռացուած շուն* . . . . 290—292

ССР

ԲԱՐԵԳՈՐԾՆԵՐ

(Վէպ հայկական կեանքից).

Ա·

Սուրբ Լուսաւորիչ եկեղեցու զանգակի վերջին հնչիւնը տարածուելով Նոր-Նախիջևանի վերայ, վերջապէս անհետացաւ երեկոյեան մթնոլորտի մէջ։ Այդ միջոցին քաղաքի խուլ փողոցներից մէկում երևեցան մի քանի պառաւներ։ Ոտից մինչև գլուխ սև հագնուած, մեծ երկար փայտերը ձեռքերին, նրանք կանգ առան մի քանի վայրկեան իրենց բակերի դռների մօտ, սրբեցին կարծես միշտ արտասուող աչքերը, լրջօրէն մի քանի անգամ նայեցին դէս ու դէն, բարևեցին միմեանց և փոքրիկ քայլերով, սոէպ տնքալով ուղևորուեցին դէպի եկեղեցին։ Այդ օրուայ առաւօտեան ժամը 4-ին աւանդել էր իւր հոգին քաղաքիս բարեգործ տղաներից մէկը և երեկոյեան նրա մարմինը պատուով պիտի բերուէր Լուսաւորչի եկեղեցին։ Ժամը 10-ին այդ լուրը արդէն յայտնի էր ամբողջ քաղաքին։

Հանգուցեալ Մկրտիչ աղայի բարեգործութիւնը ուղիղ հայկական էր. ամեն տարի քաղաքի 7 եկեղեցիներից ամեն մէկը ստանում էր Մկրտիչ աղայից կամ մի գեղեցիկ պատկեր, կամ վարագուրի մահուդ և կամ վերջապէս մի ոսկեզօծ ջահ։

Այդ հասարակական բարեգործութիւնից ջոկ, Մկրտիչ աղան տարէնը մի քանի անգամ աղքատների համար

«Ժամ պատարագ» էր անում, մատաղ էր պատրաստում և աղքատներից ամէն մէկին 5 կոպէկ փող և մի գաթա ու ճրագ տալով, նա կարծում էր, որ կատարել է իւր կեանքի բոլոր պարտականութիւնները, հանգստացրել է իւր խիղճը և ուրեմն կարող է պարզերես նայել ամէնքի աչքին...։ Այդ ժամանակ հայ հասարակութիւնը դեռ շատ մութ և շփոթ կերպով սկսել էր հասկանալ ուսման կարեւորութիւնը, ուսումնարանների անհրաժեշտութիւնը. այն էլ, եթէ հասկացել էր հասարակութեան երիտասարդ մասը, իսկ ծեր մնացին ուրեմն Մկրտիչ աղաները։ Վերջինների համար պապերից աւանդած եկեղեցին և նրա բարեպաշտութիւնը կազմում էին կեանքի բոլոր նպատակը...

Եկեղեցին լի էր բազմութիւնով, ժողովրդի մի մասը տեղաւորուել էր սանդուղքների վերայ, ժամասացութիւնը դեռ սկսուած չէր, և սպասում էին հանգուցեալի յուղարկաւորութեանը։ Ծերունի ժամկոչ Պետրոսը ստէպ ստէպ մօտենում էր եկեղեցու դռներին և ձեռքով ծածկելով աչքերը մայր մտնող արեգակի ճառագայթներից, նայում էր դէպի փողոց։

«Ջին էրնալ *)... ժամանակը անցաւ... ասում էր նա կարծես ինքը իրեն։

—Հա... խորթ է... ես ալ կը զարմանամ, որ աւքան ուշացան, պատասխանեց Պետրոսի հարեան Կարապետ կօշկակարը։

—Բարիրկուն, դարձաւ ժամկոչը նկատելով Կարապետին, դուն ա՛լ աս տեղիս։

—Հապա վրանէս պի՛տ՝լամ ասօրուայ օրս, անբաւական ձայնով պատասխանեց Կարապետ կօշկակարը.—

*) Վիպասանութեան մէջ ստորին դասակարգը խօսում է Նոր-Նախիջեւանի բարբառով.

Մկրտիչ աղային ալ սև օրին չգայինք, առանց չըլտնուէինք, Եր պիտ գայինք հապա։

—Խորթ կասիս, տղայ, խորթ... աղէկ մարդ էր, շատ աղէկ.. Աստուած օղորմէ հոգուն, լուս ինչնի գերեզմանը...։ Մկրտիչ աղային պէս մարդիկ չկան աահա, չմնացին, ասում էր ժամկոչը, կարծես աշխատելով ուղղել իւր առաջի սխալը։

—Հա՛, հա՛... նկատեց Կարապետը և շատ ջեռմեռանդ կերպով խոնարհեցրեց իւր ալեզարդ գլուխը։

—Կը բերէն... կը բերին... աղային կը բերին», լսուեցաւ այդ միջոցին ամէն կողմից։ Եւ իրաւ, որ այդ րոպէին փողոցում երեւցան նախ խաչվառները, յետոյ դագաղի խուփը և վերջապէս քահանաների և տիրացուների մի շարք և հանգուցեալի դագաղը, որի ետևից գալիս էր ժողովուրդի խուռն բազմութիւնը։ Յուղարկաւորութիւնը դանդաղ մօտեցաւ եկեղեցու բակին. լսուեցան զանգակի ձայները և կանացի լացը, հանգուցեալին տեղաւորեցին եկեղեցու մէջ տեղը և ժամասացութիւնը սկսուեց։

«Կեանքը հէչ գին չունի էղիլէ տա, եր Մկրտիչ աղան ալ մեռաւ, դարձաւ մի դեռ բաւականին երիտասարդ կին իւր հարեան պառաւին.

—Հա... պալաս... փուչ է, փուչ մեր կեանքը, պատասխանեց պառաւը, չը գիտեմ ինչի մօտեցնելով թաշկինակը իւր բոլորովին ցամաք աչքերին։

—Աղէկ մարդ էր... Աստուած հոգին լուսաւորէ, նըկատեց երիտասարդ կինը՝ խաչակնքելով իւր երեսը։

—Հէպէթ... նա էր, որ նորցուց սուրբ Նիկողոսի մատուռը, բաշխեց Աստուածածնի վարագոյրը, հեռու տեղէն բերից աս ջահը. էհ, ո՛ր մէկն ասիմ... հէպէթ աղէկ մարդ էր, խղճմտանք ունէր... ժամասէր էր... չինտխլաններէն չէր, աւելցուց պառաւը՝ կրկին սրբելով իւր աչքերը։

—Շատ բան ունի ալլէհալէմ Մկրտիչ աղան. լսվում էր մի ուրիշ տեղում, ուր կանգնած էին մի քանի վաճառականներ։

—Նա չունենայ ու, վօվ պիտ ունենայ. թէմիզ ստակ, մէկ 100,000 կըլայ քօմը, էկէր աւելի չէ նէ. նկատեց նրանցից մէկը։

—Չէ, տահա ի՞նչ... 60,000-էն աւելի չիլայ, պատասխանեց միւսը։

—Չէ... չէ... 100,000 վեռնի կայ, մէջ մտաւ երրորդը և վաճառականների մէջ վէճ ծագեց Մկրտիչ աղայի հարստութեան մասին։

—Չէ՞ք իմանում, հանգուցեալը չա՞տ պարտք ունի, հարցնում էր մի վարչութեան քարտուղար մի պարոնից.—ասում են մօտ 20,000-ի։

—Սուտ է... որքան ինձ յայտնի է, նա մի տարի սրանից առաջ վճարեց բոլոր իւր պարտքերը և եթէ դեռ մնացած լինին, երևի մի չնչին բան պիտի լինի մնացած. վճռողաբար նկատեց մի պարոն։

—Այդեօք ի՞նչ կերպ է գրել կտակը... տեսնես բոլորը եկեղեցիներին է նուիրել, թէ քաղաքիս էլ մի բան զոհել է, նորից հարցրեց քարտուղարը։

—Յայտնի չէ... վաղը պիտի կարդացուի կտակը, կիմանանք. պատասխանեց պարոնը և սկսեց դիտել հասարակութիւնը։

—Ա՛յ, ում ձեռքն են ընկնում փողերը, նկատեց եկեղեցու անկիւնում կանգնած մի երիտասարդ վարժապետ իւր ընկերներին,—քահանաների աչքերը լոյս...

—Է՛ է... սիրելիս, համբերիր. դա կարող չէ երկար տևել. տեսնում ես, Մկրտիչ աղաները մեզ են թողնում կեանքի ասպարէզը և իրենք մեռնում.. համբերիր Թամարեանց, ասում են «համբերութիւնը կեանք է». նկատեց

ժպտալով երիտասարդը և նորից ընկղմուեց մտածութեան մէջ։

Ժամասացութիւնը վերջացաւ. քահանաները ժողովուեցին հանգուցեալի շուրջը և սկսեցին իրենց սովորական հոգեհանգիստը։ Կանանց լացը աւելի սաստկացաւ. ամենից բարձր լալիս էր մի հաստ կարմիր թշերով պառաւ. դա հանգուցեալի կինը, տիկին Կակայեանն էր։ Ազգականները շրջապատել էին նրան և իզուր աշխատում էին հանգստացնել։ Վերջապէս չարականների տխուր մեղեդին աւելի և աւելի մեղմանալով լռեց վերևում, եկեղեցու գմբէթի տակ։ Ժողովուրդը կարգով մօտենում էր դագաղին և համբուրում էր այնտեղ դրած խաչը։ Եկեղեցին սկսուեց դատարկուել. բոլորից յետոյ հեռացաւ երէցփոխանը մի քանի քահանաների հետ. մոմերը հանգցրած էին, եկեղեցում տարածուեց խաւարը. Ժամկոչ Պետրոսը բանալիները չխչխկացնելով մօտեցաւ հանգուցեալին, համբուրեց խաչը, ծածկեց քօղով նրա երեսը և դանդաղ քայլերով հեռացաւ եկեղեցուց. մի րոպէից յետոյ կողպեց եկեղեցու ծանր երկաթեայ դռները և մտաւ փողոց։ Հասաւ գիշերը։

Բ.

Անցաւ երեք ամիս. այդ միջոցին Մկրտիչ աղա Կակայեանի կտակը արդէն կարդացուել էր և, ճշմարիտը ասած, շատ էր զարմացրել հասարակութեան բոլոր դասակարգերին։

«Իմ ունեցած 100,000 ռուբլիս, գրում էր հանգուցեալը, ես կտակում եմ Նոր-Նախիջևան քաղաքին այն պայմանով միայն, որ նա հիմնէ մի միջնակարգ դպրոց հայ չքաւոր օրիորդների համար։ Դպրոցը պիտի կրէ իմ անունը, կինս մինչև մահ պիտի ճանաչուի իբրև հոգա-

բարձուհի այդ դպրոցի հայերէն լեզուն և հայոց պատմութիւնը անպատճառ պիտի մտցուին ուսանելի առարկաների կարգը. իմ տունս կտակում եմ այդ նպատակով. Նախիջևանի եկեղեցիներից ամէն մէկին պարգևում եմ 1000 րուբլի, կնոջս թողնում եմ 50,000 րուբլի. կատարեցէք իմ վերջի կամքը. Ամէն։

ՄԿՐՏԻՉ ԿԱԿԱՅԵԱՆ»։

Այս էր Մկրտիչ աղայի կտակը, որից շատ անբաւական մնաց Նոր-Նախիջևանի հասարակութեան յայտնի մասը։

«Աղբար... աս ինչ ժամանակների հասանք, ասում էր չուկայում մի ծերունի վաճառական իւր հարևանին. ախըր, եր Մկրտիչ աղան ալ ասպէս բաներ կանէ նը, մենք խօ մեռանենք, տա։

—Խօրթ է ասածդ... ես ալ շատ կը զարմանամ, վօվ ադ միտքը տուեց աղային... ախըր սուրբ ժամերին 1000 րուպլի, իսկ մէկ կալպայ վարժատունի, ան ալ աղջիկի վարժատունի—100,000-ներ... չէ... չէ, Մկրտիչ աղան ինքը չէ աս բանը անողը... նա խեւ չէր... չէ, նկատեց վճռօղաբար վաճառականը և սկսեց չփել իւր գլուխը։

—Հէպէթ ինքը չէ հնճարողը... կվախնամ որ, խոռ Պետերբուրգ սորվող մօրքուրին օրթին չիլանը... ախր վերջի ժամանակները հանդուցեալը շատ կը սիրէր նրան, պատասխանեց գաղտնի կերպով ծերունի վաճառականը։

—Հա... հա... շատ կարելի է, շատ կարելի... ամա, ինչ արած, որ խեղճը իրեն հոգին սատանային մատնից, ժամերէն կտրից, Աստուծմէ կտրից ու վարժատունի տուից... մեհ ժամանակ—ժամանակ, վերջացրեց իւր խօսքը ջերմեռանդ վաճառականը։

—Լսէ՞լ ես, Գրիգոր, ասում էր այդ երեկոյեան եկեղեցու դռանը կանգնած աղքատ պառաւներից մէկը.

լսէ՞լ ես Մկրտիչ աղայի արած բանը. ունիմ-չունիմը վարժատունի բախշիլ է. ախըր, մեզի ալ մէկ բան մը տար նը, մեղք կըլար հոգուն ինչ...։

—Է՛հ... Մարիամ, եր տեսիլ ես, որ խարիպը իշխանէն օգտուէր. ասպէս ըլար նը՝ մենք հօս ալ կայնած չըլայինք. անբաւական ձայնով նկատեց ծերունի մուրացկանը և իսկոյն ձեռքը երկարացնելով—«Աստծոյ սիրուն, ողորմութիւն արէք, աղա, մեռելներուդ հոգուն»—դարձաւ նա մի պարոնի, որ այդ րոպէին դուրս եկաւ եկեղեցուց։

Եկեղեցում բազմութիւնը բաւականին մեծ էր։ Անկիւնում, Աստուածածնի պատկերի դիմաց, կանգնած էր մեզ արդէն ծանօթ վարչութեան քարտուղար Աբրահամեանցը։

«Գիտէք, այսօր քաղաքի վարչութիւնը նիստ ունի. պիտի քննուի պ. Կակայեանի կտակը և այդ գործի կատարումը պիտի տրուի, դարձաւ նա փսփսալով իւր հարևան պարոնին։

—Այո, լսեցի և կարծում եմ որ անդամներից ոչ մէկը իրաւունք չունի թողնել այդ նիստը, պատասխանեց նա։

—Ի հարկէ... ի հարկէ... գործը շատ ծանրակշիռ է... բայց այնու ամենայնիւ ես կարծում եմ, որ Մկրտիչ աղան աւելի լաւ կանէր, եթէ այդ փողերի կէսը գոնէ կտակէր անմիջապէս քաղաքին... Այդպիսի մեծ գումարով մենք կարող էինք մրցել մեր հարևան Ռօստով քաղաքի հետ... այո, մենք կունենայինք սեպհական անկախ ոստիկանութիւն... մենք... սկսեց տաքցած միմեանց ետևից շարել քարտուղար Աբրահամեանը՝ պաշտպանելով իւր մոլեռանդ կարծիքներից մէկը։

—Մրցե՞լ... ժպտաց հարևան պարոնը, այս դարուս մրցման միջոցը ոչ ոստիկանութիւնն է, ոչ անկախ ինք-

նավարութիւնը և ոչ էլ փողը... կուզէք որ ձեզ շրջապատող տարրը չկարողանայ կլանել ձեզ, եթէ կուզէք, լուսաւորեցէք հասարակութեան անդամներից ամեն մէկին, որ նա պահպանէ ինչ որ իւրն է. համոզեցէք, որ նա սիրէ իւր մայրենի լեզուն, իւր ազգային կրօնը, եկեղեցին. կամենում էք մրցել՝—ուղարկեցէք ձեր զաւակները համալսարաններ, կրթեցէք հայ կանանց սեռը, բարեփոխեցէք հայի ներկայ կազմակերպութիւնը, և այն ժամանակ միայն կկարողանաք մրցել լուսաւորութեան գործում պահպանելով ձեր ինքնուրոյն գոյութիւնը. այլապէս ամեն բան վերջացած է, պատասխանեց ոգևորուելով պարոնը, որ նոր էր վերադարձել Դորպատից իբրև բժշկապետ և որին Մուրատեանց էին անուանում. Քարտուղարը նախ մեծ մեծ բացեց իւր աչքերը, զարմացած նայեց խօսողի երեսին և յետոյ կարծես յանկարծ շփոթուելով վար ծռեց իւր գլուխը...

Մի քանի րոպէից յետոյ ժամասացութիւնը վերջացաւ և ժողովուրդը սկսեց ցրուել։

Գ.

...Գիշեր էր. քաղաքի լապտերները արդէն վառած էին և շողշողում էին իրենց աղօտ լուսով փողոցի հալած ձիւնից գոյացած ճահճներում, անձրևը վերևից անդադար մաղում էր. փողոցներում արդէն տիրել էր խոր լռութիւնը. փոքրիկ Նոր-Նախիջևանը սկսում էր քնել. Միայն հրապարակում ստէպ ստէպ երևում էին կառքեր, որոնք շտապով ուղևորւում էին դէպի քաղաքային խորհրդանոցը և թողնելով այնտեղ իրենց տէրերին, նորից վերադառնում...

Այդ տէրերը, քաղաքային վարչութեան անդամները, նոյնպէս շտապով բարձրանում էին սանդուղքներից և

տալով իրենց թրջուած վերարկուները ծառային, մըտնում էին խորհրդանոցի լուսաւորուած դահլիճը։

Այսօր սովորականից դուրս, բոլոր անդամները ներկայ էին. պատճառը այն էր, որ այս երեկոյ պիտի քննուէր Մկրտիչ աղայի կտակը և այնուհետև պիտի ուղարկուէր Բարձրագոյն հաստատութեան։ Անդամները մաս մաս բաժանուած, ման էին գալիս ընդարձակ դահլիճում։

Աբրահամեանցը անդադար մօտենում էր խօսողներին, ինքն էլ մի քանի բառ ասում և իսկոյն հեռանում էր ուրիշների մօտ։ Սպասում էին քաղաքագլխին.

—Ինչո՞ւ այսքան ուշացաւ պ. Մալթիսեանցը. կարծեմ ժամանակ է սկսելու, ասաց մեզ ծանօթ բժիշկ Մուրադեանցը քարտուղարին։

—Ճշմարիտ չգիտեմ... նա ինձ ոչինչ չասաց... երևի նա շուտով կուգայ... ահա և նա, ասաց քարտուղարը և շտապով հեռացաւ բժշկից։

Քաղաքագլխի գալուց յետոյ նիստը բացուեց. նախ կարդացուեցաւ կտակի պատճէնը. անդամները խորին լռութեամբ լսում էին Մկրտիչ աղայի վերջի կամքը. ընթերցումը վերջացաւ և քաղաքագլուխ պ. Մալթիսեանցը բարձրացաւ իւր տեղից և սկսեց իւր ճառը։

—«Պարոններ, ասաց նա, հանգուցեալ Մկրտիչ աղա Կախայեանը իւր գեղեցիկ օրինակով, կարելի է ասել դարագլուխ է կազմում մեր քաղաքի պատմութեան մէջ։ Նա առաջինն է, որ ցոյց տուեց մեզ այս դարիս ալտոյքը, նա առաջինն է, որ կարկառեց իւր ձեռը աղքատին, չքաւորին և եթէ դեռ չսրբեց նրանց արտասուքը, մեղաւորը նա չէ... Մեր սուրբ պարտականութիւնն է, պարոններ, որքան կարելի է եռանդով և որքան կարելի է շուտով գլուխ հանել Մկրտիչ աղայի սուրբ գործը. մենք

կուղարկենք կտակը Բարձրագոյն հաստատութեան, կը խորհրդակցենք ուսումնարանի կազմակերպութեան մասին, կը հրաւիրենք դաստիարակներ, դաստիարակուհիներ, մի տեսչուհի և վերջապէս, պարոններ, կը հասնենք այն օրին, երբ իմ հարազատ զաւակիս մօտ ես կը տեսնեմ նստած, իբրև նրա ընկերուհին, կառապան Մաթոսի և կամ բանւոր Սարգսի աղջիկը։ Այդ օրը, պարոններ, կը լինի իմ կեանքի ամենաերջանիկ օրը և ես սրտանց, կը յիշեմ բարերար Մկրտիչ աղայի բարի գործը»։

Նա վերջացրեց. Թաշկինակով սրբեց ճակատից իւր քրտինքը ու նստաւ իւր տեղը։

Անդամների մէջ բարձրացաւ մի խուլ, անհասկանալի փսփսոց. երևի դրանով նրանք յայտնում էին իրենց հաւանութիւնը։ Քաղաքագլխի ճառից յետոյ ժողովը զբաղուեց հարցի վճռովը. վերջապէս վճիռ կայացաւ. որ վաղը կտակը պիտի ուղարկուի Պետերբուրգ, իսկ հանգուցեալի սեպհական երկյարկանի տունը, որ կտակի համաձայն պիտի դառնար ուսումնարան, մի շաբաթից յետոյ պիտի նորոգուէր, յարմարուէր իւր նոր նշանակութեան համար. նոյնպէս և մայրաքաղաքից պիտի հրաւիրուէր մի հայ օրիորդ՝ իբրև տեսչուհի. այստեղ Նոր-Նախիջևանում, պիտի վարձուէին մի քանի ուսուցիչներ և դաստիարակուհիներ և վերջապէս, վաղը Լուսաւորիչ եկեղեցում, ժամը 10-ին պիտի կատարուէր հանդիսաւոր պատարագով հանգուցեալ Մկրտիչ աղայի հոգեհանգիստը։ Հարցերը արդէն վճռուած էին և քարտուղարը սկսել էր իւր արձանագրութիւնները, երբ վեր կացաւ իւր տեղից բժշկապետ Մուրադեանցը, խօսք խնդրեց ու սկսեց։

—«Պարոններ, թոյլ տուէք ինձ այս խորհրդաւոր րոպէին յայտնել ձեզ և իմ մտքերս, որոնք, ահա 3 ամիս է, ծնել են ինձնում և ելք են պահանջում։

«Յարգելի քաղաքագլուխը փայլուն նկարներով նկարագրեց ձեզ Կակայեան ուսումնարանի ապագան։ Նա ասաց, որ ամենաերջանիկ օրը իւր կեանքի մէջ այն օրը կլինի, երբ նա կտեսնէ իւր հարազատ զաւակի մօտ նստած կառապան Մաթոսի աղջիկը։ Պարոններ, ես համաձայն եմ, այդ շատ լաւ է, շատ ուրախալի երևոյթ է, բայց... բայց ես կարծում եմ, որ յարգելի պ. Մալթիսեանը յափշտակուած իւր մտքով ծայրահեղութեան հասաւ և... սխալուեց. Կակայեան ուսումնարանը, իմ կարծիքով, ապագայում վնասներից ջոկ ոչինչ չէ բերելու մեզ... այսինքն ոչ թէ մեզ, այլ այն չքաւոր ընտանիքներին, որոնց համար նա հիմնուած է հանգուցեալի կամքով»։

Քաղաքագլուխը մի քիչ կարմրեց. անդամները ծուռ ծուռ սկսեցին նայել խօսողի վերայ. բժշկապետը շարունակեց.

—«Երևակայեցէք, պարոններ, այսպիսի մի դրութիւն ապագայում, այն էլ մօտ ապագայում։ Մաթոս կառապանի աղջիկը 6 կամ 7 տարիներ ընտանիքից կտրուած, բաժանուած անց է կացնում փակ ուսումնարանի պատերում իմ կամ պ. Մալթիսեանցի զաւակի հետ։ Անիրթ, կոպիտ և մի քիչ վայրենի 8 կամ 9 տարեկան աղջիկը դառնում է 16 կամ 17 տարեկան կրթուած, բաւականին զարգացած օրիորդ։ Այդ միջոցին նա մոռանում է իւր մանկութիւնը շրջապատող կեանքը, նա ընտելանում է ներկայ կեանքին, նրա պահանջներին, նա այժմ ուրիշ հայեացք ունի ի հարկէ կեանքի, բաղդաւորութեան, ամուսնութեան և բարոյականութեան վերայ. Նրա երևակայութիւնից թռչում, անհետանում է այն փոքրիկ, կոպիտ միշտ մրոտ, միշտ լալկան աղջկայ տիպարը, որին 9 տարի սրանից առաջ բերեցին և ձգեցին

վարժատուն. այդ տիպարը նրան արդէն խորթ, օտար է թւում, ինչպէս օտար են թւում նրան և իւր Շուշան մայրն ու Մաթոս հայրը, որոնք ժամանակով գալիս են նրան այցելութեան... ընդհակառակը, այս կամ այն հարուստ աղայի աղջիկը, ամբողջ 7 տարուայ միջոցում նրա ընկերուհին, նրան աւելի մօտ է թւում, աւելի հասկանալի... Մաթոս կառապանի աղջիկը շատ անգամ եղել է իւր ընկերուհու տանը, նա տեսել է բարձր, վերին հասարակութիւնը, նրա գոնէ արտաքին կեանքը և ինքն ևս իւր մտքի խորքում երդուել է մի օր հասնել այդ կեանքին, այդ ապահովուած, վրայից փայլուն կեանքին. նա սիրում է արդէն այդ կեանքը, բայց առանց նրա աչքի ընկնող պակասութիւնների, առանց զանցառութիւնների։ Կառապան Մաթոսի աղջիկը 6 կամ 7 տարուայ միջոցում կարողացել է համոզել (և ինչպէս ուզում էք որ չհամոզուի) որ այդ իրաւունքները նա ունի, եթէ ոչ իւր ստոր, անյայտ տոհմի, գոնէ իւր մտաւոր և բարոյական զարգացման շնորհիւ։

Քաղաքագլուխը աւելի ևս կարմրեց։ Անդամներից մի քանիսը հետաքրքրութիւնը երեսներին, զարմացած նայում էին Մուրադեանցի վերայ. իսկ մնացածները համարեա շուռ էին եկել նրանից և երբեմն երբեմն նայում էին քաղաքագլխի կարմրած երեսին։

—Բայց դժբաղդաբար, շարունակեց բժիշկը, կառապան Մաթոսի աղջկայ երևակայական՝ ցնորք համոզմունքները մի գեղեցիկ օր յանկարծ փշրուեցին... իրական անխիղճ կեանքը առաջարկեց իւր խիստ, անողորմ պահանջմունքները և խեղճ Մաթոսի թշուառ աղջիկը չկարողացաւ տանել այն իրեն օտարոտի, անծանօթ, մոռացած կեանքին, չկարողացաւ դիմանալ նրա առօրեայ պահանջմունքներին և դառ չծաղկած ծաղկի նման թառամեցաւ։

Ուսումնարանը կրթում է, լայնացնում է իւր սանիկի մտաւոր աշխարհը և չէ սովորեցնում նրան մի գործնական կեանքում հաց տուող, ապահովացնող արուեստ։ Ուսումնարանը տալիս է նրան գիտութիւն, տալիս է նրա ձեռքը Սմայլսը և չէ տալիս ասեղ։ Ուրեմն պարոններ, հարցնում եմ ձեզ, օգտակա՞ր է մեզ համար կակայեան ուսումնարանը, թէ վնասակար և նրա արածը բարեգործութիւն է թէ... թէ անբարոյականացնող ողորմութիւն։

Ես գոնէ կարծում եմ, որ ուսումնարանը այսպիսի հանգամանքներում վնասակար է ստորին, չքաւոր դասերի համար և նրա արածը ողորմութիւն»։

Բժիշկը լռեց. նա ուղղեց իւր երկար, սև մազերը, տրորեց ճակատը և դանդաղ քայլերով հեռացաւ դահլիճի անկիւններից մէկը։ Քաղաքային վարչութեան անդամները կարծես զարթեցին խոր քնից. նրանք նախ նայեցին մէկ մէկու երես, յետոյ բոլորը միասին քաղաքագլխի երեսը և յանկարծ բոլորը միասին սկսեցին խօսել. նրանք իբրև թէ պատասխանում էին բժշկին։

—Ի՞նչ հիման վերայ, պ. բժշկապետ, դուք այդ տխուր մարգարէութիւններն էք անում, հարցրեց անդամներից ամենահամարձակը։

—Այո... այո... ինչ հիման վերայ, լսուեցաւ ամեն կողմից։

—Մենք փաստեր ենք կամենում, փաստեր և ոչ թէ լոկ խօսքեր, գոռացին յարգելի անդամները։

—Այո, փաստեր, փաստեր։

Բժշկապետը մնաց շուարած, վերջապէս լսուեցաւ զանգակի ձայնը. ամեն ինչ կարգի եկաւ և խօսեց քաղաքագլուխը. նրա ոճը կծու և հեգնական էր։

«—Դուք պարոն, իրաւ որ մարգարէացաք. դուք մինչև անգամ ուրացաք ուսման և առհասարակ մտաւոր զարգաց-

ման ակներև օգուտները. . դուք ուսումնարանը համարեցիք մի վնասակար հաստատութիւն, դուք վերջապէս, գուշակեցիք, որ իբր թէ ապագայ սանիկների կեանքը փչացնելու է…։ Բայց չէք բարեհաճիլ արդեօք, պարոն, աւելի պարզ, աւելի շօշափելի կերպով յայտնել ձեր միտքը։

Ու քաղաքագլուխը մի յաղթական հայեացք ձգեց անդամների վերայ և ժպիտը բերնին՝ նստեց իւր տեղը։

—Պարոններ, ես կարծում էի, որ իմ միտքս և խօսքերս այնքան պարզ են, սկսեց Մուրադեանցը, որ կարօտութիւն չունին այլևայլ բացատրութիւնների. երևի ես սխալուեցայ։ Եթէ ես ասացի, որ կակայեան ուսումնարանը ապագայում պիտի լինի վնասակար, այդ նրա համար էր, որ ես աչքի առաջ ունէի ստորին դասակարգի արական սեռի մտաւոր և բարոյական կոպտութիւնը։ Դուք կամենում էք զարգացնել մտաւորապէս և բարոյապէս մեր ստորին դասակարգի միայն իգական սեռը. դուք կամենում էք ազնուացնել, քաղաքակրթել 1000-ից միայն 500-ը։ Լաւ. երևակայեցէք, որ դուք հասաք ձեր նպատակին. կառապան Մաթոս կամ բանւոր Սարգսի աղջիկը գիտէ լեզուներ, թուաբանութիւն, աշխարհագրութիւն և այլն և այլն. բայց դուք մոռանում էք, որ նոյն կառապանի որդին մնացած է անզարգացած, որ նոյն Մաթոսի դասակարգի երիտասարդները, աշխատում են իրենց օրական հացը բանւորութիւնով, սայլապանութիւնով և կամ մուրացկանութիւնով։ Դուք մոռանում էք, որ Մաթոսի զարգացած աղջիկը փակ ուսումնարանից անմիջապէս պիտի ընկնի այդ մարդոց շրջանը, պիտի ապրի նրանց կեանքով, պիտի պաշտպանէ նրանց դասակարգի շահերը, պիտի կապուի՝ ընտելանայ նրանց առօրեայ պահանջմունքներին, պիտի սիրէ նրանցից մէկին և պիտի դառնայ նրանցից մէկի կինը։ Հարցնում եմ ձեզ, պարոններ, այդ զարգացած աղջկայ ապագայ կօշկակար կամ բանւոր ամուսինը կը հասկանայ իւր երեխաների մօր ներքին հոգեկան ձգտումները. կը կարողանայ յարգել նրա համոզմունքները, կը սիրէ՞ նրան իբրև մարդ, իբրև անձնաւորութիւն…—Ո՛չ… ոչ, պարոններ։ Միւս կողմից կը կարողանայ այդ 6 կամ 7 տարի ծաղկի նման մեծացած օրիորդը տանել այդ մի ֆիզիքական աշխատանքով կեանքին, տգէտ և կոպիտ ամուսնու վարմունքին. կը կարողանայ դիմանալ զրկանքների, քաղցի, ծարաւի. կունենայ այնքան ոյժ…— Դարձեալ ոչ. դրանք կարող չեն միմեանց հասկանալ։ Ես վերջացրի, դատեցէք ուրեմն»։

Այս խօսքերից յետոյ Մուրադեանցը առաւ իւր գըլխարկը, շտապով վեր կացաւ տեղից, գլուխ տուեց հասարակութեան և թողեց դահլիճը։ Իսկ յարգելի անդամները կարծես աշխատում էին մի բան ըմբռնել, մի բան հասկանալ նրա խօսքերից… արդէն կարծես սկսում էին համոզուել… բայց իզո՜ւր. չէին կարողանում. նրանք լուռ նայում էին մէկ մէկու երես. վերջապէս քաղաքագլուխը, որքան կարողացաւ, համոզեց նրանց և ասաց, թէ Մուրադեանցը սխալվում է, նա միշտ երևոյթի սև, վատ կողմերն է տեսնում և այլն և այլն ու փակեց նիստը. դահլիճը կամաց կամաց դատարկուեցաւ, անդամները ցրուեցան իրենց տները։

Դ.

Օգոստոսի վերջի օրերն էին։ Արեգակը սաստիկ տաքացնում էր փողոցների քարեայ սալայատակը, ծառերը կարծես թուլացած վայր էին թողել իրենց արդէն դեղնած տերևները։ Ամբողջ Նոր-Նախիջևանը կարծես քնած լինէր մի խոր, մեռելային քնով. փողոցներում անց ու

դարձ չկար. միայն շները, իրենց կարմիր լեզուները մի կանգուն թողած, աչքերը փակ անվրդով պառկած էին ծառերի առաջ ստուերում, նրանք, որքան կարելի էր նըկատել, անտարբերական էին իրենց կեանքից. փողոցի հազուագիւտ անցորդը անգամ չէր գրգռում նրանց շնային հետաքրքրութիւնը և նրանք գլուխները բարձրացնելով, դեռ աչքերը չբացած, մի քանի անգամ, ճիշտ պաշտօնապէս, անզօր հաճում էին և նորից քնում։ Աստուածածնի փողոցի ամենավերջում գտնվում էր Կարապետ կօշկակարի տունը։ Դրսից դա բոլորովին չէր զանազանվում իւր հարևաններից. նոյնպէս փոքրիկ, երկու առաւել ևս փոքրիկ լուսամուտներով, նա միայն աւելի քանդուած էր և աւելի կռացած, նրա ծեփած պատերը տեղ տեղ մերկացել էին. օջախը սևացել, ծռուել էր, յարդեայ տանիքը ծակուել, իսկ ներսից դա կրում էր կեղտոտութեան այն բոլոր նշանները, որոնք աչքի են ընկնում ամեն մի քիչ թէ շատ չքաւոր Նախիջևանցու տանը. մի ահագին անկողին, կեղտոտ բարձեր, երկու վերմակ, մի հին կաղնեայ պահարան, մի հայելի, 5 կամ 6 աթոռ, մի քանի քուրսի—*), նստարաններ՝ իրենց մշտնջենական մնացորդներով—ահա բոլոր երկու սենեակի կահ կարասիքը։ Կէս օր էր. Կարապետը նոր էր կարել, վերջացրել մի զոյգ կօշիկ ու նստել սպասում էր կնոջ ճաշ բերելուն, վերջապէս մտաւ ներս և Շուշան խանումը—Կարապետի կինը—մի աման կաթնապուր ձեռին։

—Հա... բեր տեսնիմ, դարձաւ նրան Կարապետը, առնելով հացի կտոր։ Ապուրը դրուեցաւ սեղանի վերայ։

—Կարապետ, չիգտիս, վրտեղ գնաց ասօր մեր մահլայի տիրացու Սարգիսը, չուրջառը ձեռքը։

—Ո՞ւր։

*) Տեղական խօսքեր

953-2013

—Ասպէս սահաթը 10-ին։

—Հա... ախր ասօր Մկրտիչ աղայի վաժատունը կօրհնին։

—Ի՞նչ կասիս, զարմանալով հարցրեց Շուշանը։

—Ջգիտէիր... վանքէն վարդապետն ալ էկաւ։

—Ի՛... ախր հէչ խապար չէի նը, ափսոսաց կինը։

—Խապար ըլլայիր նը, ինչ պիտ՝ անէիր, ժպտալով հարցրեց Կարապետը։

—Վա՛յ ինձ. կերթայի... կտեսնէի տա...

—Հայա... իսկը քուկուդ տեղդ է... աղաներ, բաներ հոն պիտ՝ ըլլան, դուն էիր պակաս։

—Մի վախնալ, փախ չին տային. նկատեց անբաւական ձայնով Շուշան խանումը,—վաժատունը խօ մեզի պէս խալխիներուն համար խորթած է։

Կարապետը ոչինչ չպատասխանեց. նա կամաց ծամում էր իւր բերնի հացի կտորը և կարծես մի հարցով զբաղուած լինէր. կնոջ վերջի խօսքերը մի միտք ծագեցրին նրա ուղեղում...

—Շուշան... ա՛ Շուշան, մի փոքր լռութիւնից յետոյ յանկարծ հարցրեց նա իւր կնոջը, դուն կասիս որ վաժատունը մեզի պէս խալխիներուն համար է. հա... անպէս չէ՞։

—Ի հարկէ... հապա որին համար է։

—Շատ աղէկ... եթ որ անպէս է նը, մենք ալ իրաւունք ունինք փայտա տեսնելու, այնպէս չէ՞։

Շուշանը իսկոյն չհասկացաւ նրա հարցը։

—Ի՞նչ ասիր, հարցրեց նա։

—Կասիմ որ, վաժատունը խալխի համար է նը, ուրեմն մեր Սառային ալ կը կրնանք հոն սովրելու տալ։

—Հէպէթ.. զայիր տա... պատասխանեց մի քանի րոպէ մտածելուց յետոյ Շուշան խանումը։

—Ախր, Շուշան, [illegible] մեզի ալ խօմ խօլայ

ՀՍՍՌ-Арм.ССР

կըլար… ունեմք, հալաւ, ոտքի բան… ալայը վաժառունէն է, նկատեց Կարապետը։

—Հէյպէթ… մեզի խօլայ կըլար. ինքն ալ չարութիւն չէր անիլ, կը սովրէր, մարդ կըլար։

—Նոյն, ինչ կասիս, տանք Սառային վաժառուն։

—Ինչպէս ասիմ, նկատեց Շուշանը. էկէր չին ծեծիլ նէ՝ տանք, չէ նէ, ես հալխին համար Թալլած զաւակ չունիմ։

—Չէ… չէ… ինչու պիտի ծեծին, վճռողաբար յայտնեց կօշկակարը. ծեծը ո՞րն է… համա կընդունի՞ն մի… դուն ան նայէ։

—Ինչու չէ… մենք ալ խօմ փառք Աստուծոյ, իշխաններէն չինք։

—Ատ ադպէս է, խօսք չկայ. միայն միտք անել պէտք է, պատասխանեց Կարապետը, և խաչակնքելով երեսը, վեր կացաւ սեղանից։

—Անինք տա միտք, միտքն ալ պատակով բան չէ խօմ… հոս նայէ, Կարապետ, արի ատ իրկուան տիրացու Սարգիսին ձայն տանք ու կալաճի անինք, նկատեց Շուշանը, մտնելով սրահը, որ Կարապետի ամառուայ գործարանն էր։

—Հա… ատ աղէկ ասիր, ուրախացաւ կօշկակարը. տիրացուն մէկ հատ խնդիրք ալ կգրէ… ժամուցը ինչ է նը՝ կուտանք հէյպէթ, պատասխանեց Կարապետը և սկսեց իւր սովորական գործը։

Եւ իրաւ, երեկոյեան ժամը 7-ին տիրացու Սարգիսը պատուով և փառքով բազմել էր կօշկակար Կարապետի տանը և համարեա փիլիսոփայական անվրդովութեամբ թէյ էր անուշ անում. Տանուտէրերը աշխատում էին որքան կարելի է լաւ յարգել Թանկագին հիւրին և այդ Թանկագին հիւրը շատ լաւ էր զգում, որ ինքը, Աստուածածնի եկեղեցու տիրացու Սարգիսը, անչափ վեր է այդ խեղճ,

անզարգացած տանուտէրերից։ Գիշերուայ ժամը 10-ն էր, երբ տիրացու Սարգիսը աւարտեց խնդրքի գրելը։ Միւս օր այդ խնդիրքը Կարապետը պիտի տանէր Կակայեան ուսումնարանի տեսչին։ Վերջապէս տիրացու Սարգիսը իւր «ժամուցը» և հազար ու մէկ շնորհակալութիւններ օրհնէնքներ ստանալով, Թողեց կօշկակար Կարապետի տունը։

Իսկ այդ բոլորի սկզբնապատճառը, փոքրիկ Սառան, արդէն վաղուց անոյշ քնած էր իւր անկողնում և մանկական անմեղ շրթունքներով ժպտում էր երազում։

Ե.

Սեպտեմբերի 1-ն էր։ Արդէն երրորդ օրն էր, որ Կակայեան հայ օրիորդաց ուսումնարանում սկսուել էին պարապմունքները։ Երկար ու լայն սրահով ստէպ ստէպ անցնում էին դաստիարակուհիները, ուսուցիչները և ուսումնարանի սանիկները. վերջինները հագուած էին միակերպ.— մութ դեղնագոյն չոր և կապոյտ գլխի ծածկոց. Նրանք դեռ չէին ընտելացած այդ ահագին դահլիճներին, դասատներին, ննջարաններին և կարծես մոլորուած վազվզում էին սենեկից սենեակ։

Այդ օրը ժամը 10-ին առաւօտեան ուսումնարանի վարչութեան ընդունարանը մտաւ կօշկակար Կարապետը. Նա բռնել էր Սառայի ձեռքից. Նա եկել էր իմանալու, ընդունուած է իւր զաւակը, թէ ոչ։

Վախով մտաւ նա այդ մեծ, գեղեցիկ զարդարած սենեակը, և խոնարհ գլուխ տուեց։ Սառան իւր կեանքումը չէր տեսած այդպէս սենեակ և ուշադրութեամբ և մի և նոյն ժամանակ վախով սկսեց զննել այդ բոլոր, իրեն անծանօթ, առարկաները։ Պատից կախուած էր հիմնադրի մեծ լուսանկար պատկերը. լուսամուտներից վայր էին իջնում գեղեցիկ նուրբ Թաւշեայ վարագոյրներ։

—Այդպէս գեղեցիկ վարագոյրներ մեր փողոցում ոչ ոք չունի, մտածեց Սառան։

Պատերի մօտ դրած էին փափուկ բազկաթոռներ և մի բազմոց, սենեակի անկիւնում գտնվում էր մի բոլորովին նոր դաշնամուր, այդ վերջինը բոլորովին զարմացրեց փոքրիկ Սառային։

—Այդ ինչ է... աշխատում էր նա իւր փոքրիկ ուղեղով վճռել իրեն հետաքրքրող հարցը, բայց չէր կարողանում, նա արդէն կամենում էր բացատրութիւն խնդրել հօրից, երբ տեսչի անախորժ ձայնը ուշքի բերեց նրան.

—Հա... դուք եկաք, դարձաւ տեսուչը, մի կարճահասակ մարդ, Կարապետին... իսկոյն... ահա... ձեր աղջիկը ընդունուած է գիշերօթիկ և ձրիապէս... այսինքն առանց տակի...

—Շատ շնորհակալ ենք, աղա, Աստուած օրերդ երկարացնէ, օրհնում էր կօշկակարը տեսչին. վերջինը պաշտօնապէս ընդունում էր Սառային։

—Ոչինչ... ոչինչ, շտապեց նկատել ծիծաղելի շարժուածքներով տեսուչը—ուրեմն այժմս կարող էք թողնել ձեր զաւակը այստեղ, ուսումնարանում։

Կարապետը կարծես առաջուց չէր մտածել, որ ինքը պիտի բաժանուի իւր երեխայից. և երբ նա լսեց տեսչի վերջի խօսքերը, նրա սրտում մի բան կարծես կտրուեց, սաստիկ ցաւեց. նա նայեցաւ Սառային և շատ տխրեց։ Նա մի քիչ կռացաւ, ջերմ համբուրեց Սառայի երկու թշերից, խաչակնքեց նրան և... խեղճի խոշոր, այրող արտասուքի երկու կաթիլները թրջեցին երեխայի երեսը...

Վերջապէս նա տրորելով ձեռում իւր գլխարկը, մօտեցաւ տեսչին և անզօր, դողդոջուն ձայնով հարցրեց.

—Աղա... աճար կըլայ մէ մէկ ամեն զաւակիս տեսութինի գալ։

Եւ նա կրկին նայեց Սառայի վերայ։ Վերջինս լուռ, լացած աչքերով կանգնած էր սենեակի անկիւնում և վախով նայում էր տեսչի նշանազգեստին։

—Այո... այո կարելի է, պաշտօնապէս պատասխանեց տեսուչը և բռնած Սառայի ձեռից դուրս եկաւ սենեակից։

Կօշկակարը մի քիչ էլ կանգնեց ուսումնարանի ընդունարանում, նայեց հիմնադրի պատկերի երեսին, խաչակնքեց իւր երեսը և դանդաղ, անհաստատ քայլերով թողեց սենեակը։ Այդ օրուայ ժամը 3-ին Սառայի ազգանունը գրուեցաւ վարժատան ցուցակում և Աստուածածնի փողոցի փոքրիկ Սառան, Կարապետ կօշկակարի աղջիկը, դարձաւ այդ օրից «աշակերտուհի պատրաստական դասարանի Կալայեան հայ օրիորդաց ուսումնարանի»։

Դ.

Օրերը գնում էին. հասաւ վերջապէս ձմեռը և խոր, մեռելային քնով քնեց բնութիւնը։ Այդ միջոցում Կալայեան ուսումնարանում պարապմունքները գնում էին իրենց սովորական կարգով։ Նոյնպէս ամեն օր գալիս էին ուսուցիչները, նոյնպէս ամեն գիշեր հսկում էին ննջարանում վերակացու օրիորդները. նոյնպէս ամեն կիւրակի եկեղեցի էին տանում զոյգ զոյգ Մաթոսների, Սարգիսների աղջիկներին քաղաքի հարուստ աղաների աղջիկների հետ... Միայն մէկ փոփոխութիւն էր նկատվում այդ փոքրիկ սահմանափակ աշխարհում։ Ուսումնարանի սանիկները արդէն ընտելացել էին իրենց նոր կեանքին, նրանք շատ ազատ էին զգում իրենց... փակ, գիշերօթիկների համար շինուած ուսումնարանը արդէն սկսել էր գնել իւր կնիքը մեծ և փոքրիկ սանիկների վերայ։ Սառան

նոյնպէս այդ 4 կամ 5 ամսուայ միջոցին ընտելացաւ ուսումնարանի փակ կեանքին։ Նա թէպէտ սկզբից շատ տխուր էր, ստէպ ստէպ մտաբերում էր իրենց տունը Աստուածածնի փողոցում, իրեն մօրը, հօրը, իրեն հասակակից Սանդուխտին, Մարիամին, Միքայէլին, մտաբերում էր իրենց ամենօրեայ խաղերը, վէճերը, լացը, յետոյ կրկին զուարթ և անհոգ խաղերը, մտաբերում էր այդ բոլորը և բնականապէս հեռանում էր, գոնէ աշխատում էր հեռանալ, քաշուել այժմեայ իրեն շրջապատող կեանքից։ Այդպիսի րոպէներում Սառան շատ անուշադիր էր դասերի ժամանակ, անտեղի պատասխանում էր ուսուցչի հարցերին և յետոյ, երբ դասերը վերջանում էին, նա քաշվում էր առանձին դահլճի մութ անկիւններից մէկը, սկսում էր տխրել և վերջապէս լալիս էր. բայց նա աշխատում է ծածկել իւր արտասուքը. նա խեղդում էր իւր հեկեկանքները, խեղդում էր որովհետև ուսումնարանում բոլորից էլ լսած էր, որ լալը ամօթ է, որ լալիս են միայն փողոցի վատ, անկիրթ աղջիկները... Նրա ընկերուհիները այդ միջոցին խաղեր էին հնարում, կանչում էին և Սառային, սկսում էին որոնել և վերջապէս գտնելով խնդրում էին, որ մասնակցէ։

Գնանք, Սառա, խաղ անենք, քաշում էին նրան ընկերուհիները։

—Չեմ ուզում, վճռողաբար պատասխանում էր Սառան: և աւելի յետ քաշվում։

—Ինչի, կտեսնես, որքան ուրախ կլինիս, աշխատում էին համոզել ընկերուհիներից մի քանիսը։

—Չեմ ուզում, կրկնում էր Սառան և նրա սև, խոշոր աչքերը սկսում էին փայլել։

—Լ՛ է, թողէք դրան, նա միայն լալ է իմանում, մէջ էր մտնում նրա ընկերուհիներից մէկը, որ իւր անվախ

չարութիւնների և յանդուգն բնաւորութեան շնորհիւ միշտ իշխում էր իւր հասակակիցների վերայ։

—Լաւ... թողէք ինձ ասում էր Սառան և փախչում էր մի ուրիշ սենեակ։ Այդպիսի րոպէներին նա սիրում էր միայնութիւնը, նա ժամերով նստած մի տեղում մտածում էր, աշխատում էր իւր փոքրիկ ուղեղով ըմբռնել, քննել իւր նոր կեանքի առօրեայ երևոյթները, աշխատում էր համեմատել այդ նոր կեանքը իւր հին, անցած կեանքի հետ։ Այդ ժամանակ նա կարծես քարանում էր, պապանձում... ոչ մի խօսք չէր կարելի հանել նրա բերանից, ոչոքի առաջ չէր մերկացնում նա իւր մանկական սիրտը, ոչ ոքին չէր դիմում խոստովանութեան... Միայն մինը կար ամբողջ ուսումնարանում, որին սիրում էր Սառան. այդ վերակացու օրիորդ Հեղինէ Զատիկեանն էր։ Առաջին օրից Սառան կարծես մի պաշտպան գտաւ օրիորդ Հեղինէի մէջ, և իրաւ օրիորդ Հեղինէն այնպէս ընկերաբար վարուեց Սառայի հետ, այնպէս զգուշութեամբ թափանցեց նրա հոգեկան, ներքին աշխարհը, այնպիսի վարպետութեամբ տիրեց նրա մանկական սրտին, որ Սառան իսկոյն, առաջին օրից սիրեց նրան, սիրեց իւր փոքրիկ զգայուն սրտի բոլոր զգացմունքներով։ Օր. Հեղինէն ինչ որ ասում էր, դա Սառայի համար արդէն օրէնքի սրբութիւն էր ստանում։ Եթէ նրա ընկերուհիները մի բան էին մտածում անել, մի չարութիւն, Սառան նախ համաձայնվում էր, իսկ յետոյ, մտաբերելով օր Հեղինէի դէմքը, նրա բարի, բայց միշտ լուրջ երեսի գծագրութիւնը, թողնում էր անկատար իւր միտքը և ինքը մի քանի ժամանակից յետոյ գնում, պատմում էր օր. Զատիկեանին իւր մեղքը, զղջում էր և ներողութիւն խնդրում։

—Ոչինչ... ոչինչ, աշխատում էր հանգստացնել վրդովուած երեխային օր. Զատիկեանը, ոչինչ... միայն ուրիշ

անգամ չանես…։ Սառա, այդ լաւ չէ, դու ինքդ էլ ես հասկանում, այնպէս չէ՞։ Եւ Սառան փաթաթուելով նրա վզին խոստովանում էր լաւ պահել իրեն։ Օր. Հեզլնէի Սառայի վերայ ունեցած ազդեցութեան գաղտնիքներից մէկն էլ այն էր, որ նա ոչ մի անգամ չէր աշխատում համոզել Սառային միայն լոկ խօսքերով, միայն իւր պաշտօնական ոյժով… ընդհակառակը, եթէ նա կամենում էր մի բան հասկացնել երեխային, մի նոր միտք ծագեցնել նրա ուղեղում, նա առաջ էր բերում հազար ու մի փաստեր, օրինակներ, համեմատութիւններ և միշտ հարցնում էր երեխայի ինքնուրոյն կարծիքը այս կամ այն հարցի, այս կամ այն երևոյթի մասին։

Իւր դասընկերուհիների հետ Սառան չէր վարվում հաւասարապէս. հարուստ աղաների աղջիկներից նա միշտ քաշվում էր, միշտ հեռանում և ամեն յարմար րոպէներին աշխատում էր վիրաւորել նրանց փոքրիկ աղայական ինքնասիրութիւնը։ Երբ պատահում էր, որ հարուստ աղայի աղջիկը չէր խմանում իւր դասը և պատժվում էր վարժապետից, Սառան առաջինը սկսում էր նրան մխիթարել, բայց այդ մխիթարութեան խօսքերի մէջ երևան էր գալիս կծու ծիծաղը ուրիշը անբաղդութիւնից ուրախ լինելը։ Կամ երբ խաղի ժամանակ աղայի աղջիկը չէր կարող ցոյց տալ այնքան ֆիզիքական ոյժ, ճարպկութիւն, Սառան ամենից առաջ սկսում էր սովորեցնել նրան։ Նա ցոյց էր տալիս, ինչպէս պէտք է վարուել այդ դէպքում և այդ բոլորը միայն նրա համար, որ կարողանայ ցոյց տալ իւր սեպհական ոյժը, իւր ճարպկութիւնը և դրանով ստորացնէ հարուստ աղջկան… Սառայի այդ վարմունքը ինքնուրոյն բնաւորութեան հետևանք չէր. Կարապետ կօշկակարի աղջկայ սրտին անծանօթ էր այդ չար նախանձը. երբ պատա-

հում էր որ Աստուածածնի փողոցում Սարգիս կառապանի կամ Մաթոս բանւորի աղջիկը ստանում էր մի նոր շոր, մի նոր կարմիր թաշկինակ, Սառան երբէք չէր նախանձում։ Այդ նախանձը Կակայեան ուսումնարանի ազդեցութեան արդասիքն էր։ Առաջին օրից, երբ Կակայեան ուսումնարանը ընդունեց Սառային իբրև սանիկ, աղաների զաւակները աշխատեցին ակներև ցոյց տալ այն բոլոր զանազանութիւնը, որ տեղի ունէր Սառայի և իրենց մէջ։ Նրանք կարծես մի բարի գործ էին անում, երբ մի երկու խօսք էին տալիս փոքրիկ Սառային, նրանք զարմացած, հեգնօրէն ժպտալով դիտում էին Սառայի մի քիչ կոպիտ վարմունքը, նրա անտաշ ձևերը և քթի տակից ծիծաղում… Սառան իւր փոքրիկ, բայց վերին աստիճանի զգայուն սրտով իսկոյն հասկացաւ այդ։ Նրան տանջում էր և գրգռում էր այդ հպարտ վարմունքը և նա աւելի և աւելի սկսում էր ատել այդ փոքրիկ ազագայ «տիրուհիներին»։ Որ Սառային նախանձը, ատելութիւնը բնական չէին, ապացուցանում էր նրա վարմունքը իւր հաւասարների հետ։ Աղքատների զաւակները միշտ գտնում էին նրանում մի զօրեղ պաշտպան։ Սառան պատրաստ էր ժամերով նստել նրանց հետ, հարցնել, սովորեցնել դասերը և պարապմունքներից յետոյ խօսել նրանց հետ Աստուածածնի, և Սուրբ Թորոսի փողոցների մասին, իրենց այնտեղ մնացած ընկերուհիների մասին. մտաբերել մօտ մանկական անցեալից իրողութիւններ, անցքեր, փաստեր…

Այսպէս անցնում էին Սառայի մանկութեան օրերը Կակայեան ուսումնարանի պատերում…

Հասաւ վերջապէս և ամառը, մօտեցան քննութիւնները։ Սառան ամբողջ օրերով պարապում էր. նա տարւայ ժամանակ աշխատողներից չէր. նա ամեն բան

կարդում էր միայն մի անգամ. եթէ հասկացաւ՝—լաւ, եթէ ոչ՝ նա ձգում էր ձեռից գիրքը և գիրքը և չէր աշխատում բնաւ ըմբռնել այն, ինչ որ չէր կարող մի անգամից հասկանալ. բայց լինում էին րոպէներ, երբ նա կարծես ամեն ինչ աշխարհումս մոռացած, չէր բարձրացնում գլուխը գրքից: Այդ րոպէներից էր և քննութիւնը: Սառան աշխատում էր ամբողջ օրերով. նա ստէպ ստէպ պարապմունքների միջոցին յիշում էր օր. Ջատիկեանի երեսը, նրա բարի, մեղմ, կարծես փայփայող հայեացքով աչքերը, յիշում էր և աւելի եռանդով շարունակում էր իւր պարապմունքները: Վերջապէս հասան և քննութիւնները. Սառան ամենից լաւ պատասխանեց վարժապետների հարցերին և ստացաւ առաջի պարգևը: Այդ բաւականացրեց, շօշափեց նրա ինքնասիրութիւնը, նա ամբողջ այդ օրը գտնվում էր մի տենդային անսովոր յուզմունքի մէջ, նա վազում էր օր. Ջատիկեանի մօտ, փաթաթվում էր նրա վզին, նայում էր աչքերին և յանկարծ բարձրաձայն ծիծաղելով փախչում էր նրանից: Եւ երբ հասաւ գիշերը, Սառան մտաւ իւր անկողինը պարգևը ձեռին, երկար նայեց նա այդ ոսկեզօծ կազմով գրքին, երկար դիտեց այդ գեղեցիկ նկարները, մինչև որ քունը չծածկեց նրա ծանրացած կոպերը: Գիրքը մնաց նրա ձեռին...

Է.

Անցաւ մի քանի տարի և փոքրիկ, կոպիտ Սառան դարձաւ 17 տարեկան վայելուչ, գեղեցիկ կազմուածքով օրիորդ: Այդ միջոցին Կարապետ կօշկակարի աղջիկը մի փոքր հասկացողութիւն կազմեց աշխարհագրութեան, թուաբանութեան, պատմութեան և այլ սրանց նման ծանրակշիռ «թիւնների» մասին. նա մի քիչ ծանօթ էր

նոյնպէս ֆրանսիական լեզուին, գոնէ կարող էր հարկաւոր տեղը առանց կանգ առնելու արտասանել մի փայլուն, փքուն նախադասութիւն, կարող էր նամակի վերջին գրել adieu և կամ կարդալ փողոցներում կար անողների սովորական «Modes et robes'ը Սառան արդէն 6-րդ դասատանն էր, այդ Կովկասեան ուսումնարանի վերջնական զարգացման քաւարանում: Այդ միջոցին Սառան կարողացել էր կազմել իրեն համար մի նոր շրջան. այնտեղից նա ստանում էր նոր տպաւորութիւններ, նոր մտքեր, հայեացքներ և ճաշակ և ապրում էր այդ իւր նոր կեանքով, նոր մտքերով: Ջատկի և Ծննդեան տօներին նա մեծ մասամբ անց էր կացնում ժամանակը իւր հարուստ ընկերուհիների ծնօղների տանը: Այդտեղ Սառան հանդիպում էր Նոր-Նախիջևանի «ինտելլիգենցիային», հանդիպում էր և սկզբից ի հարկէ, ամեն ինչ նրան խորթ էր թվում, մանաւանդ ուսումնարանի բոլորովին առանձնացած կեանքից յետոյ: Սկզբից այդ արտաքուստ փայլուն, այդ անհոգ ուրախ կեանքը շլացրեց Սառային. նա կորցրեց ինքն իրեն. բայց յետոյ ակամայ սկսեց ընտելանալ այդ կեանքին, նա սիրեց այդ հասարակութիւնը, այդ անվերջ, բայց միակերպ պարահանդէսները, դրականական երեկոյթները, խնճոյքները. նա ինքն էլ սկսեց մասնակցել այդ բոլոր զուարճութիւններին և վերջ ի վերջոյ այդ կեանքը բոլորովին յափշտակեց, ներս քաշեց Սառային, և նա, Աստուածածնի փողոցի, այդ ստորին դասի ծնունդը, ընդունեց այդ նոր կեանքի պահանջմունքները և պայմանները առանց ներքին քննութեան. ընդունեց այնպէս, ինչպէս երևան էր հանում նրանց ինքը կեանքը: Սառան իւր հարուստ ընկերուհիների հետ արդէն վաղուց, դեռ չորրորդ դասարանից, բոլորովին հաշտուել էր. պատահում էին րոպէներ. որ Սառան ամաչում էր իւր

այդ անցեալ վարմունքից և սկսում էր կշտամբել իւր անտեղի ատելութիւնը իւր հարուստ ընկերուհիների դէմ. Նա խոստովանում էր, որ միշտ այդ տղայական անբաւականութիւնների սկզբնապատճառը ինքն է եղել։ Այժմ Սառան առաջուայ նման չէր վերաբերվում մինչև անգամ դէպի օր. Հեղինէ Զատիկեանը։ Փոքրիկ Սառան առաջ ջերմ սիրում էր ուսուցչուհի Հեղինէին սիրում էր սաստիկ, այնպէս, ինչպէս կարելի է սիրել միայն մօրը, կամ հարազատ քրոջը։ Բայց ահա արդէն երկու տարի է, ինչպէս այդ ջերմ սէրը յանկարծ սառեց։ Սառան կրկին աշխատում էր ցոյց տալ, որ սիրում է Հեղինէին, որ պատվում է նրան ինչպէս և առաջ, բայց իզուր...

Շինծու սիրոյ կեղծ լինելը ընկնում էր աչքի և նրանց յարաբերութիւնները օրէ օր դառնում էին աւելի և աւելի պաշտօնական...

Սառան ոչ մի անգամ չէր պատահում օր. Հեղինէին Նոր-Նախիջևանի վերին դասակարգի շրջաններում։ Հեղինէին կարելի չէր տեսնել ոչ մէկ երեկոյթի մէջ, որ լինում էին սովորաբար հարուստների տանը համարեա ամեն շաբաթ։ Շատ սակաւ Սառան իւր հարուստ ընկերուհիների օթեակից կարողանում էր տեսնել թատրոնի վերջի կարգերում իւր միշտ լուրջ, կարծես միշտ մտածող ուսուցչուհուն։ Դրա փոխարէն Հեղինէն ստէպ ստէպ մասնակցում էր այն ներկայացումներին, որ տալիս էր ամէն ամիս հայ—թատերասէրների խումբը, նոյնպէս գրականական երեկոներին, ուր կարդացվում էին Գամառ-Քաթիպայի, կոմս Էմմանուէլի բանաստեղծութիւնները, ուր հնչում էր մաքուր հայ լեզուն, ուր թագաւորում էր, գոնէ րոպէներով միայն, հայ ոգին, հայի անցեալ փառքը և մեծութիւնը և արդի աննախանձելի կացութիւնը. այդպիսի տեղերում, այդպիսի շրջաններում, Հեղինէին միշտ

կարելի էր տեսնել, բայց... բայց Սառան չէր սիրում այդ տեսակ պարապմունքներ, նա ձանձրանում էր այդ կարծես միշտ տխուր, միշտ լացող Գամառ-Քաթիպայից, այդ հայից, արդի հայից միշտ մորակող կոմս Էմմանուէլից։ Խելք թռցնող վալսի հնչիւնները աւելի հաճոյ էին թվում Սառային, քան «Մայր Արաքսի ափերով» երգի տխուր, սիրտ կտրատող եղանակը։

Ի՞նչ ազդեցութեան տակ կատարուեցաւ Սառայում այդ անսպասելի փոփոխութիւնը, ինչից դրդուած Աստուածածնի փողոցի ծնունդ Սառան գերադասեց Պարիզի վալսը «Մայր Արաքսի» երգից,—մեղաւորը դրանում Կովկասեան ուսումնարանն էր, թէ Նոր Նախիջևանի յառաջադէմ «կոսմոպօլիտ» երիտասարդները,—վճռել դժուար է, կարծեմ երկրորդը աւելի հաւանական է։ Որքան էլ վնասակար լինէր Կովկասեան ուսումնարանի բռնած ուղղութիւնը և նոյն իսկ գոյութիւնը,—նա չէր սպանում իւր սանիկների մէջ հայ արիւնը, հայութիւնը. ուրեմն Սառայի այդ անսպասելի վերածնութեան պատճառը «ինտելլիգենտ կոսմոպօլիտ երիտասարդներն էին և Սառայի դասընկերուհիները։

—

Մօտենում էին ծննդեան օրերը... բնութիւնը արդէն ծածկուել էր իւր սպիտակ սաւը քօղով. օդը պարզ էր և մաքուր. ցրտերը հասնում էին 25 և մինչև անգամ 28 աստիճանի։ «Կովկասեան հայ օրիորդաց» ուսումնարանում պարապմունքները վերջացած էին։ Հարստի զաւակները տեսչից արձակուրդ էին առնում տօներին. իսկ աղքատներինը, տխուր ման էին գալիս ուսումնարանի սրահում։ Սառան և օր. Հեղինէն այդ րոպէին կանգնած տեսչի սենեակի առաջ, կամաց խօսում էին։

—Դու կրկին գնում ես այս տօներին Ֆաթալօվների մօտ, հարցրեց Հեղինէն՝ դիտելով Սառայի գեղեցիկ դէմքը։

—Այո... հազիւ լսելի ձայնով պատասխանեց Սառան և իսկոյն վայր Թողեց իւր սև, գլորակ, կրակոտ աչքերը։

—Չեմ հասկանում, Սառա, ինչ բաւականութիւն ես գտնում այդ մեծատուների մօտ...։

—Բաւականութիւն... ոչ մի բաւականութիւն, բայց գնում եմ, որովհետև այստեղ անտանելի տխուր է, պատասխանեց Սառան։

—Իսկ այնտեղ ուրախ, շատ ուրախ է, այնպէս չէ... տեսնում ես, ուրախ և բաւականութիւն ես գտնում, նկատեց մջօրէն Հեղինէն՝ առնելով Սառայի ձեռքը։

—Ոչ... հաւատացնում եմ ձեզ... այնտեղ գոնէ կարելի է տխրել հասարակութեան մէջ, ուրիշների հետ, իսկ այստեղ—մենակ տեսնում էք միակ զանազանութիւնը։

—Տխրել... դա մի շատ նուրբ միտք է... նայելով ինչպէս սովորած ես անցկացնել ժամանակը... ինչի ես չեմ տխրում... տես ես միշտ միևնոյն եմ։

—Դուք... դուք կարդում էք, Թարգմանում էք, այնպէս, որ տխրելու ժամանակ մինչև անգամ չունիք, ժպտաց Սառան մի կեղծ, անբնական ժպտով։

—Իսկ դուք ինչի չէք կարդում... հա... մոռացայ, կարդացի՞ր դու այն գիրքը, որ տուի քեզ մեր աշակերտական մատենադարանից։

—Ալիշանի գրուածքները... ոչ... այսինքն դեռ չեմ վերջացրել, հազիւ լսելի ձայնով պատասխանեց Սառան և աւելի կարմրեց։ Հեղինէն յանդիմանօրէն շարժեց գլխով։

—Սառա... Սառա, ինչի խաբում ես ինձ...։ Դու առաջ չունէիր այդ վատ սովորութիւնը. միտդ է, երբ դեռ փոքր էիր, դու միշտ խոստովանում էիր առանց

ծածկելու բոլոր քո մեղքերդ, տղայական չարութիւններդ։

Սառան ոչինչ չպատասխանեց. նա շարունակում էր նայել գետնին և անհանգիստ ճմլում էր շորի ծայրը։

—Սառա... Սառա... լսուեցաւ հեռուից մի բարակ ձայն.

—Գնա... քեզ կանչում է Նինօ Ֆաթալեանցը, նկատեց Հեղինէն։

Ցտեսութիւն... օր. Հեղինէ, արտասանեց Սառան և քաշուեցաւ դէպի Հեղինէն. կարծես նա կամենում էր համբուրել նրան, բայց երևի չհամարձակուեց և գլուխ տալով շտապով հեռացաւ դահլիճից։

—Զարմանալի փոփոխութիւն, մրթմրթաց ինքը իրեն օր. Զաքիկեանը... զարմանալի փոփոխութիւն... այդպիսի մի հաստատ, համակրելի բնաւորութեան տէր աղջիկ յանկարծ... պարահանդէսներ, շլացնող, բայց դատարկ, բոլորովին դատարկ կեանք... ցաւալի երևոյթ... և ով կարող էր կարծել, որ այդ փոքրիկ, առողջ հոգով և մարմնով Սառան, մի օր կը դառնայ թեթևամիտ, հեշտասէր, վատառողջ օրիորդ... այո, վատառողջ... այս երկու տարուայ միջոցում նա քանի անգամ ուշաթափուեց... նա սաստիկ թոյլ է... ջղային հիւանդութեան նշաններ է, ասում է Մուրադեանցը... խեղճ... խեղճ Սառա... իսկ այդ միջոցին, այս տխուր մտածմունքների սկզբնապատճառը, անհոգ, ուրախ վազում էր դէպի տեսչի սենեակը.... նրան հետևում էր օր. Ֆաթալեանը, Նոր-Նախիջևանի Կրեսոսի աղջիկներից մէկը։

—Պարոն տեսուչ, խնդրեմ ինձ արձակուրդ գրեցէք... տօներին ինձ խնդրում է Ֆաթալեանի ընտանիքը։

—Արձակուրդ... լաւ... բայց ասացէք խնդրեմ, նկատեց մջօրէն տեսուչը... ինչի այս վերջին ամսուայ ձեր Թուանշանները աւելի վատ են առաջուաններից։

—Ինչպէս, կարմրեց Սառան։

—Տեսէք... Թուաբանութիւնից այժմ ունիք «3», իսկ անցեալ ամիսները դուք միշտ «5» ունէիք, նոյնպէս պատմութիւնից, հայերէնից... լաւ չէ, օրիորդ, լաւ չէ... խնդրեմ այս տօներին պարապեցէք։

—Այո... այո... շտապեց պատասխանել Ֆաթալեանցը, մենք միասին կը պարապենք։

Տեսուչը այնպէս նայեց նրա վերայ, կարծես դժուարանում էր հաւատալ նրա խօսքերին։

—Լաւ, կտեսնենք, քննութիւնները ամեն ինչ կապացուցանեն։ Եւ տեսուչը սկսեց ստորագրել արձակաթղթերը...։ Մի րոպէից յետոյ աշակերտուհիները դուրս եկան արձակաթղթերը ձեռքերին տեսչի առանձնասենեակից։

Բ.

188... յունուարի 1-ն էր։ Մութ գիշերը արդէն ծածկել էր Նախիջևանը։ Եղանակը անտանելի էր, վերևից մաղում էր ձիւնը, որ դեռ գետնին չհասած հալվում էր և կազմում էր կեղտոտ լճակներ։ Փողոցներում արդէն վառուել էին լապտերները և նրանց աղօտ լոյսը կարծես լողում էր այդ փոքրիկ լճակներում. ժամը գիշերուայ 10-ն էր։ Քաղաքի ամենալաւ, քարով հարթուած, փողոցում գտնվում էր աղա Ֆաթալեանցի հոյակապ, երկյարկանի տունը, այս գիշեր չքեղ լուսաւորուած էր. նրա բոլոր պատուհաններում երևում էին երկ-երկու ճրագներ և անց ու դարձողների ստուերներ. տան առաջ կանգնած էին մի քանի կառքեր և ամեն րոպէ համարեա մօտենում էին ուրիշ, նոր կառքեր և թողնելով իրենց տէրերին տան լայնարձակ սրահում, կրկին հեռանում։ Ամեն րոպէ բացուող դռներից լսվում էր երաժշտութիւնը։

—Չգիտես, ինչ կայ այս գիշեր աղա Մարկոսի տանը, հարցրեց մի անցորդ իւր ընկերից ու կանգ առաւ տան առաջ։

—Այս օրերս վերադարձել է նրա որդին... գիտես այն, որ զինուորական է։ Մարկոս աղան տօնախմբութիւն ունի այդ պատճառով։

—Ա՜... արտասանեց անցորդը և շարունակեց իւր իւր ճանապարհը։

Իսկ այդ միջոցին աղա Ֆաթալեանցի լայնարձակ, չքեղ զարդարած դահլիճում լսվում էր վալսի յափրշտակող բախումները. զոյգ-զոյգ պարողները լցուել էին դահլիճի մէջտեղը. անդադար երևում էին գեղեցիկ մետաքսեայ շորեր, մերկացրած ձեռներ... պարանոցներ, ծաղկեայ պսակներ... լսվում էր բարձրաձայն, անհոգ ծիծաղ, բացականչութիւններ, խօսակցութիւն... դահլիճում փռուել էր անուշահոտ իւղերի և ջրերի հոտը։ Սպասաւորները, սև շորերը հագերին և սպիտակ ձեռնոցները ձեռքերին, բաժանում էին հանդիսականներին քաղցրաւենի, խնձոր, տանձ...։ Միւս սենեակներում բացուած էին «կանաչ սեղանները» և Նախիջևանի կրեսոսները թուղթ էին խաղում. այդտեղ թանձր ծուխի քուլաները համարեա ծածկում էին խաղացողներին... երբեմն երբեմն լսվում էին «փաս», «վիսթ» հատ ու կտոր բացականչութիւնները և նորից ամեն ինչ ընկղմվում էր խորին լռութեան մէջ։

Հանդիսականներից շատերը և մանաւանդ կանանց սեռը հետաքրքրութեամբ հետևում էր այդ միջոցին մի զոյգի պարելուն։ Դա տանտիրոջ որդին, զինուորականն էր և Սառան։ Բարձրահասակ, սև մազերով, սև աչքերով, մի քիչ նիհար երիտասարդին կարելի էր անուանել մինչև անգամ գեղեցիկ, եթէ նրա ամբողջ երեսին չնշմարուէր մի ձանձրութիւն կեանքից, մի անբաւականութիւն. կար-

ծես նա սաստիկ յօգնած լինէր և կամ մի քանի գիշեր բոլորովին չքնած. Նրա աչքերի մօտ կարելի էր նկատել մանր կնճիռներ. այդ կնճիռները փաթաթուելով անհամար կապերով, խորը ներս էին ձգում նրա անփայլ աչքերը և մի անախորժ տպաւորութիւն էին գործում դիտողի վերայ։ Ցերեկով այդ երիտասարդի երեսը կորցնում էր իւր կարմրութիւնը, դեղնում, կարծես բռնի մաշվում, ծերանում էր։ Երիտասարդին Գրիգոր էին անուանում, նա չկարողանալով աւարտել գիմնազիօնը, դուրս էր եկել 6-րորդ դասարանից և մտել զինուորական ծառայութեան մէջ։ Հօր մի քսակը բացեց նրա առաջ ամենագեղեցիկ հագնուած գնդերից մէկը և այնտեղ երիտասարդ Յաթալեանը շուտով կարողացաւ գրաւել միւս սպաների սէրը. Նրա վատնած փողը, նրա քաջագործութիւնները իբրև առասպելական զրոյցներ պատմվում էին ամբողջ Պետերբուրգում։

—Զարմանում եմ, ո՛րքան բաղդաւոր է այդ... կօշկակարի աղջիկը, Սառան, նկատեց կծու կերպով մի պառաւ կին, որի արդէն նոյնպէս մի քիչ պառաւած աղջիկը դեռ ոչ մի անգամ չէր պարել... տեսէք, Գրիգորը ամբողջ երեկոյ միայն նրա հետ է պար գալիս, դարձաւ նա իւր հարևան տիկնոջը։

—Այո... ես էլ եմ զարմանում... վերջապէս այդ աչքի կարող է ընկնել, պատասխանեց տիկինը։

—Ի հարկէ... բայց երևի Պետերբուրգում դրա վերայ շատ քիչ են ուշադրութիւն դարձնում, նկատեց զայրացած պառաւը և հեգնօրէն ժպտաց։

Այդ րոպէին վալսը վերջացաւ և սպան առաջարկեց իւր թևը Սառային։

—Ո՞ւր կը կամենաք գնալ, օրիորդ, դարձաւ նա Սառային պաշտօնական, արդէն վաղուց սովորած քաղա-

քավարութեամբ. կը հրամայէք արդեօք ձեզ կանանց սենեակը հասցնել։

—Ոչ... ես կամենում եմ տեսնել ձեր քրոջը, Նինօյին. գնանք, որոնենք նրան, պատասխանեց կարմրած, հոգնած Սառան։ Այդ րոպէին, ճշմարիտ, նրա գեղեցկութիւնը հրաշալի էր. թշերը անսովոր կարմրել էին, աչքերը, այդ սև, գլորակ աչքերը, վառվռում էին մի սուր, փոսփորային կրակով. ամբողջ կազմուածքը կարծես հրապուրում էր ձեզ, քաշում էր իւր կուսական դիւթիչ տեսքով. հանդիսականներից շատերը նախանձով նայում էին այդ բարձրահասակ, գեղեցիկ օրիորդին։

—Երևի նա ուսանող Նազարեանցի հետ է, պատասխանեց Գրիգորը, որոնելով հասարակութեան մէջ Նինօյին։

—Ա՛խ... ինչ սարսափելի շոգ է այստեղ, նկատեց Սառան բանալով իւր հովհարը։

—Այո... դահլիճը շատ փոքր է այսքան հասարակութեան համար... մեզ մօտ, Պետերբուրգում, այսպիսի դահլիճներում միայն պարում են, իսկ զբօսնելու համար նշանակուած են առանձին սենեակներ։

—Ի հարկէ այնտեղ... Պետերբուրգում... միթէ կը կամենայիք դուք հաւասարել մեր խեղճ, ողորմելի Նախիջևանը ձեր մայրաքաղաքի հետ։

—Ոչ... ես կամենում եմ միայն ասել, որ գոնէ մի բան այստեղ յիշեցնում է ինձ մայրաքաղաքի հասարակութիւնը, այնտեղի bon monde-ը։

—Ի՞նչ, չէ՞ կարելի արդեօք իմանալ, հարցրեց Սառան։

—Ի՛նչ... ախ, եթէ կարողանայի ասել... բայց ես հարկադրուած լռում եմ։

—Ասացէք խնդրեմ։

—Եւ դուք չէք բարկանայ։

—Ե՞ս... ինչի... միթէ ձեր խօսքերը վերաբերւում են ինձ, հարցրեց հետաքրքրուած Սառան։

—Ինչպէս ասեմ... և այո, և ոչ։

—Ես չեմ հասկանում ձեզ։

—Լաւ... այո, ձեզ են վերաբերւում։

—Եթէ այդ խօսքերում չկայ ոչինչ վիրաւորական...

—Օ՜... ինչ էք ասում, օրիորդ... միթէ ես կարող եմ վիրաւորել ձեզ... և ապա ընդունեց մի կեղծ, տրագիկական դէմք։

—Ոչ... ես չեմ ասում այդ... դէ, յայտնեցէք ձեր միտքը...

—Միայն խոստացէք, որ չէք բարկանայ։

—Լաւ... խոստանում եմ։

—Այն՝ ինչ որ յիշեցնում է ինձ մայրաքաղաքի բարձր հասարակութիւնը, դուք էք, օրիորդ... այո, դուք արժանի էք զարդարելու մայրաքաղաքի ամենաազնիւ շրջանները։

—Օ՜... ինչպէս լաւ շողոքորթում էք, պարոն, միթէ չգիտէք, որ ես, ընդհակառակը, ամենաստորին դասակարգից եմ, պատասխանեց մի փոքր կարմրելով Սառան։

—Ախ, օրիորդ, մեր 19-երորդ դարում ուշադրութիւն չեն դարձնում ծագման վերայ. այդ միջնադարեան սնոտիահաւատութիւնների ժամանակը անցել է անդարձ...

—Բայց ես այնպէս մի որ և է անձնական արժանաւորութիւն էլ չունիմ, ես դեռ նոր կեանք եմ մտնում, անհամարձակ պատասխանեց Սառան. երևի Գրիգորի վերջի խօսքերը փայփայեցին նրա ինքնասիրութիւնը։

—Արժանաւորութիւն... ինչ էք ասում, օրիորդ. ձեր արժանաւորութիւնների ամենագլխաւորը՝ ձեր կախարդիչ գեղեցկութիւնն է, որին երկրպագում եմ ես, նկատեց Գրիգորը հազիւ լսելի, կրքոտ ձայնով։

Այդ րոպէին նրանք անցնում էին մի բոլորովին դատարկ սենեակով. դա Մարկոս աղայի ընդունարանն էր։

Առաստաղից կախ տուած մութ-կարմիր լապտերի լոյսը մի տարօրինակ, դիւթային տեսք էր տալիս այդ սենեակին։

—Չէ՞ք կամենում արդեօք մի քիչ հանգստանալ, առաջարկեց Գրիգորը, մօտեցնելով մի թաւշապատ բազկաթոռ։

Սառան ոչինչ չպատասխանեց։

—Համեցէք, կրկնեց Գրիգորը և աւելի մօտեցրեց բազկաթոռը։

Սառան համարեա մեքենայաբար նստեց։

—Ինչպէս լաւ է այստեղ, այնպէս չէ՞, նկատեց Գրիգորը։

—Այո, միայն կարողացաւ պատասխանել Սառան։

—Ես շատ եմ սիրում մենակութիւնը այսպիսի կիսալոյս սենեակում... այստեղ աւելի վառվում է մարդուս երևակայութիւնը և նրա թռիչքը աւելի արագ է...։

—Այո, կրկնեց Սառան։

Մի քանի րոպէ տիրեց լռութիւնը. Գրիգորը մի քիչ թեքուեց Սառայի կողմը։

—Այս ինչ գեղեցիկ մատանի է, նկատեց նա բռնելով Սառայի ձեռքը, խեղճ օրիորդը բոլորովին շուարեց. մի անսովոր դող անցաւ նրա անդամներով։

—Շատ գեղեցիկ է, որտեղ էք գնել։

—Այդ իմս չէ... այդ Նինօյինն է։

—Ա՜... իսկ ես կարծեցի որ ձերն է, նկատեց Գրիգորը սեղմելով Սառայի ձեռը և մի լիրբ, կրքոտ հայեացք ձգելով նրա վերայ։

Նորից տիրեց լռութիւնը։ Սառան չէր համարձակվում հանել իր ձեռը Գրիգորի ձեռից։

—Սառա... Սառա, թոթովեց վերջինը։

—Ի՞նչ է, յանկարծ սթափուեց կարծես քնից Սառան։

—Լսեցէք... այլ ևս ես անկարող եմ պահել ձեզանից այն սէրը, որ մաշում է ինձ... լսեցէք, աղաչում եմ ձեզ, այո, ես սիրում եմ ձեզ, լսո՞ւմ էք, ես սիրում եմ, ես անկարող եմ ապրել առանց ձեզ... իմ հրեշտակս...

Եւ Գրիգորի շրթունքները դիպան Սառայի կարմրած երեսին։

—Թողէք... թողէք ինձ... ասաց նա յետ քաշուելով Գրիգորից։

—Սառա... անգո՛ւթ... դուք խլում էք ինձանից իմ երջանկութիւնը... մի համբոյր միայն...

Սառան չէր շարժւում։ Նա կարծես արձանացած լինէր։

—Լսեցէք ինձ... ես խնդրում եմ ձեր ձեռը... յաւիտեան ամենի առաջ դու կը լինես իմ կինս... Սառա... Սառա... լսիր... կեանքը առանց քեզ կորցնում է ինձ համար իւր նշանակութիւնը... մի մերժիր ինձ... լսո՞ւմ ես... Սառա... դու համաձայն ես... այո... մրթմրթում էր Գրիգորը հազիւ լսելի, խուպոտ ձայնով. նրա երեսը կարմրել էր... աչքերը սկսել էին ցոլալ. սառը քրտինքը ծածկել էր նրա ճակատը։

Նա խաղում էր իւր սովորական դերերից մէկը։

—Անգութ, անսիրտ Սառա... դու մերժում ես ինձ... լաւ... ապրիր ուրեմն ուրիշների համար, իսկ անբաղդ Գրիգորը կարող է այժմ մեռնել և կամ ապրել իբրև դիակ։

Նա դիտմամբ աշխատում էր շարժել Սառայի գութը, կարեկցութիւնը և նա չը սխալուեց։ Սպան արդէն դռան մօտ էր, երբ նրա ականջին հասաւ Սառայի ձայնը։

—Սպասեցէք... սպասիր Գրիգոր։

—Հրեշտակս, դիցուհիս, մրթմրթաց Գրիգորը, և ջերմ սեղմեց վրդովուած, բոլորովին յուզուած Սառային իւր կրծքին։

Սառայի աչքերը մթնեցին. նրա գլուխը սկսեց պտոյտ գալ, սիրտը սաստիկ բաբախեց։ Նա երևի կը գլորուէր գետին՝ եթէ Գրիգորը չբռնէր նրա թևը։

—Ջուր... խնդրեմ, ջուր, հազիւ շշնջաց Սառան։

—Նստիր, ես իսկոյն կը բերեմ, պատասխանեց բոլորովին հանգիստ ձայնով Գրիգորը, և դուրս եկաւ սենեակից։

—Անգին Գրիգորս, սիրելիս, շշնջաց Սառան ուշքի գալով, նա ինձ սիրում է, այո... սիրում է...

Եւ Սառայի երեսը փայլեց մի երջանիկ ժպտով։

Մի րոպէից յետոյ, ամեն ինչ կարգի եկաւ և երբ Սառան և Գրիգորը կրկին մտան դահլիճ, նրանց հանդիպեց Նինօն։

—Ես ձեզ էի որոնում, ո՞ւր էիք, հարցրեց նա։

—Իսկ մենք քեզ, շտապեց պատասխանելու Գրիգորը։

—Ա՛խ... ինչ անտանելի մարդ է այդ Նազարեանցը... ամբողջ մի ժամ միայն ձանձրալի առարկաների վերայ էր խօսում... երևակայեցէք, որքան հետաքրքիր է այդ։

Սառան ժպտաց։

—Ասում է, թէ պէտք է հիմնել ձրի դպրոց աղքատ մանուկների և աշակերտուհիների համար, յետոյ տօն և կիւրակի օրերը կամենում է բանուորներին հասարակական դասեր տալ, կարդալ աշխարհագրութիւն, պատմութիւն, սովորեցնել տարրական թուաբանութիւնը, կրօնը... ա՛խ անտանելի ուսանող, հաւատացիր, Սառա, որ ես քիչ մնաց որ յօրանջէի։

—Այդ շատ գեղեցիկ կլինէր, նկատեց կծու կերպով Գրիգորը,—Նազարեանցը, չնայելով որ շատ զարգացածներից չէ, այնու ամենայնիւ նա յիմար չէ, աւելացրեց նա պաշտպանողական եղանակով։

—Գնանք, Սառա, քեզ բան ունիմ ասելու, նկատեց

անբաւական ձայնով Նինօն և առնելով Սառայի թևը, հեռացաւ Գրիգորից։

—

Գիշերը արդէն անցնում էր. երկնակամարը սկսել էր կապտել։ Աստղերը հետզհետէ անյայտանում էին երկընքում, փողոցի լապտերները արդէն վաղուց հանգցրած էին. Պարերը վերջացել էին և դահլիճում վերցնում էին ընթրիքի սեղանը․․ հիւրերը ցրուել էին. ծառաները հանգցնում էին լապտերները և ճրագները։

—Գիշեր բարի, Նինօ, դարձաւ Գրիգորը իւր քրոջ համբուրեց նրա ճակատից.—Գիշեր բարի, օրիորդ, և նա ջերմ սեղմեց Սառայի ձեռը։

Արդէն դրսում լուսանում էր, երբ Գրիգորը մտաւ անկողին։

—Ա՜խ… որքան գեղեցիկ է այդ փոքրիկ Սառան, մտածում էր նա, ինչ արբեցնող տեսք… ա՛յ թէ կարողանայի փախցնել նրան Պետերբուրգ… որքան կզարմանային և կնախանձէին ընկերներս… Այնտեղ կտեղաւորէի նրան մի լաւ հիւրանոցում, կվարձէի ձիեր, կառք, օպերայի օթեակ… մանաւանդ, որ իմ Ժանէտս արդէն ձանձրացնում է ինձ… այո… լաւ կլինէր… բայց խեղճ աղջիկը կարծեմ համոզուած է, որ պիտի պսակուիմ իւր վերայ. այդ էր պակաս… ա՜խ կոպիտ provinciale… և Գրիգորը հեգնօրէն ժպտաց։

Մի բոպէից յետոյ ննջարանում լսւում էր նրա հանդիստ շնչառութիւնը։

Այդ իսկ միջոցին մի ուրիշ սենեակում մտնում էր անկողին Սառան. Նրա ձեռում կարելի էր նկատել մի թղթի կտոր, դա Գրիգորի լուսանկարն էր, որ Սառան գաղտնի վերցրել էր Նինօյի գրասեղանից։

Սառան նոյնպէս մտածմունքի մէջ էր…

—Սիրելի՛ս, շշնջաց նա սեղմելով պատկերը կրծքին, սիրելի՛ս… ինչպէս նա սիրում է ինձ․․ Աստուած իմ, որքան բաղդաւոր եմ… ես, մի անյայտ, կօշկակարի աղջիկ, պիտի դառնամ առաջի մեծատուն որդու կինը… սիրելի՛ս, հրեշտակս, և նա կրկին սեղմեց պատկերը կրծքին… քունը թռչում էր նրա աչքերից. վերջապէս նա քնեց։ Բաղդաւորութեան, անհուն երջանկութեան ժպիտը խաղում էր նրա անմեղ շրթունքներին։

Թ.

Յունուար ամիսը վերջանում էր. Ծննդեան ուրախ տօները անդարձ գլորուեցան յաւիտենականութեան անդունդը. ամէն ինչ կարգի եկաւ և կեանքը կամաց կամաց ընդունեց իւր սովորական առօրեայ կերպարանքը։ Կակայեան ուսումնարանի սանիկները պատրաստւում էին քննութիւններին. մինչև անգամ Նինօ Ցաթալեանցը չէր ձգում գիրքը ձեռից, միայն Սառան ոչինչ չէր անում. կարծես այդ քննութիւնները նրան չէին վերաբերվում. Նա ժամերով, գլուխը կրծքին թողած, չափում էր ուսումնարանի նեղ ու երկար սրահը. Նա ոչ ոքի հետ չէր խօսում. Նրա երեսը ահա մի ամիս էր, որ չէր ժպտում, չէր ծիծաղում, ընդհակառակը, այդ ուրախ, միշտ անհոգ երեսը կարծես այժմս ստացած լինէր մի անսովոր, լուրջ գծագրութիւն. կարծես Սառան ճնշվում լինէր մի ծանր հոգեկան հոգսով։ Սկզբից ընկերուհիները միշտ հարցնում էին Սառայից այդ փոփոխութեան պատճառը, կարծես հոգային նրա համար, բայց Սառայի լռութիւնը, նրա չարչարուած՝ մաշուած երեսը, նրա կծու պատասխանները վերջ դրին այդ անտեղի հոգատարութիւններին։ Նինօ

Ցաթալեանցը մինչև անգամ կորցրեց երբ և իցէ իւր ամենամտերիմ ընկերուհու գաղտնիքը իմանալու յոյսը։

Երբեմն Սառան առնում էր իւր ձեռը մի որ և իցէ գիրք, մեքենայաբար սկսում էր թերթել, աշխատում էր ըմբռնել գրուածքի միտքը, բայց իզուր. տառերը, խօսքերը, ամբողջ նախադասութիւնները շարքով անցնում էին նրա աչքի առաջ՝ չթողնելով ոչ մի տպաւորութիւն նրա մտքի, ուղեղի վերայ։ Սառայի այդ տարօրինակ դրութիւնը շատ էր անհանգստացնում օրիորդ Հեղինէին. Նա նոյնպէս քանի անգամ աշխատել էր մօտենալ Սառային, քննել նրա սիրտը և եթէ հարկաւոր է, դարման տալ նրա ցաւերին, բայց իզուր...։ Սառան կամ լռում էր, կամ լալիս էր. բայց և այնպէս օր. Զատիկեանը չէր կորցնում իւր յոյսը. և այդ էր պատճառը, որ նա մի գեղեցիկ օր, ճաշից յետոյ, երբ Սառան մենակ կանգնած էր լուսամուտի մօտ մօտեցաւ նրան։

— Սառա... դու հիւանդ ես .. այո՞ դարձաւ նա կարեկցաբար, առնելով Սառայի տաք ձեռը։

— Ոչ... ես առողջ եմ, պատասխանեց Սառան և իսկոյն յետ քաշեց իւր ձեռը։

— Առո՞ղջ ես... աւելի լաւ... բայց ինչի՞ ձեռդ այդպէս տաք է... դու ջերմ ունիս... գնանք բժշկին... Մուրադեանցը այստեղ է։

— Ոչ... թողէք ինձ մենակ խնդրում եմ ձեզ... թողէք։

— Ինչի՞ ես վշտանում... միթէ դու չես հաւատում, որ իմ կարեկցութիւնը անկեղծ է... Միթէ չես տեսնում, Սառա, որ ես արդէն հասկացել եմ քո այդ դրութեան պատճառը։

— Պատճա՞ռը. . . ասացէք, ինչ էք հասկացել, անհանգստութեամբ նկատեց Սառան։

Նա գունաթափուեց։

— Հանգստացիր, սիրելիս, հանգստացիր... դու գաղտնիք ունիս և այդ գաղտնիքի ծանրութիւնը ճնշում է քեզ... խոստովանիր ինձ և դու կը հանգստանաս.. եթէ կամենում ես՝ արտասուիր մինչև անգամ, արտասուքը միշտ թեթևացնում է մարդու հոգին ..

— Արտասուիլ... բայց ինչի՞, աշխատեց ժպտալ Սառան, բայց այդ ժպիտը այնչափ բռնի էր, այնչափ անբնական, որ ծռմռեց միայն նրա երեսը։ Սառան ինքն էլ նկատեց այդ և աւելի ցած թողեց իւր գլուխը։

— Սառա, լսիր... ինչի՞ ես վերջի ժամանակներս փախչում ինձնից... դու առաջ սիրում էիր ինձ... ամեն բան խոստովանում... սիրում էիր... այնպէս չէ՞։

— Ես այժմս էլ սիրում եմ ձեզ, օր. Հեղինէ, փսփսաց Սառան.

— Սիրում ես... ոչ... մի խաբիր, Սառա, մի խաբիր... ես լաւ գիտեմ, որ դու անկարող ես խաբել, մանաւանդ ինձ. . Սառա, մի զսպիր արտասունքներդ...։

Սառան փաթաթուեց Հեղինէի վզին և առատ արցունքները թրջեցին օր. Զատիկեանի երեսը...

— Այդպէս... այո... լա՛ց... լաց, սիրելիս... այդ լաւ է քեզ... մի՛ ամաչիր... այստեղ ոչ ոք չկայ։

— Ա՛խ... Հեղինէ... եթէ իմանայիք, որքան տանջվում եմ ես... ույժ չմնաց արդէն... ես զգում եմ, որ պիտի հիւանդանամ... ես բոլորովին մաշուել եմ. . ազատեցէք, Հեղինէ, ինձ այս դրութիւնից, ազատեցէք։

— Տանջվո՞ւմ ես... բայց ինչի՞։

Սառան լուռ լալիս էր։

— Ասա, սիրելիս, բա՛ց քո սիրտդ։

Սառան կրկին լուռ էր։

— Սառա, միթէ ինձ չես հաւատում... վկայ Աստուած, որ ես չէի սպասում քեզանից... դու անպատվում ես

ինձ... և Հեղինէն ուղղուեցաւ դէպի դուռը։

—Օր. Հեղինէ... Հեղինէ... սպասեցէք. . սպասիր... ես այժմս... թող որ շունչ քաշեմ... դարձիր, Հեղինէ, դարձիր։

Հեղինէն դանդաղ քայլերով մօտեցաւ Սառային։

—Բաց սիրտդ, զաւակս... ցոյց տուր քու ցաւերդ ինձ. և Հեղինէն Համբուրեց Սառայի սաստիկ տաք ճակատը։

—Ներեցէք ինձ, Հեղինէ... ինչ որ ասելու եմ ձեզ շատ ծանրակշիռ է, և... և... անվայել դուցէ... Հեղինէ... Հեղինէ... ես սիրում եմ... ես անբաղդ եմ...

Եւ Սառայի խօսքերը հազիւ էին լսւում։

—Սիրում ես... շուարեց յանկարծ օր. Ջատիկեանը։

—Այո... սիրում եմ... Գրիգորին... Ֆաթալեանցին, հազիւ շշնջաց Սառան և ծածկեց իւր երեսը Հեղինէի կրծքում։

Դահլճում լսւում էր նրա խուլ հեկեկանքը։

—Բայց ինչի՞ տանջուել... լաւ... սիրում ես... երևի նա էլ է սիրում քեզ... ուրեմն, ինչ ես կամենում... դու կաւարտես... կպսակուէք...

Սառան բարձրացրեց իւր գլուխը, նրա աչքերը փայլեցին մի սուր կրակով. նա ժպտաց. բայց այդ ժպիտը երևի ցաւ պատճառեց նրան։

—Ոչ... ոչ... նա չէ սիրում ինձ... նա խաղում էր ինձ հետ... անգութ... նա խոստացաւ պսակուել, իսկ այժմս... ահ նա անխիղճ է... նա վատ է...

Արտասուքը խեղդեց նրա ձայնը։

—Հանգստացիր, զաւակս... անդադար կրկնում էր շուարած Հեղինէն. նա չէր սպասում, որ Սառայի դաղտնիքը այդ տեսակներից է։

Սառան լալիս էր։

—Սառա, կարելի է նա սիրում է քեզ, կարելի է դու սխալուել ես...

—Սխալուե՞լ... ո՛չ, հեգնօրէն նկատեց Սառան... ո՛չ, նա ինքը ասաց այդ... ահա նա չէ պատասխանում իմ նամակներիս... նա առաջարկեց ինձ փախչել Պետերբուրգ և այնտեղ ապրել միասին... առանց պսակի։

Սառան այլանդակուեց։

—Անբարոյական հրէշ, միայն կարողացաւ մրթմնթալ բարկացած Հեղինէն։

Սառան դողում էր. նրա երեսը բոլորովին սպիտակել էր։

—Մոռացիր նրան, աշխատիր միշտ կարդալ, մխիթարում էր նրան Հեղինէն։

—Մոռանա՞լ... ինչ ես ասում, Հեղինէ... միթէ կարելի՞ է մոռանալ այն, ինչ որ արդէն խորը դրոշմուել է սրտումս... ոչ...

Սառայի ձայնը դողում էր և մարմինը ցնցողաբար սարսռում էր։

—Տեսնո՞ւմ ես, նա խաբեբայ է։

Խաբեբա՞յ... ոչ... մի անարգիր նրան... նա չէ կարող պսակուել ինձ վերայ... նրա հասարակական դրութիւնը թոյլ չէ տալիս։

—Իսկ խօսքեր...

—Ոչ... նա ազնիւ է... ախ, Հեղինէ, եթէ իմանայիր ինչպէս բարի է նա, ինչպէս գեղեցիկ... ինչպէս ջերմ սիրում էր ինձ... իսկ ես... Աստուած իմ, ես կեանքս կը զոհէի նրա երջանկութեան համար և... կը զոհեմ էլ... թող երջանիկ լինի նա, իսկ ես... Գրիգո՛ր... անգո՛ւթ...

Եւ Սառայի ձայնը յանկարծ կտրուեց. լսւում էին միայն խուլ կոկորդային հեկեկանքներ. նա դողաց, ցնցուեց քանի մի անգամ, նրա աչքերը փակուեցին, դու-

Նրա շրթունքները պինդ սեղմուեցին, ձեռները անզօր ընկան ցած եւ նա գլորուեց գետին։ Սառան ուշաթափուեց։

Այդ օրուայ երեկոյին, Ղալայեան ուսումնարանի փոքրիկ հիւանդանոցը լուսաւորուած էր. մահճակալներից մէկի վերայ երեւում էր մի երկար, սպիտակ փաթաթոց. այդ փաթթոցը ամեն կողմից շրջապատուած էր սառուցներով. դա Սառան էր։

Նա նոր քուն էր մտել, մի անհանգիստ, տենդային քուն։ Այդ փոքրիկ, աղօտ լուսով լուսաւորուած սենեակի անկիւնում կանգնած էին երկու հոգի, դրանք բժիշկ Մուրադեանցը եւ օր. Զատիկեանցն էին։

—Ինչպէս է Սառան, ասացէք բժիշկ, հազիւ լսելի ձայնով շշնջաց Հեղինէն, յոյս կա՞յ արդեօք։

—Դեռ վճռողական պատասխան չեմ կարող ձեզ տալ. միայն այսքանը կասեմ, որ հիւանդութիւնը շատ վտանգաւոր է…

—Բայց յո՞յս… յոյս կա՞յ, անհանգստութեամբ հարցրեց Հեղինէն, նայելով բժշկի աչքերին։

—Այդ կախուած է, օրիորդ, հիւանդի քնի տեւողութիւնից… եթէ մի անգամ գոնէ Սառան քնանի այս գիշեր, մենք կարող ենք յափշտակել նրան մահուան ժանիքներից։

—Ես կը մնամ այստեղ ամբողջ գիշերը։

—Այո՛, օրիորդ, ես ինքս կամենում էի խնդրել ձեզնից այդ… ես գնում եմ այս րոպէիս մի ուրիշ հիւանդի մօտ եւ 1 ժամից կը վերադառնամ… ես նոյնպէս չեմ քնիլ այս գիշեր…

Հեղինէն խորին պատկառանքով նայեց Մուրադեանցի լուրջ, ասպետական երեսին։

Վերջինս մի րոպէից յետոյ, հազիւ լսելի քայլերով դուրս եկաւ սենեակից։

Հեղինէն առանց ձայնի մօտեցաւ հիւանդի անկողնին։

Սենեակում տիրում էր խորին լռութիւն. միայն ժամանակ առ ժամանակ լսւում էր Սառայի անկանոն, շուտ շուտ կրկնուող շնչառութիւնը. յանկարծ նա շարժուեց անկողնում եւ մի ծանր հառաչանք թռաւ նրա հիւանդ, մաշուած կրծքից։ Հեղինէն աւելի մօտեցաւ նրան, աւելի խոնարհեց իւր գլուխը եւ շունչը պահելով սկսեց մտիկ տալ. բայց ամեն ինչ լուռ էր եւ կրկին լսւում էր Սառայի ծանր, անհանգիստ շնչառութիւնը։

Ժ.

Անցաւ մի ամիս եւ հասաւ մարտը իւր անվերջ ցեխ եւ անձրեւներով։ Այդ միջոցին Մուրադեանցի հմտութիւնը եւ Սառայի երիտասարդութիւնը—նրա այդ ամուր, առողջ դասակարգին յատուկ կազմուածքը, վերջապէս յաղթեցին ծանր տենդային հիւանդութեան։ Սառան արդէն մի քանի օր էր, որ բժշկի հրամանով թողել էր անկողինը եւ ման էր գալիս Հեղինէի օգնութեամբ հիւանդանոցի փոքրիկ սենեակում։ Բայց, Աստուած իմ, ո՛րքան թանկ գնով էր ստացել Սառան այդ իւր նոր կեանքը. ո՛րքան չարչարուել, մաշուել էր նա. նրա աչքերը կորցրել էին իրենց սովորական փոսփորային սուր փայլը եւ խորը ներս էին ընկել խոռոչքի մէջ. նրա երեսի առողջ կարմրութիւնը անհետացել էր. այժմ այդ երեսը նիհարացել եւ այն աստիճանի դեղնել էր, որ նրա կապոյտ երակները յայտնի երեւան էին գալիս դիտողի աչքին։ Սառայի երկար, սեւ մազերը հիւանդութեան միջոցին թափուել էին, այժմ այդ մազերի 1/10-ն անգամ չէր մնացել, նրանք սափրած էին։ Այդ հիւանդութիւնը ար-

տաքին փոփոխութիւններից ջոկ, գործել էր Սառայի մէջ և ներքին փոփոխութիւններ։ Նա աշխատել էր, որքան կարելի է մոռանալ Գրիգոր Ցաթալեանցին. նա երբէք չէր խօսում նրա մասին և երբ ուրիշները սկսում էին, Սառան խնդրում էր, որ լռեն։ Առաջուայ միշտ զուարթ, միշտ անհոգ ուրախ Սառան դարձել էր ծանրախոհ, մի տխուր դէմքով օրիորդ, նրա միշտ ժպտող երեսը կրում էր այժմս խոր մտքի կնիքը. այդ փոքրիկ, սպիտակ, կարծես մարմարինեայ ճակատը ծածկուել էր փոքրիկ, հազիւ նկատելի խորշոմներով...

Սառան այժմ, որքան կարելի է, աշխատում էր հեռանալ իւր հարուստ դասընկերուհիներից, և երբ ժամանակ առժամանակ նրանք գալիս էին այցելութեան, նա ձանձրանում էր։ Դրա փոխարէն, նա կրկին մօտեցաւ Հեղինէին. ամբողջ մի ամիս օր. Ջաւիկեանը չէր հեռացել նրա անկողնից և ամեն ծանր րոպէներում, ամբողջ գիշերներով, գլուխը բարձի չդրած, անց էր կացնում Սառայի մահճակալի մօտ։ Այդ երկար, սոսկալի երկար րոպէներին, մտերմական յարաբերութիւնները, սէրը՝ որ մի անգամ սառել էր, նորից տեղի ունեցան այդ երկու օրիորդների մէջ։ Նորից Սառան սիրեց Հեղինէին և կարծեօք սիրեց աւելի ջերմ, աւելի հաստատ, քան առաջ. նա ինքը իրեն յանդիմանում էր իւր այդ ժամանակաւոր անջատման համար. յիշում էր Հեղինէի խօսքերը, խորհուրդները և միշտ իրեն էր յանցաւոր գտնում. և ճշմարիտ, եթէ նա ժամանակին հետևէր օր. Ջաւիկեանի խորհուրդներին, անշուշտ կարող էր ազատուել այդ փորձանքներից.—«Եւ իրաւ, մտածում էր նա, ես մոռացայ իմ հասարակական դրութիւնս և մօտեցայ, դժբաղդաբար, ինձանից բարձրերին... ես, կօշկակար Կարապետի աղջիկը—ես, և աղա Ցաթալեանցները ով... Սառան այդ

րոպէներին դառն և հեգնօրէն ժպտում էր...։—Ես, շարունակում էր նա իւր մտածողութիւնը, կարծեցի, որ ուսումը, մտաւոր զարգացողութիւնը հաւասարացնում են անհաւասարներին... ունայն ցնորք... ես պէտք է հասկանայի, որ Սառան, կօշկակարի աղջիկը, կը մնայ միշտ Սառա կօշկակարի աղջիկ, չնայելով իւր անգամ փիլիսոփայական խելքին ու զարգացման, իսկ Նինօ և Գրիգոր Ցաթալեանցները—միշտ Նինօ և Գրիգոր Ցաթալեանցներ... և Հեղինէն համարեա ինձ հասկացնում էր այդ, իսկ ես... ա՛խ, Հեղինէ, Հեղինէ, որքան բարի է նա, որքան ազնիւ...» և Սառան սիրով դարձնում էր իւր երեսը դէպի Հեղինէն, որ գիրքը ձեռին նստած էր լինում լուսամտի մօտ։

—Ի՞նչ ես կամենում, Սառա, հարցրեց նա, մօտենալով հիւանդի անկողնին։

—Ոչինչ... ես այնպէս նայեցի քեզ վերայ...։ Գիտես, մտածում էի քո մասին, ժպտալով պատասխանեց Սառան և սեղմեց, որքան թոյլ էին տալիս ոյժերը, Ջաւիկեանի ձեռը...։

Հեղինէի աչքերում փայլեց ներքին բաւականութեան նշոյլը։

—Չե՞ս կամենում մի քիչ զբօսնել, հարցրեց Հեղինէն։

—Լաւ... և Սառան աշխատեց ինքը բարձրանալ անկողնից։

Օր. Ջաւիկեանը բռնեց նրա ձեռքերից և բարձրացրեց։

—Որքան նիհարացել ես, սիրելիս, դարձաւ նա Սառային։

—Ոչինչ... մի ամսից նորից կկազդուրուեմ... այնպէս չէ՞, Հեղինէ... դա մի մեծ կորուստ չէ, նկատեց Սառան և ախրեց. երևի նա մտաբերեց իւր միւս «կորուստը»։

—Իհարկէ... իհարկէ, կրկնեց մի քանի անգամ Հեղինէն։

Նրանք դանդաղ քայլերով սկսեցին չափել սենեակը՝ անկիւնից անկիւն։

—Շուտով վերջնական հարցաքննութիւններ են, անհանգիստ ձայնով նկատեց Սառան։

—Այո... մի ամսից։

—Ինքս էլ չգիտեմ, ինչ անելուս... ախ ինչի հիւանդացայ ես այս իսկ ժամանակ...

—Ոչինչ... դու դեռ ժամանակ ունիս պատրաստուելու... վերջապէս վարժապետները ուշադրութիւն կդարձնեն քո դրութեան վերայ։

—Ոչ... ոչ... ես ողորմութիւն չեմ խնդրում... երբէք... նկատեց յուզուած Սառան։

Հեղինէի աչքերում կրկին փայլեց ներքին, հոգեկան բաւականութեան նշոյլը, և իսկոյն անհետացաւ։

—Իհարկէ... այդ աւելի լաւ է... ուրեմն ես վաղը կբերեմ քեզ հարկաւոր գրքերը և եթէ Մուրադեանցը թոյլ տայ, դու կսկսես պարապել։

—Այո... խնդրեմ... վերջապէս ինձ հարկաւոր է միայն կրկնել... հիւանդութիւնս թեթևացրեց իմ մտաւոր պաշարս։

—Միթէ մի ամիս քեզ բաւական չէ, հարցրեց Հեղինէն։

—Բաւական է... բայց նստենք, ես արդէն հոգնեցայ, դարձաւ նրան Սառան։

Հեղինէն նստացրեց նրան անկողնի վերայ և շրջապատեց բարձերով։

—Սառա, անցեալ օր եկել էին քեզ այցելութեան ծնողներդ, նկատեց նա ուղղելով հիւանդի վերմակը։

Սառայի երեսը չուրախացաւ։

—Յետոյ, հարցրեց նա բոլորովին հանգիստ։

—Դու դեռ նոր քուն էիր մտել և ես չզարթեցրի քեզ. նրանք մի քիչ մնացին և հեռացան հիւանդանոցից... իսկ երբ քո կեանքը դեռ վտանգի մէջ էր, մայրդ երեք գիշեր մնաց այստեղ քեզ մօտ,—կարծես աշխատում էր պաշտպանել, արդարացնել Սառայի ծնողներին օր. Զատիկեանը։

Սառան ոչինչ չպատասխանեց։ Հեղինէն չստանալով պատասխան, կրկին հեռացաւ լուսամտի մօտ և սկսեց կարդալ։ Սենեակում տիրեց լռութիւն։ Մի րոպէից յետոյ հիւանդանոցի դռները կամաց բացուեցան և ներս մտաւ բժիշկ Մուրադեանցը։ Օր. Զատիկեանը աւելի կռացաւ գրքի վերայ. նա չէր կարդում, այլ անմիտ նայում էր տառերին և մեքենայաբար թերթում։

—Բարև ձեզ, օր. Սառա, ասեց բժիշկը, առնելով հիւանդի զարկերակը Մուրադեանցի դէմքը ուրախացաւ։

—Դուք, օրիորդ, արդէն բոլորովին առողջ էք... միայն պէտք է աւելացնել ձեր ոյժերը... որքան կարելի է աւելի զբօսնեցէք.—միշտ զուարթութիւն, միշտ... վաղը կարող էք դուրս գալ ուսումնարանի սրահը, մի չաբթից կհանենք ձեզ պարտէզ, եթէ եղանակները մնան այնպէս, ինչպէս այժմ։

—Ախ, խնդրում եմ բժիշկ, ազատեցէք ինձ այս բանտից։

—Համբերութիւն, օրիորդ, համբերութիւն, և ամեն ինչ կարգի կգայ...։ Բարև ձեզ օր. Հեղինէ, դարձաւ նա օր. Զատիկեանին և ջերմ սեղմեց նրա ձեռը։

Րոպէական շփոթութիւն տիրեց Հեղինէին. բայց նա իսկոյն ուշքի եկաւ։

—Ի՞նչ նորութիւն, բժիշկ, հարցրեց նա, աշխատելով որքան կարելի է հանգիստ ձևացնել իրեն։

—Ոչինչ... միթէ մեր մեռած Նախիջևանում կայ մրցում, կեանք, որ լինին նորութիւններ պատահմունքներ, որ կարողանան ստեղծուել նոր դրութիւններ... ամեն ինչ այստեղ կատարվում է և երևի դեռ երկար պիտի կատարուի այնպէս, ինչպէս կատարուել է 30 կամ 50 տարի սրանից առաջ։ Նախիջևանը ապրում է բոլորովին մեքենայաբար և եթէ նրա այդ մեռած կեանքի հոսանքի մէջ երբեմն-երբեմն երևում են կենդանի մարդիկ, որոնք կամենում են գործել, շարժուել, Նախիջևանը և նրա «աղաները» աշխատում են նախ սպանել այդպիսիների կենսատու ոյժերը. իսկ եթէ անհատը հաստատ բնաւորութեան տէր մարդ է, Նախիջևանը իւր կամակոր, ինքնավար «աղաներով» ձգտում է այդ անհատին իւր շրջանից դուրս անելու և կտրել նրա հետ ամեն յարաբերութիւն։ Անհատը, այդ կենսատու, օգտակար ոյժը, դառնում է Հընդկական «պարիա»։ Հաւատացէք, ասածս լոկ ճշմարտութիւն է. մի քանի տարուց յետոյ այդ ճշմարտութիւնը կհասկանան բոլորը, բայց դժբաղդաբար, արդէն ուշ կլինի, շատ ուշ։

Եւ Մուրադեանցը տխուր սկսեց նայել պատուհանից դէպի փողոց։

—Իզուր էք այդպէս մռայլ ներկերով նկարագրում մեր Նախիջևանը. դուք խնդրեմ ներեցէք ինձ, կարծեմ ծայրահեղութեան հասաք, աշխատեց պաշտպանել իւր հայրենիքը օր. Հեղինէն։

—Ծայրահեղութեան... ոչ... իմ ներկերս դեռ անգոյն են...

—Լսեցէք... դուք ասում էք, որ Նախիջևանը և նրա հայ-հասարակութիւնը ընդունում է իւր մէջ, իւր շրջանը միայն իրան նման տարրերին, միւսներին նա կերպարա-

նափոխում է, կամ հալածում... սխալվում էք... առնենք օր. ձեզ, դուք բուն Նախիջևանցի չէք, աւարտելով Դորպատի համալսարանը, դուք եկաք Նախիջևան. նա ընդունեց ձեզ, տուեց պաշտօն և այդ մեռած, թմրած, ինչպէս դուք ասում էք, Նախիջևանը ոչ հալածում է ձեզ և ոչ կերպարանափոխում... լռեց Հեղինէն։

—Այո, նա չէ հալածում ինձ, իսկ կերպանափոխել.. օ՛օ՛ նա աշխատում է, շատ է աշխատում... հաւատո՞ւմ էք, օրիորդ, ես ինքս եմ զգում, ինչպէս կամաց կամաց իմ մէջ մեռնում է առաջուայ Մուրադեանցը և երևան է գալիս մի ուրիշ, Նոր-Նախիջևանցի Մուրադեանց... չգիտեմ, կարողացա՞յ արդեօք խօսքերով հասկացնել, պարզել իմ հոգեկան վերածնութիւնս... միայն այդ այդպէս է. և բժիշկը յուզուած սկսեց ման գալ հիւանդի փոքրիկ սենեակում։

Սառան լրջօրէն լսում էր նրան։

Հեղինէն պատրաստվում էր պատասխանել, բայց չէր իմանում ինչից սկսէր։

—Ես չեմ տեսնում, որ դուք փոխուած լինէք, վերջապէս նկատեց նա և նայեց բժշկի պարզ, խելացի դէմքին։

—Օ՛, ուրեմն դուք վատ էք նկատում.. վերջապէս դուք տեսնում էք միայն պաշտօնական, բժիշկ Մուրադեանցին, իսկ առօրեայ, հասարակ, մարդ Մուրադեանցին դուք միջոց չունիք տեսնելու... ուրեմն հաւանական է, որ սխալվում էք... բայց թողնենք այս խօսակցութիւնը, նա տխրեցնում է միայն մեզ բոլորիս... ժամը 8 է և ես պիտի այցելեմ դեռ 2 ընտանիք։ Ցտեսութիւն օրիորդ, ցտեսութիւն, իմ արդէն առողջ հիւանդս և նա սեղմելով երկու օրիորդների ձեռները շտապով դուրս եկաւ սենեակից։

Մի րոպէից, փողոցում լսուեց նրա հեռացող կառքի դղրդոցը… Սենեակում մութն էր։ Սառան աչքերը բաց նայում էր առաստաղին։ Հեղինէն կանգնած պատուհանի մօտ, աչքերով հետեւում էր Մուրադեանցի կառքին։

Կարելի է վառել լապտերը, օրիորդ, արդէն ժամանակ է, ներս մտնելով ասաց աղախինը և ցած բերեց պատի փոքրիկ նաւթային լապտերը։

Երկու օրիորդներից ոչ ոք չպատասխանեց նրա հարցին։

ԺԱ.

Միւս օրը, երբ արեգակը դեռ չէր հասել երկնակամարի գագաթին, Կովկասեան հայ օրիորդաց ուսումնարանի գլխաւոր մուտքից դուրս եկան երկու հոգի։ Դրանք բժիշկ Մուրադեանցը և օր. Հեղինէն էին։ Նրանք դանդաղ քայլերով ուղղուեցան դէպի քաղաքային պարտէզը։

—Դուք այսօր չէք հսկում ննջարաններում, հարցրեց բժիշկը, երբ նրանք մի քիչ հեռացան ուսումնարանից։

—Ոչ, պատասխանեց Հեղինէն։

Բժիշկը լռեց։ Երեւում էր, որ մի միտք տանջում էր նրան, նա կամենում էր յայտնել, պարզել այդ միտքը, բայց չէր համարձակւում։

—Լսեցէք, օրիորդ, վերջապէս արտասանեց նա կարմրելով, ես մի բան ունիմ ասելու ձեզ… ես վաղուց արդէն պատրաստվում էի, բայց չէի գտնում մի յարմար ժամանակ… այժմս մենք մենակ ենք, բժիշկը նայեց իւր չուրջը, և կարծեմ մենք կարող ենք խօսել բոլորովին ազատ։

Հեղինէն ցնցուեց. Մուրադեանցը չնկատեց այդ։

—Խօսեցէք պարզ, ես ձեր միտքը չեմ հասկանում։

—Այս րոպէիս կհասնենք պարտէզի դուռը… այնտեղ աւելի յարմար կլինի։

Նրանք երկուսն էլ լռեցին. մի քանի րոպէից նրանք մտան քաղաքային պարտէզ։ Գլխաւոր ծառուղու վերայ երեւում էին մի քանի երեխաներ՝ իրենց դաստիարակների և ծծմայրների հետ։ Բժիշկը փոխեց իւր ճանապարհը և մտաւ կողմնակի ճեմելիքներից մէկը։ Հեղինէն հետեւեց նրան։

—Նստեցէք, խնդրեմ, առաջարկեց Մուրադեանցը, ցոյց տալով մի կանաչ ներկած նստարան։

Նրա ձայնը դողում էր, Հեղինէն նստեց. Մուրադեանցը մնաց կանգնած։

Երեւում էր, որ նա վճռել էր յայտնելու իւր միտքը և խօսքեր էր որոնում արտայայտելու համար։

—Օրիորդ, ասաց նա վերջապէս դողդոջուն ձայնով. օրիորդ, ներեցէք խնդրեմ իմ յանդգնութեանս, ներեցէք… ես… կամենում եմ հարցնել ձեզնից, արդեօք… մտադիր էք երբ և իցէ մարդի գնալու, և բժիշկը յանկարծ լռեց։ Քրտինքը ծածկել էր նրա ճակատը, նա անողորմ տրորում էր իւր թաշկինակը։

Հեղինէն երևի չէր սպասում մի այդպիսի տարօրինակ հարցմունքի, նա, բոլորովին շուարեց։

—Պարոն.. այդ հարցը ինձ զարմացնում է չգիտեմ, ինչ պատասխանել ձեզ։ Պարոն, երևի դուք լսած կլինիք, որ ես այս իմ դրութեանս հասել եմ սեպհական աշխատութիւնով, և ես ինքս եմ իմ տէրս… ուրեմն կախումն ոչ ոքից չունիմ… և… եթէ ես վճռեմ ձեր առաջարկած հարցը, այդ կլինի իմ վերջնական վճիռս… բայց ներեցէք… ես կկամենայի հարցնել, ինչից դրդուած, դուք, պարոն կամենում էք իմանալ իմ ապագայ վիճակս… ես այնքան յարգում եմ ձեզ պարոն բժիշկ, որ չեմ կա-

րոդ, չեմ կամենում կարծել, որ միայն լոկ հետաքրքրութիւնն է ներշնչել ձեզ այդ հարցը անելու։

—Ոչ... ոչ, օրիորդ, պատճառը աւելի ծանրակշիռ է, չտապեց նկատել բժիշկը։

—Ուրեմն...

—Տեսնում էք... ես... ես կամենում էի միաւորել իմ ապագաս ձեր ապագայի հետ... ներեցէք, եթէ ես վիրաւորում եմ ձեզ՝ կրկին ներեցէք... միայն խնդրում եմ, չկարծէք, որ իմ մէջ խօսում է կիրքը և կամ երիտասարդական րոպէական վառ սէրը... ոչ, տեսնում էք, իմ մազերումս արդէն սպիտակ թելեր են նշմարվում... ես 35 տարեկան եմ, օրիորդ... տեսնում էք, ես խօսում եմ բոլորովին հանգիստ և ձեզանից էլ նոյնպէս հանգիստ պատասխան եմ խնդրում... մտածեցէք։

Բժիշկը լռեց, Հեղինէն իսկոյն չկարողացաւ պատասխանել. նա մտածում էր։

—Լսեցէք, պարոն, դարձաւ նա Մուրադեանցին, տուէք ինձ քանի մի օր ժամանակ. այդ միջոցին ես հարցնեմ իմ ներքին ձայնիս, կմտածեմ և կտամ ձեզ իմ վերջնական պատասխանս... իսկ այժմս ես յուզուած եմ... ուրեմն ցտեսութիւն. և նա չտապով գլուխ տուեց և նոյնպէս չտապով հեռացաւ պարտէզից։ Բժիշկը մնաց կանգնած. նա երկար նայեց Հեղինէի ետևից, վերջապէս հագաւ իւր մեծ, սև գլխարկը, սրբեց երեսը և դանդաղ քայլերով թողեց քաղաքային պարտէզի այդ նշանաւոր նստարանը։ Պարտէզի դռան մէջ նրա աչքերին ընկաւ մի փոքրիկ, սիրուն երեխայ և բժիշկը փաղաքշաբար նայեց նրան և ժպտաց... նրա ամբողջ երեսը կարծես ուրախացաւ, ծիծաղեց...։

Այդ գիշեր, օր. Հեղինէն սաստիկ յուզմունքի մէջ էր. ժամը գիշերուայ 3-ն էր, իսկ նա դեռ չէր հանուած և ման էր գալիս անկիւնից անկիւն։ Երևում էր, որ նա մտածում էր, վճռում էր...։ Ճրագի աղօտ լոյսը հազիւ լուսաւորում էր փոքրիկ, բայց կոկիկ, համեստ ճաշակով զարդարած սենեակը և առաւել ևս փոքրիկ գրասեղանը, որի վերայ երևում էր հայ թատերասէր խմբի մեծ լուսանկարը։ Սենեակի անկիւնում դրած էր մի մահճակալ, փոքրիկ բարձերի վերայ նախշած էին հայերէն «Հ» և «Զ» տառերը։

Փոքրիկ մատենադարանում երևում էին հայերէն և ռուսերէն զանազան գրքեր։

Ամեն ինչ այստեղ լուռ էր. ժամանակ առ ժամանակ լսվում էին միայն Հեղինէի հատ ու կտոր խօսքերը, որոնք մեքենայաբար թռչում էին նրա շրթունքներից։

—Այո... միասին ապրել, ձեռք ձեռքի տուած աշխատել, գործել, ահա կեանքի նշանակութիւնը, և պահանջը... Հեղինէն նստաւ իւր անկողնի վերայ։ Նա կրկին ընկաւ մտատանջութեան մէջ։

—Իսկ գործելու ասպարէզը շատ լայն է մեր հասարակութեան մէջ... եթէ այստեղ չլինի, կարելի է ապրել և գործել Կովկասում կամ Թրքահայաստանում, անցաւ նրա ուղեղով։

Երկինքը սկսել էր արդէն կապտել. աստղերը հետզհետէ անհետանում էին երկնակամարից և ահա այնտեղ, հեռու արևելքում երևաց վերջապէս մի լուսափայլ կարմիր ամպ... արդէն լուսանում էր։

Հեղինէն չտապով վեր կացաւ տեղից, հանգցրեց ճրագը և մտաւ անկողին...։ Պատի ժամացոյցը զարկեց հինգ։

ԺԲ.

Հասաւ մայիս ամիսը. բնութիւնը նորից զարդարուեց, նորից ծառերը ծածկուեցան բաց կանաչ տերևներով, օդը լցուեցաւ հազար ու մէկ ծաղիկների և բոյսերի քաղցր բուրումներով և ամեն ինչ կարծես բնութեան մէջ վերածնուեցաւ... ծիծեռնակները վաղուց թողել էին հարաւի անտանելի ջերմութիւնը և թռել էին հիւսիս. նրանք արդէն շինել-պատրաստել էին իրենց բոյները պատուհանների վրայ, կտուրների տակ, և նրանց անդադրում ճլվլոցով լցուել էր օդը։

Մայիս ամսի յետ սկսուեցան և քննութիւնները։ Կալայեան հայ օրիորդաց ուսումնարանի կեանքի եռանդը աւելի շուտ սկսաւ զարնել. Աշակերտուհիները և մինչև անգամ ուսուցիչները գտնվում էին մի անսովոր յուզմունքի մէջ։ Այս տարի առաջին աւարտողական քննութիւններ էին նշանակուած, հարկաւոր էր ցոյց տալ հասարակութեան, որ Կալայեան ուսումնարանը խմացել է գործել, բերել է օգուտ... ահա թէ ինչի համար և աշակերտուհիները և վարժուհիները աշխատում էին պարզերես մնալ Նոր-Նախիջևանի հասարակութեան առաջ։ Սառան նոյնպէս պարապում էր ամբողջ ժամերով. նա կամենում էր աւարտել պարգևով. և այդ միտքն էր, որ առաջ էր քաշում խեղճին, չէր տալիս նրան մի ժամ հանգստութիւն և հարկադրում էր գիրքը ձեռից չձգել։ Հեղինէն ստէպ ստէպ այցելում էր Սառային, հարցնում էր նրան դասերի ապագայ քննութիւնների մասին, ծիծաղում էր... առհասարակ Հեղինէն փոխուել էր. այն արջութիւնը, որ առհասարակ նկատւում էր նրա դէմքին, այժմս շուտ շուտ փոխվում էր մի հոգեկան բաւականու-

թեան, ուրախութեան. միշտ ծանրակշիռ Հեղինէն այժմս հանաքներ էր անում, վազվզում...։ Այդ շատ զարմացրեց Սառային. Նա աշխատում էր իմանալ այդ տարօրինակ, անսպասելի փոփոխութեան պատճառը, նա սկսեց նկատել Հեղինէի վարմունքը, լրտեսել, մինչև անգամ, բայց ոչինչ չիմացաւ։

Նա արդէն վճռել էր իմանալ այդ իրեն մաշող գաղտնիքը նոյն իսկ Հեղինէից...

—Դու կրկին պարապում ես, դարձաւ մի օր Հեղինէն Սառային, որ մատիտը ձեռին թուաբանական խնդիրներ էր լուծում։

—Այո... միւս օրը քննութիւն է նշանակուած, պատասխանեց Սառան ուղղակի նայելով Հեղինէի մեծ, խելօք, մի քիչ ծիծաղող աչքերին։

—Ի՞նչ ես այդպէս նայում ինձ, հարցրեց վերջինը ժպտալով։

—Ոչինչ...

—Ոչ... ոչ... ինչի ես խաբում։

—Լաւ, թող այդպէս լինի։

—Ուրեմն, ինչի այդպէս նայեցիր։

—Ինչի. և Սառան կարմրեց։

—Հա, ինչի։

—Գիտես, Հեղինէ... ես քեզ միշտ սիրել եմ իբրև հարազատ քրոջս... ես քեզանից ոչինչ չեմ պահել, չեմ ծածկել կեանքումս։

—Յետոյ։

—Ես կը կամենայի, որ... դու... նոյնպէս հաւատայիր ինձ քո սրտի գաղտնիքը... միթէ, երբ ես վերջապէս անկարող եղայ միայնակ տանել այն ծանր հոգեկան բեռներին, ես բացի քո առաջ իմ սիրտը... միթէ է...

—Լաւ... յետոյ։

Հեղինէի երեսից փախաւ ծիծաղը և նա ընդունեց իւր սովորական լրջութիւնը։

—Այժմ, կարծեմ դու ես գտնվում նոյն դրութեան մէջ։

—Ե՞ս։

—Այո... միայն այն զանազանութեամբ, որ ես ճնշվում էի իմ հոգեկան ցաւերիս տակ, իսկ դու... դու երջանիկ ես... բայց անհուն ուրախութիւնը, եթէ նրան չեն ցոյց տալիս ուրիշներին, նոյնպէս կարող է վատ հետևանքներ ունենալ...։

—Դու ծիծաղում ես ինձ վերայ,—աշխատեց ժպտալ Հեղինէն, բայց չկարողացաւ։

—Ցաւում ես... դու չես կարող անգամ ժպտալ... այո, ես նոյնպէս կամենում էի այն ժամանակ քեզ մոլորեցնել, և դրա համար ժպտացի, բայց այդ ժպիտը չինծու էր... միտդ է, սիրելիս և Սառան փաթաթուեց Հեղինէի վզով։

—Այո... այո, Սառա-ջան, շշնջաց վերջինս և ջերմ համբուրեց նրա ճակատը։

—Ասա... ասա, ի՞նչ է պատահել քեզ, փսփսում էր Սառան Հեղինէին։ Վերջինս լուռ էր։

—Ասա... խնդրում եմ... միթէ իմ մասին մի որ և է տարակուսանքի մէջ ես... ես... չէի սպասում։

—Ոչ... ոչ... բայց ի՞նչ կարիք կայ քեզ իմանալու... ինչի՞։

—Բայց ինչի՞ ես քեզնից չծածկեցի իմ գաղտնիքս։

Այդ հասարակ պատասխանի ներքին առողջ միտքը կարծես յաղթեց Հեղինէին։

—Լաւ... լսիր, լսիր ես բաղդաւոր եմ, որովհետև... ես սիրում եմ... Հեղինէն վազեց սենեակի դուռը։

—Ո՞ւմ... ո՞ւմ, կրկնում էր ուրախացած Սառան։

—Յետոյ... յետոյ... և Հեղինէն անհետացաւ սենեակից։

—Սիրում է, բայց ո՞ւմ... մտածում էր Սառան... Հեղինէն այնպէս թեթևամիտներից չէ, որ կարողանայ սիրել մեր «աղաների» զաւակներից մէկին... ոչ... այդ անկարելի է... բայց ո՞վ է այդ բաղդաւորը, ո՞վ... հա՛, հա՛... չլինի՞ նա է...

Սառան երկինք բարձրացրեց իւր մեծ, սև աչքերը և արտասուքի երկու կաթիլներ, թրջելով նրա թշերը, ընկան թուաբանական խնդիրների հաւաքածուի վերայ... ի՞նչ մտաբերեց նա այդ րոպէին...

—

Երեկոյեան ժամը 10-ին, երբ կակայեան հայ օրիորդաց ուսումնարանի սանիկները արդէն ննջարանումն էին, Սառան կամաց մօտեցաւ Հեղինէի առանձնասենեակին։ Այդ գիշեր Հեղինէն հսկում էր ննջարաններում։

—Հեղինէ, դու քնած ես, զարկեց նա դուռը։

—Ոչ... եկ։

—Ի՞նչ ես կամենում ինձնից, հարցրեց Հեղինէն, երբ Սառան մտաւ ներս և մօտեցաւ նրա անկողնին։

—Ոչինչ։

—Ինչի՞ ես ուրեմն եկել։

—Այնպէս. և Սառայի խորամանկ՝ երեսը ժպտաց։

—Ախ, անտանելի աղջիկ... ինչի՞ հանգիստ չես թողնում ինձ և Հեղինէն համբուրեց Սառայի թշերից։

—Որովհետև դու խոստացել էիր ասել ինձ ո՞վ է այն... և Սառան լռեց։

—Լսիր, ուրեմն, պատասխանեց Հեղինէն և թեքեց իւր կողմը Սառայի գլուխը։

—Միթէ. կրկնեց մի քանի անգամ ուրախացած Սառան և ջերմ համբուրելով Հեղինէին, հեռացաւ սենեա-

կից։ Դեռ երկար Սառան չկարողացաւ քնել, դեռ երկար նրա ականջում հնչում էին այն խօսքերը, որ շշնչաց նրան բաղդաւոր Հեղինէն։

ԺԳ.

Անցաւ մի քանի շաբաթ։ Կակայեան ուսումնարանի պարտիզի նստարանի վերայ նստած էին Մուրադեանցը, Հեղինէն և Սառան։ Ահա մի քանի ժամանակ էր. որ դրանք մի երրորդութիւն էին կազմել և չէին բաժանւում միմեանցից։ Բժիշկը շատ սիրեց Սառային. նա վարվում էր նրա հետ իբրև իւր հասակակցի հետ. այդ շատ էր բաւականացնում Սառային և նա աւելի և աւելի կապվում էր բժշկին. նա պատվում էր նրան։

—Վճռեցէք, վերջապէս, օրիորդ, համբերելու շատ ժամանակ չկայ, արտասանեց բժիշկը վառելով իւր ծխաքարշը։

—Այսպէս շուտ... ինչ էք ասում, պատասխանեց Հեղինէն։

—Ի՞նչպէս թէ շուտ... ես կրկնում եմ, որ ծովը անհրաժեշտ է ձեզ երկուսիդ էլ .. ուրեմն, ինչ շուտ... անպատճառ Ղրիմ, անպատճառ, և նա սկսեց գլորակներով թողնել ծուխը բերնից։

—Ես միջոց չունիմ, նկատեց Սառան... ուրեմն այդ անկարելի է... ամենահամեստ կեանք վարելու համար առ նուազն հարկաւոր է 100 րուբլի։

—Իզուր էք դարդ անում... ես կը խօսեմ ուսումնարանի վարչութեան անդամների հետ... ձեզ կը տան...

—Ոչ... ոչ... ես երբէք չեմ վերցնիլ այդ փողը։

Հեղինէն համբուրեց Սառային։

—Բժիշկ, դուք չգիտէք, որքան հպարտ և ինքնասէր է

Սառան և այս հպարտութիւնը ես շատ սիրում եմ նրա մէջ, նա ողորմութիւն չէ ընդունում։

—Լաւ... ես նոյնպէս հաւանեցի ձեր վճռին, Սառա, եթէ դուք չէք ընդունում ուսումնարանի վարչութիւնից, երևի կընդունէ՞ք ինձնից, այնպէս չէ՞, իբրև ձեր մտերիմ բարեկամից։

Սառան կարմրեց. Հեղինէն շնորհակալութեամբ նայեց բժշկի արևառ երեսին։

—Պատասխանեցէք, օրիորդ։

—Ես... վկայ Աստուած... ես ինքս էլ չեմ իմանում։

—Տէր Աստուած, դուք կը դարձնէք մի օր ինձ այդ գումարը... ես չեմ պարգևում ձեզ... համաձայն էք։

—Լսեցէք, բժիշկ, բացագանչեց Հեղինէն, ես առաջարկում եմ, որ դուք Սառային միայն 50 ր. տաք... իսկ մնացածը կը տամ ես։

Սառան փաթաթուեց նրա վզին։

—Ուրեմն համաձայն էք, դարձաւ նրան բժիշկը, սեղմելով Հեղինէի ձեռը։

—Այո... շշնչաց Սառան։

—Լաւ, միւս օրը ուրեմն դուք կը ընկնէք ճանապարհ, և բժիշկը վերկացաւ տեղից։

—Իսկ դուք չէ՞ք կարող գալ մեզ այցելութեան, գոնէ մի շաբաթով խնդրում էր օրիորդ Ջատիկեանը։

—Խօսք չեմ տալիս... կաշխատեմ։

Պարտիզում լսուեցաւ զանգի ձայն... ճաշը պատրաստ էր. բժիշկը սեղմեց օրիորդների ձեռը և հեռացաւ։

Սառան և Հեղինէն դանդաղ սկսեցին բարձրանալ ուսումնարանի սանդուխքներից։

—Ի՞նչպէս լաւ կը լինի Ղրիմում, այնպէս չէ՞... դարձաւ Հեղինէն։

—Այո… այո… ես ուրախ եմ… ինչպէս բարի է բժիշկը, և Սառան ծիծաղեց։

—Ի՞նչ ես ծիծաղում, անամօթ, ասաց Հեղինէն և պինդ սեղմեց Սառայի մատը։

Նրանք մտան ուսումնարանի սրահը։

—Լսիր… եթէ միւս օրը ընկնենք ճանապարհ, ուրեմն պէտք է, որ դու այցելես ծնողներիդ։

Սառայի դէմքի վերայ կարելի էր նշմարել այդ րոպէին անբաւականութեան բոլոր նշանները։

—Կարող են իրենք գալ ինձ մօտ, եթէ կամենում են, նկատեց նա վերջապէս։

—Ուրեմն յայտնիր այսօր, որ մենք Ղրիմ ենք գնում։

Սառան ոչինչ չպատասխանեց։

Նրանք հասան սեղանատուն։

Երեկոյեան ժամը 6-ին Սառան նստած էր ուսումնարանի չքեղ ընդունարանում և նամակ էր գրում. նա յայտնում էր ծնողներին, որ միւս օրը գնում է Ղրիմ։ Սառան շտապում էր. գրիչը արագ թռչում էր թղթի վերայով. վերջապէս նա ստորագրեց և կանչեց աղախնին։

Տար Թագուհի, այս նամակս մեր տունը… Գիտես, Աստուածածնի փողոցում։

— Լաւ, օրիորդ, գիտեմ։

—Պատասխան խնդրիր։

Աղախինը դուրս եկաւ սենեակից, իսկ Սառան թեքեց իր գլուխը սեղանին և երկար մնաց այդ անշարժութեան մէջ։ Անցեալի պատկերները նորից կենդանացան նրա երևակայութեան մէջ. Նա տեսնում էր իրեն, փոքրիկ, հին, կեղտոտ շորերով… տեսնում էր, ինչպէս ինքը, փոքրիկ Սառան, վազվզում է փողոցում, գլխաբաց, ոտաբոբիկ, խաղում է փոշու մէջ և աւելի կեղտոտւում է ու ծեծ ուտելով մօրից, վերադառնում է տուն…։

Երևան էին գալիս Սառայի աչքերի առաջ իրենց Աստուածածնի փողոցի Միքայէլը, Մանիշակը… երևի նրանք մեծացել են այժմ… ամբողջ 8—9 տարի նա չէ տեսած նրանց…։ Նա մտաբերում էր իրենց փողոցի տները, հարևաններին… որքան կերպարանափոխուած է երևի այդ բոլորը, մտածում էր Սառան. ժամանակ, ժամանակ. որքան արագ ես թռչում… Նա մտաբերեց վերջապէս իր փոքրիկ կռացած, կարծես ծերացած հայրական խրճիթը, երկու փոքրիկ սենեակները, տան կահկարասիքը, լուսամուտի կոտրած ապակին… և այդ բոլորը այնպէս յայտնի երևան եկաւ նրա առաջ, այնպէս պարզ և մանրամասնաբար, որ նա վեր թռաւ տեղից և երկիւղով նայեց իր շուրջը… բայց ոչ… Նա տեսաւ մեծ, սպիտակ պատեր, գեղեցիկ պատուհաններ, փայլուն ներկած աթոռներ, թաւշեայ վարագոյրներ… ոչ… ոչ… այս… կօշկակար Կարապետի տունը չէ… և Սառան բարձրաձայն ծիծաղեց։

ԺԴ.

Վաղ առաւօտ էր. արեգակը դեռ չէր ծագել, և նրա ոսկեփայլ ճառագայթները աշխատում էին թափանցել արևելքի մութ կարմիր ամպերը… նրանցից մի քանիսը վերջապէս դուրս եկան այդ ամպային քօղի տակից, փայլեցին գոյնզգոյն շողշողումներով. և արևը լուսաւորեց ծովի անհուն, լայնածաւալ մակերևոյթը… հեռուից երևան էին գալիս սև մերկ լեռների անորոշ դծագրութիւնները… օդը պարզ էր և մի քիչ ցուրտ… ծովը խաղաղ էր և «Թագուհի» շոգենաւը մեղմ տատանվում էր նրա ալիքների վերայ…։

«Թագուհի»-ն ուղևորվում էր դէպի Թէոդոսիա։

Այդ շոգենաւում գտնվում էին Հեղինէն և Սառան։

Օրիորդ Զատիկեանը դեռ քնած էր. իսկ Սառան արդէն վաղուց վեր էր կացել տեղից և դիտում էր ծովը։ Նա իւր կեանքում առաջի անգամն էր տեսնում այդ աշխարհային տարրերից մէկը։ Ծովը իւր անհուն տարածութիւնով, իւր ալիքների երբեմն մեղմ, օրօրող մեղեդիով, երբեմն վայրենի գոռոցով, խոր տպաւորութիւն գործեց զգայուն Սառայի վերայ։ Նա ժամերով նայում էր այդ մութ-կապոյտ ալիքներին, որոնք անդադար դիպչում էին չոգենաւի կողքերին, դիպչում և իսկոյն ցրւում, անհետանում էին. Նայում էր սպիտակ փրփուրին, որ երկար գծով հետևում էր չոգենաւի անիւներին...։ Սառայի մաշուած սիրտը կարծես խաղաղուեցաւ այս լայնարձակ ծովի վերայ...։ Քաղաքի շլացնող դղրդոցից յետոյ ծովը իւր հանդիստ մակերևոյթով բաւականացրեց Սառային... Նա կրկին վերածնուեցաւ, կազդուրուեցաւ, նրա այտերին նորից խաղաց կարմրութիւնը, այն բնական կարմրութիւնը, որ մեր դարում գոնէ չատ հազուագիւտ է գուցէ մեր քաղաքացիների մէջ։

Մի անսահման անդունդ բաժանեց Սառային իւր ոչ այնքան ուրախ անցեալից. Նա աշխատեց մոռանալ այդ անցեալը և ապրել ներկայով։ Հեղինէին չատ ուրախացրեց այդ փոփոխութիւնը Սառայի մէջ և նա կամաւ չէր յիշում ոչ մի անցք կամ դէպք անցեալից և աշխատում էր զբաղեցնել Սառային այս նոր կեանքի նոր երևոյթներով, նոր տպաւորութիւններով...։ Երկու օրիորդները չուտով ծանօթացան չոգենաւի միւս ճանապարհորդների հետ, այնպէս որ, ժամանակը անցնում էր բոլորովին աննկատելի կերպով խօսակցութիւնների և վէճերի մէջ, մանաւանդ որ նրանք գտան այդտեղ ուսանող Նազարեանցին. Սառան բարեկամացել էր այդ երիտասարդի հետ դեռ Ֆաթալեանցների տանը։

Ուսանողը նոր էր աւարտել համալսարանը և գնում էր Թէոդոսիա կազդուրելու իւր խանգարուած առողջութիւնը։ Սառան ծանօթացրեց Հեղինէին Նազարեանցի հետ և նրանք ամբողջ օրերով չէին բաժանվում միմեանցից...։ Նազարեանցը յայտնեց օրիորդներին իւր միտքը բաց անել մի հայաբնակ քաղաքում ձրի վարժատուն չքաւոր երեխաների համար և կիւրակի օրերը կազմել հասարակական զրոյցներ չափահաս մշակների, բանւորների հետ։

—Դուք երևի կարդացած կը լինիք Օմուլեվսկու գրուածքները, դարձաւ նա Հեղինէին... մտաբերո՞ւմ էք Սվէտլովին... վիպասանութեան հերոսին... ես կամենում եմ հետևել նրա օրինակին. և հայ երիտասարդ ուսանողը կարմրեց։

—Այո... այդ բարի գործ է... բայց... գիտէ՞ք ինչ... ես կարծում եմ, որ Սվէտլովը մի քիչ երևակայական է... այնպէս չէ՞...։

Հեղինէն լռեց։ Նա նայում էր ծովի մակերևոյթին։ Սառան հետաքրքրուած լսում էր Նազարեանցի խօսքերը...—Ի՛նչպէս լաւ է խօսում, մտածեց նա և յանկարծ ծիծաղեց։

Նա մտաբերեց Նինոյի խօսքերը Նազարեանցի մասին։ «Անտանելի ուսանող, հաւատացիր, քիչ մնաց, որ քնէի» և Սառան կրկին ծիծաղեց։

—Ի՞նչ պատահեց քեզ, սիրելիս, որ այդ չափ ուրախ ես, դարձաւ նրան օր. Զատիկեանը։

—Ոչինչ, այնպէս... մի ծիծաղելի դէպք մտաբերեցի անցեալից, պատասխանեց Սառան և չտապով հեռացաւ, վախենալով, որ իւր անտեղի ծիծաղը կարող է կրկնուել։ Նազարեանցը ծխաքարշը ձեռին լուռ նայում էր անդադար վազվզող ալիքներին. ծուխը գլորակներով դուրս էր

գալիս նրա բերանից և թանձր ամպով պատում էր նրա գլուխը։ Կէսօր էր. արեգակը սաստիկ այրում էր. քամու նշոյլ անգամ չկար. ծովի մէջ լողում էին արևի ճառագայթները և ներկում էին նրան կարծես արծաթեայ գոյնով. շոգենաւի բանւորները պառկած հանգստանում էին. ամեն ինչ թագնուած էր շոգենաւի ներքին մասում։ Նազարեանցը և Հեղինէն նոյնպէս քաշուեցան իրենց սենեակները։

Խորին լռութիւնը տիրեց «Թագուհի» շոգենաւի մէջ. միայն ժամանակ առ ժամանակ արթուն ճանապարհորդի ականջին հասնում էր մեքենայի անիւների դղրդոցը և ալիքների մեղմ շվշվոցը...։

—

Գիշեր էր։ Պարզ կապուտակ հարաւային երկինքը ծածկուել էր անհամար պլպլող աստղերով, մելամաղձոտ լուսինը դուրս գալով ամպերի տակից, մեղմ կաթնագոյն լուսով լուսաւորեց ծովի անշարժ, կարծես մեռած մակերևոյթը, նա ընդունեց մի թովչարար, արծաթափայլ գոյն։ «Թագուհին» ժամանակ առ ժամանակ թողնում էր կրակի բոցեր, ծուխը դուրս էր թռչում նրա հսկայական կրծքից։ Տեսարանը կախարդիչ էր...։ Հեռուն կարելի էր նշմարել սև սարերի անորոշ գծագրութիւնը, և ահա մի կէս ժամից յետոյ արդէն երևան եկաւ Ղրիմի ափը, իւր կարծես միջնադարեան կէս-ասիական շինութիւններով, եկեղեցիների գմբէթներով և մինարէթների փայլող լուսով։ «Թագուհին» մօտենում էր Թէոդոսիային, հեռուից երևացին կրակներ, լուսաւորուած պատուհաններ, մակոյկներ, մարդոց ստուերներ. լսուեցաւ տեղական թաթարի բարբառը և երբեմն երբեմն հասնում էր ափից Ղրիմցի հայի կոշտ, անտաշ խօսակցութիւնը։

Շոգենաւը երկար սուլեց և յանկարծ կարծես սաստիկ ցնցուելով, կանգ առաւ ափից մի քիչ հեռու. ձգեցին լաստերը և փայտեայ փոքրիկ կամուրջները. ճանապարհորդները անկարգ դուրս գնացին ցամաք։ Հեղինէն Սառան և Նազարեանցը արդէն այնտեղ էին, նրանց շրջապատել էին հիւրանոցների ծառաները, մի րոպէից կառքերը արդէն վարձուած էին և մեր ճանապարհորդները ուղղուեցին քաղաքի ամենալաւ հիւրանոցներից մէկը։

Թէոդոսիան, նաւահանգստից ջոկ քնած էր։ Երկար, բարակ բարդիները սևին էին տալիս գիշերային պարզ լուսնեակ օդում և հարաւային զեփիւռը մեղմ տատանում, կարծես օրօրում էր նրանց սրածայր գագաթները։

ԺԵ.

Թէոդոսիան, որ ձմեռը ամենաանտանելի քաղաքներից մէկն է, այժմս ամառուայ ամիսներին, մի քիչ զարդարուել, գեղեցկացել էր. հիւանդները մեծ քանակութեամբ այցելել էին այս տարի նրան։ Թէոդոսիայի կեանքի երակը, սկսեց աւելի եռանդով զարնել, սենեակների գները սաստիկ բարձրացան. Թէոդոսիայի տանտէրերը կարծես ամառուայ միջոցին կորցնում էին իրենց խիղճը, քարացնում էին իրենց սրտերը։

Հեղինէն և Սառան վերջապէս կարողացան վարձել մի փոքրիկ սենեակ, և նրանց այդ նոր Թէոդոսիայի կեանքի առաջի օրերը, անցան զանազան առօրեայ պատրաստութիւնների մէջ։ Վերջապէս ամեն ինչ կարգի եկաւ, սենեակը զարդարուեց իւր նոր տիրուհիների ճաշակով և Սառան ու Հեղինէն կարող էին հանգստանալ։

Այդ միջոցին Նազարեանցը քանի մի անգամ այցելեց մեր օրիորդներին, առաջարկեց նրանց իւր ծառայու-

թիւնը—սենեակը կարգի բերելու համար և դրանով շատ ծիծաղեցրեց Սառային։

—Ի՞նչ… դուք կամենո՞ւմ էք սարքել մեր սենեակը, հարցնում էր նա ծիծաղը բերնին։

—Ինչի՞ էք զարմանում, օրիորդ, ես ուսանողութեան ժամանակ միշտ ինքս էի հոգս քաշում այդ մասին…։

—Հա… հա… հա… ծիծաղում էր Սառան։

—Հապա ապացուցէք ձեր հմտութիւնը, երևի Սառան այն ժամանակ չի համարձակուիլ ծիծաղելու, դարձաւ Հեղինէն ուսանողին։

Նազարեանցը ամենածանրակշիռ կերպով սկսեց իւր գասաւորութիւնը. նա ճիշտ կանացի ճարպկութեամբ սկսեց դարսել զանազան իրեղէններ իրենց յարմար տեղերը և դրա մէջ նա ցոյց տուեց իւր զարգացած ճաշակը։ Օրիորդները հեռացան. Նազարեանցը մեծ բաւականութեամբ նայեց նրանց վերայ և ծիծաղեց։

—Ի՞նչ է, չէ՞ի ասում ձեզ, իսկ դուք դեռ ծիծաղում էիք, դարձաւ նա Սառային։

—Ողորմութիւն, տէր, պատասխանեց Սառան կեղծ տրագիկական ձևով։

Ամենքը ծիծաղեցին։

Ահա երկու շաբաթ էր, որ մեզ ծանօթ օրիորդները Ղրիմումն էին. այդ միջոցին նրանց կեանքը ընդունեց իւր առօրեայ, սովորական կերպարանքը, առաջի տպաւորութիւնները կորցրին իրենց թովչարար փայլը, հիացումը տեղի տուեց սովորութեան, լուրջ դատողութեան և Հեղինէն ու Սառան սկսեցին մինչև անգամ ձանձրանալ։ Եւ յիրաւի, Թէոդոսիայում կեանքը անտանելի—միակերպ էր. վաղ առաւօտեան հիւանդները լողանում էին ծովում, յետոյ մի քիչ զբօսնում, յետոյ ճաշ և ահա սկսուեց անտանելի շոգը. այդ միջոցին ոչ ոքին չէ կա-

րելի նկատել Թէոդոսիայի փողոցներում կամ ծովափում և այսպէս մինչև երեկոյեան ժամի 5-ը կամ 6-ը. յետոյ կրկին լողանալ, կրկին ճեմել և ապա հասնում է գիշերը…։ Պարզ օդում տարածուած են հազար ու մէկ ծաղիկների հոտաւէտ բուրումները, երկինքը ծածկուած է անհամար փայլուն աստղերով։ Այդպիսի րոպէներին մարդս հանդչում է հոգւով և մարմնով… Նրա ոյժերը կարծես աւելանում են, կազդուրվում. նա պարզ զգում է, որ իւր և ամբողջ բնութեան մէջ կայ մի անխզելի կապ, որ ինքը օտար չէ այդ բնութեանը, որ բնութիւնը մեռած չէ. ընդհակառակը, նա կենդանի և կենսատու է և որ ինքը, մարդը, այդ անսահման բնութեան կազմուածքի մի անհրաժեշտ տարրն է. այդպիսի րոպէներին մարդս սկսում է հասկանալ Աստուածութեան վեհ իդէան…

Ահա այդպիսի մի գիշեր մեզ ծանօթ երկու օրիորդները նստած էին Թէոդոսիայի հասարակական պարտիզում։ Հեղինէն լուռ էր, Սառան նոյնպէս լուռ դիտում էր պարզ կապուտակ երկինքը, աստղերը, կաթնագոյն լուսինը և նրա միտքը կարծես թռել էր հեռու՝ շատ հեռու Թէոդոսիայից։

Պարտիզում երևում էին մի քանի ոչ այնքան ծանր հիւանդներ, լսվում էր ուրախ ծիծաղը, թաթարի ու հայի բարբառը, իսկ այնտեղ, հեռուից հասնում էր արևելեան երգի տխուր, մելամաղձոտ մեղեդին… այդ երգը գանդատ էր մարդկային թշուառ բաղդից…։ Բարդիները սևին էին տալիս այդ լուսնեակ գիշերին և զեփիւռը մեղմ խաղալով նրանց հետ կարծես պատմում էր Ղրիմի անցեալ կեանքը, նրա սև և երջանիկ օրերը, նրա նախկին բնակիչների գործերը, իսկ բարդիները կարծես համաձայնվում էին զեփիւռի հետ և շվշվացնում էին իրենց սրածայր՝ բարակ գագաթները…։

Հեղինէն շարունակում էր մտածել. նա թեքել էր գլուխը կրծքին և լրջօրէն նայում էր գետնին։ Սառան տարաւ իւր ձեռը ճակտին, տրորեց մի քիչ աչքերը և դանդաղ վեր կացաւ նստարանից։ Հեղինէն չնկատեց այդ շարժումը։ Սառան արդէն մի քանի քայլ հեռացել էր Հեղինէից, երբ հեռուն երևեցաւ մի ստուեր, որ մօտենում էր օրիորդներին. ստուերը շտապում էր։

—Տես, Հեղինէ, այդ ով է, հարցրեց Սառան, աշխատելով ճանաչել մօտեցողին։

Հեղինէն ոչինչ չպատասխանեց։

—Հեղինէ, Հեղինէ, քեզ եմ ասում, դարձաւ նրան Սառան։

—Ի՞նչ է։

—Ո՞վ է այդ։

—Այդ... Նազարեանցն է... դէհ յետոյ...

—Ինչի՞ է շտապում այդպէս, նկատեց Սառան և դիմեց երիտասարդին։

Մի րոպէից յետոյ Նազարեանցը Հեղինէի մօտ էր, նա ծանր շնչում էր. քրտինքը ծածկել էր նրա երեսը։

—Ապա իմացէք, ինչ նորութիւն կայ մեր քաղաքում, հարցրեց նա դիմելով օրիորդներին։

—Ի՞նչ, ինչ. ասացէք, խնդրեմ մի տանջէք, շտապեցնում էր նրան Սառան։

—Իմացէք ինքներդ։

—Ասացէք, պ. Նազարեանց, լրջօրէն նկատեց Հեղինէն։

—Այս րոպէին մի մարդ եկաւ Թէոդոսիա և...

—Բժիշկ Մուրադեանցը, աղաղակեց Սառան և իսկոյն լռեց։

—Միթէ, շշնչաց Հեղինէն և վեր կացաւ տեղից։

Նրա ծնկները դողում էին։

—Այո, այս րոպէիս շոգենաւը բերեց նրան Ղրիմի ափը. նա որոնում էր ձեզ, երբ պատահմամբ տեսաւ ինձ, մենք ծանօթացանք շատ տարօրինակ կերպով. նա իմացաւ որ ես հայ եմ և... բայց ինչ եմ երկարացնում, գնանք, նա ինձ մօտ է։

Եւ երեքը անհետացան գիշերային խաւարի մէջ։

ԺԶ.

Անցել մի շաբաթ էր, ինչ որ բժիշկ Մուրադեանցը թողել էր Նոր-Նախիջևանը և ընկել Թէոդոսիա։ Այստեղ քաղաքի շլացնող կեանքից և ծանր աշխատութիւններից յետոյ, նա մի քիչ հանգստացաւ. բնութիւնը իւր հարաւային հրաշալի պատկերներով և իւր պարզութեամբ լաւ, կազդուրիչ ներգործութիւն ունեցաւ նրա վերայ։

Հեղինէն, Սառան և Նազարեանցը համարեա ամբողջ ժամանակը անց էին կացնում Մուրադեանցի մօտ և կամ ինքը բժիշկը Նազարեանցի հետ այցելում էր օրիորդներին։ Ժամանակը անցնում էր աննկատելի. մեր հիւանդները ուրախ էին, յիշում էին անցեալից իրողութիւններ, ծիծաղում էին, վիճում, նորից ծիծաղում... և այսպէս ժամերը անցնում էին անհոգ անգործութեան մէջ։ Միայն Սառան աւելի և աւելի սկսում էր հեռանալ այդ ընկերութիւնից, նա երևում էր տխուր, մաշուած։ Սկզբից ոչ ոք չնկատեց Սառայի այդ անսպասելի փոփոխութիւնը նրա մէջ. միայն Նազարեանցն էր, որ նկատեց Սառայի այդ տարօրինակ, անբացատրելի վարմունքը, նկատեց և աշխատեց պարզել իրեն, բայց իզո՜ւր. Սառան միշտ և միշտ լուռ էր և ոչ ոքին չէր յայտնում իւր սրտի ցաւը. իսկ այդ ցաւը իրաւի գոյութիւն ունէր։ Բանը նրանումն էր, որ Սառան բաղդի բերմամբ միջոց

ունեցաւ աւելի մօտ ծանօթանալու բժշկի հետ, նա սկսեց քննել նրա «ներքին մարդը», բնաւորութիւնը, սիրտը, համոզմունքները և մնաց հիացած։

—Բժիշկը այսպէս ուսումով է, մտածում էր նա այսպէս խելօք, գիտուն՝ և այսպէս հասարակ, բարի... զարմանալի բան, շարունակում էր նա. հիւանդութեանս ժամանակ ես չկարողացայ իմանալ բժշկին իբրև մարդ, ես տեսնում էի նրա մէջ միայն նրա բարեխղճութիւնը, նրա մարդասիրութիւնը, իսկ այժմս. . և Սառան նորից ընկղմում էր խոր մտածութեան մէջ։

—Բաղդաւոր է Հեղինէն, շարունակում էր Սառան մի րոպէից,—նրա ապագան երջանիկ պիտի լինի այդ մարդու հետ և իրաւ, Հեղինէն արժանի է այդ բաղդաւորութեան, նա անչափ բարի է, խելօք... և Սառան յանկարծ կանգ էր առնում այդպիսի րոպէներին և գունաթափվում։

—Այո՛, նա արժանի է, սթափվում էր Սառան. իսկ Ես... ես... ինչո՞վ եմ մեղաւոր, որ իմ կեանքս պիտի անցնի անվերջ զրկանքների, հոգեկան և ֆիզիքական տանջանքների մէջ... մի՞թէ ես իրաւունք չունիմ սիրելու և սիրուելու... և մի՞թէ այդ մարդկային բնական պահանջը, իրաւունքը նոյնպէս արտօնութիւն է միայն որոշ դասակարգերի։

Սառայի գեղեցիկ երեսը ծռմռվում էր, նա հեգնօրէն, կծու ժպտում էր։

—Ոչ, ոչ մի արտօնութիւն չէ տուած ի վերուստ. այդ արտօնութիւնները պէտք է ձեռք բերել, թէև արեան գնով... այն ժամանակ միայն կեանքը կունենայ նշանակութիւն։ Ոչ. ես չեմ կամենում դառնալ մարդկութեան և հասարակութեան յաւիտենական մշակը, բանւորը, ես ապրել եմ կամենում... ապրել երջանիկ... խօ ապրում են

ուրիշները, աւելի անմիտ, աւելի վնասակար կերպով, բայց ես գոնէ մի բան եմ գործում, ուրեմն ունիմ իրաւունք և վարձ պահանջելու, այո՛ վարձ իմ աշխատութեան, իմ վատնած ուժիս...

Եւ Սառայի երեսը ընդունում էր մի լուրջ, մռայլ կերպարանք. նրա ճակատի վերայ այդ րոպէներին կարելի էր նշմարել փոքրիկ կնճիռներ։

—Մի՞թէ Աստուածածնի փողոցի ծնունդը իրաւունք չունի դուրս գալու իւր ստոր, սահմանափակ շրջանից. բայց ինչի՞, ի՞նչ իրաւունքով, հապա իմ 10 տարուայ աշխատութիւնս, իմ չարչարանքով ձեռք բերած գիտութիւնս։

Մի՞թէ այդ չէ տալիս ինձ իրաւունք բարուոքելու վիճակս։

Եւ նա մի քանի րոպէ մնում էր լուռ։

—Բարուոքել վիճակդ, շարունակում էր նա հեգնական ժպիտը բերնին, բայց ո՞վ քեզ թոյլ չէ տալիս, բարուոքի՛ր, սիրելիս, բարուոքի՛ր եթէ... եթէ միայն կարող ես... ես ինչո՞վ եմ մեղաւոր, որ ինձ հանեցին Աստուածածնի փողոցից և տեղաւորեցին Կակայեան ուսումնարանում, մի՞թէ ես խնդրում էի, որ ինձ բ ա ր ե գ ո ր ծ ո ւ թ ի ւ ն անեն, իրենք բազմապատկեցին իմ անձնական պահանջմունքներս և իրենք էլ նորից, երբ արդէն շատ ուշ է, առաջարկում են ինձ Աստուածածնի փողոցը, իմ առաջուայ, զրկանքներով լի կեանքը... ոչ, չեմ կամենում, հասկանո՞ւմ էք, չեմ կամենում...

Սառայի ձայնը սկսում էր անսովոր դողալ։

—Ա՛յ... Հեղինէն, նա խօ կարողացաւ ապահովացնել իւր կեանքը... նա կլինի բաղդաւոր, այդ... այդ Մուրադեանցի հետ, նրանք սիրում են միմեանց... այո՛ սիրում են... ա՛խ, Մուրադեա՜նց, Մուրադեանց, ո՞րքան

բարձր է այդ մարդը իրեն շրջապատող միջավայրից... Մուրադեանց...

Եւ Սառան անզօր թեքեց գլուխը կրծքին։

—Միթէ ես նախանձում եմ Հեղինէի վիճակին, յանկարծ սթափվում էր նա և իսկոյն լռում։

—Ոչ... ոչ... Սառա, այդ ապերախտութիւն է... Հեղինէն քո մայրն է եղել, քո քոյրը, սիրելի ընկերուհին, և յանկարծ... չար, ստոր նախանձ... ոչ... ոչ... և նա ամբողջ մարմնով սկսում էր դողալ։ Սարսուռը անցնում էր նրա անդամներով։

—Բայց Մուրադեանցը... այո, Հեղինէն նրան սիրում է, բայց սիրում է ա յ լ ա պ է ս... նա, եթէ կարելի է այսպէս ասել, սիրում է նրան՝ մտքի դատողութիւնով, գլխով, ուղեղով և ոչ թէ... սրտով... Հեղինէն սիրտ չունի... այո, չունի. նա ունի խելք, ունի գլուխ, միտք, առողջ ուղեղ. բայց սիրտ, վառ, անհուն սէր... ոչ... այդ Հեղինէի բանը չէ...

—Ինչո՞... ինչո՞ ճանաչեցի ես Մուրադեանցին, վերջացնում էր նա իւր խօսքը և կարծես սրտում նա զգում էր մի անտանելի ցաւ։

Եւ Սառան աշխատում էր որքան կարելի է հեռանալ այդ մարդուց, նայել նրա վերայ իբրև լոկ, մօտ բարեկամի վերայ, բայց չէր կարողանում.. մի բան քաշում էր Սառային դէպի բժիշկը և այդ բանը երևի շատ ուժեղ էր Սառայից, որ հպատակեցնում էր իրեն նրա թոյլ միշտ տատանւող կամքը։

—Միթէ ես սիրեցի Մուրադեանցին, վախով խոստովանում էր նա ինքն իրեն. ոչ... այդ անկարելի է... ես վաղուց է արդէն սիրել եմ ուրիշին և իմ սէրս ոտնակոխ են արել. իսկ երկու անգամ սիրել.. կարելի չէ... և նա անզօր լռում էր։

—Ոչ... այն սէր չէր... ես ցնորուած էի և անփորձ... ես առաջին անգամ կեանքումս տեսնում էի այդպէս չքեղ, գեղեցիկ երիտասարդ, և... և շատ բնական է, որ յափշտակուեցի իսկոյն, առանց մտածելու, առանց կըշռելու... Գրիգոր Ֆաթալեանցը խօսեցրեց իմ մէջ միայն ինքնասիրութիւնս, կրքերս... իսկ սիրտս... նա լուռ էր այն ժամանակ, բոլորովին լուռ, աշխատում էր համոզել Սառան ինքն իրեն։

—Իսկ Մուրադեանցը .. Մուրադեանցը խօսեցրեց իմ սիրտս և ես... ես... Աստուած իմ, ես սիրում եմ նրան, ես զգում եմ ամբողջ կազմուածքովս, որ սիրում եմ նրան, անչափ սիրում եմ... Մուրադեանց... Մուրադեանց...։ Եւ նա կարծես ցնորվում էր։

—Սիրե՞լ... ոչ... այդ անիրաւութիւն է, այդ ցածութիւն է, հազիւ լսելի ձայնով կրկնում էր կարծես մոռացութեան մէջ յուզուած Սառան.—Մուրադեանցը... պատկանում է Հեղինէին և... և ապագայում նա կը պատկանի նրան... այստեղ երրորդութիւնը անկարելի է. մեզանից մէկը պիտի հեռանայ... բայց ո՞վ...

«Դո՛ւ, դո՛ւ, դո՛ւ», կրկնում էր անդադար նրա ներքին ձայնը։

—Այո, ես... ես, իսկ Հեղինէն... նա կլինի բաղդաւոր... նա արժանի է այդ բաղդաւորութեան... իսկ Մուրադեանցը, ո՞հ, տայ Աստուած, որ նա էլ կարողանայ գտնել Հեղինէի մէջ իւր բաղդաւորութիւնը, տայ Աստուած... Սառան կարծես երկրայում էր այդ մասին։

Այս և սրա նման մտքեր վերջին ժամանակները սկսել էին տանջել Սառային. նա կորցրել էր քունը, ճաշակը. նա սաստիկ լղարել էր. նրա սև, մեծ աչքերը սկսել էին ցոլալ մի անսովոր կրակով։

Իսկ օր. Հեղինէ Ջանիկեանցը այնքան բաղդաւոր էր,

այնքան երջանիկ, որ չկարողացաւ նկատել իւր ընկերուհու մէջ այդ ակներև փոփոխութիւնը։ Միայն Նազարեանցն էր, որ կարողացել էր նկատել այդ, բայց դժբաղդաբար չէր գտել դրա սկզբնապատճառը։

Ինքը Մուրադեանցը ոչինչ չգիտէր և ոչինչ չէր կասկածում. նա շարունակում էր վարուել Սառայի հետ, իբրև իւր քրոջ հետ, այդ անտանելի էր Սառայի համար և նա տանջվում էր։

Մի օր, երբ արևը արդէն մայր էր մտնում, մեր հիւանդները գնացել էին զբօսնելու ծովի ափը։ Մայր մտնող արեգակի ճառագայթները ներկել էին ծովի մակերևոյթը մի մութ-հրեղէն գոյնով. ծովը հանգիստ էր և նաւերն ու նաւակները մեղմ տատանվում էին նրա հըսկայական կրծքի վերայ. օդը պարզ էր։

Բժիշկը և Նազարեանցը հեռացել էին օրիորդներից և որոնում էին ծովային հազուագիւտ քարեր և կենդանիներ։ Օրիորդները մենակ նստած էին հեռուում..

—Գիտե՞ս նորութիւն, Սառա, դարձաւ նրան Հեղինէն, բարձրացնելով գլուխը Ալիշանի գրուածքից։

—Ի՞նչ կայ, մեքենայաբար հարցրեց Սառան, նայելով ծովին։

—Շուտով իմ հարսանիքս է։

—Ի՞նչ, վախեցած հարցրեց Սառան։

—Շուտով իմ հարսանիքս է... ինչ ես զարմանում, միթէ չէիր սպասում։

—Ոչ... ոչ... ինչպէս չէի սպասում... սպասում էի... սպասում, կըկնում էր յուզմունքի մէջ Սառան։

Հեղինէն զարմացած նայեց նրա երեսին և շարունակեց կարդալ։

Սառայի երեսը իրաւ որ այլանդակուած էր. նա կրում էր հոգեկան ծանր տանջանքների բոլոր նշանները։

—Ե՞րբ, հարցրեց նա վերջապէս։

—Շուտով, հոկտեմբերին, պատասխանեց Հեղինէն, չբարձրացնելով գլուխը գրքից։

—Շնորհաւորում եմ... շնորհաւորում եմ... սրտանց... բաղդաւոր լինիս... տայ Աստուած երջանիկ ապրես նրա հետ... Մուրադեանցը լաւ մարդ է... շատ լաւ, և նրա ձայնը յանկարծ կտրուեց, նա պինդ սեղմեց Հեղինէի ձեռը և մի տենդային շտապով հեռացաւ ծովեզերքից։

Օր. Ջաւիկեանը զարմացած նայեց նրա ետևից։

—Այս ինչ է պատահել սրան չչնչաց նա։

Այդ րոպէին մօտեցան նրան բժիշկը և Նազարեանցը։

—Գնանք, Հեղինէ, դարձաւ Մուրադեանցը օր. Ջաւիկեանին, օդը արդէն ցրտել է։

Եւ երեքը միասին դիմեցին դէպի իրենց բնակարանը։

Սառան վաղուց այնտեղ էր։ Նա ընկել էր անկողնի վերայ և լալիս էր. երբ լսեց Ջաւիկեանի ոտի ձայները, իսկոյն խեղդեց իւր հեկեկանքը, բայց չվերկացաւ տեղից։

—Դու հիւանդ ես, դարձաւ նրան Հեղինէն։

Սառան ոչինչ չպատասխանեց։

ԺԷ.

Օգոստոսի վերջն էր։ Օդը անբնական ցուրտ էր. միշտ պարզ, միշտ կապուտակ հարաւային երկինքը ծածկուել էր սև ամպերով, արեգակը ամբողջ օրերով չէր երևում երկնակամարի վերայ. քամին սաստիկ էր. մառախլապատ ծովը անհանգիստ էր. նրա գոռացող ալիքները կատաղի զարկում էին ափին և նորից անզօր փշրվում հազար ու մէկ սպիտակ կաթիլների և փրփուրների...

Հիւանդները դուրս չէին գալիս իրենց բնակարաններից։

Գիշեր էր. քամին կատաղի մռնչում էր Թէոդոսիայի

շինութիւնների տանիքների վերայ. նա կարծես լալով շվացնում էր պատուհանի ճեղքերում, բարկացած խփում էր ապակիներին, կռացնում էր փոքրիկ ծառերը...։

Հեղինէն քնած էր։

Սառան չհանուած նստել էր գրասեղանի մօտ և տենդային շտապով գրում էր մի նամակ. երկու բաւականին մեծ կապոցներ դրած էին նրա մահճակալի տակ. Սառան յուզուած էր։ Գրիչը արագ թռչում էր թղթի վերայով. Նրա ձեռը դողում էր։ Անցաւ մի քանի րոպէ. վերջապէս նա նորից կարդաց նամակը. մտածեց մի քանի վայրկեան և կարծես մի բան վերջնականապէս վճռելով կնքեց նամակը։

Ծրարի վերայ գրած էր. «Օրիորդ Ջատիկեանին»։

Այսպէս աւելի լաւ կը լինի... այս միակ միջոցն է, շշնջաց նա և վեր կացաւ տեղից։ Նա կամաց մօտեցաւ Հեղինէի անկողնին և սկսեց դիտել. վերջինը անվրդով քնած էր. նրա շնչառութիւնը բոլորովին կանոնաւոր էր։ Սառան չարունակում էր նայել. նրա երեսին այդ րոպէին կարելի էր նշմարել և սէր, և նախանձ, և ատելութիւն։

«Թիք-թաք, թիք-թաք»—լսվում էր ժամացոյցի միակերպ ձայնը։ Սառան աւելի կռացաւ Հեղինէի վերայ և արտասուքի երկու այրող կաթիլները գլորուեցան օր. Ջատիկեանի վերմակի վերայ։

Սառան սկսեց մի բան որոնել. նա առանց ձայնի, զգոյշ բաց արեց գրասեղանի արկղներից մէկը և վերցրեց 40 ր. փող. յետոյ հագաւ իր վերարկուն, առաւ երկու կապոցները, հանգցրեց ճրագը և կամաց դուրս եկաւ սենեակից. նրա գլուխը սաստիկ տաք էր. նա ջերմում էր. ցուրտ ծովային քամին մի քիչ զովացրեց նրան. նա սկսեց խոր շունչ քաշել...։

Ամպած երկնքում ժամանակ առ ժամանակ երեւում էր

փայլակը. երկինքը որոտում էր. ծովը կարծես ուզենար դուրս գալ իւր ափերից. հեռուից, ծովի վերայ, երեւում էր մի կրակ. դա պատկանում էր մի նաւի, որ սաստիկ տատանուելով մօտենում էր ափին. ծովի փարոսը արձակում էր մի աղօտ լոյս և լուսաւորում էր մօտեցող նաւի ճանապարհը. ափում կանգնած էին մի քանի մարդիկ. դրանք ձկնորսներ էին։

Սառան սաստիկ հոգնած էր. նա հազիւ քայլում էր. կապոցները ծանր էին։

Այդ միջոցին վերեւից սկսեց մաղել անձրեւը. նա խըփում էր Սառայի երեսին. քամին սաստկացաւ, գետինը ցեխոտուեց. Սառան հազիւ հասաւ ափ։

—Առէք, խնդրեմ, այս կապոցները և տարէք նաւահանգիստ, ես ձեզ կը վարձատրեմ, դարձաւ նա մի ծերունի ձկնորսի։

—Լաւ, օրիորդ, երեւի դուք ուզում էք ճանապա՞րհ ընկնել, հարցրեց ձկնորսը։

—Այո։

—Բայց հազիւ թէ շոգենաւը դուրս գայ այս գիշեր. չէ՞ք տեսնում, ծովը ինչ խաղեր է խաղում, դարձաւ ծերունին Սառային։

—Բայց ինձ անհրաժեշտ է գնալ։

—Ուրեմն մնացէք գիշերը շոգենաւում, իսկ վաղը առաւօտեան դուք կը թողնէք Թէոդոսիան։

—Լաւ, տարէք ուրեմն։

—Գնանք։

Ձկնորսը և Սառան ուղղուեցին դէպի «Ալէքսանդր II» շոգենաւը, որ խարիսխ էր ձգել Թէոդոսիայի նաւահանգստում։

—Իսկ մրրիկը շուտով կը դադարի, նկատեց ձկնորսը, նայելով երկնքին։

—Ի՛նչ էք ասում... քամին աւելի սաստկացաւ։

Ծերունի ձկնորսը ժպտաց։

—Այդ նրա վերջի ոյժերն են ասեց նա.—ոչ, ես չեմ սխալվում. քառասունհինգ տարի է ահա, ես ձկնորսութիւն եմ անում. և լաւ շատ լաւ ճանաչում եմ ծովը, քառասունհինգ տարի մենք չենք բաժանվում միմեանցից, օրիորդ։

Սառան պատկառանքով նայեց իւր ուղեկցի վերայ։

Կէս ժամից յետոյ Սառան արդէն բարձրանում էր «Աղէքսանդր II»-ի սանդուխքներով. Նրան առաջարկեցին կանանց բաժնում մի առանձնասենեակ. Նա իսկոյն հանեց իւր թրջուած զգեստը, քանի մի բաժակ տաք թէյ խմեց և մտաւ անկողին. Նրա ամբողջ մարմինը ցաւում էր, կարծես ասեղներ լինէին ցցուած։

Նա աշխատեց քնել, բայց դեռ երկար նրա ուղեղում ծագում էին զանազան անկապ հատուկտոր պատկերներ... ահա նա տեսնում է իրեն փոքրիկ, կեղտոտ, Աստուածածնի փողոցում. տեսնում է իրեն Կակայեան ուսումնարանում... ահա Գրիգոր Ֆաթալեանցը, այդ չքեղ աստիճանաւոր սպան... ահա հիւանդանոցի դեղնագոյն պատերը... իրեն շրջապատում են Հեղինէն և Մուրադեանցը...։ Բայց ինչի՞ Հեղինէի երեսը այդպէս չար է... ինչի՞... խօ Սառան չէ խլում նրա փեսացուն... նա պարգևում է Մուրադեանցին Հեղինէին... ապա ինչի՞ Հեղինէն կամենում է խփել նրան... վա՛յ... վա՛յ... նա ճանկռում է Սառայի երեսը, ա՛խ... ինչպէս ցաւում է... թո՛ղ ինձ... թո՛ղ, Հեղինէ... տեսնո՞ւմ ես... ես հեռանում եմ... բաղդաւոր եղիր... երջանիկ... իսկ ես... ես սովոր եմ անբաղդութեան... դու էլ Մուրադեանց, բաղդաւոր եղիր...դու էլ սիրելիս...։

Եւ Սառան քնեց։

Երբ միւս օրը արեգակը լուսաւորեց երկիրը, շոգենաւը վաղուց թողել էր Թէոդոսիան. Նա տանում էր իւր հետ թշուառ Սառային։

Ժամը 8 ին վեր կացաւ տեղից Հեղինէն և տեսաւ որ, Սառայի անկողինը մնացել էր դարսած։

—Երևի գնացել է լողանալու, մտածեց նա և սկսեց հագնուել։ Անցաւ մի ժամ. Սառան չէր վերադառնում. Հեղինէն սկսեց անհանգստանալ։ Անցաւ երկրորդ ժամը։ Հեղինէն վերկացաւ տեղից և մօտեցաւ գրասեղանին. Նրա աչքին ընկաւ մի ծրար. Նա շտապով վերցրեց և կարդաց հասցէն. «օր. Ջաւիկեանին» գրուած էր ծրարի վերայ, նա շտապով կտրեց կնիքը և մի րոպէից յետոյ անզօր ընկաւ անկողնի մօտ. Նա ուշաթափուեց։

«Հեղինէ, գրուած էր նամակում, մենք այս օրից յետոյ թշնամի ենք. կեանքը խաղաց մի շատ վատ խաղ մեզ երկուսիս հետ. Նա ձգեց ինձ Մուրադեանցի հասարակութեան մէջ և ես... ես սիրեցի նրան։ Դու նոյնպէս սիրում ես նրան, դու նրա հարսնացուն ես, ուրեմն, աշխարհիս և մարդկային օրէնքները և իրաւունքները քո ձեռին են, իսկ ես... ես անզօր եմ... ես ունիմ միայն իմ սրտիս օրէնքները, որոնք նշանակութիւն չունին հասարակութեան համար... մեր կռիւը անհաւասար է... ես թողնում եմ պատերազմի դաշտը, թողնում եմ քեզ Մուրադեանցին և հեռանում... բայց ո՜ւր... դեռ ինքս էլ չգիտեմ և խնդրում եմ, որ դու էլ չաշխատես իմանալու... մեր մէջ ամեն ինչ վերջացած է... երբ կը կարդաս նամակս, ես կը լինիմ հեռու Թէոդոսիայից. ես առնում եմ 40 ր. փող... եթէ մի օր կարողանամ՝ կը վերադարձնեմ...։ Հասկանո՞ւմ ես, որ ես չեմ կարող քեզ բաղդաւորութիւն ցանկալ... այդ իմ ուժերից վեր է... բայց

Մուրադեանցը, տայ Աստուած որ նա բաղդաւոր, երջանիկ լինի…։ Սիրիր նրան։

Ս ա ռ ա ։

Հեղինէն կամաց կամաց ուշքի եկաւ. նա ձգեց նամակը և սկսեց լալ։

ԺԲ.

Շոգենաւը երկար սուլեց, ցնցուեց և դանդաղ մտաւ Ռոստովի նաւահանգիստը։ Ճանապարհորդները կամաց կամաց դուրս եկան ափ։ Սառան իւր կապոցները ձեռին, նոյնպէս թողեց շոգենաւը, նայեց իւր շուրջը և կանչեց մի կառապան։

—Նախիջեան քանիսով կը տանէք ինձ։

—Մէկ ռուբլի։

—Առէք պարկերս։

Եւ կառքը մի րոպէից թողեց բազմամարդ նաւահանգիստը. և անհետացաւ Ռոստովի խուլ փողոցներից մէկում։ Սառան անսովոր յուզմունքի մէջ էր. նա զարմացած նայում էր այդ մեծ երկյարկանի տներին, այդ գազային լապտերներին և այդ բոլորը, կարծես, շատ խորթ, շատ օտար էին թւում նրան. կարծես շատ վաղուց նա տեսած էր այդ բոլորը, տեսած էր երազի մէջ և այդ երազի տպաւորութիւնը արդէն անհետացել էր նրա ուղեղից, նա մոռացել էր այդ հեռու մանկութեան առօրեայ պատկերները… Ահա Թատրոնը, ահա քաղաքային պարտէզը, Ռոստովի մօտ Նորաշէն գիւղի փոքրիկ նոր տնակները, ահա և Նախիջեանը… այստեղից երևան է գալիս Սուրբ Գէորգայ եկեղեցին, գերեզմանատունը՝ իւր նորաշէն՝ հոյակապ եկեղեցիով… մի քանի րոպէ էլ… և ահա Նախիջեանի գլխաւոր փողոցը. մեծ մեծ տներ. Լուսաւորիչ Մայր եկեղեցին. Թեմական դպրանոցը… դեղա-

րանը… ահա դեռ մանկութիւնից ծանօթ, հարազատ տեղեր… բայց ինչի՞ այդ բոլորը խորթ է թւում Սառային, ինչի՞…

Նա շտապեցնում էր կառապանին. փողոցի քարեայ ուղին վերջապէս փոխվում է հասարակ հողի և կառքը մտնում է Աստուածածնի խուլ փողոցը։

—Աստուած իմ, ամբողջ տաս տարուայ միջոցում նա բոլորովին փոխուած չէ, մտածում էր Սառան։

—Միևնոյն քարուքանդ տնակները, միևնոյն ամայացած բակերը, միևնոյն մեծ, ծերացած թթենին և կարծես միևնոյն շները, որոնք բարձր հաչելով դիմաւորեցին Սառայի գալուստը։

—Ահա և մեր տունը, ցնցուեց Սառան, նա այնպէս է, ինչպէս և 10 տարի սրանից առաջ, միայն աւելի ծերացել է, աւելի կռացել…

Փողոցը դատարկ էր։ Սառան կանգնեցրեց կառքը և շտապով, կարծես մի բանից ամաչելով, վերցրեց պարկերը և տալով կառապանին մի ռուբլիանոց թղթադրամ, վազեց ներս։

Սրահում նստած էր մի ծերունի. նրա ալեզարդ գլուխը ցածր խոնարհած էր մի կօշկի վերայ. նրա արևառ, խորշոմած ձեռում արագ շարժվում էր ասեղը. դա սառայի հայրն էր—կօշկակար Կարապետը. նա դանդաղ բարձրացրեց իւր գլուխը, երկար դիտեց նորեկի երեսը և կարծես արձանացաւ։

Ծերունին ճանաչեց իւր աղջկան։

—Սառամս… Աստուած իմ… Սառամս, մրթմրթում էին ծերունու շրթունքները։

—Հայր, միայն կարողացաւ բացագանչել Սառան և ընկաւ նրա գիրկը։

—Սառամս… զաւակս… վերջապէս յիշեցիր մեզ…

քու ծեր հօրդ, նկատեց վրդովուած ձայնով կօշկակար Կարապետը և արտասուքը թրջելով նրա երեսը, ընկաւ գետին։

Սառան արտասուեց. այդ արտասուքը արտայայտում էին նրա ներքին սաստիկ ուրախութիւնը։

—Ա՛… կնիկմարդ… Շուշան… աղաղակում էր այդ միջոցին ծերունին։

—Ի՞նչ է… ի՞նչ կայ… դէ ասա, բացագանչեց մէկը միւս սենեակից և հասնելով սրահի չէմքը, կանգ առաւ մի րոպէ և յետոյ խելագարի նման ընկաւ Սառայի վզին։

—Ջանո՛ւկս… Սառա՛ս, միայն կարողացաւ ասել բաղդաւոր մայրը և նրա ձայնը կտրուելով փոխուեցաւ անզօր, խուլ հեկեկանքի։

—Ինչպէ՞ս ես աղջի՞կ ես… ինչպէ՞ս մեծցել ես, անդադար հարցնում էին մի քանի ժամանակից Սառայի ծնողները։

—Ինչպէս տեսնում էք, ես լաւ եմ. իսկ դո՞ւք, ինչպէս ծերացե՛լ է հայրս, դարձաւ նա մօրը։

Եւ յիրաւի… Շուշան խանումը և Կարապետը սաստիկ ծերացել էին, լի գրկանքներով կեանքը արդէն գրել էր իւր անջնջելի դրոշմը նրանց նիհարացած, խորշոմած երեսներին։

—Հէյպէթ. արթիս ծերացանք, հա… զաւակս խորթ կասիս… մեր բանը վերջացաւ… չինախ ալ դուն, դուն ապրէ, պատասխանեց ծերունի կօշկակարը և փաղաքշաբար նայեց Սառայի գեղեցիկ, բայց գունատ երեսին։

Շուշան խանումը դուրս էր եկել և պատրաստում էր ինքնաեփը. նա ածուխը ձեռին մօտեցել էր բաղի պատին և կանչում էր իւր հարեան դերձակ Միքայէլի կնոջը։

—Գայանո՛ւշ, Գայանո՛ւշ, արի հոս, չուտ… Սառաս էկաւ։

—Վայ գլխուս, ի՞նչ կասիս, հաքա, խո՞րթ։

—Հա կասիմ, աքի, պատասխանեց Շուշան խանումը և վազեց դէպի սրահը։

Այսօր այդ փոքրիկ խրճթում տիրում էր բաղդաւորութիւնը, այն բաղդաւորութիւնը, որ շատ սակաւ զարկում է չքաւորների դուռը և ներս մտնում, և չքաւորները աշխատում էին երկարացնել, որքան կարելի էր, այդ բաղդաւորութեան րոպէները. Նրանք աշխատում էին ցոյց տալ ուրիշներին այդ։ Եւ Կարապետ կօշկակարի բաղի ճռճռացնող դուռը անդադար բացվում էր և ներս էր թողնում զանազան պարոններ, աղջիկներ, կանայք… դրանք Սառայի և նրա ընտանիքի բարեկամներն էին և գալիս էին շնորհաւորելու նրա ծնողներին և ասելու նրանց Նախիջևանի սովորական «աչքդ լուսը»։

Այդ հիւրերից ամեն մէկը վախով, մի պատկառելի հետաքրքրութիւնով նայում էր Սառայի երեսին. կարծես նա, Կակայեան ուսումնարանի սանիկը, հասարակ մահկանացու չէր, կարծես, նա մի գերբնական արարած լինէր։

Նրան երկրպագում էին, խունկ էին ծխում։

Սառան նկատում՛ էր այդ և ձանձրանում։

Նա աշխատում էր, որքան կարելի է հասարակ, մեղմ վարուել նրանց հետ, բայց իզո՛ւր, նրանք աւելի ևս ստրկանում էին նրա առաջ, աւելի ցածանում։

Արդէն գիշեր էր, երբ Կարապետ կօշկակարի հիւրերը կամաց կամաց ցրուեցան իրենց տները։

Պատրաստեցին անկողինը։ Արդէն մի ժամ էր, ինչ որ Սառան մտել էր իւր անկողինը. բայց քունը փախչում էր նրա աչքերից։

Նա երևակայում էր իւր մանկութեան անդարձ անցկացած օրերը, յետոյ իւր կեանքը «Կակայեան հայ օրիորդաց ուսումնարան»-ում, համեմատում էր այդ երկու անհամեմատ կեանքերը, աշխատում էր գերադասել առա-

ջինը, աշխատում էր համոզել իրեն, որ ինքը ծնուած է այդ առաջի կեանքի համար, որ ինքը, պատկանում է այդ փողոցին բնականապէս... և այդ մտքերով Սառան քնեց։

Ժ.Թ.

Սառայի այս նոր կեանքը անցնում էր բաւական միակերպ. վեր էր կենում նա ժամը 9-ին կամ 10-ին. և արդէն ամեն ինչ գտնում էր պատրաստուած իւր համար, մօր հոգացողութիւնը հասնում էր մինչև անգամ Սառայի կեանքի ամենաչնչին իրերին և երևոյթներին։ Նրա շորերը միշտ մաքրած, միշտ դարսած դրած էին լինում անկողնի մօտ. մի քիչ հեռու սպասում էր նրան սառը ջուրը, Կարապետ կօշկակարի տանը դեռ չտեսնուած անուշահոտ սապօնի մի կտոր և ձիւնի նման սպիտակ երեսսրբիչը։ Սառային մնում էր միայն հրամայել և նրա հրամանը կատարվում էր իսկոյն համարեա ստրկաբար։ Առաջի օրերը Սառային զբաղեցնում, ուրախացնում էին իւր հօր և մօր վարմունքը, նրանց փաղաքշանքը դէպի իրենց զաւակը, բայց յետոյ նա մտածեց, որ ինքը, մի առողջ և երիտասարդ աղջիկ, չունի բոլորովին այդ իրաւունքները իւր ծերացած ծնողների վերայ, որ այդ—կոպիտ բռնութիւն է, և նա աշխատեց հասկացնել ծնողներին, որ իրեն անախորժ է այդ, որ դրանով նրանք վիրաւորում են նրա ինքնասիրութիւնը, նրա ազատ կամքը... բայց իզո՜ւր... Շուշանը և Կարապետը անկարող եղան հասկանալ այդ և շարունակում էին իրենց հոգածութիւնները... բայց հետազօտողի աչքերին երևան էր գալիս մի լուռ անբաւականութիւն, տրտունջ։

Շուշան խանումը անբաւական էր Սառայի անգոր-

ծութիւնից և քանի անգամ յայտնել էր այդ միտքը իւր ամուսնուն։ Ծերունի կօշկակարը աշխատում էր պաշտպանել իւր զաւակին։

—Այս ինչ է, սովորաբար ասում էր Շուշանը, երբ դեռ Սառան քնած էր լինում, նա հէչ բան չի անելու ինձի «եարտըմ» չուզէ անելու... ինչ սոյ բան է։

—Ի՞նչ, բարձրացնում էր գլուխը ծերունի Կարապետը։

—Սառան տաա սաղ օրը կը կարթայ... բան չանել... հէչօլմասա *) ինձի եարտըմ **) անէր։

—Զգիտես ինչ, ինչպէս ազիզ մեծացել է նա, պատասխանում էր կօշկակարը և աւելի ցած խոնարհեցնում իւր ալեզարդ գլուխը։

—Ազիզ մեծացել է... ան անցաւ, ջանս... չինտխ պիտի աշխատէ, որ հաց գտնենք ուտելու... բան պիտի, անալ չէ նէ ամենքը մահլային մէջը էրես կը զարնեն ինձի։

—Շունը կը հաչէ, քամին կը տանէ։

—Ինչպէս չէ... ախր, ամենքը կը հարցունին, եփ բան կանէ Սառադ, կասեն... ախր նամուս չմնաց...

—Նամուս... հա, ինչ կուզես... կուզես, որ տախտակ սրբէ... հա՛, և ծերունին սկսեց հազալ։

—Նամուսից խօ չընկնիլ, տա ալ անի նը՝ ինչ կըլայ, մեծաւորի աղջիկ չէ՞ խօմ...

—Է՞հ... ինչ կալաձի անեմ քեզի հետ, որ բան հասկընալ չուզես, անբաւական ձայնով նկատում էր Կարապետը. իսկ Շուշանը տհաճութեամբ հեռանում էր խոհանոց իւր ամենօրեայ գործերին։

---

*) Գոնէ։

**) Օգնութիւն։

Առաւօտեան ժամի 9½-ն էր։ Սառան զարթեց, տրորեց մի քանի անգամ իւր աչքերը և դանդաղկոտութեամբ վեր կացաւ տեղից։

Նա ծանր-ծանր լուաց երեսը, հագնուեց, սանդրուեց և առնելով ձեռը մի գիրք՝ նստաւ թէյի. դա Կատուլ Մենդեսի փոքրիկ, գեղեցիկ գրուածներից մէկն էր։ Սառան հետաքրքրուած, գլուխը չբարձրացրած, կարդաց մինչև վերջը. թէյը սառած մնացել էր սեղանի վերայ։

Սառան ծածկեց գրքոյկը և ընկաւ մտածողութեան մէջ.

—Ահա և պարապմունք, ասաց նա ինքը իրեն... կարելի է թարգմանել... և ուղարկել հայ լրագրներից մէկին... այդ լաւ կը լինի... վերջացրեց նա իւր խօսքը և վեր կացաւ տեղից։

—Իհարկէ, լաւ կը լինի. մի քանի րոպէից յետոյ շարունակեց նա, գոնէ աւելի լաւ, քան ոչինչ չանելը... կարելի է, ժամանակով կարողանամ և ինքնուրոյն աշխատել մատենագրութեան ասպարիզում... գրել պատկերներ... վէպիկներ...

Եւ Սառան ժպտաց մի ներքին բաւականութիւնով։

—Զգիտեմ միայն, վարձ տալիս են թարգմանութիւնների համար հայ պարբերական թերթերը, թէ ոչ, նկատեց նա առնելով գրիչը իւր ձեռը։

Սառան սկսեց թարգմանել։

Սկզբից բառերը հազիւ դուրս էին գալիս նրա գրչի տակից. նախադասութիւնները անտաշ էին, բայց 2 կամ 3 ժամից յետոյ գործը աւելի լաւ գնաց. գիշերուայ ժամի 8-ին գրուածքը արդէն պատրաստ էր, հարկաւոր էր միայն սրբագրել։ Սառան չթողեց այդ գործը միւս օրուայ, նա աւարտեց պատկերը, դրեց ծրարի մէջ, կնքեց և գրեց հասցէն։

Նա ուրախ էր, նա զգում էր, որ ինքը կատարել է մի գործ, որի պտուղները լիակատար իրաւունք ունի ստանալու. նա զգում էր, որ ինքը անգործ անհատ չէ... ընդհակառակը նա աշխատող է, բանւոր է, ուրեմն կարող է հայթայթել իւր ապրուստը առանց ծանրանալու իւր չքաւոր ծնողների վերայ. այդ միտքը մի ներքին, հոգեկան բաւականութիւն պատճառեց Սառային և նա ժպիտը բերնին մտաւ անկողին և նոյնպէս ժպտալով քնեց։

Ի.

Մի շաբաթից հայ թերթերից մէկում լոյս տեսաւ Սառայի աշխատութիւնը, այդ ժամանակ դեռ սակաւ էին երևան գալիս պարբերական թերթերի մէջ օրիորդների թարգմանութիւններ, ինքնուրոյն երկասիրութիւններ, այդ էր պատճառը, որ ամբողջ ինտելիգենտ Նոր-Նախիջևանը իսկոյն իմացաւ Սառայի գրուածքի մասին. Նրա նախկին բարեկամները երբ տեսնում էին նրան քաղաքային պարտիզում կամ փողոցներում, շնորհաւորում էին նրան, խրախուսում. գտնուեցան և այնպիսիներ, որոնք մարգարէացան Սառայի ապագան. ասում էին, որ նրանում վառվում է այն Աստուածային անշէջ կրակը, որ սեպհական է միայն ընտրեալ տաղանդներին, և այլն և այլն։ Ամբոխի գովասանութիւնը չշլացրեց Սառային, նա ինքն ևս սկսեց այլ հայեացքով նայել իւր թարգմանութեանը, իւր ապագայ գրականական պարապմունքների վերայ։

—Այլ ես բանւոր չեմ, խոստովանում էր նա իւր մտքի խորքում, ես մի քիչ բարձր եմ...

Եւ նա ակամայ ծիծաղում էր։

Սառան այդ միջոցին ձեռք բերեց մի քանի ռուս

շաբաթաթերթեր, ընտրեց փոքրիկ վէպիկներ, պատկերներ և սկսեց թարգմանել. ժամանակը գնում էր արագ. հայ լրագիրներից մէկում հրատարակւում էր Սառայի աշխատասիրութիւնը։

Սառայի ինքնասիրութիւնը բաւականացրած էր. նա համոզուած էր, որ ինքը հասարակական գործիչ է, աշխատող է և այդ աշխատութեան համար վարձ էր պահանջում։

Նա չէր կամենում աշխատել ձրի։

Այդ է պատճառը, որ նա մի օր գրեց խմբագրութեանը և վարձ պահանջեց։ Նա անհամբեր սպասում էր խմբագրի պատասխանին։ Նա ինքը գնում էր պօստատուն և հարցնում էր. վերջապէս նամակը ստացուեցաւ։

—«Օրիորդ, գրում էր լրագրի խմբագիրը, մեր հայ պարբերական մամուլի նիւթական միջոցները այնքան սուղ են, որ մենք թարգմանութիւնների վարձ տալ և այդպիսով գնել, հաւատացէք, անկարող ենք. եթէ համաձայն էք աշխատել ձրի, աշխատեցէք, մենք կլինենք շատ շնորհակալ։ Փորձեցէք ուղարկել մեզ ինքնուրոյն գրուածքներ. այդպիսիները վարձատրւում են, նայելով, ի հարկէ, իրենց արժանաւորութեան»։

Սառան մտաբերեց ամբոխի գովասանքը, մի քանի ծանօթ երիտասարդների մարգարէութիւնները իւր տաղանդի, այն Աստուածային անշէջ կրակի մասին և սկսեց գրել մի ինքնուրոյն վէպ։

Նա առաւ իբրև վիպասանութեան հերոս, իբրև տիպ, Նոր-Նախիջևանում յայտնի, ժամանակով հարուստ և արդէն աղքատութեան ճանապարհը ընկած ընտանիքի մի զաւակ, կիսուսում երիտասարդը, որ թափառել էր Եւրոպայի ամենահռչակաւոր համալսարաններում և վերջացրել էր իւր մտաւոր և բարոյական զարգացումը Պա-

րիզ—ամենալաւ պանդոկներում, վերջ ի վերջոյ դատարկ գլխով և աւելի դատարկ գրպանով վերադառնում է իւր հայրենիքը։

Այստեղ ամեն ինչ նա պախարակում է, չէ հաւանում, սկզբից հեռու է պահում իրեն այդ «վայրենիներից», բայց կամաց կամաց բարեկամանում է բաղդի բերմամբ մի խեղճ ընտանիքի հետ. սկսում է յաճախել նրան, այդտեղ նա թռցնում է մի անփորձ, դեռ կեանքի ասպարէզ չմտած օրիորդի խելքը. խեղճը սիրահարւում է երիտասարդի վերայ. վերջինը խաբում է նրան, խոստանում է պսակուել և անպատւում է. օրիորդի գործակատար եղբայրը սպանում է խաբեբային. կայանում է դատ և գործակատարին աքսորում են Սիբիր։ Վիպասանութեան վերջի դրութիւնները ստեղծել էր իւր երևակայութեան մէջ ինքը Սառան և այդ դրութիւնները հասկացողի համար (մենք չենք խօսում սպանման և դատաստանի մասին) այն հասկացողի, որ ճանաչում էր արդի հայի կեանքը, ապրել էր և ապրում էր այդ կեանքով, բոլորովին կեղծ էին և անբնական. այդ էր պատճառը, որ վէպը ուղարկելուց յետոյ Սառան մի քանի օրից ստացաւ խմբագրութիւնից մի փակ նամակ։

«Մենք կը տպենք ձեր վէպը, գրում է խմբագիրը, միայն փոփոխութիւններով. դուք կեղծում էք, հայ օրիորդը դեռ այնքան համեստ, նահապետական և բարոյական է, որ չէ կարող գործել այն, ինչ որ գործում է նա ձեր հրամանով... Երիտասարդի տիպը ներշնչել է ձեզ պ. Գամառ-Քաթիպայի «Մայրաքաղաքում կրթուած հայ երիտասարդ» գրուածքը... Զգուշացէք, օրիորդ, անտեղի նմանողութիւններից, աշխատեցէք աւելի լաւ, և որ ամենից գլխաւորն է՝ մտածեցէք գրելուց առաջ։ Ձեր գրուածքի վարձը ուղարկում ենք ձեզ այս նամակով»։

Սառան, իրաւ դտաւ նամակում 5 րուբլանոց թըղթադրամ. արիւնը խփեց նրա գլխին, նա համարում էր իրեն անպատուած։

—Իմ երկու շաբաթուայ աշխատութիւնս միթէ արժէր միայն 5 րուբլի, չնչայց նա կծոտելով իւր ներքին շրթունքը. ես կարող էի այդ միջոցին 10 րուբլու կար անել...

—Ի հարկէ... կարը աւելի լաւ է՝ քան թէ քո անհամ գրուածքները, յանկարծ լսեց նա մի ձայն։

Այդ ձայնը նրա խիղճն էր, նրա ներքին անաչառ դատաւորը։

—Կարե՞լ... գրիչը փոխել ասեղի...

—Այո... այո, անդադար կրկնում էր նրա խիղճը։

—Ի՞նչպէս... երբ ես զգում եմ, որ իմ մէջ վառ է Աստուածային կրակը, երբ...

—Ունայն ցնորք, դու ծնուած չես մատենագրութեան համար... լաւ է որ ասեղդ առնես...

Եւ ներքին ձայնը լռեց։

Սառան ընկաւ մտածմունքի մէջ։

Մի շաբաթից մի լրագրում հրատարակուեցաւ Սառայի վիպասանութեան քննութիւնը։

«Մենք խորհուրդ ենք տալիս, գրում էր ի միջի այլոց քննիչը, յարգելի օրիորդին աշխատել դառնալ լաւ մայր, լաւ դաստիարակիչ իւր ապագայ զաւակների, և ոչ թէ վիպասան. մանաւանդ, որ մենք չենք տեսնում նրա գրուածքներում ոչ մի արժանաւորութիւն. դրութիւնները չինծու են, հերոսուհին երևակայական. ըստ երևոյթին վէպը գրած է առանց մտածելու, տիպերը չեն ստացել կենդանութիւն գրողի ուղեղում. նրանք և խօսում են, և գործում ոչ թէ կամաւոր, դրդուած, այլ բռնի, միայն գրողի հրամանով»։

Այդ քննութիւնը տուեց վերջի սաստիկ հարուածը Սառայի երևակայեալ տաղանդին. նա ինքն իրեն խոստացաւ թողնել գրականական ասպարէզը։ Միւս օրը նա ձեռք բերեց մի կարի մեքենայ և սկսեց կար անել ուրիշների համար։

Ներքին ձայնը վերջապէս բոլորովին լռեց։

Երևի նա գոհ էր Սառայից։

ԻԱ.

Աշնանային անտանելի օրերից մէկն էր. երկինքը մառախլապատ և ամպամած էր, բնութիւնը կորցրել էր իւր ամառուայ չքեղութիւնը և նմանում էր ծանր հիւանդի։ Ծառերը մերկացել էին իրենց տերևներից. բոյսերը դեղնել, թառամել և անզօր կռացել էին գետնին. ամեն տեղ ցեխ էր և անձրևը վերևից թրջում էր բագերի պատերը...

Աստուածածնի փողոցը կարծես մեռած լինէր։

Ոչ ոք չէր երևում այնտեղ։

Կարապետի տան մի լուսամուտը, չնայելով որ դեռ ժամը 4 $\frac{1}{2}$-ն էր, արդէն լուսաւորուած էր. ճրագի աղօտ լոյսը հազիւ հազ հասնում էր փոքրիկ սենեակի անկիւններին։

Սառան կար էր անում. մեքենայի դղրդոցն էր միայն, որ խանգարում էր սենեակում տիրող լռութիւնը։

Այս իւր նոր պարապմունքին Սառան տուեց իւր հոգին և մարմինը, նա ամեն օր առաւօտեան 6-ից մինչև գիշերուայ 2-ը միշտ կարում էր։ Կարապետ կօշկակարը ծերացել էր, նրա աչքերը լաւ չէին տեսնում և նա թողել էր իւր պարապմունքը։

Սառան կերակրում էր ամբողջ ընտանիքը։

Այդ աշխատանքը վեր էր նրա ուժերից։

Նրա երեսը հիւանդոտ էր. ինքը նիհարացել էր և

թշերի սովորական կարմրութիւնը թուել անհետացել. Նրա մեծ, սև, գեղեցիկ աչքերում կարելի էր նշմարել մի անբնական, վառվռող փայլ. այդպէս փայլում են միայն հիւանդների աչքերը։

Սառան շտապում էր։

Նա պէտք է վերջացնէր մինչև վաղը երեք հատ շապիկ։

Երբեմն երբեմն նա հազում էր։

Այդ հազը չոր էր և կրծքային։

Սառայի սենեակին կից նստած էին սեղանի շուրջը Կարապետը, Շուշանը և մի երիտասարդ բաւական լաւ հագնուած. այդ երիտասարդին կարելի էր անուանել մինչև անգամ գեղեցիկ, եթէ նրա աչքերի հայեացքը չլինէր այնքան սառը, այնքան անփայլ։

Նա նայում էր կարծես մեքենայաբար։

Ասում են, որ այդպէս նայում են ցնորուածները։

Բարեբաղդաբար երիտասարդը ցնորուած չէր. Նա Սառայի մանկութեան ընկերն էր, նոյն Աստուածածնի փողոցի ծնունդ Միքայէլը։ Այդպէս էր երիտասարդի անունը, որ այժմս կատարում էր մի Նախիջևանցի աղայի մօտ գործակատարի պաշտօն, և ստանում էր 450 րուբլի տարեկան։ Նա նոր էր վերադարձել Աստրախանից, ուր մնացել էր աղայի հրամանով մօտ 3 տարի։

Սեղանի վերայ դրած էր հեշտախիփը, հաց և մի քանի աման ուտելիք։ Շուշանը անսովոր ուրախ էր. նա անդադար հրաւիրում էր հիւրին անուշ անելու այս կամ այն ուտելիքից։

Միքայէլը պատմում էր իւր ճանապարհորդութեան, ուրիշ քաղաքների կեանքի և զանազան երևոյթների մասին. ծերունի կօշկակարը ուշադրութեամբ լսում էր երիտասարդի խօսքերը և ժամանակ առ ժամանակ իւր ալե-

զարդ գլխի շարժուածքով յայտնում էր իւր համաձայնութիւնը կամ զարմանքը։

— Այս ինչ՞... Սառաս չէ գալիս, նկատեց Շուշան խանումը և մօտեցաւ սենեակի շեմքին։

— Սառա՛... արի չայ խմենք։

— Իսկոյն... լսուեց Սառայի ձայնը։

— Շո՛ւտ արա։

— Այժմ... և Սառան սկսեց հազալ։

Մի րոպէից յետոյ նա մտաւ ներս. Նրա նիհարացած, դալկացած երեսը կրում էր մի այնպիսի արտայայտութիւն, որ կարծես նա զզուած լինէր այս աշխարհի ամեն բանից, կարծես նա բոլորովին վաստակած լինէր։ Նա ժպտաց, երբ տեսաւ Միքայէլին, գլուխ տուեց և պինդ սեղմեց նրա ձեռը։

Նրանք չէին տեսնուած ամբողջ 11 տարի։

Մի բան, մի կայծ փայլեց Միքայէլի սառն աչքերում, փայլեց և իսկոյն կորաւ։

Սառան սկսեց հարց ու փորձ անել Միքայէլի կեանքի մասին, նրանք երկար խօսում էին։ Միքայէլը պնդում էր, որ այնտեղ, Աստրախանում հայութեան ոգին աւելի արծարծուած է հայերի մէջ, քան այստեղ, Նոր-Նախիջևանում. Սառան չէր համաձայնվում. նրանք սկսեցին վիճել. Սառան ոգևորուեց. Միքայէլը մինչև վերջը մնաց նոյնպէս սառնասիրտ, նոյնպէս անվրդով, ինչպէս և միշտ... միայն նրա ներքին շրթունքը ժամանակ առ ժամանակ սկսում էր անսովոր, ցնցողաբար դողալ...

Շուշանը երկար դիտեց այդ երկու երիտասարդներին, և մի միտք ծնեց նրա մէջ։ Վերջապէս նա նշաններով և գլխով ցոյց տուեց Սառայի և Միքայէլի վերայ իւր մօտ նստած ամուսնուն և վեր կացաւ տեղից։

Երևի մի բան վճռեց նա։

—Ոչ... ոչ... դու սխալվում ես, ասաց Սառան դառնալով հիւրին, առ, օրինակի համար, մեր երիտասարդներին և օրիորդներին... տես հինգ կամ վեց տարի սրանից առաջ նրանք մաքուր հայերէն մի բառ անգամ չգիտէին, իսկ այժմս նրանք շատ լաւ և խտակ խօսում են, գրում և կարդում են հայերէն։

—Այդ մօդայ է և նրանք, հաւատացէք, անում են այդ միայն յանուն մօդայի, պատասխանեց Միքայէլը... Ես համոզուած եմ, որ եթէ վաղը դուրս գայ մի նոր մօդա—մոռանալ մայրենի լեզուն՝ նրանք իսկոյն կաշխատեն մոռանալ... այո...

Սառան ոչինչ չպատասխանեց։ Նա տեսաւ, որ Միքայէլը երբէք փոխելու չէր իւր կարծիքը, նա լռեց։

Մի քանի րոպէից հիւրը վերկացաւ տեղից։

—Գիշեր բարի, ասաց նա դառնալով տանտէրերին առնելով իւր վերարկուն և գլխարկը։

—Գիշեր բարի... կէնէ արեցէք, ճանապարհ էր ձգում Միքայէլին Շուշան խանումը։

Սառան առանձնացաւ իւր սենեակը։

Դեռ երկար այնտեղից լսվում էր կարեմիքենայի դղրդոցը։

—Փոխուել է Միքայէլը նկատեց նա, փաթաթուելով վերմակի մէջ, բայց առաջուայ կոպտութիւնը դեռ մնացել է վրան. առաջ էլ ոչնչով չէր կարելի համոզել նրան և նա շատ քիչ զարգացած է... այդ արտաքին փայլն է միայն նրանում... նա չգիտէ, թէ որոնք են մեր նշանաւոր գործիչները, և Սառան հեգնօրէն ժպտաց, դարձաւ միւս կողքին և մի քանի րոպէից սենեակում լսուեց նրա հանգիստ շնչառութիւնը։

ԻԲ.

Միքայէլ Թաւալեանցը համարեա ամեն օր այցելում էր Կարապետ կօշկակարի ընտանիքին։ Նա միշտ գալիս էր երեկոյեան ժամը 7-ին, թէյ անուշ անում, մի քիչ խօսում ծերունի Կարապետի հետ քաղաքի այս կամ այն նորութիւնների մասին և յետոյ ամբողջ ժամանակը անց էր կացնում փսփսալով Շուշան խանումի հետ։ Այդպիսի րոպէներին Սառան կար էր անում իւր սենեակում. իսկ Կարապետը արդէն վաղուց քնած էր լինում այնպէս, որ ոչ ոք չէր խառնում Միքայէլի և Շուշան խանումի գաղտնի առանձնախօսութիւնները։ Մի անգամ սովորականին համեմատ Թաւալեանցը թողեց կօշկակարի տունը գիշերուայ 12-ին. Շուշանը ճանապարհ ձգեց նրան մինչև սրահը։

—Անպէսէ նը, սկսեց Միքայէլը, վաղը կասես Սառային իմ ցանկութիւնս և սեղմեց Շուշանի ձեռը։

—Աղէկ, անպատճառ... միամիտ եղիր...

—Համա յօժար չըլա նը, ինչ կանենք։

—Ի՞նչ... յօժար չըլայ... խեւ է ինչ, որ ինքը իրեն քէշ կամենայ...

—Մի մոռնալ, որ նա ուսումով աղջիկ է... ես ուսում չունիմ որ...

—Մեծ բան... ուսում առած է... համա արի նայէ, որ դարա ուսումը մեր փորը չկշտացներ, բարկացած նկատեց Շուշան խանումը։

—Աստուած տայ, որ ասածիդ պէս ըլայ... խորթը ասեմ, ես կը վախենամ...

—Մի վախենալ... հէչ մի վախենալ... համէ, ինձի Շուշան կասեն... Շուշան... գիտես խօմ։

—Գիտեմ... գիտեմ... ծիծաղեց Թաւալեանցը և դուրս եկաւ բակից։

Շուշանը կողպեց սրահի դուռը՝ կամաց, հազիւ լսելի քայլերով մօտեցաւ Սառայի սենեակի դրանը, ականջ դրեց և սկսեց մտիկ տալ։ Այստեղից նրան հասնում էր միայն կարի մեքենայի մի անկերպ թիք-թակը. Սառան դեռ չէր քնել։ Նոյնպէս զգոյշ, նոյնպէս անլսելի հեռացաւ Շուշանը իւր սենեակը, հանուեցաւ, հանգցրեց ճրագը և մտաւ անկողին։ Դեռ երկար նա բաց աչքերով նայում էր առաստաղին, դեռ երկար նրա ուղեղը աշխատում էր թափանցել ապագայի անյայտ քօղը, դեռ երկար նա շինում էր զանազան օդային ամրոցներ, տեսնում էր Միքայէլին հարուստ, Սառային երջանիկ, իսկ իրեն... նա մինչև անգամ չճանաչեց. միթէ այդ չքեղ հագնուած իւր փոքրիկ թոռներով շրջապատուած տանտիկինը—այժմեայ կեղտոտ ցնցոտիներով Շուշան խանումն է... ահ... միթէ, այդ երազ չէ... ոչ... ահա և Սառան, ահա Միքայէլը...

—Զէ... ինչ կուզէ թող լա, այդ գործի կատարումը մեռնիմ, կէնէ կուտամ, յանկարծ վճռեց Շուշան խանումը և քնեց։

—

Այդ իսկ միջոցին Շուշան խանումի սենեակի դրան մօտ երևեց մի ստուեր. դա Սառան էր. նա սկսեց մտիկ տալ, ամեն ինչ լուռ էր. նա կամաց հեռացաւ դռներից և մտաւ իւր սենեակը. նա շտապով հանեց պահարանից մի բաւականին հաստ տետրակ, կողպեց դուռը և սկսեց թերթել, այդ—նրա յիշատակարանն էր, նրա մանկութեան ընկերը. այդ անշունչ տետրակին նա հաւատացել էր այն, ինչ որ չէր կարող, չէր կամենում հաւատալ շնչաւորներին իւր հոգին, սիրտը, գաղտնիքները և մտքերը...

Սառան վերցրեց սեղանից գրիչը. նրա երեսը ստացաւ մի լուրջ արտայայտութիւն։

«Դեկտեմբերի 5-ին, սկսեց գրել Սառան—մի օր էլ գլորուեցաւ անդարձ յաւիտենականութեան անդունդը... ժամանակի անիւը կանգ չէ առնում, իսկ մարդս ուժից է ընկնում... խեղճ մարդը կամենում է հանգստանալ. բայց իզո՛ւր... ժամանակը և կեանքը անողորմ քշում են նրան առաջ, առաջ և միշտ առաջ... ո՞ւր կը հասնի վերջապէս մարդկութիւնը, յայտնի չէ... աւելի հաւանական է, որ նա ճանապարհը կորած երեխայի նման պտտում է միշտ միևնոյն տեղում... միշտ միևնոյն հնացած երգը միայն նոր եղանակով... այո՛... օրինակ, ես... այսքան տարուայ միջոցին ես ոչ մի քայլ առաջ գնացած չեմ... միշտ միևնոյն տեղը... անտանելի, խղճալի դրութիւն»...

Սառան տարաւ ձեռքը ճակատին և ընկաւ մտատանջութեան մէջ. մի քանի րոպէից նա շարունակեց. «Այո՛... ոչ մի քայլ... ծնուեցի Աստուածածնի փողոցում, ապրում եմ Աստուածածնի փողոցում և կմեռնեմ միևնոյն Աստուածածնի փողոցում .. իսկ ես դեռ ձգտում էի ստեղծել նոր կեանք, նոր յարաբերութիւններ, դրութիւններ... ունայն ցնորք... անխիղճ իրականութիւնը փշրեց իմ յոյսերս և ես նորից ընկայ Աստուածածնի փողոցը... կարծես ես առանց այդ փողոցի կարող չէի ապրել»...

Գրիչը մի րոպէ կանգ առաւ։

«Ճշմարիտը ասած, որ ինքս անձամբ չէի պտրում նոր կեանք... ընդհակառակը... ինձ ուրիշները մղեցին դէպի այդ նոր կեանքը, ուրիշները զարգացրին իմ մտաւոր ույժերս, բազմապատկեցին պահանջներս, տուին նոր տեսակէտ կեանքի և նրա նշանակութեան, կնոջ կոչման, պարտականութեան և իրաւունքների վերայ... այդ ուրիշները մի անգամ հեռուից երևան

հանեցին իմ աչքերիս առաջ այդ փայլուն, նոր կեանքը, երեւան հանեցին իբրեւ Աւետեաց աշխարհը Իսրայէլի զաւակների առաջ, հանեցին և իսկոյն թագցրին ինձանից այդ կեանքը. չտուին իրաւունք մօտենալու նրան, ապրելու այդ կեանքով... այո, չտուին... նրանք ութը տարի շարունակ զարգացրին իմ մտաւոր և հոգեկան ոյժերս, այնպէս որ անջատեցին, բաժանեցին ինձ իմ ծնողներիցս, հարկադրեցին սառչել նրանցից, պատրաստեցին իրենց փակ ուսումնարանում իբրեւ մի ծաղիկ ինձ նոր կեանքի և... և չտուին և չէին կարող տալ այն անցագիրը, որ տալիս է իրաւունք և միջոց անվախ մտնելու այդ կեանքի շրջանը. ինչ հիման վերայ դպրոցը ինձ իւր ձեռքումը խաղալիկ դարձրեց և պատրաստեց ինձ նոր կեանքի համար, որից ես զուրկ պէտք է մնայի, մի՞թէ ունէի այդ իրաւունքը և մի՞թէ այդ բարեգործութիւն է, որ նրանք արեցին ինձ... ոչ... և կրկին ոչ... լաւ է թողնէին ինձ մեծանալ իմ հարազատ մանկութիւնից ծանօթ շրջանում, թող չյայտնէին ինձ, որ կայ ուրիշ, աւելի լաւ շրջաններ... ես չէի մնիլ այսպէս... ես ժամանակով կդառնայի մայր, կունենայի զաւակներ, և ամեն ինչ կգնար իւր կարգով... իսկ այժմս...

Եւ Սառան անզօր թողեց գրիչը. նրա երեսին խաղում էր հոգեկան դառն ժպիտը։

«Իսկ այժմս, շարունակեց նա կրկին վերցնելով սեղանից գրիչը, նրանք հասկացրին ինձ կեանքի նշանակութիւնը, տուին մի անգամ հոտոտելու այդ ծաղիկը և ահա խլում են նրան ինձնից, խլում են ուժով... և ես... ես անզօր, անպաշտպան, կրկին մնում եմ Աստուածածնի փողոցում... բայց իմացէք իմ բարեգործներ, որ այժմս, խորթ է ինձ այդ փողոցը, նրա բնակիչները, նրա առօրեայ կեանքը... իմ ծնողներս արդէն սառել են

ինձնից... ես նոյնպէս սառել եմ դէպի ծնողներս և դէպի ամեն բան, որ սեպհական է Աստուածածնի փողոցին, որ նրա կեանքի արտայայտութիւնն է... բայց ո՜վ... ո՜վ, հարցնում եմ ձեզ, Կակայեան ուսումնարանի վարչութեան անդամներ, ո՜վ տուեց ձեզ իրաւունք բաժանել զաւակը ծնողից, դառնացնել մատաղ սերունդի դեռափթիթ կեանքը, և այդ կեանքը կործանել ծաղիկ հասակում, իւր գեղեցիկ յոյսերով... ո՜վ»... Եւ արտասուքները թրջեցին յիշատակարանի վերջի տողերը։ Պատի ժամացոյցը անվրդով շարունակում էր իւր անվերջ միակերպ թիկ-թակը... Աղամաղ լոյսը արդէն անզօրացած տեղի էր տալիս արեգակի ճառագայթներին, որոնք կարծես արիւնով ներկել էին արեւելքը. մի քառորդ ժամից պիտի ծագէր և արեգակը Սառան ծածկեց յիշատակարանը, հանգցրեց ճրագը և չհանուած ընկաւ անկողին։

Բակում խօսեց աքաղաղը...

ԻԳ.

Կիւրակի էր։

Աստուածածնի եկեղեցու ժամկոչը սկսեց հնչեցնել զանգերը, մայր մտնող արեգակի ճառագայթները արդէն տալիս էին իրենց վերջի հրաժարականը երկրագնդին. գիշերը կամաց կամաց քօղարկում էր երկիրը...

Աստուածածնի փողոցում երեւացին երկու ստուերներ, նրանք դիմում էին դէպի Կարապետ կօշկակարի տունը, դրանք—Միքայէլը և նրա մայրը Խաթուն խանումն էին. նրանք բացին Կարապետի բակի դուռը և ներս մտան. սրահում հանդիպեց նրանց Շուշանը։

—Բարով էկաք, բարով էկաք, հազար բարով, բացագանչեց Շուշանը՝ առնելով Խաթուն խանումի սալօփը. նրա երեսն ամբողջապէս ժպտում էր։

—Բարև ձեզ... բարև ձեզ, պատասխանեցին հիւրերը և ներս մտան։

—Ես արթիս յուսս ալ կորիլ էի... չին գալ ասի... նկատեց Շուշանը, նստացնելով խաթուն խանումին ամենապատուաւոր տեղում։

—Իտա ինչ է ասածդ... հիչ ադպէս բան կանինք... պատասխանեց Միքայէլի մայրը, աչքը ձգելով Սառայի սենեակին։

Շուշանը նկատեց այդ. նա դուրս եկաւ սենեակից ու գնաց Սառայի մօտ։

—Մէյտան եւ... մարդ էկաւ մեզի, սկսեց Շուշանը անհամբեր։

—Ո՞վ, անվրդով հարցրեց Սառան, հեռացնելով իրանից կարը։

Միքայէլի մայրը և Միքայէլը... դէ, հա քա, չուտ արա։

—Ի՞նչ է՝ զօռով պիտ տանիս... հա՞, հարցրեց կարմրելով Սառան։

—Հագուէ կասիմ քեզի... չատ կալաճի պէտք չէ, հրամայեց Շուշանը։

—Ջուզիմ... չիմ գալ...

—Ինչպէ՞ս... չե՞ս գալ...

—Այնպէս... կը նստեմ իմ սենեակումս։

—Անամօթ... խօ նամուսը չոխթան փախիլ է երեսէդ...

—Մա՛յր...

—Սուս կեցի՛ր... աներես։

—Մա՛յր, կրկնեց Սառան։

Այդ ձայնի մէջ երևան էր գալիս և աղաչանք և սպառնալիք։

—Վայ իմ գլխուս... վայ իմ սև օրիս, որ ղուակս ասպէս ինձի կտանջէ...

Սառան վեր կացաւ տեղից. նրա աչքերը փայլում էին մի վատ կրակով։

—Ե՞ս... ես տանջում եմ ձեզ... ոչ... սխալվում էք... ես գիտեմ թէ ինչու են եկել նրանք... գիտեմ, բայց... բայց այդ երբէք լինելու չէ... լսո՞ւմ էք, երբէք։

Նա սարսռում էր ամբողջ մարմնով։

Շուշանը կարծես կատաղեց։

—Ինչ ասիր... խելքդ գլուխդ ժողովէ, քեզի ծնողդ հրաման կանին։

—Հրամա՛ն կանին... իմացէք, որ այս հարցում վերջանում են ծնողական իրաւունքները և սկսվում է անձնական, սրտի իրաւունքը, լսում է՞ք...

Սառան մոռացաւ, որ Շուշանը իբրև բուն Նախիջևանցի, չատ քիչ էր հասկանում նրա գրականական լեզուն և այդ էր պատճառը, որ Շուշանը լուռ, բերանը բաց նայում էր Սառայի երեսին. նա երբէք տեսած չէր նրան այդպիսի դրութեան մէջ. այդ առաջին յայտնի անկերև կռիւն էր մօր և աղջկայ մէջ։ Ոչ մէկը նրանցից չէր կամենում զիջանել։

—Գալու չե՞ս... հա՞... ա՞դ է վերջի խօսքդ։

—Ոչ։

—Չարամ սատկիս. . անիծած. արտասանեց Շուշանը, թքեց Սառայի կողմը և դուրս եկաւ սենեակից։

Սառան ցնցուեց. նա վազեց մօր ետևից և իսկոյն կանգ առաւ... նրա ձեռը անզօր ընկաւ ցած և սկըսեց լալ։

Այդ միջոցին միւս սենեակում Շուշանը պատմում էր հիւրերին, որ Սառայի գլուխը սաստիկ ցաւում է և նա չէ կարող բարձրանալ անկողնից։

—Աչքիս լուսը, վերջացրեց նա իւր խօսքը, աս երկու օր է, ինչպէս սիրեկանս կը տանջուի... և նա տա-

րաւ Թաչկինակը բոլորովին ցամաք աչքերին։ Շուշան խանումը լաւ դերասանուհի էր և ոչնչով ցոյց չտուեց, որ ինքը մի րոպէ առաջ կռուել էր իր աղջկայ հետ։ Հիւրերը մի քիչ էլ մնացին, թէյ «անուշ» արին և վերկացան. նրանք կամենում էին գնալ։

—Ես ձեզ կիմացունում... աս օրերս կհարցունում մարդուս... միամիտ էղէք... հանգստացնում էր իր հիւրերին Շուշանը։

—Աղէկ... շատ աղէկ... Թէք որ շուտով տուէք պատասխաններդ, որ մինք ալ մեր բանը նայինք, նկատեց Միքայէլի մայրը։

—Հէպէտ...

—Էյ, բարով կեցիք։

—Երթաք բարով... կէնէ հրամեցէք։

Բաղի դուռը փակուեց հիւրերի ետևից։

Շուշան խանումը շտապով անցաւ սրահով և մօտեցաւ Սառայի սենեակին. այնտեղ ամեն ինչ լուռ էր։ Շուշանը կամեցաւ մտնել Սառայի սենեակը, խելքի բերելու «աղ աննամուսին», եթէ հարկաւոր էր գործ դնել իր «մայրական» իրաւունքները, բայց մի միտք կարծես արգելք եղաւ նրա դիտաւորութեան. նա մտածեց, որ այդպիսով նա չէ կարող որսալ իր աղջկայ համաձայնութիւնը, հարկաւոր էր ուրիշ կերպ վարուել նրա հետ... և նա վճռեց թողնել առ ժամանակ Սառային։

Նա սաստեց միայն ձեռքով օդում դէպի Սառայի սենեակը և դանդաղ քայլերով հեռացաւ խոհանոց։

ԻԴ.

Այն օրից, երբ Շուշան խանումը կռուեց Սառայի հետ, անցաւ երկու շաբաթ. այդ միջոցին Շուշանը աշխատում էր այնպէս վարուել Սառայի հետ, կարծես իրենց

մէջ ոչինչ չէր պատահած, նա սկսեց աւելի փաղաքշել նրան, աւելի սիրել...

Մի օր նա մինչև անգամ ներողութիւն խնդրեց նրանից։

—Ես ան օրը սիրտդ ցաւցուցի, զաւակս... ներէ, ներէ քու ծեր մօրդ... նա ինքն ալ չգիտէ արածը...

Թողնենք մայրիկ, այդ խօսակցութիւնը, ես արդէն մոռացութեան տուի նրան...

—Չէ... ես խօմ քու բաղդաւորութիւնդ կցանկայի... չէ՞ նէ Թամին կանես, որ մարը իրեն զաւակին դուշման է...

—Չէ նէ, միտք կանեն, որ իմ սրտէս արուն չե՞րթայ եփ կտեսնիմ քեզի տունը մնացած, համա քու օղունդիդ չամօղները վրայ հարս եղած...

Սառան շարունակում էր լռել։

—Հա... զաւակս... ինքդ ալ կտեսնիս, որ հարդ ծերացիլ է... արհեստի եարամիշ չիլալ... մէկ ոտքը գերեզմանին մէջն է... ինչո՞վ պիտի ապրինք մենք քեզի հետ, ինչո՞վ... չէ նէ մուրանք ժամին դուռները։

—Լռիր... լռիր, մայր, բացագանչեց սարսափած Սառան... այդ ինչե՞ր ես խօսում։

—Հապա ինչ... չէ նէ Թամին կանես, որ կար անելով մարդումէ կը կրնաս ինձի, քեզի և աղբօրներուդ պահիլ... վաղը մէկալ օր աղբօրներուդ վարժատուն պիտի խրկուի... համա ինչո՞վ... ո՞ր ստակներովս...

Մօրը այդ վերջին խօսքերը մտածութեան մէջ ձգեցին Սառային։

—Այո, խոստովանում էր նա ինքն իրեն, ես պարտական եմ ուսում տալ իմ եղբօրս... Թէ ոչ, այդ կլինէր անբարոյականութիւն... այո, մանաւանդ Գէորգին... նա այնպէս ընդունակ է... անպատճառ հարկաւոր է հանել նրանց այդ մտաւոր խաւարից։

Սառան ցածր խոնարհեց իւր գլուխը։

—Այդ էր պատճառը, զաւակս, շարունակեց Շուշանը, որ ես քեզի Միքայէլին տալ կուզէի... նա աղէկ տղայ է, գործի վրայ է և հէպէթ Աստուծով մեզի ալլայիս կառավարելու կկրնայ... հա. էկէր դուն չիս հաւնիլ Միքայէլին... ես կհամբերիմ... պէքիմ Աստուած խումէթըդ կբանայ։

Եւ Շուշան խանումը ուղիղ նայեց Սառայի աչքերին։

—Միթէ կարելի չէ առանց մարդու գնալու ուսում տալ իմ եղբօրս, նկատեց անհամարձակ Սառան։

—Ինչո՞վ մխր... ան սատկը, որը կառնունք մենք երկուս մարդու կարէ, ճորով պիտ օգտէ տունը նայելու... չէ, պալաս, ինչ անինք... մենք ալ իշխան չէինք, համա քեզի ուսումէդ չառինք, չմնացինք... միթէ շնորհակալ չիս... չէնէ կցանկանաս, որ աղբարներդ անուսում արապաճի ըլլան...

Շուշանը լաւ էր հասկանում, որ միայն այդ խօսքերով կարող էր որսալ Սառայի համաձայնութիւնը. այդ էր պատճառը որ նա սաստիկ մութ ներկերով նկարագրում էր իւր ընտանիքի ապագան։

Եւ իրաւ Սառան տանջվում էր. մի կողմից նրան պարզ էր, որ իւր սուրբ պարտականութիւնն է կրթել իւր փոքրիկ եղբարցը. միւս կողմից, նա տեսնում էր, որ այդ պարտականութիւնը կարելի է լրացնել միայն շատ թանկ գնով, իւր անձնական անբաղդութիւնով... և նա տանջվում էր։

—Թողնենք, մայրիկ, այս խօսակցութիւնը, վերջապէս դարձաւ նա Շուշան խանումին, յետոյ ես կը մտածեմ և կասեմ ձեզ իմ վճիռս... այժմս թողէք ինձ միայնակ։

Շուշան խանումը վեր կացաւ տեղից, ջերմ համբուրեց Սառայի ճակատից և դուրս եկաւ սրահը։

—Ալլալէմ, բանը աղէկ ճամբայ ընկաւ, նկատեց նա մտնելով իւր սենեակը և դառնալով կարապետին։

—Ի՞նչ բան, հա քա...

—Սառան ալլալէմ խայիլ կըլլայ։

Ծերունին ոչինչ չպատասխանեց։

—Սուրբ Աստուած... դուն գիտես արթիս... բարձրացրեց իւր աչքերը առաստաղին Շուշան խանումը... հէ, մենք ալ ծերութներս բաղդաւոր կըլլանք, դարձաւ նա ամուսնուն։

—Մենք... կըլլանք, խորթ է... համա նա՛... և ծերունի կօշկակարը ուղիղ նայեց իւր կարմրած աչքերով կնոջ երեսին։

—Հէպէթ նա ալ... չէ՞նէ թամին կանիս, որ Միքայէլը քէչ տղայ է... ինչ ունի խեղճը, ասա... քաշ էկող չէ... հարբող չէ... գործ կայ ձեռքը...

—Խորթ է... խորթ, համա...

—Նայիմ... խոս «համադ»։

—Համա Սառաս պէքիմ չի սիրիլ Միքայէլին, ինչ՞ զոռով բան անինք որ...

Եւ ծերունին յանդիմանաբար նայեց Շուշանի աչքերին։

—Չի սիրի՞լ... ժամանակը գանը կը սիրէ... մի վախնալ։

—Այդ ինչպէս կը սիրէ...

—Անպէս... մենք պսակուեցանք քեզի հետ, շա՞տ կը սիրէինք մէմէզլի... պսակուիլէս վերջը տեսայ էրեսդ... մոռացի՞լ իս...

—Մե՛նք... մեր բանը ջոկ, ա՛ կնիմարդ, մենք ուսում չունէինք, խելք չունէինք... ծնողներս ինչ ասէին, կանէինք...։

—Թուքնում ան ուսումին վրան, որ զաւակներուս ծնողքին գլխադարձութիւն անիլ կը սորվեցնէ...

—Խելքդ գլուխդ ժողվէ… հասկցիր, որ Սառան չկրնալ սիրել Միքայէլին… նաքա ջիֆթ *) չին… Միքայէլը հասարակ տղայ է… տղայի քով մեծացած, համա Սառան…

—Սառան ինչ է հապա։

—Սառային բանը պախչա… նա աղիզ մեծացած, ուսում առած…

—Մեծ բան։

—Մեծ է, պզտիկ է… բանը ատոր մէջ չէ… ես կասիմ որ էկէր մէկ օր մը նա երթանը Միքայէլին, կամաւոր չէրթալ, հաւատա ինձի։

Եւ ծերունին լռեց, նրա ալեզարդ գլուխը աւելի թեքուեց կրծքին և նրա միշտ կարմրած աչքերում փայլեցին արտասուքի կաթիլները։ Շուշանը չպատասխանեց, նա կանգնած մտածում էր, վճռում էր… և մի փոքր կանգնելուց յետոյ, դուրս գնաց սենեակից։

Ծերունին շարունակում էր լուռ լալը։ Նա կամաց վերկացաւ իւր «մինդարից» և անհաստատ քայլերով մօտեցաւ Սառայի սենեակին. դուռը փակ էր. ծերունի կօշկակարը մի քանի վայրկեան կանգ առաւ դռան առաջ և յետոյ դողդոջուն ձեռքերով, ջերմեռանդ խաչակնքեց Սառայի սենեակը և կամաց կամաց հեռացաւ սրահից։

Նրա շրթունքները արտասանում էին աղօթքի խօսքեր…

ԻԵ.

Ձմեռնային գիշեր էր. սաստիկ ձիւնը սպիտակցրել էր փողոցները, տների տանիքները և լուսամուտների ապակիները. քամին դռալով բարձրացնում էր ձիւնը գետնից և շվացնելով խփում էր բակերի պատերին. փողոցում ոչ ոք չկար. ճրագները և լապտերները հանգցրած էին և աշխատաւոր, բանւոր դասակարգը արդէն վաղուց քնել էր…

*) Զոյգ։

Միայն Կարապետ կօշկակարի տան պատուհանը լուսաւորուած էր մի աղօտ, պլպլող լուսով. դա Սառայի սենեակն էր. ինքը Սառան նստած սեղանի առաջ գրում էր. նրա առաջին դրած էր «յիշատակարանը»։

Յունվարի 13, գրում էր նա, ես վաղը առաւօտեան պիտի պատասխանեմ մօրս… բայց ինչ… ինչ… Աստուած իմ, ես ինքս չգիտեմ… ուղեղս, միտքս ասում են «այո», իսկ սիրտս «ոչ»… ես չեմ սիրում. ես ատում եմ ահա մի քանի օր է այդ անտաշ, կոպիտ Թաւալեանց Միքայէլին… և ես, պարտաւորուած, պիտի կապեմ անխզելի կապերով ապագաս նրա ապագայի հետ… պարտաւորուած… բայց ով ասաց… ով կարող է պարտաւորեցնել ինձ… ակամայ պարտաւորացնել… միթէ կարելի է բռնի, սեպհական կամքիդ հակառակ ծախել քեզ և այդ գնով գնել ապագայի ապրուստը… մինչև այժմս ապրում էին ծնողներս առանց մուրացկանութեան, իրենց աշխատանքով—կապրին ուրեմն և յետոյ, առանց իմ զոհիս… իսկ եղբայրներս… նրանք նոյնպէս կապրին»… Սառան ձգեց գրիչը. նա ձեռներով բռնեց իւր գլուխը և ընկաւ մտածութեան մէջ։

«Կապրին… այո՛, կ ապրին, ինչպէս ապրում է բոյսը, ծառը, բոլորովին մեքենայաբար… բայց միթէ այդ կեա՛նք է… միթէ արժէ այդպէս ապրել… ոչ… խիղճս ասում է, որ ես պարտական եմ ազատել նրանց այդ թշուառ վիճակից և… և կազատեմ… Նա կրկին ընդմիջեց գրելը… նա մեքենայաբար նայում էր ուղիղ իւր առաջ, պատին, այնտեղ կարծես նա որոնում էր իրեն տանջող հարցի լուծումը։

«իմ ապագաս խափուած, իմ կեանքս արդէն կոտրած է, ինձ ոչինչ լաւ, ոչինչ երջանիկ բան չէ սպասում այլ ևս... ես կապրիմ կատարելով մեքենայական կեանքի պահանջները, կապրիմ իբրև կենդանի... և ես չեմ գանգատվում... ես ո չ ո ք ի ն չեմ մեղադրում... երևի այդպէս էր ճակատագիրս... բայց եղբայրներս դեռ փոքր են, նրանք դեռ չեն ապրել և Աստուած միայն գիտէ ինչ է սպասում նրանց ապագայում»...

Սառան սկսեց տրորել իւր ճակատը, նա տաք էր։— «Ուրեմն շարունակեց նա մի փոքր րոպէից, ամեն ինչ վճռուած է, դրութիւնները զոհ են պահանջում... այդ զոհը կլինիմ ես... այո... ես...

Բայց, Աստուած իմ, ինչպէս կարող եմ ես սիրել Միքայէլին, երբ արդէն սիրում եմ ուրիշին, սիրում եմ բոլոր ուժերովս»...

Սառայի երեսը կարմրեց. նրա աչքերը սկսեցին անսովոր փայլել։

—«Այո... սիրում եմ... բայց ինչ դուրս եկաւ դրանից... նա հեռու է, ամուսնացած է և երևի մոռացել է ինձ... Մուրադեանց... Մուրադեանց... բաղդաւո՛ր ես արդեօք դու... կարողացա՞ւ արդեօք այդ խելօք, զարգացած հեզինէն բաւականացնել, երջանկացնել քեզ, տալ այն ընտանեկան անդորր խաղաղութիւնը, որ միշտ որոնում են մարդիկ և դժբաղդաբար շատ հազիւ են գտնում»...

Եւ նա հեգնօրէն ժպտաց. նրա լերդագոյն շրթունքները չորացել էին, նա ինքը տաք էր. այդ տաքութիւնը երբեմն փոխվում էր մի անսովոր սարսուռի, որ անցնում էր նրա անդամներով։ Սառան ջերմում էր, նա բարձրացաւ աթոռից, առաւ գրիչը և շարունակեց գրել արդէն կանգնած։

«Եւ այդպէս, ամեն ինչ վճռուած է... մի քանի

օրից ես կդառնամ տիկին Թաւալեանց, Միքայէլ գործակատարի կինը, ես կտամ նրան իմ սառը դիակս... կարող է, ինչպէս կամենում է վարուել նրա հետ. իսկ սիրտս... ես... ես կաշխատեմ սպանել»...

Գրիչը ընկաւ նրա ձեռից։

Սառան անհաստատ քայլերով մօտեցաւ անկողնին և շտապով սկսեց հանուել։

Պատի ժամացոյցը զարկեց երեք։

Սառան պարկած էր։ Նա ներքին ջերմութիւնից սկսեց զառանցել։ Միքայէլի, Մուրադեանցի անունները ստէպ ստէպ թռչում էին նրա այրուող շրթունքներից։ Նա ծանր շունչ էր քաշում, վերմակը ընկել էր վերայից և սենեակի բաւականին ցուրտ օդը անկարող եղաւ զովացնել նրա բոլորովին այրուող մարմինը. այդ կրակը— ներքին կրակ էր...

Դրսում արդէն լուսանում էր, երբ Սառան մի քիչ հանգստացաւ, թմրեց և փակեց իւր աչքերը։

—

Մի շաբթից յետոյ գիշեր ժամանակ Աստուածածնի եկեղեցում կատարուեցաւ Սառայի և Միքայէլի պսակադրութեան հանդէսը և կատարուեցաւ ամենաանշուք, համեստ կերպով. կանչուածներ և հանդիսականներ չկային, միայն հարսի ու փեսայի ծնողները ներկայ էին հանդիսին։ Ինքը Սառան բոլորովին հանգիստ էր. բայց երևում էր, որ այդ հանգստութիւնը ձեռք է բերուած սարսափելի հոգեկան տանջանքներից յետոյ, այդ մեռելային հանգստութիւնը Սառայի ապագայ կեանքի պատկերն էր. այդպէս անվրդով, կարծես, արձանացած, այդպէս սպանած իւր մէջ կենդանութիւնը՝ նա գնում էր Միքայէլին և այդպէս էլ պիտի ապրէր նրա հետ։ Նախկին ուրախ,

անհոգ և երջանիկ Սառան մեռած, թաղուած էր և այժմ մնացել էր միայն նրա ստուերը, ուրուականը։

Ծերունի քահանան շտապելով կուլ էր տալիս շարականների խօսքերը... երբ հասաւ նա այն տեղ, վճռողական «և առեալ զձեռն Եւայի»-ն Սառան ցնցուեց...

Միքայէլը ուրախ էր. նա ստէպ ստէպ նայում էր Սառայի երեսին, սեղմում էր նրա ձեռը, փսփսում էր նրա ականջին սիրալիր խօսքեր. փաղաքշանքներ...

Սառայի և Միքայէլի մայրերը մարդարէանում էին իրենց զաւակների ապագան, նրանք երևի շատ գոհ էին...

Վերջապէս պսակը կատարուեցաւ և երկու երեք վարձած կառքեր տարան իրենց հետ նորահարսին, և անհետացան գիշերային խաւարի մէջ...

Օրիորդ Սառան դարձաւ տիկին Թաւալեանց։

ԻԶ.

Անցաւ ամբողջ երկու տարի։

Գարնան սկիզբն էր. ձմեռը արդէն հեռացրել էր երկրից իւր սառ, սպիտակ քօղը. միայն տեղ տեղ դեռ մնացել էին հալուող ձիւնի կտորները. փողոցներում անտանելի ցեխ էր, ձիերը հազիւ հազ կարողանում էին քաշել կառքերը. արեգակի ջերմ ճառագայթների ազդեցութիւնից հալուող ձիւնը փոքր առուակներ ձևացնելով, արագ թափվում էր Դօն գետը. պարզ և թափանցիկ օդում արդէն զգացվում էր բնութեան վերածնութեան վսեմ գոռոզութիւնը. ծառերը կանաչել էին և ծածկուել տերևներով. տեղ տեղ երևում էր նորաբոյս, թարմ

արօտը, որի միջից կարծես ամաչելով բարձրացնում էին իրենց գլուխները անուշահոտ մանիշակը և գեղեցիկ յասմիկը...

Կէսօր էր։

Դօնի ափին կից փողոցներից մէկում գտնվում էր Միքայէլի փոքրիկ երկու լուսամուտներով տունը։

Նա արտաքուստ ոչնչով չէր զանազանվում շրջապատող միւս տներից. նա միայն աւելի նոր էր, քան իւր հնացած, արդէն կռացած հարևանները։ Նոյնպէս, ինչպէս և միւսները, բաղկացած երկու սենեակներից, նա վերջանում էր մի սրահով, որ նայում էր դէպի բակը։ Այդ սրահում, որ ամրան ժամանակ սենեակի պաշտօն էր կատարում, կանգնած էր մի կին. նա կռացել էր և լուացք էր անում, նրա սև, կարճ մազերը անկարգ թափուել էին նրա մերկ, սպիտակ պարանոցի վերայ. նրա հագուստի թևերը ծալած էին և երևում էին երկու փոքրիկ, մարմարինեայ ձեռքեր... երևում էր որ այդ ձեռքերը սովոր չէին ծանր աշխատութիւնների... քրտինքը կաթ կաթ թափվում էր կնոջ ճակատից լուացքի ամանի մէջ... նա ստէպ ստէպ բարձրացնում էր իւր գլուխը և ծանր շունչ քաշում... նա սաստիկ յոգնած էր։

Այդ կինը Սառան էր։

Բայց ամուսնութիւնը երևի չէր բաղդաւորեցրել նրան, այդ երկու տարուայ միջոցին նա սաստիկ այլանդակուել էր. նրա նիհարացած երեսը կորցրել էր իւր թարմութիւնը, առաջուայ առողջ կարմրութիւնը. ժամանակը և կեանքը դրել էին այդ երեսին իրենց անջնջելի դրոշմը, նրա աչքերը այլ ևս չէին փայլում սովորական սուր, այրող փայլով... ընդհակառակը, նրանք ներս էին ընկել կոպերի մէջ և ամբողջ Սառայի երեսին տալիս էին մի հիւանդ արտայայտութիւն...

Սառան արդէն աւարտում էր իւր գործը, երբ սենեակից լսուեցաւ երեխայի լաց։

Սառան վազեց ներս։

Օրօրոցում պառկած էր մի փոքրիկ, հիւանդ արարած. դա Սառայի անդրանիկն էր. ծննդեան օրից մինչև այդ օրը այդ խեղճը միշտ հիւանդ էր։ Նա սաստիկ լղար էր. ոսկորները ակներև երևան էին գալիս նրա փոքրիկ դալկացած մարմնի տակից. զարմանալի էր թէ ինչպէս այդ համարեա կիսամեռ արարածի կրծքում կարողանում էր բաբախել մի խեղճ, թոյլ սիրտ...

—Ի՞նչ պատահեց քեզ, իմ Անիկս, դարձաւ Սառան իւր երեխային և հանեց նրան օրօրոցից։

Երեխան շարունակում էր լալ։

Սառան իւր օճառոտ ձեռներով սկսեց փաղաքշել նրան. երեխան շարունակ լալիս էր։

Սառան առաւ նրան գիրկը և սկսեց ման ածել անկիւնից անկիւն, բայց ոչինչ չէր օգնում։

Սառան սկսեց կերակրել իւր կուրծքի կաթով։ Երեխան լռեց. Անիկը արդէն փակել էր իւր աչքերը, երբ բացուեցաւ բակի դուռը, և ներս մտաւ Միքայէլը։

Նա բարկացած դէն ձգեց գլխարկը և արագ արագ սկսեց ման գալ սենեակում. նրա քայլերից զարթեցաւ երեխան և սկսեց կրկին լալ։

—Միթէ չես կարող մի քիչ կամաց ման գալ, անբաւական ձայնով նկատեց Սառան։

—Ա՛խ... խնդրեմ ինձ հանգիստ թողէք... առանց այդ էլ չգիտեմ ինչ է արածս։

—Լաւ... ես հասկանում եմ... բայց ինչու այդ ոխը հանել մի անզօր արարածից։

—Ես ոչ ոքից ոխ չեմ հանում։

—Ոչ... հանում ես։

—Ախ... Սառա, լսում ես... թող քո անտանելի նկատողութիւնները...

Սառան լռեց։

Երեխան նոյնպէս լուռ էր։

Սենեակում լսվում էր միայն Միքայէլի քայլերի ձայնը։

—Ի՞նչ պատասխանեցին քեզ, դարձաւ վերջապէս Սառան իւր ամուսնուն։

—Ի՞նչ էիր սպասում... մերժեցին ի հարկէ։

—Բայց ինչի՞...

—Ասում են, որ մենք որոնում ենք լեզուագէտ գործակատար, որ իմանայ ֆրանսերէն, գերմաներէն և ռուսերէն...

Միքայէլը ցածր խոնարհեց իւր գլուխը և ընկաւ մտածութեան մէջ։

Սառան տարաւ Անիկին, զգոյշ պառկացրեց օրօրոցում և կանչեց սենեակից Միքայէլին։

Նրանք մտան սրահը։

Սառան սկսեց ժողովել լուացքը։

Միքայէլը բարձրացրեց իւր անշարժ, միշտ անփայլ աչքերը ու սկսեց դիտել առաստաղը...

Մի տարի էր, ինչ Միքայէլը թողել էր գործակատարի պաշտօնը իւր «աղայի» սնանկութեան պատճառով և մնացել տանը. այդ միջոցին նա անդադար որոնում էր մի այլ, նոր պաշտօն և չէր գտնում։ Նրա փոքրիկ ռոճիկը, որ հաւաքել էր նա իւր ծառայութեան ժամանակ, արդէն հատնում էր, հարկաւոր էր մի պաշտօն գտնել, անպատճառ հարկաւոր էր, բայց ո՞ւր, ինչ տեղ. այդպէս մտածում էր և չէր հասնում ոչ մի քիչ թէ շատ բաւականացուցիչ եզրակացութեան։

Սառան հաւաքեց լուացքը և սկսեց կարգով դարսել։

Միքայէլը, վեր կացաւ տեղից և մօտեցաւ սրահի պատշգամբին։

Բայց պատուհանից հասնում էր ճնճղուկների ուրախ ճլճլոցը, տան կատուն գլորակ ոլորել էր իր պոչը և տաքացնում էր արևի այրող ճառագայթների տակ կռացած քամակը և գարնանային զեփիւռը մեղմ տատանում էր ծառերի կանաչ տերևները…

—Չէ… սրան վերջ լինելու է թէ ոչ, բարկացած բացագանչեց Միքայէլը և հեռացաւ պատշգամբից,—այն փոքրիկ գումարը որ ձեռք էի բերել դառն քրտինքով, այսօր կամ վաղը կը վերջանայ և կդառնանք աղքատ։ Նա շեշտեց վերջի բառը և նայեց Սառայի երեսին։

Վերջինս ոչինչ չպատասխանեց։

—Հեշտ է ասել «աղքատ», շարունակեց Միքայէլը. իսկ տանել այդ ամենօրեայ զրկանքներին, քաղցին… լաւ է մի հարուածով վերջ տալ ամեն թշուառութիւններին։ Սառան յանդիմանաբար նայեց ամուսնու երեսին։

—Դու զաւակ ունիս, դու պարտաւոր ես ապրելու գոնէ նրա համար, ասաց նա։

—Ապրել… բայց միթէ այս կեանք է… մուրալ ամեն մի կոպէկ…

—Ինչի այդպէս տխուր մարգարէութիւններ ես անում. մինչև այժմ կարծեմ մի կերպ ապրում էինք. կարող ես վերջապէս կրկին մի տեղ ծառայել։

—Կարող ես… կարող ես… բայց արի տես, կընդունեն, թէ ոչ, բարկացած նկատեց Միքայէլը։

—Համբերիր։

—Հեշտ է ասել… խօ շարչարուողը դու չես… քեզ ինչ։

—Այսինքն ինչպէս թէ «ինձ ինչ»… ամաչիր միթէ մեր ընտանեկան բաղդաւորութիւնը, մեր Անիկի ապագայի ապահովութիւնը և երջանկութիւնը մօտ չեն իմ սրտին…

—Ես այդ չեմ ասում. ես խօսում էի նրա մասին,

որ դու գ ո ր ծ ո վ կարող չես օգնել ինձ, դու անկարող ես փող աշխատել… հասկացա՞ր…

Կարծես Միքայէլը անպատճառ վճռած լինէր այդ օրը բարկացնել Սառային։

Վերջինը դունաթափուեց։

—Հա… դու կրկին կամենում ես հասկացնել ինձ, որ ես պատրաստի հաց եմ ուտում, որ ես անգործ եմ… երեսովս ես տալիս… լաւ, բայց քեզ ո՞վ խնդրեց, լսում ես, ո՞վ խնդրեց պսակուելու ինձ նման միայն մսխող, անգործ աղջկայ հետ… ո՞վ։

Սառան դողում էր։

Միքայէլի երեսը բոլորովին հանգիստ էր։

—Ո՞վ, հարցրեց նա կնոջից, իմ յիմարութիւնը… ճակատագիրս։

—Ինչի և ինձ անբաղդացրիր և քեզ։ Ինչի, պատասխանիր. ես կարող էի երջանիկ լինել մի ուրիշի հետ, որին, կսիրէր հոգիս և սիրտս… հասկանում ես… դու խլեցիր ինձանից այն, ինչ որ կեանքը տալիս է մարդուս միայն միանգամ—դու խլեցիր իմ երիտասարդութիւնս… տեսնում ես… ես դեռ չծաղկած թառամեցայ… ես այս երկու տարուայ միջոցում պառաւեցի։ Բայց իմացիր, որ այս բռնի ծերացած մարմնիս մէջ դեռ վառ է սիրոյ կրակը… դեռ կամենում եմ սիրել և սիրուել։—Ինչի, ինչի—փշրեցիր իմ կեանքս, իմ ապագաս…

Սառան լռեց. նրա նիհար թշերը ծածկուեցան մի անբնական կարմրութիւնով, աչքերը սկսեցին կրքոտ ցոլալ. նա ծանր շնչում էր։ Միքայէլը լուռ էր և անվրդով. միայն նրա ներքին շուրթը ցնցողաբար շարժվում էր։

—Հաւատացիր, որ ես վաղուց կը թողնէի քեզ. եթէ… եթէ… չունենայի երեխայ. այո, Անիկս է, որ դեռ կապում է ինձ քեզ հետ… Ես մայր եմ… ես պարտական եմ

և մնալ քեզ մօտ և ատել քեզ միևնոյն ժամանակ. ատել իմ սրտի բոլոր ուժերով։ իսկ այդ... օ՛օ՛հ շատ ծանր... շատ ծանր... Սառայի ձայնը կտրուեց. նա սկսեց հազալ։

Հազը խուլ և կրծքային էր. նա մօտեցրեց թաշկինակը բերնին և թքի հետ նրա վերայ երևացին արեան մի քանի կաթիլներ։

Միքայէլը անվրդով նայում էր այդ տեսարանին. նրա, կարծես սառած, աչքերում չէր կարելի նկատել ոչ կարեկցութիւն և ոչ ատելութիւն։

Նա չէր կամենում հասկանալ, որ իւր կնոջ խօսքերը իրաւացի են, որ այդ խօսում է Սառայի մէջ նրա անբաղդացրած կեանքը, նրա մաշուած անցեալը և յուսահատ ապագան. նա չէր կամենում հասկանալ, որ այդ բողոք էր մի անբաղդ կնոջ, մի էակի, որ սէր էր որոնում այն աշխարհում, ուր սիրում էր արդէն ուրիշին, և չէր ստացել փոխարէնը... նա չէր հասկանում, որ այդ րոպէին Սառայի մէջ լուռ էր մարդկային միտքը, դատողութիւնը, մտաւոր ոյժը և խօսում էր միայն կանացի, բնական, լինի մինչև անգամ կատաղի կ ի ր ք ը։

Այո, նա չէր հասկանում...

Իսկ բակում կրկին ճվճվում էին ճնճղուկները, կրկին տան, ծերացած կատուն տաքացնում էր արևի այրող ճառագայթների տակ իւր մարմինը։

ԻԷ.

Օգոստոսի կէսն էր. արդէն եկել հասել էին Աստուածածնի թաղի տօները։ Այստեղի փողոցները փոխել էին իրենց առօրեայ կեղտոտ կերպարանքը և մաքրուել էին աղբից. նրանք գեղեցկացել էին և զարդարուել. փողոցի փոքրիկ տնակները, ծածկուած նոր սպիտակ ծեփով, կարծես պարծենում էին մէկ մէկու առաջ և աշխա-

տում էին գրաւել անցորդի ուշադրութիւնը. մինչև անգամ գինեվաճառ Մարկոսը, փոխել էր իւր գինետան ցուցանակը, որի վերայ երևում էր որ երբեմն, նկարչական օրէնքներին անհամաձայն, նկարած էր մի անճոռնի տակառ։

Ժամը չորսն էր։

Գինետան առաջ կանգնած էին մի քանի երիտասարդներ—չիթէ շապիկները հագին, ոտաբոբիկ.—դրանք անգործ բանուորներ էին. բարձրաձայն ծիծաղը, կոպիտ, անտաշ սրամտութիւններ և հայհոյանք—ահա ինչ էր լսվում ամեն րոպէ նրանց բերանից։

—Միքայէլ... Միքայէլ... հոգուդ մատաղ, պատմիս նը ինա բանը...

—Պատմէ... դէ... պատմէ, լսուեցաւ ամեն կողմից։

Այդ րոպէին ամբոխից բաժանուեցաւ մի մարդ։ Դա Միքայէլ Թաւալեանցն էր, Սառայի ամուսինը. պատառոտուն շորեր, հնացած, ծակ կօշիկներ, անկարգ ցից կանգնած մազեր և ուռած, կարմրած երես—ահա ինչ էր իսկոյն ընկնում դիտողի աչքին։ Նա դանդաղ, անհաստատ քայլերով բարձրացաւ գինետան սրահը և դարձաւ ամբոխին. նա հազիւ կարողանում էր խօսել. նա արբած էր. մի րոպէից յետոյ նա, խօսքը չվերջացրած, մտաւ գինետուն, նրա ընկերները, այդ Նոր-Նախիջևանցի հասարակութեան տականքը, այդ աղքատութեան անբարոյական արտայայտութիւնը, հետևեցին նրա օրինակին. և կէս ժամից յետոյ Մարկոսի գինետնից լսվում էին երգերի և մշտնջենական անհրաժեշտ «արգանի» ճաթած ականջ խլացնող ձայները։

Ահա երկու ամիս էր, որ Միքայէլ Թաւալեանցը ընկել էր այդ ճանապարհը. նա ամբողջ 12 ամիս աշխատեց մի պաշտօն, մի միջոց գտնել ապրուստի..., բայց

դժբաղդաբար, ամէն տեղ էլ նրան տալիս էին մեծ մեծ յոյսեր հազար ու մէկ խոստումներ և ոչինչ չէին կատարում. քաղցը, ծարաւը, ամենօրեայ զրկանքները աւելի կոշտացրին, աւելի փչացրին Միքայէլի բնաւորութիւնը։ Նա ամբողջ օրերով լուռ ու մունջ կամ անշարժ նստում էր տան անկիւններից մէկում և կամ դուրս գալով տնից առաւօտը՝ վերադառնում էր միայն կէս գիշերին։ Այդ միջոցին նա գտաւ իրեն ընկերակիցներ, նոյնպէս ճակատագրից անբաւական շրջմոլիկներ և սկսեց թափառել գինետնից գինետուն։ Սկզբից նա խմում էր միայն այն նպատակով, որ մոռանայ գոնէ մի քանի ժամ իրեն տանջող անել դրութիւնը. մոռանայ քաղցած կնոջը և հիւանդ երեխային. բայց օրերը գնում էին և խմելը արդէն պահանջ էր դարձել Միքայէլի համար. նա հիւանդանում էր՝ երբ չէր խմում. առաջ նա, երբ զարթնում էր քնից, երբ օղու ներգործութիւնը արդէն անցած էր լինում, նա ամաչում էր իւր արարմունքից. նա զղջում էր, խոստանում էր, որ միւսանգամ չի անիլ, իսկ այժմս այդպիսի րոպէներին խիղճը լուռ ու մունջ նայում էր նրա անբարոյականութեան և չէր խայթում նրան։

Սառան էր, որ իւր ձեռքի աշխատանքով ճարում էր օրական հացը. ցերեկը նայելով հիւանդ Անիկին. իսկ գիշերները «դարա» կարելով, նա մի կերպ անց էր կացնում իւր սև անբաղդ օրերը։

Նրան կարելի չէր ճանաչել։

Դա աւելի Սառայի ուրուականն էր, քան թէ կենդանի Սառան. նրա ժամանակով սև, գլորակ աչքերը խորը ներս էին ընկել և փայլում էին մի անբնական, հիւանդոտ փայլով. երեսի ոսկորները սաստիկ դուրս էին ցցուել և տալիս էին նրան մի բռնի ծերութեան տիպար.

կուրծքը ներս էր ընկել և նրա չոր, խռպոտ հազը դուրս էր գալիս այդ մաշուած կրծքի խորքից. թշերի վերայ երբեմն—երբեմն խաղում էր կարմրութիւնը. բայց այդ՝ նախկին առողջ կարմրութիւն չէր, բնաւ... այդ սպառող թոքախտի յատկանիշն էր։

Սառան ինքը զգում էր, որ հիւանդ է, որ երկար ապրելու չէ և, զարմանալի բան, առանց ներքին ցաւի, առանց խղճալու թողնում էր այս ունայն աշխարհը, ուր չարչարանքներից, արտասուքից զատ՝ նա ոչինչ չէր գտել։

Մի բան կար դեռ, որ կապում էր նրան կեանքի հետ—այդ փոքրիկ, հիւանդ Անիկն էր. եթէ կարուէր կեանքի այդ վերջի օղակն էլ, Սառան հանգիստ, բոլորովին հանգիստ, կը մտնէր գերեզման...

Նա այժմս էլ քիչ թէ շատ հանգիստ էր. նա տեսնում էր, որ Անիկը նոյնպէս երկար ապրելու չէ և աշխատում էր միայն առաջուց նրան թաղել և յետոյ արդէն միանալ այնտեղ, երկնքում,—եթէ միայն ցնորք չէ յաւիտենականութիւն բառը,—իւր սիրելի Անիկի հետ...

ԻԲ.

Ամառը արդէն վերջանում էր, բայց չնայելով դրան՝ օրերը շատ տաք և շատ գեղեցիկ էին... երևի ձմեռը սովորականից ուշ պիտի սկսուէր այդ տարի։

Օրը շաբաթ էր. երեկոյեան ժամը հինգ։

Աստուածածնի եկեղեցու առաջի հնչիւնը դանդաղ տարածուեցաւ Նոր-Նախիջևանի վերայ։ Սառան շտապով խաչակնքեց իւր երեսը և մօտեցաւ Անիկի անկողնին։

Երեխան դէն էր ձգել վերմակը և ծանր շնչում էր. նրա մարմինը տաքութեան մէջ էր։

—Աստուած իմ, երեխաս մեռնում է, բացականչեց

զարհուրած Սառան տանելով ձեռքը Անիկի այրուող ճակատին. Աստուած իմ... ի՞նչ անեմ։

Իսկ դրսից կրկին լսւում էր եկեղեցու զանգակի տխուր, միակերպ հնչիւնը։

—Բժիշկ... ո՞վ կը գնայ... ո՞վ կը բերէ... հա՛... կարապետը...

Եւ Սառան շտապով դուրս եկաւ սենեակից. վազեց հարևան Կարապետ կառապանի տունը։

Ինքը կառապանը բակում՝ մեծ, հին թթենու ծառի տակ թէյ էր անուշ անում. Սառան խնդրեց նրանից մի բժիշկ կանչել...

Աչէկ.. էրթամ քաղաքի հէքիմին ձայն տամ, նկատեց Կարապետը և սկսեց լծել կառքը։

Մի քանի րոպէից յետոյ նա արդէն դուրս էկաւ բակից։

Սառան չոքած էր Անիկի անկողնի մօտ. նա առաւ երեխայի փոքրիկ ձեռքը իւր ձեռքերի մէջ և քնքշաբար նայեց նրա կարմրած երեսին։

Այդպէս նայել գիտեն միայն մայրերը...

Երեխայի կոկորդից անդադար դուրս էին թռչում խռպոտ, կրծքային հեկեկանքներ. կարծես մի ոյժ խեղդում էր երեխային։

—Ի՞նչ պատահեց քեզ, սիրելիս, ի՞նչ... և նա սեղմեց Անիկին իւր կրծքին։

Երեխան սաստիկ տաք էր։

Նա տանջվում էր լուռ ու մունջ։

Նա լաց անգամ չէր կարող։

Իսկ դրսից կրկին հասնում էր անբաղդ մօր ականջին եկեղեցու զանգակի տխուր մեղեդին։ Սառան ցնցուեց։

—Ինչո՞ւ այդպէս տխուր են այս օրուայ զանգակի հնչիւնները, շշնչաց նա։

Նրա հայեացքը մեքենայաբար ընկաւ Անիկի վերայ։

—Չլինի թէ այդ Անիկիս համար է, մտածեց նա և ամբողջ մարմնով սառսռաց։

Սենեակի դուռը բացուեց և ներս մտաւ մի մարդ. դա քաղաքային բժիշկն էր։ Սառան շտապով վերկացաւ տեղից և դարձաւ նորեկին. բժիշկը նոյնպէս իւր կապոյտ ակնոցների տակից նայեց նրա վերայ...

Բժիշկը հանում էր իւր ձեռնոցները։

Սառան կարծես արձանացած լինէր. նա մեծ մեծ բացել էր իւր աչքերը և շարունակում էր լուռ նայել բժշկի վերայ. նրա շրթունքները շարժվում էին. երևի նա մի բան էր կամենում ասել, բայց լեզուն չէր հնազանդվում նրա կամքին։

Բժիշկը դարձրեց հայեացքը Սառայից։

—Ո՞ւր է հիւանդը, տիկին, դարձաւ նա Սառային։

Դուք... սպասեցէք... դուք բժիշկ... Մուրադեանցը չէ՞ք, արտասանեց նա վերջապէս մի խուլ ձայնով և մօտենալով բռնեց բժշկի ձեռից։

—Այո... բայց ո՞ւր է ձեր հիւանդը, պատասխանեց բժիշկը մի անվրդով և սառնասիրտ ձայնով։

—Դո՞ւք... դո՞ւք... Մուրադեանցը... Աստուած իմ, ես կգժուեմ... Մուրադեանց... Մուրադեանց...

Մուրադեանցը վախով յետ քաշուեց Սառայից։

—Մի՛ վախենաք... մի՛ վախենաք, Մուրադեանց... մի՞թէ մոռացե՞լ ես ինձ... իսկ ես... ամեն օր յիշում էի քեզ... այո, ամեն օր...

Մուրադեանցը հանեց իւր մուգ-կապոյտ ակնոցները և մօտենալով Սառային մի քննողական հայեացք ձգեց նրա վերայ։

—Սառա՛... դու... դուք այստեղ... այս դրութեան մէջ։

Եւ նա նայեց իւր շուրջը։

—Մի՞թէ զարմանում էք… չէիք սպասում… այո, այնպէս չէ՞։

Սառայի ձայնը դողում էր. աչքերի թերթերունքների մէջ փայլում էին արտասուքի կաթիլները։

—Ինչի՞ չդիմեցիք ինձ, Սառա, ինչի՞… մենք չգիտէինք, որ դուք նեղութեան մէջ էք։ Հեղինէն ուրախութեամբ կօգնէր ձեզ… այո, Հեղինէն միշտ մտաբերում է ձեզ։

Սառան ցնցուեց։

Այդ րոպէին լսուեց Անիկի խռպոտ լացը։

Սառան ուշքի եկաւ և շտապով հեռացաւ բժշկից։

—Ահա և հիւանդս, ասաց նա, զսպելով ինքն իրեն։

Նրա ձայնը սառն և սովորական էր. Բժիշկը բռնեց Անիկի զարկերակը։

Անցաւ մի քանի րոպէ։

Երկար, սաստիկ երկար թուեցին այդ րոպէները Սառային։

Նա անհամբեր սպասում էր Մուրադեանցի վճռին։

—Կապրի՞ թէ ոչ, մտածում էր Սառան։

Նրա մէջ խօսում էր այժմ միայն մայրական զգացմունքը։

Սենեակում մութն էր։

—Ճրագ… խնդրեմ, արտասանեց Մուրադեանցը՝ չթողնելով ձեռից Անիկի զարկերակը։

Սառան հազիւ լսելի քայլերով դուրս եկաւ սենեակից և բերեց ճրագը։

Ճրագի աղօտ լոյսը ընկաւ Անիկի բոլորովին այլանդակուած երեսին. երեխան մեծ մեծ բացել էր իւր սև աչքերը և կարծես մի առանձին զարմացքով նայում էր առաստաղին. այդ հայեացքը անշարժ էր. այդպէս նայում են միայն հոգեվարք հիւանդները։

—Նա… մեռնում է, լսուեց սենեակի լռութեան մէջ Մուրադեանցի ձայնը։

Սառան ոչինչ չպատասխանեց. նա արձանացած կանգնած էր մոմակալը ձեռին մեռնող Անիկի անկողնի մօտ։

Բժիշկը զգուշութեամբ թողեց Անիկի ձեռը։

Հոգեվարք երեխան մի քանի անգամ սաստիկ ցնցուեց, լսուեցին ծանր խռպոտ հեկեկանքների խուլ ձայները և անմեղ հոգին թողեց այդ փոքրիկ հալումաշ եղած մարմինը։

—Նա մեռաւ, կրկնեց Մուրադեանցը և առնելով սեղանից իւր գլխարկը շտապով դուրս եկաւ սենեակից։

Նա չնայեց անգամ Սառայի վերայ։

Անցաւ մի քանի վայրկեան։

Դրսից լսվում էր Մուրադեանցի հեռացող կառքի դղրդոցը։

Այդ միջոցին սենեակի լռութեան մէջ լսուեց մի սիրտ պատառող ճիչ և Սառան գլորուեց գետնին։

Նա ուշաթափուեց։

Այն վերջի կապը, որ կապում էր անբաղդ Սառային այս աշխարհիս հետ, այդ րոպէին կտրուեց…

—

Անցան մի քանի երկար րոպէներ. ճրագի աղօտ լոյսը խաղում էր մեռած Անիկի արդէն դեղնած, մի քիչ կապտած երեսին. երկու ճանճեր պզպզալով թռչում էին անդադար անկողնի մօտից։

Վերջապէս նրանք նստան Անիկի սառած ձեռի վերայ։

Սենեակում տիրեց խորին լռութիւն։

—Բաց արէք… դէ… չէ՞ք լսում… անպիտաններ… սատկել էք ի՞նչ է, լսուեցաւ սրահում մի խռպոտ ձայն։

Դա Միքայէլն էր։

Պատասխան չկար։

—Է՛հ... ծվ կայ... բաց արէք, շուտով... չան ծնունդներ... քնած էք էլի...

Երկին ամեն ինչ լուռ էր սենեակում... միայն ճանճերը թողեցին մեռեալի ձեռը և թռան ճրագի լուսին։

—Ա՛յ... ձեզ... այ... ձեզ... չան ծնունդներ... և Միքայէլը ոտով սկսեց զարնել դուռը, մի քանի րոպէից նա կոտրեց դռան փեղկը և անհաստատ քայլերով մտաւ ներս։ Երբ տեսաւ նա Սառային, նրա աչքերը ցոլացին և նա սկսեց հայհոյել։

Նա սաստիկ արբած էր։

ԻԹ.

Օրը խաւար էր և բաւականին ցուրտ. անձրևը նոր էր դադարել և կազմել էր փողոցներում անհամար կեղտոտ լճակներ։ Գետինը ներկայացնում էր ջրի ու ցեխի խառնուրդ—հաւաքածու... Գերեզմանատան եկեղեցու առաջի զանգի հնչիւնը տխուր, կարծես ողբալով տարածուեցաւ աշնանային մթնոլորտում. մի վայրկեանից նրան հետևեց երկրորդը, երրորդը... և վերջապէս ստացուեցաւ մի անընդհատ, սիրտ մաշող մեղեդի։

Հեռուից երևեցաւ սգաւոր յուղարկաւորութիւնը. մի փոքրիկ հասարակ փայտից անտաշ դագաղ, մի ծերունի տէրտէր և երկու-երեք կանայք...

Նրանք շտապով մտան եկեղեցու բակը։

Քահանան սկսեց իւր չարականը։

Դագաղը տեղաւորեցին եկեղեցու մէջ և այդ ժամասացութիւնը սկսուեց, այն ժամասացութիւնը որ շատ կարճ է տեւում չքաւորների համար և շատ երկար ու փառաւոր հարուստների համար։

Դագաղի մօտ կանգնած էր Սառան։

Նա եկել էր թաղելու իւր Անիկին։

Սառան հանգիստ էր, արտասուքի ոչ մի կաթիլ չէր կարելի նկատել նրա մեռած՝ կարծես քարացած երեսին։

Նա մեքենայաբար նայում էր այդ փոքրիկ, արդէն անշնչացած մարմնին, որ երբեմն ապրում էր, զգում էր, ունէր ցանկութիւններ. իսկ այժմս մի անշունչ դիակ էր։

Սառայից մի քիչ հեռու կանգնած էր մի պառաւ կին. դա Շուշան խանումն էր։ Նա սաստիկ ծերացել էր. նրա խորշոմներով ծածկուած երեսը, սրածայր քիթը, կարմրած թերթերունքները և կարծես միշտ արտասուող աչքերը մի անախորժ տպաւորութիւն էին գործում դիտողի վերայ. նա երբեմն մօտեցնում էր կեղտոտ թաշկինակը աչքերին և սրբում անդադար վազող արտասուքը։

Խաթուն խանումը, Միքայէլ Թաւալեանցի մայրը ծնկաչոք կանգնած էր դագաղի միւս կողմը և ջերմեռանդ աղօթում էր։

Ինքը, Միքայէլը չկար եկեղեցում։ Նրան, չէին կարողացել հանել Մարկոսի գինետնից...

Տէրտէրը մօտեցաւ դագաղին և սկսեց իւր վերջի շարականը։

Սառան ցնցողաբար բարձրացրեց իւր գլուխը, նայեց չուրջը և նորից նրա կերպարանքը ընդունեց իւր սառը, անվրդով արտայայտութիւնը։

«Աստուած ողորմի հանգուցեալի հոգուն», դարձաւ տէրտէրը Սառային և մօտեցրեց խաչը։

Սառան մեքենայաբար նայեց խաչին, յետոյ տէրտէրին և կարծես մի բան մտաբերելով լուռ համբուրեց խաչը և հեռացաւ դագաղից։

Անիկին բարձրացրին և դուրս հանեցին եկեղեցու բակը։

Սկսել էր մաղել անձրևը, որի սառը կաթիլները խըփում էին խեղճ Անիկի երեսին։

—Ծածկեցէ՛ք խուփը, լսուեցաւ ժամկոչի ձայնը։

Խուփը ծածկեցին. անձրևը այլ ևս չէր թրջում Անիկին։

Ցուղարկաւորութիւնը անկարգ դիմեց գերեզմանատան հիւսիսային ծայրը։

Այստեղ ոչ շքեղ հոյակապ դամբաններ կային և ոչ մարմարիօն-արձաններ... այստեղ խոր յաւիտենական քնով քնած էին Նոր-Նախիջևանի չքաւորները...

Այստեղ երևում էր մի դեռ նոր փորած գերեզման. անձրևը արդէն կակղացրել էր հողը և նա ցեխ էր դարձել. գերեզմանի մէջ հաւաքուել էր անձրևի ջուրը։

Դա Անիկի գերեզմանն էր։

Սկսեցին իջեցնել դագաղը։

Լսվում էր անձրևի պատառուող պղպջակների ձայնը։

Սառան մօտեցաւ գերեզմանին. նա կռացած դիտում էր Անիկի նոր բնակարանը։

—Ինչպէս վատ է այստեղ, մտածեց նա, այսպէս ցուրտ... ցեխ... նա կը մրսի...

Տէրտէրը նորից մօտեցրեց նրան խաչը։

Գերեզմանափորը սկսեց լցնել գերեզմանը. հողի հետ ընկնում էին այնտեղ և քարեր, որոնք դիպչելով դագաղին. մի տխուր, անախորժ ձայն էին հանում։

Սառան մօտեցաւ գերեզմանափորին։

—Զգոյշ, խնդրեմ... Անիկս մեղք է, ասաց նա բռնելով ծերունու թևից։

Գերեզմանափորը զարմացած նայեց Սառայի երեսին և շարունակեց իւր գործը։

Գերեզմանը պատրաստ, լցուած էր...

Տէրտէրը հանեց շուրջառը և շտապով հեռացաւ այնտեղից։ Շուշան խանումը հանեց օղու շիշը և տուեց ժամկոչին։

Բերին և հաց։

—Հոգին լոյս իջնի, դարձաւ ժամկոչը Սառային և դատարկեց օղու բաժակը։

Սառան ոչինչ չպատասխանեց. նա շարունակում էր անմիտ նայել գերեզմանին։

—Երթանք աղջիս... արապաջին մեզի կնայի, դարձաւ նրան մայրը, Շուշան խանումը։

Սառան կրկին չպատասխանեց, նա ձեռներով մաքրում էր Անիկի գերեզմանը անպէտք քարերից։

—Երթանք ջանս, հոս կենալով Անիկդ չի սաղնալ, դարձաւ նրան Խաթուն խանումը։

—Չի սաղանա՞յ, հարցրեց Սառան մի տղայական պարզամտութեամբ... ի հարկէ... ինչի պիտի սաղանայ... կրկին տանջուելո՞ւ։ Ոչ, ոչ... հարկաւոր չէ... թող քնի... անոյշ քնի՛ր, ղաւակս...

Նրա ձայնը դողում էր. նա ինքը սարսռում էր... բայց կրկին ոչ մի արտասուք... Երևի արտասուքի աղբիւրը նրա սրտում վաղուց չորացել, ցամաքել էր։

Անձրևը սաստկացաւ։

Շուշանը բռնեց նրա ձեռից և դուրս հանեց եկեղեցու բակից։

Կառքը հեռացաւ գերեզմանատանից։

Սառան ամբողջ ճանապարհին լուռ էր և այդպէս էլ լուռ հասաւ տուն... կարծես նա ոչինչ չէր զգում. կարծես նա չէր թաղել իւր մի հատ Անիկին։

Լ·

Անիկի մահից հազիւ անցել էր 2 կամ 3 շաբաթ և ահա ձմեռը եկաւ իւր սառը, սպիտակ քօղով ծածկեց երկիրը։ Բնութիւնը թմրեց և նրա կենսատու գործունէութիւնը մեռաւ. մեռաւ այն պայմանով միայն, որ մի քանի ամսից, գարնանը՝ կրկին վերածնուի…

Այդ միջոցում Սառան շարունակում էր ապրել իւր փոքրիկ տնակում, որ գտնվում էր Աստուածածնի թաղում. նա ապրում էր միայնակ։ Միքայէլը իւր մի քանի շրջմոլիկ ընկերների հետ բանտարկուած էր Ռոստովի բերդում, նրանք գողացել էին մի խեղճ հայ կառապանի ձին և բռնուելով սպասում էին իրենց դատավճռին։

Միքայէլի բանտարկութիւնը չազդեց Սառայի վերայ. նա սկզբից կամեցաւ գնալ Մուրադեանցի մօտ, խնդրել նրա օգնութիւնը, բայց յետոյ մտածեց, որ Միքայէլը կրկին կը ձեռնարկէ գողութիւններ…—ուրեմն աւելորդ է, մտածեց նա, և վերջապէս ես չեմ կարող, չեմ համարձակվում գնալ Մուրադեանցի մօտ և խնդրել… և նա թողեց իւր ամուսնուն ճակատագրին։

Այդ շատ բնական էր. Սառան երբէք չէր կապուած մի որևէ կապով իւր ամուսնու հետ. Անիկն էր որ միաւորում էր այդ երկու բոլորովին տարբեր բնաւորութիւնները. այժմ Անիկը մեռաւ և հաւանական է, որ միաւորուցիչ կապը կտրուեց, քակտուեց։ Սառան և Միքայէլը օտար էին այժմ միմեանց, բոլորովին օտար։

Սառան ապրում էր յետին չքաւորութեան մէջ. ոչ վառելիքի փող ունէր, ոչ շորի և ոչ ուտելիքի… Նրա արուեստը, կարը չէր տալիս նրան ոչինչ, կար տուողներն էլ կարծես մեռած լինէին… ամբողջ օրերով Սառան

մրսելով նստած էր լինում վառարանի մօտ, ուր վառվռում էին 2, 3 կտոր փոքրիկ, փողոցից վերցրած, թաց փայտեր… Նրանք միայն սենեակը լցնում էին անտանելի ծխով և չէին տաքացնում խեղճ Սառային… իսկ ձմեռը այնպէս ցուրտ էր, քամին կատաղաբար մռնչում էր տնակի շուրջը և աւելի ու աւելի ծածկում էր նրան ձիւնով։

Իսկ Սառայի անողորմ ստամոքսը առանց որ և է զիջողութեան պահանջում էր իւր ամենօրեայ կերակուրը. նրա մրսած, կապտած մարմինը տաքութիւն էր խնդրում և երկուսն էլ չգտնելով բաւականութիւն՝ տանջում էին նրան։

—Դեռ թոքերս գործում են, դեռ չեն փթել, նկատեց մի օր Սառան, ապրելը անհրաժեշտ է։

Եւ նա սկսեց ծախել տան կահ-կարասիքը։

Հերթը սկսուեց աթոռներից։

Գնողները հարևաններ էին, նոյնպէս խեղճեր, ինչպէս և ինքը Սառան։

Ամեն բան ծախվում էր քառորդ գնով և սակաւ, շատ սակաւ փողի։

Աթոռների, սեղանների փոխարէն Սառան ստանում էր փայտ, ածուխ, բրինձ և շատ սակաւ անգամ միս։

Այդպէս անցնում էին օրեր, շաբաթներ, ամիսներ…

Սառայի սենեակներում ոչինչ աւելորդ բան չմնաց։

Միայն նրա մահճակալը և կարեմեքենան դեռ չէին ծախուած։ Առաջինը անհրաժեշտ էր, իսկ երկրորդի վերայ դրել էր Սառան իւր վերջի յոյսերը։

—Շուտով կսկսուի ամառը, մտածում էր նա, կարելի կը լինի կար անել և այդ փողով ապրել։

Խեղճը դեռ մտածում էր ապրելու մասին, մինչդեռ կեանքը հազիւ էր մնում այդ չորացած մարմնում։ Սա-

ռայի օրերը հաշուած էին. հազը օրէցօր սաստկանում էր. արիւնը չարունակում էր գալ... Սառայի թոքերի մի փոքրիկ մասը դեռ կենդանի էր, դեռ չէր ապականուած և այդ էր պատճառը, որ նա ապրում էր։ Բայց այդ թոքերի մասը հազիւ բաւական կլինէր մինչև գարունը։

Վերջապէս Սառան մսխեց իւր վերջին կոպէկը։

Միւս օրուայ ոչ հաց կար, ոչ վառելիք։

Սառան յուսահատուած սպասում էր այդ օրին։

Այդ միջոցին նա իւր հարևան Կարապետ կառապանի Գայանուշ կնոջից իմացաւ, որ Ռօստով-Վորոնէժ երկաթուղու վարչութիւնը, ստանալով մեծ քանակութեամբ քարածուխ, բանւորների է որոնում այդ քարածուխը ձմեռուայ պահեստներում դարսելու համար։

Վարչութիւնը տալիս էր ամեն մի բանւորի օրական 20 կոպէկ և մի կտոր ածուխ։

—Այդ էլ բան է, նկատեց Սառան և առաջարկեց երկաթուղու վարչութեան իւր վերջին թոյլ ոյժերը։ Նրան վարձեցին։

Ամեն օր, վաղ առաւօտեան, երբ դրսում այնպէս ցուրտ էր, որ մարդու շնչառութիւնը բռնվում էր, Սառան դուրս էր գալիս իւր տնակից, համարեա ամառուայ շորերով, և շտապով ուղևորվում էր դէպի Դօն գետի ափը, ուր գտնվում էին ընկերութեան պահեստները։

Ճանապարհին նա տաքացնում էր ձեռքերը իւր սեփական շնչով։

Ամբողջ օրը նա աշխատում էր պահեստներում։

Քարածուխի մեծ, ծանր կտորները շալակած ուսին, նա անդադար երթևեկում էր «վագօններ»-ի և պահեստների մէջ։

Նա քրտնում էր անգամ... և ցուրտ, սուր քամին իսկոյն սառեցնում էր այդ քրտինքը։

Սառան ոչնչի վերայ ուշադրութիւն չէր դարձնում. նա գիտէր միայն իւր 20 կոպէկը և ածուխի կտորը, որ ստանում էր ամեն երեկոյ վարչութեան տնտեսից։

ԼԱ.

Հասաւ Ծննդեան տօները։ Ռօստով-Վորոնէժի երկաթուղու վարչութիւնը 3 օրով արձակել էր իւր բանւորներին։

Սառան տանն էր. այդ 3 օրուայ համար նա ունէր վառելիք, հաց և մինչև անգամ միս։

Այդ երեք օրը նա պիտի ունէր տաք կերակուր։

Նա դրել էր հնոցի վերայ ջուրը և կամենում էր պատրաստել «ապուր»։

Այդ միջոցին նա ակամայ մտաբերեց անցեալը, մտաբերեց բոլորովին ուրիշ Ծննդեան տօներ... լուսաւորուած դահլիճ, ահագին բազմութիւն, թանկագին շորեր, երաժշտութիւն, պարեր... Գրիգոր Ցաթալեանց,— այս ամենը մի ակնթարթում անցաւ Սառայի աչքերի առաջ և նա ժպտաց։ Նա մի կողմ դրեց պատրաստի ապուրը և սկսեց մանրել խորովածի միսը։

Փոքրիկ, աղօտ լուսաւորուած սենեակ, մահճակալներ, դեղեր, Մուրադեանցը... Հեղինէն...—կրկին ծագեցան Սառայի ուղեղում և նա կրկին հեգնօրէն ժպտաց։

Նա բաժանեց միսը երկու մասի, դրեց մէկ մասը ամանի մէջ և կապեց սփռոցով. այդ միսը նա պիտի տանէր իւր հիւանդ Շուշան մօրը։

Շուշան խանումը թաղեց իւր ամուսնուն, ծախեց իւր տունը և ինքը ապրում էր իւր քրոջ տանը։ Ահա երկու ամիս էր, ինչ որ նա անկողին էր ընկել։

Սառան արդէն կամենում էր դուրս գալ սենեակից, երբ բակի դուռը բացուեցաւ և լսուեցան օտար ձայներ։ Սառան վազեց պատուհանին։

Տան առաջ կանգնած էր մի կառք։

Ո՞վ պիտի լինի, մտածեց Սառան և դուրս եկաւ սրահը։

Այնտեղ կանգնած էր մի կին. նա հանվեցնում էր երեխային։

Սրահում բաւականին մութն էր և Սառան չճանաչեց նորեկներին։

—Այստեղ է բնակվում Սառա Թաւալեանցը, արտասանեց նորեկ կինը մտնելով երեխայի հետ ներս։

—Այո, շշնջաց Սառան, դիտելով նրա երեսը։

—Կարելի՞ է նրան տեսնել, շարունակեց կինը և նայեց իւր շուրջը։

—Այո, կրկնեց Սառան։

Նա մեծ մեծ բաց էր արել իւր ներս ընկած աչքերը և զարմացած նայում էր իւր հիւրի վերայ։

—Ո՞ւր է նա, ասացէք խնդրեմ։

—Ես եմ։

—Դո՞ւք... դու... Սառա... սիրելիս, և նորեկը սկսեց համբուրել շուարած Սառային։

Հիւրը տիկին Հեղինէ Մուրադեանցն էր։

Սառան լուռ յետ քաշուեցաւ Հեղինէից։

—Ի՞նչպէս ես... լա՞ւ ես... ա՛խ, որքան փոխուել ես, նկատեց Հեղինէն, բռնելով Սառայի դողացող ձեռը։

—Շնորհակալ եմ։

—Ինչի՞—աղջկանդ մահից յետոյ չեկար ապրելու ինձ մօտ... Ճշմարիտը ասած, ես սպասեցի քեզ... միթէ կարելի է մոռանալ հին ընկերուհիներին։

Այդ րոպէին մի բան կարծես խայթեց Սառայի ինքնասիրութիւնը։

—Շնորհակալ եմ, կրկնեց նա վրդովուած ձայնով, բայց ես դեռ ունիմ գուցէ փոքրիկ, բայց իմ սեպհական բնակարանս... խնդրեմ նստիր, և Սառան ցոյց տուեց իւր մահճակալը։

—Ինչի՞ ես նեղանում, Սառա, հարցրեց Հեղինէն... միթէ՞ կարծում ես որ ես անպատուելո՞ւ համար առաջարկեցի իմ բնակարանս... ոչ... հաւատացած եղիր, ես և Արշակը շատ ուրախ կլինինք...

Սառան ցնցուեց։

—Թող... թող, խնդրեմ այդ խօսակցութիւնը... ասաց նա Հեղինէին։

Հեղինէն լռեց։

—Տես, այս իմ աղջիկս է... հաւանում ես... Սաթինիկ, գնա տիկնոջ մօտ։

—Այս ինչ է, միթէ ծիծաղելու է եկել... ծաղրելու իմ դժբաղդութիւնս, մտածեց Սառան և արիւնը զարկեց նրա գլխին։

—Ինչպէս սիրուն է քո Սաթինիկը, հազիւ կարողացաւ արտասանել նա։

—Այո... իսկ քո Անիկդ մեռա՞ւ... կարծեմ...

—Այո, շշնջաց Սառան և նայեց ուղղակի Հեղինէի աչքերին։

—Միթէ ճշմարիտ ծաղրում է, կրկին մտածեց նա։

Մի րոպէ տիրեց լռութիւնը։

Հեղինէն վերկացաւ տեղից և մօտեցաւ Սառային։

—Սառա... ես... ես բերել եմ քեզ մի ընծայ... կընդունե՞ս արդեօք... հաւատացիր, որ ես տալիս եմ անկեղծ, սրտանց։

—Ի՞նչ է, հարցրեց Սառան։

—Այս… փոքրիկ գումարը, և Հեղինէն մեկնեց իւր ձեռը Սառային։ Սառան բարձրաձայն ծիծաղեց։

—Ի՞նչ է… ծաղրելու ես եկել…ուրախանում ես… հա… ողորմութիւն ես տալի… հա… հա… հա…

Ծիծաղը փոխուեց հազի։ Սառան տարաւ թաշկինակը բերնին և արիւնը սկսեց հոսել։

Շուարած Հեղինէն լուռ նայում էր այդ տեսարանին։

Փոքրիկ Սաթինիկը զննում էր պատուհանի վերայի ցրտից գոյացած նկարները։

— Հանգստացիր… սիրելիս… հանգստացիր… ախ, Սառա, Սառա, միթէ դու չգիտես ինձ… միթէ Հեղինէն կարող է ծիծաղել քո թշուառութեան վերայ, դու անարդար ես, Սառա…

—Անարդար… կարելի է, պատասխանեց մի քիչ հանգստացած Սառան, ինձ հետ նոյնպէս անարդար վարուեցան…

Հեղինէն ցած խոնարհեց իւր գլուխը։

Կրկին րոպէական լռութիւն տիրեց սենեակում։

—Հագնուիր… գնանք ինձ մօտ, առաջարկեց Հեղինէն։

—Շնորհակալ եմ. գործ ունիմ…

—Այս տօներին։

—Այո։

Այդ «այո»ն այնքան սառն էր, այնքան վճռողական, որ Հեղինէն չհամարձակուեց կրկնելու իւր առաջարկութիւնը Սառային։

Հեղինէն սկսեց հագցնել Սաթինիկի վերարկուն։

—Արի մեզ մօտ… մենք բնակւում ենք Կակայեան ուսումնարանի հանդէպ. դարձաւ նա Սառային, արի… մոռանանք անցեալը։

Սառան հեգնօրէն ժպտաց։

Միթէ դու կարո՞ղ ես մոռանալ. հարցրեց նա դողդոջուն ձայնով։

Հեղինէն ոչինչ չպատասխանեց։

—Մնաս բարև, դարձաւ նա Սառային։

—Գնաս բարև, պատասխանեց Սառան չշարժուելով տեղից։

Հեղինէն դուրս եկաւ Սաթինիկի հետ սրահը։

Մի վայրկեանից լսուեցաւ հեռացող կառքի դղրդոցը։

—Ինչի՞ եկաւ, նա, ինչի՞… միթէ ծիծաղելու, ծաղրելու—անգո՜ւթ… ողորմելի։

Եւ Սառան սկսեց լալ։

Անբաղդը և բաղդաւորը չհասկացան միմեանց։

ԼԲ.

Մարտի 10ն էր. ձմեռը վերջանում էր. ցրտերը մեղմացել էին. փողոցների ձիւնը սկսուել. արեգակը երբեմն երբեմն երևում էր մառախլապատ երկնակամարի վերայ, երևում էր և իսկոյն ծածկվում էր ամպերով։

Սառան մի շաբաթ էր, որ ընկել անկողին. նա մրսել էր Գօնի ափում քարածուխ դարսած ժամանակ. հազը սաստկացել նեղացնում էր նրան. մութ գիշեր էր։

Ճրագի աղօտ լոյսը հազիւ հասնում էր սենեակի անկիւններին։

Սառայի մահճակալի մօտ կանգնած էր հարևան Գայանուշ խանումը։

Նա մօտեցրեց ջուրը հիւանդի այրուող շրթունքներին։

Սառան ագահութեամբ, առանց շունչ քաշելու, դատարկեց բաժակը։

Նա տանջվում էր սաստիկ տաքութիւնից։

—Օ՜ֆ... հառաչեց հիւանդը։

—Ի՞նչ է, Սառա, դարձաւ նրան Գայանուշը։

—Այրվում եմ... այ... այստեղ, և նա ցոյց տուեց իւր կրծքի վերայ։

—Սպասէ... Աստուծով աղէկ կըլաս...

Մի ժպտի նման բան անցաւ Սառայի երեսով։

—Ո՜չ... չեմ կամենում լաւանալ. այսպէս աւելի լաւ է...

Գայանուշը ոչինչ չպատասխանեց։

—Ո՜հ... անտանելի տաքութիւն, շշնջաց Սառան և վայր ձգեց վերմակը։

Աստուած իմ, որքան լղարել էր նա. կարծես միայն կաշին մնացած լինէր, իսկ այդ չորացած կաշու տակից ցցուել էին նրա ոսկորները։

—Ո՜հ... ջուր... ջուր...

Գայանուշը կռացաւ Սառայի անկողնի վերայ։

Հիւանդը մեծ մեծ բաց էր արել իւր աչքերը և լըրջօրէն նայում էր տան առաստաղին։

Խոշոր հեկեկանքները անդադար դուրս էին գալիս հիւանդի սաստիկ ներս ընկած կրծքից։

Սառա, ահա ջուրը, նկատեց Գայանուշը։

Օ՜հ... մի քիչ քամի... մայրիկ...

Գայանուշը զարմացած նայում էր Սառայի կարմրած երեսին։

—Օ՜հ... խեղդվում եմ... Հեղինէ... ինչ ես ծիծաղում... ինչի։

Սառան ցնորվում էր։

—Արշակ... Արշակ... սիրելիս... օգնիր ինձ... օգնիր...

Եւ Սառայի ձայնը փոխուեցաւ խուլ հեկեկանքների։

Գայանուշը շտապով դուրս եկաւ սենեակից։

Նա կանչեց իւր կառապան ամուսնուն։

—Կառապետ... լծէ ձիդ... հէքիմին բեր։

—Ի՞նչպէս է Սառան։

—Ձեռքէ կերթայ... տէրտէրին ալ հանդիպէ։

Կառապետը սկսեց լծել կառքը և մի վայրկեանից յետոյ նա դուրս եկաւ բակից։

Գայանուշը մօտեցաւ հիւանդին։

Սառան լուռ էր և ըստ երեւոյթին հանգիստ։

Գայանուշը նստաւ նրա ոտերի տակ։

—Բաց պատուհանը, դարձաւ նրան Սառան,

Սառան սկսեց շունչ քաշել։

—Ո՞վ էր եկել ինձ մօտ, դարձաւ նա Գայանուշին։

—Ե՞րբ։

—Մի քիչ առաջ։

—Մարդ չկար։

—Միթէ... ինձ երևաց, որ մայրս էր... յետոյ Հեղինէն և... և մի մարդ էլ։

Գայանուշը ոչինչ չպատասխանեց։

Հիւանդը սկսեց սարսռալ։

Գայանուշը փակեց պատուհանը։

Սենեակում ամէն ինչ լուռ էր. միայն լսվում էր հիւանդի ծանր շնչառութեան անկանոն ելևէջները։

—Ծածկիր ինձ... ես մրսում եմ, շշնջաց Սառան։

Գայանուշը կատարեց նրա հրամանը։

Սառան լռեց։

Անցան մի քանի րոպէներ։

Դրսում կանգնեց մի կառք. և մի վայրկեանից ներս մտաւ բժիշկ Մուրադեանցը։

Նա շտապով մօտեցաւ Սառայի անկողնին։

Սառան չուռ եկաւ Մուրադեանցի կողմը և երջանկութեան ժպիտը փայլեց նրա երեսին։

—Դու... դու եկա՞ր... սիրելիս, շշնջաց նա և իւր ձեռքը մեկնեց բժշկին, բայց թուլութիւնից ձեռքը անզօր ընկաւ վերմակի վերայ։

—Ի՞նչ պատահեց քեզ, Սառա... հարցրեց բժիշկը առնելով զարկերակը։

—Տեսնում ես... մեռնում եմ, Արշակ։

—Մեռնե՞լ... ոչ... մենք դեռ կառողջացնենք քեզ։

—Առողջացնե՞լ... ինչի՞... կրկին տանջուելո՞ւ համար... ոչ... սիրելիս, ոչ...

Սառան սկսեց հազալ։

Մուրադեանցը թողեց նրա զարկերակը և նստաւ մահճակալի վերայ։

—Արշակ... սիրելիս... միթէ չգիտէիր... որ... ես... ես անչափ սիրում էի... անչափ... այո... մինչև այժմս էլ սիրում եմ քեզ, Արշակ... և հիւանդի չորացած ձեռները փաթաթուեցաւ բժշկի վզին։

—Սիրելիս... հոգեակս...

Եւ Սառայի չորացած, այրուող շրթունքները մի ջերմ համբոյր դրոշմեցին բժշկի ձեռի վերայ։

—Հանգստացիր... Սառա... քեզ վնաս է փրղովուիլը... լսո՞ւմ ես։

—Ոչինչ, ես բաղդաւոր եմ... թող, որ երկար... երկար տևէ իմ բաղդաւորութիւնս... այո... դու ինձ մօտ ես... և ես... ես երջանիկ եմ...

Բժիշկը սիրով նայեց նրա վերայ։

Սառան նկատեց այդ։ Անհուն երջանկութեան ժպիտը փայլեց նրա երեսին...

Արշակ... մի հարց միայն... դու բաղդաւո՞ր ես։

Մուրադեանցը լուռ էր։

Հազար ու մէկ մտքեր անցնում էին նրա գլխով։

—Մի՛ խաբիր միայն։

—Ոչ... շշնջաց բժիշկը... ես անբաղդ եմ։

Սառայի երեսը գունաթափուեցաւ։

Աչքերը սկսեցին աւելի ցոլալ, նա նստաւ մահճակալի վերայ. նա կիսամերկ էր, երկար սև մազերը ընկել էին նրա չորացած ուսերին։

—Ա՜... թշուառ, Հեղինէ... նա փչրեց երկուսիս կեանքը... միթէ չբաւականացաւ ինձնով միայն... ողորմելի՛... իսկ դեռ անցեալ օր եկել էր... ուրախանալու թշուառութեանս...

Հազը կտրեց նրա խօսքերը. մի վայրկեանից նա շարունակեց.

—Բայց ո՛չ... մի՛ ուրախանալ Հեղինէ... տեսնո՞ւմ ես... հասաւ և իմ երջանկութեան ժամը... տեսնո՞ւմ ես... Արշակը ինձ մօտ է... նա սիրում է ինձ... Աստուած իմ... ես կը գժուեմ...

Եւ նա բարձրաձայն սկսեց լալ, լալ առանց արտասունքների։ Մուրադեանցը զգոյշ պառկեցրեց Սառային և մօտեցաւ Գայանուշ-խանումին։

—Ուղարկեցէք, տիկին, տէր հօր ետևից...

—Ինչո՞ւ... միթէ նա...

—Այո, մեռնում է։

Գայանուշը շտապելով դուրս եկաւ սենեակից։ Մուրադեանցը մօտեցաւ հիւանդի անկողնին. Սառան ձգել էր իւր վերմակը. նա այրվում էր։

—Տեսնո՞ւմ ես... Հեղինէն սատառում է ինձ... ծհ... ինչպէս վատ է նրա հայեացքը։ Տեսնում ես... նա կամենում է ծեծել ինձ... ա՛յ... նա խփեց... օհ... պաշտպանիր ինձ, Արշակ... պաշտպանիր. . Հեղինէ... Հեղինէ...

թող ինձ. տուր ինձ գոնէ մի րոպէ երջանիկ լինել... այո... մի րոպէ...

Սառան դողում էր։

Այս ո՞վ է... ա՜... դո՞ւ ես, չարագործ... Միքայէլ... տես, ուրախացիր. քո զոհդ մեռնում է... ծիծաղիր... մարդասպան... դու խլեցիր իմ երիտասարդութիւնս... դու փչրեցիր, այո՛ ապականեցիր իմ սէրս... և այժմ էլ ծիծաղում ես... գնա... գնա Հեղինէի մօտ... նա արժան է քեզ... իսկ ես... Արշակ... Արշակ...

Մուրադեանցը շուռ էր եկել և նայում էր փողոցը. մութ գիշեր էր։ Նա տարաւ իւր ձեռը աչքերին և սրբեց վայր գլորւող արտասուքի կաթիլները։

—Այո, մրթմրթաց նա, Սառայի հետ կլինէի ես աւելի, աւելի երջանիկ. խեղճ կին...

—Ջուր... ջուր... այրվում եմ, աղաղակեց Սառան։

Մուրադեանցը մօտեցրեց բաժակը։

Սառան չճանաչեց նրան. նա չառաւ անգամ ջրի բաժակը։

Անցաւ կրկին մի քանի րոպէ։

Սենեակի դուռը բացուեց և ներս մտաւ տէրտէրը։

Նա հանեց թաշկինակից Սուրբ Հաղորդութիւնը և մօտեցաւ հիւանդին։

Դողդոջուն ձեռներով նա հաղորդեց Սառային, կարդաց մի քանի աղօթքներ և թողեց մեռնողի երկրաւոր մեղքերը։

Սառան հանգստացաւ և ուշքի եկաւ։

—Արշակ... շշնչաց նա հազիւ լսելի ձայնով, Արշակ... մօտեցիր ինձ...

Մուրադեանցը ծունկ չոքեց նրա անկողնի առաջ։

Մեռնող Սառան առաւ նրա ձեռը, սեղմեց կարողացածի չափ, մօտեցրեց շրթունքներին և ջերմ համբուրեց։

Նա չէր թողնում բժշկի ձեռը։

Մուրադեանցի աչքերից կաթ կաթ ընկնում էր արտասուքը։

—Արշա՛կ... ես... ես մեռնում եմ երջանիկ... այս մի քանի րոպէն վարձատրեցին ինձ իմ ամբողջ թշուառ կեանքիս փոխարէն... Արշա՛կ...

Մուրադեանցը զգում էր, որ Սառայի ձեռը սառչում է, նա զգոյշ առաւ նրա ափերից իւր ձեռը և ծածկեց հիւանդին։

—Արշակ, արտասանեց Սառան և իսկոյն լռեց։

Օրհասական հեկեկանքները սկսեցին խեղդել նրան։ Նա ցնցողաբար սկսեց շարժուել ոտերով և ձեռներով։

Ուշքը կրկին թողեց նրան։

Մուրադեանցը և տէրտէրը մօտեցան անկողնին։

Վերջինի շրթունքները արտասանում էին երկնքի հետ հաշտեցնող աղօթքի խօսքեր։ Սառան լայն, սաստիկ, լայն բացեց իւր սև, գլորակ աչքերը, ցնցողաբար շարժեց շրթունքները և լռեց... լռեց յաւիտեան...

Մուրադեանցը սկսեց հեկեկալ։

Ծերունի տէր հայրը խաչաձև դրեց մեռեալի ձեռները։

Գայանուշը ծնկաչոք կանգնած էր անկողնի մօտ. նա աղօթում էր մեռեալի հոգու փրկութեան համար։

Սենեակի չէմքում կանգնած էր կառապան Կարապետը. նա հանել էր իւր գլխարկը և ջերմ խաչակնքում էր իւր խորշոմած երեսը։

Անցան մի քանի երկար, սաստիկ երկար րոպէներ...

Սենեակում ամեն ինչ լուռ էր։

—Առէք այս, դարձաւ բժիշկը Գայանուշին տալով նրան 25 մանէթանոց թղթադրամ, և խնդրեմ հոգացէք, տիկին, ինչ որ հարկաւոր է... վաղը մենք կթաղենք խեղճ Սառային. և նա շտապով դուրս եկաւ սենեակից։

Գայանուշը վառեց երկու մեծ մոմեր և տեղաւորեց Սառայի գլխի ետևը Նրանց լոյսը ընկաւ մեռածի սպիտակած երեսին. այդ երեսը հանգիստ էր. երջանկութեան և բաղդաւորութեան ժպիտը սառել էր նրա շրթունքների վերայ. երևի Սառան հաշտուել էր իւր զրկանքներով մի երկրաւոր կեանքի հետ...

Միւս օրը թաղեցին Սառային Անիկի մօտ։ Ցուղարկաւորութեան ներկայ էին Գայանուշը, Խաթուն-խանումը, Շուշանը, Մուրադեանցը, Հեղինէն և մի քանի երիտասարդներ, որոնք ծանօթ էին Սառայի հետ։ Արդէն դագաղը իջեցրել էին գերեզման, երբ եկաւ Նինօ Ֆաթալեանցը։

Թաղումը անշուք էր և համեստ...

ԳԷՈՐԳ ՁՈՒԲԱՐ.

ՄԻ ՎԱՐԴԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Ա.

Ես ծնուել եմ հեռու, շատ հեռու տեղ... իմ հայրենիքի երկինքն այնպէս կապուտակ, այնպէս պարզ էր և ամբողջ բնութիւնն այնպէս շքեղ, այնպէս հրաշալի... Մարդիկ հայրենիքս Իտալիա են կանչում։ Այնտեղ տեսայ ես առաջին անգամ ջերմ արեգակի այրող ճառագայթները, այնտեղ առաջին անգամ ես ծծեցի զով, հոտաւէտ օդը, այնտեղ առաջին անգամ պարտիզպանի ձեռքը սկսեց մաքրել ինձ փշերից և տատասկներից։

Ես մեծանում էի Վենետիկի քաղաքային պարտիզում ուրիշ վարդերի հասարակութեան մէջ՝ անվրդով և խաղաղ, մեծանում էի հօրս և մօրս հսկողութեան տակ։

Այդպէս երջանիկ անցան իմ մանկութեան առաջին օրերը... Շատ անգամ ես լսած եմ, թէ ինչպէս մարդիկ գանգատուել են, որ աշխարհումս յաւիտենական ոչինչ չկայ, և այդ, իմ կարծիքով, շատ ուղիղ է, գոնէ ես ինքս ստուգեցի մօտ ապագայում այդ խօսքերի դառն ճշմարտութիւնը։

Մի օր երկինքը սովորականից աւելի պարզ էր, աւելի գեղեցիկ. արեգակը երկնակամարից լուսաւորում էր երկիրը, օդը լցուել էր հազար ու մէկ ծաղիկների հոտաւէտ բուրումներով. Թռչունները ուրախ-ուրախ թռչկոտում էին ծառից ծառ և բարևում այդ գեղեցիկ օրը։ Վարդ

մայրս այդ միջոցին թեքուել էր իմ կողմը և նրա շրթունքներն արտասանում էին սիրոյ խօսքեր…

Յանկարծ մեր ընդարձակ պարտիզի դռները բացուեցան և ներս մտաւ մի օրիորդ. նրան ուղեկցում էր մի երիտասարդ պարոն. հազար ու մէկ ողջոյններով նրանց հետևում էր մեր ծերունի Անտօնիօ պարտիզպանը։

Օրիորդը ժպտալով անց էր կենում առջևիցս։

—Ա՛դ, ինչ սիրուն վարդ է, ասաց նա, ցոյց տալով մօրս վրայ… տեսէք, Էրնեստօ, դարձաւ նա երիտասարդին։

—Այո՛, օրիորդ, պատասխանեց վերջինը, արժանի է, որ այդ վարդը զարդարէ ձեր կուրծքը։ Անտօնիօ, դարձաւ նա ծերունի պարտիզպանին, կտրիր այդ վարդը։

Եւ մի րոպէից յետոյ Անտօնիօ պարտիզպանի կոշտ, խորշոմած ձեռքը կտրեց մօրս կեանքի թելը։ Ես սարսափած նայում էի այդ մարդկային անխղճութեանը։

Մայրս հազար ու մէկ փաղաքշանքներով աշխատում էր շարժել պարտիզպանի գութը. նա խնդրում էր շնորհել իրան կեանք. նա ասում էր, որ ինքը ոչոքին վնաս չէ բերել…… Բայց իզո՛ւր… անգութ, անխիղճ Անտօնիօն չլսեց մօրս աղերսանքին. նա քաղեց մօրս և տուեց երիտասարդին…

Վերջապէս ես կամաց-կամաց ուշքի եկայ. նայեցի շուրջս և տեսայ, որ մնացել եմ որբ, միայնակ այն ընդարձակ պարտիզում, բոլորովին միայնակ, նայեցի… և տրտմեցայ. ցօղի միակ կաթիլը, որ դեռ չէր ցամաքել արևի ճառագայթներից, այժմ վրայիցս գլորուեց գետին…

Դա իմ արտասուքն էր…

Ես այդ րոպէին միայն հասկացայ, որ աշխարհումս յաւիտենական ոչինչ չկայ և որ մարդիկ անխիղճ են,

սաստիկ անխիղճ. կարելի է այդ նրանից է, որ նրանք անկարող են հասկանալ ծաղիկների, բոյսերի, թռչունների լեզուն, նրանց խօսակցութիւնները, նրանց լացը և ուրախութիւնը… եթէ հասկանային, երևի, չէին խլիլ մեզնից մեր անվնաս, անմեղ կեանքը։

Բ.

Անցաւ քանի մի տարի։ Այդ միջոցին ես արդէն դարձել էի մի հին, ծերացած վարդենի, սկսել էի սերմեր տալ, ունէի զաւակներ, թոռներ…

Այս ընտանեկան անդորր խաղաղութեան և բախտաւորութեան մէջ ես սկսել էի մոռանալ մօրս անժամանակ՝ վաղեմի մահը, սկսել էի մոռանալ ծերունի Անտօնիօ պարտիզպանի անգթութիւնը՝ ներել էի նրան…

Ես նորից թոյլ էի տալիս, որ Անտօնիօն ամեն առաւօտ սառը, մաքուր ջուր սրսկէ ինձ վրայ, մաքրէ իմ հողը, հեռացնէ արմատներիցս փշերը և անպէտք կանաչեղէնը…

Այսպէս անցնում էին օրերս. ես բախտաւոր էի, սիրում էի զաւակներիս, թոռներիս, նրանք նոյնպէս սիրում էին ինձ. ես բախտաւոր և երջանիկ էի։

—

Մի օր արևն երկար չէր երևում երկնակամարում. օդը սկսել էր ցրտել. ծառերն արդէն մերկացել էին, կանաչեղէնը դեղնել, թառամել էր և ամբողջ բնութիւնը կարծես պատրաստւում էր քնել խոր, մեռելային քնով։

Արմատներս սկսել էին սառել, թերթիկներիցս շատերն ընկել էին և ծածկել գետինը. ես մրսում էի. զգում էի, որ մօտենում էր ձմեռը։

Անտօնիօն սկսեց իր սովորական գործը. նա մեզանից շատերին ծածկեց յարդով, շատերին տարաւ իր բնակարանի մեծ ու տաք սրահը, իսկ ինձ իմ ընտանիքով

փորեց, հանեց գետնից և տեղաւորեց մի մեծ արկղի մէջ. այնտեղ ածեց նա մի քիչ հող, ջուր սրսկեց և տարաւ քաղաքի հիւրանոցներից մէկը։

—Ահա, օրիորդ, ես բերեցի ձեր գնած վարդենին. դուք կարող էք նրան այժմ տանել, ուր կամենաք, վարդենին չի թառամիլ. միայն պահպանեցէք ցրտից.—ասաց Անտօնիօն մի օրիորդի, որի երեսը, հագուստը և խօսակցութիւնը ցոյց էին տալիս, որ նա օտար երկրից է։

—Լաւ, պա՛րոն, առէք ձեր փողը,—պատասխանեց օրիորդը, և մի թղթի կտոր տուեց մեր պարտիզպանին։

Ես այն ժամանակ միայն հասկացայ, որ ինձ վաճառում են, և կարծես ցնցուեցի ու դարձայ պարտիզպանին, սկսեցի խնդրել, աղաչել որ ինձ չզրկէ մայրական հողից, վերջապէս լաց եղայ. բայց նա... նա ականջ չըդրեց, այլ նոյնպէս մնաց անխիղճ, անգութ, ինչպէս այն ժամանակ, երբ քաղեց իմ վարդ-մօրս և տուեց այն անծանօթ օրիորդին...

Ես կրկին մտաբերեցի, որ աշխարհումս, այս ունայն աշխարհումս յաւիտենականութիւնը լոկ խօսք է որ մարդիկ անխիղճ են և անգութ։

Օրիորդը տեղաւորեց ինձ պատուհանի վրայ. իսկ միւս առաւօտ նա հաւաքեց իրեղէնները, առաւ և ինձ և ուղևորուեցաւ դէպի երկաթուղու կայարան։

Շոգեկառքի պատուհանից ես վերջին անգամ տեսայ Իտալիայի պարզ ու կապուտակ երկինքը, վերջին անգամ նրա ջերմ արեգակի ճառագայթները տաքացրին իմ հալ ու մաշ, տխուր սիրտը. վերջին անգամ նրա թափանցիկ զեփիւռը շօշափեց, կարծես գգուեց իմ թերթիկները և ես սկսեցի լալ...

Օրիորդը չհասկացաւ, չլսեց իմ հրաժարական ղառն ողբը։

Գ.

Ինձ բերեցին դժնեայ հիւսիսի կողմերը և տեղաւորեցին մի լայնարձակ սենեակում։ Ամեն ինչ այստեղ անծանօթ էր։ Պատուհանների վրայ և սենեակի անկիւններում դարսած էին մի քանի ծաղիկներ և բոյսեր։ Աստուած իմ, որքան դեղնած, մաշուած էին նրանք, կարծես նոր էին առողջանում, նոր էին կազդուրվում ծանր հիւանդութիւնից յետոյ։

Սկզբից ես քաշվում էի այդ կիսամեռ բոյսերից, հեռանում էի, չէի կամենում խօսել նրանց հետ, բայց քանի օրերն անցնում էին, քանի ձմեռը վերջանում էր, ես սկսում էի ընտելանալ, ծանօթանալ այդ ինձ նման խեղճ բանտարկեալներին։

Ձմեռային երկար երեկոներին նրանք պատմեցին ինձ իրանց տխուր պատմութիւնը. ասացին թէ, իրանք այստեղացի չեն, որ իրանց հայրենիքը հեռու է, որ իրանք ծնուել են Կովկասում, ամպամած լեռների ստորոտներում և այնտեղից արդէն ընկել են այս դժնեայ, անհիւրասէր հիւսիսը։ Նրանք ոգևորուած նկարագրում էին իրանց հայրենիքի արևը, օդը, ջուրը, լեռներն ու ամբողջ հրաշալի հարաւային բնութիւնը և գանգատվում էին մարդկային անարդարութեան, անխղճութեան դէմ։

Մարդը կարծում է, որ ինքն ամեն արարածների տէր և իշխանն է. նա աշխատում է ամեն ինչ հպատակեցնել, ստրկացնել իրան. բայց, ճշմարիտն ասած, մարդն ամենավատ արարածն է. նա գութ չունի և չափազանց ինքնասէր է,—վերջացրեց իր խօսքը դեղնած մանիշակը։

—Այո... այո, բացականչեցին վճռողաբար միւս ծաղիկները և բոյսերը։

Այսպէս տխուր, սաստիկ տխուր անցնում էին մեր օրերը անվերջ անբաւականութեան և գանգատների մէջ։

—

Մի օր ես նկատեցի, որ պատուհանի ապակիները տաքացել էին. բարձրացրի գլուխս և տեսայ, որ արեգակը սաստիկ այրում էր. փողոցում հալած ձիւնը կազմել էր մանր, կեղտոտ լճակներ. բնութիւնը արթնանում էր իր խոր ձմեռային քնից... ես զգացի որ մօտենում են գարնան օրերը, զգացի և սաստիկ, անչափ ուրախացայ։ Վերջապէս մի գեղեցիկ, պայծառ օր գուշակութիւններս կատարուեցան. մեր տան լուսամուտները բացուեցան, սենեակների անտանելի օդը մաքրուեց և ես տեսայ որ իրաւ ծառերը կանաչել, ծածկուել են տերևներով, որ վերջապէս միշտ մառախլապատ երկինքը պարզուել է և զով, անուշահոտ զեփիւռը մեղմ տատանում է իմ և միւս ծաղիկների գլխիկները...

Անցաւ մի ամիս և մեզ բոլորիս հանեցին պարտէզ։ Այստեղ մեր կեանքն աւելի տանելի էր քանթէ փակ սենեակներում։ Մենք բոլորս կարծես կազդուրուեցինք, վերածնուեցանք, միայն խեղճ Կովկասի դեղնած, մաշուած մանիշակը չկարողացաւ բարևել գարնանային արեգակին. Նա մի քանի օրից յետոյ կռացաւ, թեքեց իր գլխիկը կրծքին և փչեց իր անզօր շունչը...

Այստեղ, հիւսիսում բնութիւնն այնպէս շքեղ չէր, ինչպէս իմ հայրենիքումս, երկինքն այստեղ պարզ և կապոյտ չէր, ինչպէս այնտեղ՝—սիրուն Իտալիայում՝ իմ քաղցր հայրենիքում, և գիշերներն այնպէս սքանչելի, այնպէս գեղեցիկ չէին. մինչև անգամ այստեղի լուսնեակն էլ կարծես արձակում էր մի ուրիշ, անսովոր աղօտ լոյս...

Բայց չնայելով դրան՝ մենք բախտաւոր էինք, գոնէ աշխատում էինք բախտաւոր լինել...

Մի գեղեցիկ, լուսնեակ գիշեր, երբ երկնքում արդէն վառուել էին անհամար աստղիկներ և մի դիւթական փայլով ներկում էին մթնոլորտը և երկրիս բոլոր առարկաները, յանկարծ իմ ականջիս հասան անսովոր, բայց այնուամենայնիւ կարծես արդէն ծանօթ ձայներ. ես այդ ձայները լսած էի մանկութեանս երջանիկ րոպէներում՝ այնտեղ, հեռու, իմ հայրենիքումս. դա հարաւային սոխակի երգն էր. ես սթափուեցայ և հիացած, լուռ սկսեցի լսել... Պանդուխտ սոխակն երգում էր իր սիրոյ սրտայոյզ մեղեդին. Նա պատմում էր իր հեռաւոր հայրենիքի, իր խաբուած, ոտնակոխ արած սիրոյ, իր հոգեկան, իր փոքրիկ սրտի տանջանքների տխուր պատմութիւնը... ոչ... Նա չէր պատմում... Նա չէր երգում... այլ նա լալիս էր, ողբում և այդ ողբը կտրատում էր իմ խոցուած, մաշուած սիրտը։

Ես մոռացած շարունակում էի լսել. վախենում էի շարժուել, շունչ քաշել։ Վերջապէս սոխակի վերջին հառաչանքը կամաց-կամաց մեռաւ, անհետացաւ մթնոլորտում և ես ուշքի եկայ։ Երբ բարձրացրի գլուխս՝ տեսայ որ աստղերն արդէն անհետացել են երկնակամարից, լուսինը ծածկուել է ամպերով և մութ երկինքը բոլորովին մթնել. խոր, մեռելային լռութիւնը տիրել էր բնութեանը։ Կարծես ամեն կենդանութիւն մեռել, քարացել էր։

Ես չգիտեմ ինչու համար ցնցուեցի, սարսուռ անցաւ անդամներովս և մի անհանգիստ, տենդային քուն եկաւ վրաս։

Բայց դեռ երկար չէի կարողանում մոռանալ սոխակի երգը, Նրա հառաչանքը և արցունքները։

Դ.

Հետեւեալ առաւօտ երբ ես կրկին զարթեցի՝ սոխակն արդէն նստած մերձակայ ծառին, սիրով նայում էր ինձ. նրա փոքրիկ, վառվռուն աչքերում ես նկատեցի կարեկցութեան նշոյլ։

—Երևի այս դժնեայ հիւսիսը չէ քո հայրենիքը,— դարձաւ նա ինձ։

—Ինչի՞ց գիտես. հարցրի ես, զարմացած նայելով նրա երեսին։

—Այնպէս.... կարծում եմ.... Բայց ես քեզ դեռ առաջ էի ճանաչում, երբ դու փոքր էիր և մանուկ. դու այն ժամանակ ապրում էիր քո մօր գոգումը։

—Ի՞նչպէս... ուրեմն, դու գիտես իմ անդարձ անցեալ երջանկութեան օրերս... բայց ի՞նչպէս...

—Ես ծնուած եմ այնտեղ, ուր և դու... այն աշխարհում, ուր արեգակն այնպէս ջերմ է, ուր օդն այնպէս պարզ, թափանցիկ և հոտաւէտ է, ուր բնութիւնը եդեմային դրախտի է նմանում, ուր...

—Ի՞նչպէս... Իտալիա... ճշմարիտ... բայց ի՞նչպէս դու գտնուեցար այստեղ, այս ցուրտ, անտանելի երկրում։

—Ես՝ ինչպէս և դու, կորցրի իմ երջանկութիւնս և այժմ թափառում եմ երկրից երկիր... Իտալիան յիշեցնում է ինձ իմ բախտաւորութեանս օրերը, իսկ այդ յիշողութիւնն անտանելի է ինձ համար։

—Ուրեմն, շարունակեցի ես աւելի և աւելի զարմացած, ուրեմն դու ճանաչում էիր և իմ խեղճ, անբախտ մօրս, որին այնպէս անգթաբար սպանեց չարագործ Անտօնիօն... դու ճանաչում էիր մեր ծերունի պարտիզպանին...

—Այո... ես միշտ երգում էի այն պարտիզում, ուր

ծնուած են քո ծնողքը և մենք մի ժամանակ ծանօթ էինք։

—Բայց չտեսա՞ր արդեօք դու իմ մօրս նրանից յետոյ, երբ նա զարդարեց իր անշունչ դիակով այն անսիրտ օրիորդի կուրծքը։

—Տեսայ... միւս առաւօտ քո մօր դիակը ձգած էր պարտիզի նստարանի մօտ... նա կիսամեռ, թառամած էր... ես բարձրացրի նրան և տարայ իմ բոյնը։

—Յետո՞յ.

—Նա կիսաշունչ էր... ես իսկոյն թռայ և բերեցի ցուրտ ջուր ու թրջեցի նրա երեսը... նա բարձրացրեց իր գլխիկը և տխուր, սաստիկ տխուր նայեց ինձ։

—Յետո՞յ... յետո՞յ... հարցնում էի ես մի տենդային յուզմունքի մէջ։

—Յետոյ նա հարցրեց քո մասին և ես պատմեցի, որ դու ողջ ես և խոստացայ բերել նրան քեզ մօտ։

—Բայց ինչո՞ւ չբերիր, անգո՛ւթ սոխակ, բացականչեցի ես։

—Սխալվում ես, վարդենիս, սխալվում. ես սպասում էի, մինչև որ մի քիչ կազդուրուեն քո մօր ոյժերը. այդ միջոցին ես բերեցի մի բուռն հող կտուցումս և այնտեղ թաղեցի նրան. այդպէս անցաւ մի շաբաթ. երբ մենք մի առաւօտ եկանք քեզ այցելութեան, բայց... դու արդէն թողել էիր քաղաքային պարտիզի մայրենի հողը և անհետացել...

Ես սկսեցի հեկեկալ։ Առաւօտեան պարզ սառը ցօղը գլորուեց վրայիցս գետին։

—Քո մայրը, շարունակեց սոխակը, ուշաթափուեց... ես կամեցայ նրան ուշքի բերել, բայց իզո՛ւր, մահն արդէն սկսել էր իր չար գործը. ես նստեցի մօրդ մօտ, երբ նա յանկարծ, կարծես հաւաքելով իր ունեցած վերջին ոյժերը, դարձաւ ինձ և հազիւ լսելի ձայնով ասաց.

—Տեսնում ես, բարեկամ, ես մեռնում եմ... զաւակս. եթէ միայն նա կենդանի է, մնում է որբ, միայնակ.., խոստացի՛ր ինձ, որ դու կաշխատես գտնել նրան և տալ նրան իմ վերջին մայրական հրաժարականս։ Մի րոպէից յետոյ նրա թերթիկները փակուեցին և նա փչեց հոգին։

Սոխակը վերջացրեց իր պատմութիւնը։

Ես լալիս էի։

Անցաւ մի քանի րոպէ. Աստուած իմ, ո՜րքան երկար էին այդ րոպէները։

—Բաւական է... բաւական, դարձաւ ինձ սոխակը, սրբի՛ր արտասուքներդ... Նրանք չեն կարող կենդանացնել քո անբախտ մօրը։

Ես չէի լսում նրան և շարունակում էի լալ։ Երբ բարձրացրի գլխիկս՝ սոխակն արդէն թռել, անհետացել էր. ես տեսայ, որ արդէն կէսօր էր։ Տանտիկինս սափորը ձեռին մօտենում էր մեզ։

—Ի՛նչպէս թառամել է իմ վարդիկս. . . երևի ջերմութիւնը վնասել է նրան, ասաց նա ինքն իրան և սկսեց առատօրէն ջրել իմ ցամաքած հողը։ Խեղճը չէր հասկանում, որ այդ ջերմութիւնը, այդ կրակը իմ երակներումս էր, իմ սրտումս և որ այդ կրակը չէր վախենում ջրից... խեղճ տանտիկին... Երբ նա հեռացաւ վերջապէս մեզանից՝ կովկասի լեռների դեղնած մանիշակը դարձաւ միւս բոյսերին ու ասաց.

—Բարի տանտիկին... եթէ նա էլ չլինէր՝ ո՞րքան որբ, ո՞րքան միայնակ պիտի լինէինք մենք... Բարի տանտիկին, կրկնեց մանուշակը. դա մեռնող մանուշակի ծընունդն էր։

Ես հեզնօրէն ժպտացի.—խեղճ, նա չէր իմանում, որ ինքն իրաւ միայնակ է, բոլորովին միայնակ և աշխատում է համոզել, մխիթարել իրան... ցնո՛րք...

Եւ ճշմարիտ, ես ինքս այնտեղ, հեռու սրտիս խորքում զգացի, թէ ինչպէս մի բան կարծես կտրուեց սաստիկ, սաստի՛կ ցաւեց։ Ես հասկացայ, որ ինձանում վերջին թելը, որ կապում էր ինձ կեանքի հետ, արդէն կտրուել է. ես զգացի, որ իմ կեանքը „ոչ ոքին այսուհետև հարկաւոր չէ, որ նա անպէտք, անխորհուրդ է," ուրեմն և վնասակար... ես միայն արգելք, խափանարար կը լինիմ ուրիշներին. մտածեցի և այդ միտքը սարսափեցրեց ինձ։

—Ի՞նչպէս... վնասակար է կեանքս... աշխատում էի լուծել ես այդ ահեղ հանելուկը և ներքին ձայնս անդադար, միակերպ մեքենայաբար կրկնում էր ինձ. «այո՛, վնասակա՛ր է, վնասակա՛ր է»։

—Բայց ինչո՞ւ... ինչո՞ւ... աշխատեցի ես քննութեան տակ ձգել ինձ անհանգստացնող միտքը։

—Ինչո՞ւ... որովհետև դու խլում ես ուրիշ ծաղիկներից և բոյսերից արեգակի ջերմութիւնը, այն ջերմութիւնը, որ նրանց անհրաժեշտ է. դու խլում ես հողի կենսատու ոյժերը. դու այդ բոլորը խլում ես նրանցից, մինչդեռ նրանց կեանքը վնասակար չէ. նրանք դեռ նպատակ ունին ապրելու...

—Իսկ դո՞ւ... և ներքին ձայնս յանկարծ լռեց։

—Իսկ Ես, մեքենայաբար թռաւ բերնիցս։

—Իսկ դո՞ւ... դու անպէտք ես... դու չունիս նպատակ... մեռի՛ր, լաւ է, մեռի՛ր, կրկնում էր ներքին ձայնս։

—Մեռի՛ր... հեշտ է ասել... իսկ իրագործել... ո՜հ... ինչո՞ւ ծնուել նրա համար, ծնուել ոչնչից որ մի օր կրկին ոչինչ դառնաս... բայց լսի՛ր, ես ուզում եմ ապրել... ես նորից ուզում եմ տեսնել այն պարզ երկինքը, այն արեգակի այրող ճառագայթները, այն փայփայող մեղմ զեփիւռը... և յանկարծ մեռնե՛լ...

—Այո, մեռիր… մեռիր… դու ոչ ոքին հարկաւոր չես, այժմս անդադար կրկնում էր ներքին ձայնս։

—Ոչ ոքին… որչափ անտանելի են այդ դառն խօսքերը… ոչ ոքին… այս լայնարձակ, այս անհուն աշխարհումս… դառն վիճակ… այո, իմ ձայնս չէ սխալվում, պէտք է մեռնել, անպատճառ մեռնել։

Այդ րոպէին ականջիս հասաւ սոխակի տխուր մեղեդին. Նա դարձեալ լալիս, գանգատվում էր մարդկային անարդարութեան, աշխարհիս ունայնութեան դէմ։ Նրա երգն այրում էր սիրտս։ Եւ այդ իսկ րոպէին ես զգացի, թէ ինչպէս այնտեղ, հեռու, իմ սրտի խորքում նորից կարծես մի բան կտրուեց. Նորից զգացի ես մի անտանելի ցաւ. Թերթիկներս սկսեցին օրըստօրէ թառամել և այժմ ես գնում եմ դէպի մահ, սպասում եմ անխուսափելի օրհասիս…

ԳԷՈՐԳ ԶՈՒԲԱՐ.

ՄԱՀՏԵՍԻ-ՍԱՐԳԻՍ

(ԳԻՒՂԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ)

—

(Իւր հօր անմոռաց յիշատակին նուիրում է հեղինակ-որդին).

Ա.

Ամառնային գեղեցիկ օրերն էին։

Մեծ-Ղարա…սա գիւղը անկանոն ձգուել էր կանաչազարդ զառիվայրում, որ տարածուելով 2—3 վերստ հեռաւորութեան վերայ, ոլոր պտոյտներով իջնում էր ցած և կազմում էր Արփ… գետակի բարձրաւանդ եզերքը։

Գիշեր էր։

Նորածնունդ լուսնեակը լողանալով իւր անհամար, պսպղուն ճառագայթներով անվրդով, կարծես անշարժ գետակում, մեղմ արտափայլում էր գիւղական փայտաշէն եկեղեցու սպիտակ գմբէթի ու ոսկեզօծ խաչի վերայ և ընկնելով գիւղից դուրս, դաշտային անհուն տարածութեան մէջ ներկում էր վերջինը մի կախարդիչ, դիւթական գոյնով.

Մեծ-Ղարա…սան վաղուց արդէն քնած էր, Նրա նեղ, զառիվայր փողոցներում տիրում էր մեռելային, խորհրդաւոր լռութիւն, մի լռութիւն, որ և այնպէս լի էր ճիշտ երաժշտական, հազիւ հազ ըմբռնելի մեղեդիներով։ Ցածում, գետակի ափերի մօտից լսվում էր ջրային գորտերի անընդհատ միակերպ կչկչոցը. ամառային պարզ, զով զեփիւռը տատանում էր արդէն չորացած եղէգնի

սրածայր թերթիկները, որոնց մեղմ սօսաւիւնը խառնուելով ճմռուկի անվերջ ճռճռոցի հետ լցնում էր օդը անորոշ հնչիւններով. երբեմն երբեմն միայն բնութեան այդ խորհրդաւոր նուագահանդէսը չփոթվում էր բոլորովին անսպասելի, աններդաշնակ ընդհատումներով. գիւղի յետ ընկած բակերից լսվում էր յանկարծ շան խռպոտ, քնաթաթախ հաչոցը. նրան իբրև արձագանք պատասխանում էր զարթնած կովը իւր երկարատև բառանչումով։ Բայց անցնում էր մի քանի վայրկեան և ահա անզօր լռում էր շունը, ախոռում հանգստանում էր վերջապէս կովը և կրկին լցվում էր պարզ ամառնային օդը հազիւ ըմբռնելի մեղեդու անվերջ, անդադրում հնչիւններով...

—

Գիւղի ընդարձակ հրապարակում լսուեցաւ բակի դրան ճռճռոցը և երկու ստուեր զգուշութեամբ, նայելով դէս ու դէն, դուրս եկան փողոց։ Պարզ լուսնեակի ճառագայթները իսկոյն լուսաւորեցին այդ ստուերները,— դրանցից մէկը մի կարճահասակ, գէր ու կլոր մարդ էր մօտ 38 կամ 40 տարեկան, նրա մի քիչ դուրս ցցուած փորը ամրացած էր երկու կարճ ու ծուռ ոտերի վերայ, որոնք երևի միակ և ամենահաւանական պատճառն էին իրենց տիրոջ մի կերպ լողալով, ձգձգուելով մանգալուն։ Լայն, անտաշ, ուսերի վերայ ամրապէս պնդացրած էր նրա մեծ, համարեա քառանկիւնի, նեղ և փոքրիկ ճակատով գլուխը. որ վզի հաստութեան պատճառով կորցրել էր արձակ և ազատ շարժողութեան յատկութիւնը. Նրա սափրած, մութ-կարմրագոյն թշերով երեսը ցոլում էր լուսնեակի ճառագայթների տակ իւր իւղալի ցոլքի ամեն գոյներով։ Բնութիւնը մի շատ վատ խաղ էր խաղացել այդ մարդու ստեղծագործութեան ժամանակ. նա

ամենայն առատաձեռնութեամբ ընտրել էր մսի, իւղի և ոսկորների ամենամեծ կտորները և կարծես շտապելով ամենաանփոյթ կերպով ի մի կուտակելով այդ ամենը պատրաստել էր մի անճոռնի, կոպիտ զանգուած, որին լոյս աշխարհ էր հանել Մահտեսի-Սարգսի փառաւոր անուան տակ և իրեն միայն յայտնի պատճառներից դրդուած, կարգել էր Մեծ-Ղարա...սա գիւղի տանուտէր։

Սարգսի ընկերակիցը ներկայացնում էր նրա ճիշտ հակապատկերը. դա մի երկարահասակ, չոր, ներս ընկած կրծքով, վատառողջ արարած էր. նրա բարակ, կարծես փայտաշէն ոտները ծալվում էին նրա ծնկների մօտ, չկարողանալով դիմանալ նրա երկար, մի քիչ կռացած կազմուածքի ծանրութեանը. Նրա նիհար, դեղնագոյն երեսը ծածկուած էր փոքրիկ, միմեանց հետ փաթաթուող, խճճուած կնճիռներով, որոնք հաւաքուելով նրա շրթունքի անկիւններում՝ տալիս էին այդ վատոյժ, սրուած երեսին մի վերին աստիճանի խորամանկ արտայայտութիւն, որի զօրութիւնը ամբողջապէս լրացնում էր նրա սև, միշտ վազվզող աչքերի ներքին հազիւ նկատելի կրակը։

Դա քաղաքցի-Ղուկասն էր. մեծ-Ղարա...սա գիւղի օղատան միակ տէրը և կառավարիչը։ Ղուկասը բնիկ Ղարա...ս...եցի չէր. նա տեղափոխուել էր այստեղ չորս տարի առաջ մերձակայ Ն... քաղաքից, ուր ժամանակով պարապած էր մանրավաճառութեամբ և ուր առևտուրի քեսատութիւնը անողորմ փշրելով նրա վաճառականական հաշիւները և յոյսերը հարկադրել էր վերջապէս թողել քաղաքը և մանրավաճառից դառնալ— «ղաբաղջի» *)։

Դուրս գալով բակից Մահտեսի-Սարգիսը հանեց իւր

*) Օղատան տէր.—Նոր-Նախիջևանի բարբառ։

եւրոպական, խըղոտած «կարտուզ»-ը, տարաւ ձեռը իւր կոշտ, անհնազանդ-ցից մազերին և ագահութեամբ ծըծելով ամառնային թարմ կանաչեղէնի բուրումներով լի օդը՝ դարձաւ Ղուկասին։

—Օխայ... հոտից մեռնիմ... օխայ... ինչ գիշեր է... ինչ գիշեր..... ծó, ձեր քաղքցիք իրենց կեանքի մէջ տեսած չեն...

—Հը՛ըմ... հա... պատասխանեց Ղուկասը և նրա երեսը ստացաւ մի լուրջ, մտածող արտայայտութիւն։

—Ուֆ... մա... óօֆֆ... խորը շնչում էր Սարգիսը և անդադար դարձնում էր իւր հայեացքը Ղուկասի երեսին։

Վերջինը լուռ էր։

—Ի՞նչ ես մտածում, եղբայր, բաւական է, որքան խօսեցինք այդ մասին... անելքդ ահա այս է վաղը երբ վերջանայ ժամասացութիւնը, կը հաւաքես մեր գիւղացիներին, բերել կտաս որքան կարելի է շատ օղի ու կսկսես քո երգը... ահա, տեսէ՛ք, եղբայրներ, մարդը երեք տարի աշխատած է, քրտինք է թափած... քեզ ինչ սովորեցնեմ, ինքդ էլ լաւ գիտես, աւելացրեց ժպտալով Մահտեսի-Սարգիսը և կրկին յառեց իւր աչքերը Ղուկասի երեսին։

—Այդ այդպէս է, բայց...

—Ի՞նչ բայց-մայց ծóօ...

—Ախր Գօզօխենց Գրիգորը այն ժամանակ էլ ոտքի էր կանգնացրել ամբողջ գիւղը, ասում էր թէ հասարակութեան փողը չէ կարելի դէս ու դէն մսխել, որ տանտիրոջ ռոճիկը բաւական է և այլն... մերոնք էլ, խօ գիտես, սկսեցին նրա բերանից խօսել, հարա-հուրա բարձրացնել, բանն էլ վերջացաւ, նկատեց մի տեսակ անբաւական ձայնով Ղուկասը։

—Ա՛խ, այդ Գրիգորը, Գրիգորը... ես նրա գլուխը հողեմ, չէ, ախր ուղեցածը ինչ է... գիւղացիներին լաւութիւն է անում... հա՛... հա՛... հա՛... տեսնում էք, նոր բարեգործ է դուրս աշխարհ ընկել... և Մահտեսի-Սարգիսը ծածկեց իւր գլուխը և բարկացած սկսեց շրջել։

Ղուկասը շարունակում էր մտածել։

—Ոչինչ... մի վախենալ... ես էլի յոյս ունիմ այդ բանը գլուխ հանելու... միայն մի քիչ փող է հարկաւոր... մի քսանհինգ րուբլի և բանը պրծաւ, պատասխանեց նա վերջապէս և սկսեց քննել Սարգսի երեսը։

—Ոչինչ... փող կարելի է ճարել... միայն թէ գործը գլուխ հանէիր։

—Ասացի որ կը հանեմ, և կը հանեմ էլ... ես անպէտք տեղը խօսք չեմ տալիս... խօ գիտես ինձ։

—Լաւ... լաւ... ուրեմն տուր ձեռդ։

—Նու, բարի գիշեր։

—Բարի գիշեր։

Եւ մեր ծանօթները արդէն կամենում էին բաժանուել միմեանցից, երբ հրապարակից, եկեղեցու մօտից նրանց ականջին հասաւ մի գեղեցիկ, մեղմ մեղեդի.

—«Ազատութիւն», ինձ կըրկնեց
Ճակատագիրն վերևից,
Ազատութեան դու զինուոր
Կամիս գըրուել այս օրից։
Ո՛հ, փըշոտ է՛ ճանապարհդ,
Քեզ շատ փորձանք կը սպասէ,
Ազատութիւն սիրողին
Այս աշխարհը խիստ նեղ է.»
Ազատութիւն սիրողին
Այս աշխարհը խիստ նեղ է...

է... է...

Երգում էր, մի ազատ ու պարզ անձնօր։

—Լսո՞ւմ ես... վոնյա տալի... դարձաւ Սարգիսը ընկերակցին։

—Լաւ է... լաւ է... Դրանց Մօսկվայում լաւ են սովրեցնում։

Երգողը ծխական ուսումնարանի նորեկ ուսուցիչն էր։

«Ազատութիւն սիրողին
Այս աշխարհը խիստ նե... ն... ղէ... է...

Կրկնեց երգողը և նրա ձայնը բարձրանալով դէպի վեր կորաւ գիշերային մթնոլորտի մէջ։

Բ.

Մահտեսի-Սարգիսը բաժանուեցաւ Ղուկասից և վերադառնալով տուն զգոյշ փակեց բակի դուռը, մտաւ սրահը, հանուեց, և իւր ամբողջ յաղթանդամ կազմուածքով տարածուեցաւ «մինտարներ»-ով *) ծածկած գիւղական «սեքի»-ի **) վերայ։

Քունը փախչում էր նրա աչքերից։

Սարգիսը ընկաւ մի անվերջ, մաշող մտատանջութեան մէջ։ Նա իւր սեպհական լօգիկայի շնորհիւ հիւսում էր ամբողջ եզրակացութիւնների, զանազան դրութիւնների մի շարք և երբ արդէն նա կարծում էր, որ ահա հասել է իւր վերջնական, հաստատ եզրակացութեան, այդ իսկ րոպէին անգութ իրողութիւնը դնում էր նրա առաջ մի խոչնդոտ, մի անել դրութիւն և պատկերացնում էր այդ խոչնդոտը գիւղացի ծերունի Գրիգորի մէջ։ Սարգիսը մինչև անգամ մի զարմանալի, մանրակրկիտ ճշտութեամբ տեսնում էր Գրիգորի դէմքը, նրա մի քիչ արհամարհա-

*) Խալիչայի մի տեսակ։

**) Նստարաններ պատի շուրջը։

կան, մի քիչ հեգնական ժպիտը, նրա երկար սպիտակ մօրուքը, կիսաբաց բերանը, որի միջից երևան էին գամփս սուր, սպիտակ ատամներ, որոնք կարծես ահա միանգամից կը խրուէին նրա մսի մէջ և կը սկսէին պատառ-պատառ քաշքշել նրան։

Սառը քրտինքը ծածկեց Մահտեսի Սարգսի խորշոմած երեսը և ճակատը։

—Ո՜ւֆֆ... այս ինչ է, Տէր Աստուած... ա՜խ, անիծուած Գրիգոր... ինչ ես կամենում ինձանից... ինչ...

Եւ Մահտեսի-Սարգիսը շտապով վեր էր կենում «սեքի»-ից և նստում։

—Տէր Աստուած, այս քանի երրորդ անգամն է, որ այս անաստուածը խանգարում է հանգստութիւնս, գիշերները քուն չունիմ... թէ ճար է արել ինձ... շատ կարող է լինել, հարկաւոր է Ջալալենց Ծուպուկին կանչել մի «թեթև» *) թող թափէ ու սուրբ Կարապետի «փրկիչ»-ը թող բանայ... էլ ոչ ոյժ ունիմ տանելու, ոչ համբերութիւն... էհ, ինչ երանի կը լինէր, երբ կինս ողջ լինէր... իսկոյն ճարս կը գտնէր...

Եւ Մահտեսին կրկին պառկեց ու գլխովն արեց իւր «կապան» **), որ ամառը կատարում էր իւր «եօռղան»-ի ***) դերը։ Մի րոպէից Սարգիսը փոխեց իւր դրութիւնը, կողքի եկաւ, շտապով խաչակնքեց երեսը և մտաւ մի անհանգիստ քուն։

Բակում խօսեց աքաղաղը։ Երկինքը սկսել էր տեղ տեղ կապտել. սակաւաթիւ, դեռ չմարած աստղերի անզօր

*) Հալած մոմ ջրի մէջ. կարծում են, որ բժշկում է ամէն տեսակ կախարդութիւններից և հիւանդութիւններից. օրինակ, վախից և այլն։

**) Շոր։

***) Վերմակ։

փայլը տեղի էր տալիս նորածնունդ արեգակի աւետիչ արշալոյսին և մի քանի րոպէից պիտի սկսուէր գիւղական ժիր, աշխատանքով լի ցերեկը։

Գ.

Այդ իսկ գիշեր բոլորովին ուրիշ մտքեր, ուրիշ հաշիւներ զբաղեցնում էին «ղարաբաղջի» Ղուկասին։ Նա վերադարձաւ տուն, մտաւ իւր սենեակը, վառեց մոմը և առնելով թուղթ ու տետր և գրիչը՝ սկսեց գրել։ Ղուկասի սենեակը և առհասարակ ամբողջ տունը ներկայացնում էր քաղաքային և գիւղական կեանքի մի խառնուրդ, հողէ յատակը ծածկած էր եւրոպական խալիչայով. գիւղական «սեքի»ի կից դրած էին Վիեննայի մի քիչ հնացած աթոռներ և մինտառով ծածկած «քուրսի»ի *) մօտ գտնվում էր մի լայն չիթով ծածկած բազմոց, որի վերևը, պատի վերայ, կարելի էր նշմարել մի ճանճերով ապականուած պատկեր, որ ներկայացնում էր մի ինչ որ է պատերազմ, ուր անկարելի էր զանազանել ջարդուած թիւրքին յաղթող ռուս-ղազախից, այնքան նման էին նրանք նկարած։

Ղուկասը վերջացրեց իւր գրութիւնը, մի կողմ ձգեց գրիչը և մօտեցնելով թուղթը ճրագին սկսեց կարդալ. ուրախութեան, մի ներքին բաւականութեան ժպիտը խաղում էր նրա շրթունքների ծալքերի մէջ։

Է՛յ... բանս լաւ է գնում... Սարգիսը խոստացաւ կրկին 25 րուբլի. իսկ եթէ նշանակուի կրկին տանուտէր—50 ր., այդ կանէ 75 ր. այդ փողով կարելի է գործս մեծացնել, իսկ յետոյ... յետոյ վերադառնալ քաղաք. այս անտանելի գիւղը մեռցնում է ինձ. ոչ հասարակութիւն, ոչ առևտուր, ոչ գործ... կատարեալ անապատ... տէր Աստուած... դու կատարես խնդիրքս... քո սուրբ անունդ մատաղ...

*) Մի ցածր գլորաձև կամ քառանկիւնի նստարան։

Եւ Ղուկասի աչքերը ջերմեռանդութեամբ բարձրացան դէպի առաստաղ։

Ուրեմն այսպէս... վաղը կը հաւաքեմ մերոնց. կը պատմեմ գործի էութիւնը, կաղաչեմ, չորս-հինգ շիշ օղին կը շինեն բանս... միայն թէ անիծեալ Գրիգորը չխառնուէր ու չքանդէր տունս... ճշմարիտն ասած, ես զարմանում եմ նրա արարմունքին, ինքը խելօք, գիր-կարդալ գիտէ, կամենար՝ կարող էր հարուստներից մէկը լինել մեր գիւղում... եթէ միայն մի քիչ առևտուր անէր իւր խղճմտանքով... մի քիչ միայն... բայց չէ, արի տես որ իբրև թէ արդարութիւնը աւելի բարձր է դասում և միշտ խղճմտանքի ձայնին լսում... ճշմարիտ զարմանում եմ...

Եւ Ղուկասը վեր քաշեց իւր ուսերը ի նշան երկբայութեան, վերկացաւ տեղից և մօտենալով «տօլապ»ին *) հանեց օղիի շիշը, մօտեցրեց ճրագին և ածելով բաժակի մէջ միանգամից պարպեց նրան։

Հմա... օխմա՛յ... բայց չէ... չեմ կարծում, որ այս անգամ էլ Գրիգորը խառնուի մեր գործին... ախր, Ն... քաղաքից նամակ է եկել տանուտիրոջը, ուր ասուած է, թէ այս 1872-ից սկսած մեզանից էլ թագաւորը զինուոր պիտի առնէ, իսկ Գրիգորի ամենասիրելի որդեգիր-փեսացուն, Կարօն, իսկ և իսկ 21 տարեկան է, ուրեմն...

Եւ Ղուկասը չվերջացնելով իւր խօսքը կրկին պարպեց երկրորդ բաժակը և սրբելով շրթունքները շարունակեց.

—Ուրեմն... ուրեմն նրան անպատճառ հարկաւոր կը

*) Պահարան։

լինի մոտիկական թղթերում մեր Տէր-Եսայու օգնութիւնը, իսկ քահանան ամենամտերիմ բարեկամն է մեր Մահտեսի-Սարգսին և ի հարկէ կը լինի նրա կողմը, ուրեմն... ուրեմն կեցցէ Ղուկաս։

Այս խօսքերի միջոցին երրորդ բաժակն էլ անհետացաւ Ղուկասի փորում։

Օղին սկսել էր իր ազդեցութիւնը. նախկին «ղաբաղչիի» աչքերը ստացան մի անսովոր փայլ, երեսը և քիթը տեղ տեղ կարմրեցան, իսկ շնչառութիւնը դարձաւ աւելի ծանր ու անկանոն։

—Ուրեմն... եթէ Գրիգորի գլխում խելք կայ, նա երբէք չի ուզենալ թշնամանալ Սարգսի հետ և երկուսի ցանկութիւններն էլ կը կատարուի և Ղուկասը երկուսից էլ կ՚օգտուի... հա... հա... հա... ափերիմ Ղուկաս... ափերիմ... ի հարկէ, միթէ դու այնպէս մարդ ես, որ գիւղերի անկիւններում անյայտ մնաս... չէ... չէ... քո տեղը քաղաքն է... քաղաքը...

Այդ միտքը Ղուկասի «idée fixe'»նէր. այն րոպէներին մանաւանդ, երբ գինին կամ օղին սկսում էին թմրեցնել նրա ուղեղը և բորբոքել ջղերը, նա միշտ հրապարակաւ յայտնում էր, որ իրեն չեն հասկանում գիւղում և անկարող են մինչև անգամ հասկանալ, որ իր տեղը քաղաքն է, որ ինքը իբրև զարգացած, լոյս աշխարհ տեսած մարդ—անկարող է ապրել կոշտ կոպիտ գիւղացիների հետ և որ ինքը երբ և իցէ վերադառնալու է քաղաք։

Իսկ օղիի շիշը հետզհետէ դատարկվում էր։

Idée fixe·ը պաշարել էր Ղուկասին։

Նա մոռացաւ Գրիգորին, Սարգսին, գինուորագրութիւնը, մինչև անգամ իր անձնական հաշիւները և բոլորովին անձնատուր լինելով իր սիրուն, խաբուսիկ

ցնորքներին, ընկաւ երևակայութեան անհուն, լայնածաւալ աշխարհը։

Դ.

Վաղ առաւօտ էր։

Մեծ-Ղարա...սան վաղուց արդէն զարթնել էր իր գիշերային քնից և այս անգամ սովորականից աւելի վաղ, որովհետև օրը կիւրակի էր։

Փոքրիկ, մաքրած տները և բակերը նայում էին անցորդի վերայ բոլորովին ուրիշ կերպով, կարծես անդադար կրկնում լինէին—«տեսէք, տեսէք, մենք այսօր մաքրած ենք, մենք զարդարած ենք»։

Առհասարակ գիւղը ընդունել էր մի անսովոր, տօնային կերպարանք։

Եկեղեցու զանգակները հնչեցնում էին «առէք, կերէք»ի միակերպ մեղեդին. եկեղեցու շուրջը հաւաքուած էր ջերմեռանդ գիւղական ամբոխը և տեղի պակասութեան պատճառով, գլխաբաց ստէպ ստէպ խաչակնքելով իր երեսը կանգնած էր բակում։ Արևի փայլող ճառագայթները անթիւ պլպլոցներով խաղում էին եկեղեցու ոսկեզօծ խաչի վերայ։ Պարզ, զով զեփիւռի ալիքները երբեմն երբեմն միայն հասնելով մինչև անշարժ տերևների ծայրերին՝ սկսում էին մեղմ տատանել թերթիկները և նրանց սօսաւիւնը խառնուելով եկեղեցուց հասնող սաղմոսների մեղեդու հետ՝ լցնում էր օդը մի անսովոր, գեղեցիկ, հրապուրիչ հնչիւններով։ Գիւղական խրճիթների երդիկներից բարձրացող ծուխը օղակաձև գալարներով անհետանում էր պարզ, կապուտակ երկնակամարի տակ։

Եկեղեցու արևմտեան կողմը մի մեծ, արդէն ժամանակից հնացած, կանաչած տապանաքարի վերայ նստած

էին երկու մարդ. դրանցից մէկը կը լինէր այսպէս մօտ 55 կամ 60 տարեկան ալեզարդ ծերունի, որոյ մեծ յաղթանդամ կազմուածքը, ջղոտ ձեռները և զարգացած մկանունքը ակներև ցոյց էին տալիս, որ հիւանդութիւնը և տկարութիւնը դեռ ծանօթ չեն նրան։

Նրա արևառ, խորշոմած երեսը արտայայտում էր մի ներքին, ամեն ինչ ներող բարութիւն. Նրա երկար, ցած ընկած յօնքերի տակից նայում էին երկու, երբեմնապէս բոցէական ցոլքով փայլող աչքեր, և այդ աչքերի հայեացքը կազմում էր մի սակաւաթիւ պատահող աններդաշնակութիւն նրա հեզ և բարի կերպարանքի հետ—այդ հայեացքը և՛ գոռոզ էր և՛ խիստ։

Ծերունին—գիւղացի Գրիգորն էր։

Նա ներկայացնում էր մեր ժամանակներում օրէ օր պակասող ճիշտ նահապետական մի տիպար։

Ծնուելով, մեծանալով և ծերանալով գիւղում, նա պիտի մեռնէր ևս գիւղում. սուտ, արտաքուստ փայլող քաղաքակրթութիւնը չէր կարողացել, բարեբաղդաբար, գիւղացի Գրիգորին իւր ապականող ճանկերը ձգել. քաղաքի փչացնող, անբարոյականացնող կեանքը անծանօթ էր նրան և եթէ պատահում էր Գրիգորին գործերի պատճառով լինել մօտակայ Ն... քաղաքում, նա աշխատում էր որքան կարելի է շուտ հեռանալ այնտեղից, նա չէր կարող ընտելանալ այդ միշտ շլացնող, միշտ փոփոխուող երևոյթներին, անկապ զգացումներին, չմարսած մտքերին, և տեսարաններին, որոնց չփոթ խառն ի խուռն գումարումն յայտնի է կեանքի հասարակական անուան տակ։

Գրիգորը անխզելի կապերով կապուած էր պարզ գիւղական երկրագործական կեանքի և նրա արտայայտութիւնների հետ. հողը, վարուցանքը և դաշտային աշխատանքը դարձած էին նրա կենսական ամենաանհրաժեշտ

պահանջը. եթէ դուք խլէիք նրանից հողը, եթէ դուք հեռացնէիք նրան գիւղից, Գրիգորը անկարող կը լինէր տանել այդ անջատումը. նա կսկսէր տանջուել։ Նա այնպիսի մի բոյս էր, որ կարող էր աճել և զարգանալ միայն իւր մայրենի գիւղական հողի վերայ։

Նրա ընկերակիցը մի նիհար, չորացած, մօտ 25 կամ 28 տարեկան երիտասարդ էր. դա ծխական ուսումնարանի ուսուցիչ Գէորգ Սանբէգեանցն էր։ Մեծ-Ղարա...սա գիւղում նա 9 տարեկան միջոցին տրուած էր սուրբ Խաչ վանքի ուսումնարանը և աւարտելով այնտեղ, ուղարկուած էր Ն... քաղաքի Մարդասիրական ընկերութեան հաշուով Մոսկուա, ուր մնալով 6 տարի շարունակ, եկել էր հայրենիք զարգացած, կերպարանափոխուած մտաւոր պաշարով և վատնած, խանգարուած առողջութիւնով։ Այժմս նա պիտի տարածէր լուսաւորութեան միշտ վառ կայծը՝ գիւղի երիտասարդ և մանուկ սերնդի մէջ. նա հասկանում էր իւր գործի, իւր պարտաւորութեան սրբութիւնը և ծանրակշռութիւնը պատրաստվում էր որքան կարելի է լաւ և աջողութեամբ ի կատար հանել իւր անկեղծ ցանկութիւնները և բաղձանքները։

Սանբէգեանցը ծանօթ էր ծերունի Գրիգորի հետ դեռ իւր աշակերտութեան միջոցին և այդ բարեկամութեան կապերը կրկին նորոգուեցան, աւելի ևս ամրացան նրա երկրորդ վերադարձից յետոյ։ Երիտասարդ ուսուցիչը պատվում էր ծերունի Գրիգորին նրա բնական խելքի, նրա ազնուութեան և բարութեան համար, իսկ ծերունին տեսնում էր նրա մէջ մի ոյժ, մի չինող ոյժ, որ պակասում էր երիտասարդութեան միջոցին, դա—լուսաւորութիւնը, ուսումն էր։

Գրիգորը տեսնում էր, որ Սանբէգեանցը վառուած է նոյն գաղափարներով, նոյն ցանկութիւններով, ինչ որ

ինքը և որ նա, Սանրէզեանցը, կարող է աւելի հեշտ իրագործել իւր գաղափարները, աւելի հեշտ, որովհետև ոյժը և զօրութիւնը նրա կողմն էին և այդ ոյժի վերայ դնելով իւր յոյսերը, Գրիգորը ապագայում, իւր համար անտես ապագայում տեսնում էր իրենց յաղթութիւնը։

—Է՛հ, որդիս, տեսնենք այսօր ինչպէս կը վերջանայ մեր գործը. միթէ այսօր էլ այդ աներես, անխիղճ Սարգիսը կը կարողանայ խաբել հասարակութեանը և կըրկին ընտրուել տանուտէր... Տէր Աստուած, դու օգնես մեզ...

Եւ ծերունին յուսահատ դարձրեց իւր ալեզարդ գլուխը Սանրէզեանցի կողմը։

Վերջինը լուռ էր։

Նա իւր ձեռափայտի ծայրով անկանոն գծեր էր խազում փոշոտած հողի վերայ։

Ոչ... ոչ... այդ անկարելի է, վերջապէս շշնջաց նա մի ոգևորուած, զգացած ձայնով, անկարելի է, միթէ խաւարը կարող է բռնել լոյսի տեղը... երբէք... միթէ գիւղական հասարակութիւնը, համայնքը այնքան կարճամիտ և անհեռատես են, որ անկարող կը լինին տեսնել Սարգսի խարդախութիւնները...—Ոչ... ոչ... ես գոնէ չեմ կարծում։

Եւ նա ցած թողեց իւր գլուխը և տանելով ձեռքը դէպի վեր՝ սկսեց տրորել ճակատը։

Ծերունի Գրիգորը տխուր ժպտաց։

—Չես կարծում... Էհ, որդիս, որդիս... կար ժամանակ ես էլ չէի կարծում, չէի կարող հաւատալ, բայց անցեալի փորձերը ապացուցին, որ ես չարաչար սխալվում էի, որ հարկաւոր էր սպասել, որ Սարգսի նման մարդիկ մի օր կը դառնան մեր միակ տէրը և ապաւէնը. այո, հարկաւոր է նոյնը սպասել և այժմ։

—Երբէք... երբէք... վերջապէս երբ համայնքը ժողովուի, ես հրապարակաւ կը բացատրեմ գործի էութիւնը, ես կը մերկացնեմ Սարգսի և նրա ընկերակիցների ցածութիւնները, այո, ես համոզուած եմ, որ ամբոխը կը լսէ ինձ և չի հաստատիլ Սարգսին կրկին տանուտէր։

Սանրէզեանցը կարմրեց. նրա սև, կլորակ, խոր ներս ընկած աչերը սկսեցին փայլել մի ներքին թուացիկ կրակով։

Նա ծանր շնչում էր։

—Աստուած մի արասցէ, որդիս, որ այնպէս անխելք վարուես, Աստուած մի արասցէ... մտածիր, ինչ վտանգ է սպառնում քեզ... քեզանից կարող են խլել պաշտօնդ... ինչ կանես դու այն ժամանակ... չմոռանաս, որ պառաւ խեղճ մայրդ, քո քոյրդ, եղբայրներդ դրել են իրենց յոյսերը միայն քո վերայ. դու ես նրանց կերակրողը և պահողը, ուրեմն...

—Ուրեմն կրկին հացի խնդիրը սպառնում է ամեն մի լուսաւոր գաղափար, կարծես ինքն իրեն կրկնեց դառնացած ձայնով Սանրէզեանցը և բարձրացաւ տեղից։

Ժամասացութիւնը վերջացել էր։

Խուռն ամբոխը դուրս էր գալիս եկեղեցուց. բակի դրան մօտ կանայք բաժանուելով այր մարդերից, դիմում էին տները իսկ տղամարդիկ մնում էին մասամբ վարժատան այժմ դատարկ սենեակները, իսկ մասամբ տեղաւորվում էին բակի պատի վերայ։

Այդ օրը գիւղական համայնքի ժողովն էր. սպասում էին քահանային։

Վերջապէս բարձրացաւ իւր տեղից և Գրիգորը. ձգեց մի սուր, դիտողական հայեացք իւր շուրջը և դիմեց դէպի ուսումնարան։

Սանրէզեանցը մնաց մենակ։

Ծերունի Գրիգորի խօսքերը չկարողանալով բոլորովին համոզել նրան, այնու ամենայնիւ ձգեցին նրան մի խիստ, մաշող մտատանջութեան մէջ։ Երկու ոյժ, երկու բոլորովին հակառակ ոյժ պատերազմում էին Սանբէգեանցի մէջ. մէկը ասում էր.—«գնա, պարզէ հասարակութեան նրա չարերը, նրա վնասը, պատմէ ամբոխին այդ ազէտ, խաւար ամբոխին Սարգսի չարագործութիւնները, նրա կաշառակերութիւնը, գնա.—իսկ հակառակ ոյժը պատկերացնում էր նրա առաջ նրա ընտանիքի խեղճ, անել դրութիւնը, ապագայի չքաւորութիւնը իւր անվերջ, մաշող տառապանքներով, պատկերացնում էր ամենաճիշտ մանրամասնութեամբ և զարհուրեցնում էր երիտասարդին. նա չգիտէր, ինչպէս վարուել, ո՛ր ոյժին հպատակել. գլուխը գետնին խոնարհած նա դիմեց դէպի ուսումնարան, մեքենայաբար մտաւ սենեակը և նրա հայեացքը ընկաւ պատի կրօնական պատկերներից մէկի վերայ. այնտեղ նկարած էր Աբրահամի զոհաբերութիւնը։

—Իւր որդուն, իւր հարազատ որդուն զոհում է նա, շշնջաց Սանբէգեանցը... իսկ ես... ես... ա՛հ, անիծած հացի խնդիր, և նա շտապով դուրս եկաւ բակը։ Քահանան արդէն եկել էր և ժողովը իսկոյն պիտի սկսուէր։

Ե.

Վարժատան փոքրիկ, քառանկիւնի դահլիճը և նրա կից երկու սենեակները արդէն լցուած էին հանդիսականներով, երբ ներս մտաւ Տէր-Նսային։ Հանդիսականները բարձրացան տեղերից և գլուխ տուին տէր հօրը, իսկ նա կարծես քաջ գիտենալով իւր արժանաւորութիւնն ու մտաւոր բարձրութիւնը, հպարտօրէն, հազիւ նկատելի կերպով խոնարհեցրեց իւր գլուխը և տալով մի ընդհանուր ողջոյն անցաւ իւր տեղը, սեղանի մօտ։

Մահտեսի-Սարգիսը մի անհանգիստ, քննողական հայեացք ձգեց Տէր-Նսայու վերայ։ Վերջինը կարծես չնկատեց նրան։

Ծերունի Գրիգորը և Սանբէգեանցը կանգնած էին միմեանցից շատ հեռու. ամբոխը բաժանել էր նրանց և ձգել հակառակ անկիւններ։ Սանբէգեանցը լուրջ, մտածող երեսին, կարծես այնտեղ կամենար կարդալ իրեն տանջող հարցի լուծումը. բայց Գրիգորը լուռ ու մունջ գլուխը կոր մտածում էր մի դեռ նոր, վարժատան բակումը լսած լուրի մասին, թէ միւս տարուց սկսած տէրութիւնը հայերից էլ զինուոր պիտի առնէ։

Այդ նորութիւնը շլացրեց Գրիգորին. նա չէր կարող հաւատալ և չէր էլ հաւատում դրան. նրան շատ տարօրինակ էր թւում այդ փոփոխութիւնը, որ ահա անկոչ մտնում էր իրենց անվրդով, խաղաղ կեանքի շրջանը և վրդովում էր, պղտորում նրա հանգիստ, անշարժ մակերևոյթը։

Այդ միտքն էր, որ զբաղեցնում էր ծերունի Գրիգորին։

Դահլիճում տիրեց լռութիւն։

Քահանան բարձրացաւ տեղից, օրհնեց ժողովը և սկսեց։

—«Սիրելի ժողովուրդ, ձեզ երևի յայտնի է մեր այս օրուայ այստեղ հաւաքուելու պատճառը. ահա լրացաւ նախկին տանուտիրոջ ծառայութեան ժամանակամիջոցը. այժմս հարկաւոր է ընտրել ուրիշին, այո՛. բայց չգիտեմ, կարելի է դուք բաւական էք և կուզէք նորից ընտրել նրան. եթէ ինձ հարցնէք, ես կասեմ, որ փորձուած բանը առհասարակ լաւ է չփորձուածից. ո՛վ գիտէ, ինչպէս կը վարէ մեր գործերը մեր նոր տանուտէրը, իսկ Մահտեսի-աղա-Սարգիսը արդէն հմուտ է այդ գործերում և նրա

բարքն ու վարքը մեզ քաջ յայտնի են։ Ահա իմ կարծիքս։ Ուրեմն ընտրենք աղա Սարգսին։

Քահանան լռեց։

Դահլիճում բարձրացաւ մի խառնաշփոթ շշուկ. անցաւ մի քանի րոպէ և ամբոխի կողմից չստացուեցաւ ոչ մի պատասխան։ Քահանան հարևանցօրէն նայեց Սարգսի վերայ և կրկնեց իւր հարցը։

—Դէ, տղէրք, ինչ կասէք... ո՞ւմ ընտրենք... Մութ-կարմիր գոյնը պատել էր Մահտեսի-Սարգսի երեսը. քըրտինքի խոշոր կաթիլները ոլոր-ոլոր ընկնում էին նրա ճակատից ցած. նա սպասում էր իւր ճիշտ Համլետական «լինել, թէ չլինել»-ին։

—Դէ, ասացէք, կրկնեց երրորդ անգամ Տէր-Նսային։

—Մեզ համար...։ միևնոյն է... Թող մնայ Սարգիսը։

Մնայ, թող մնայ։

Գրիգորը բարձրացրեց գլուխը, հանդիմանօրէն նայեց շուրջը և սկսեց.

—Տղէրք, լսեցէք, ես կամենում եմ ձեզ մի քանի խօսք ասել... կը լսէ՞ք թէ ոչ։

—Սուս... սուս... Գրիգոր աղան խօսում է, լսուեցաւ ամեն կողմից։

Կրկին լռութիւնը տիրեց դահլիճում։

—Մենք այս երեք տարուայ միջոցում,—սկսեց ծերունին դողդոջուն ձայնով,—մի առանձին գործ տեսած չենք նախկին տանուտէրից. մեր հասարակական գործերը մի անհնարին դրութեան մէջ են. ամեն ինչ խառնուած է, ամեն ինչ չփոթուած. մեր դատաստանական գործերը ահա տարիների ընթացքում սպասում են իրենց վճռին. ոչ ոք չկայ դրա մասին մտածող. հողային գործերը, նոյնպէս վար ու ցանքի հողերը, որոնք տրուած են կապալով բերում են ամենաչնչին օգուտ. եկեղեցա-

պատկան հողերը և մոմավաճառութեան իրաւունքը չըգիտեմ ինչ պայմանով տրուած են Սարգսի ազգականին. միայն այսքանս գիտեմ, որ դրանից կոպէկ անգամ չահ չունի եկեղեցին, գինետներս նոյնպէս անցած պայմանաւորել էինք տալ առանձին առանձին կապալառուների. գիւղական կամուրջները գտնվում են ամենաաննախանձելի դրութեան մէջ... ո՞րը ասեմ... և ո՞վ է այս ամենի մեղաւորը, եթէ ոչ տանուտիրոջ թուլութիւնը և անտարբերութիւնը... ճշմարիտ է ասածս, թէ ոչ, պատասխանեցէք, տղէրք...

—Ճշմարիտ է, բոլորովին ճշմարիտ, լսուեցան զանազան կողմերից։

—Ուրեմն, տղէրք, ընտրենք մի նոր տանուտէր, որ կարգի բերէր մեր գործերը... մենք փառք Աստուծոյ, ունինք պատուաւոր մարդիկ։

—Ինչպէս չէ, ի հարկէ։

—Դէ ասացէք, ուրեմն... ո՞ւմ կ՚ընտրէք։

Պատասխան չկար։

Տէր-Նսային օգտուելով այդ րոպէական լռութիւնից, բարձրացաւ և կրկին սկսեց խօսել.

—Չգիտեմ, ինչ մեղք է արած ձեր առաջ Սարգիս աղան, որ այնքան զայրացրել է ձեզանից մի քանիսին, (նա գիտակցաբար չէր տալիս Գրիգորի անունը) մեր գործերը, գոհութիւն Ամենակարողին, լաւ են. ուրեմն ինչ հարկաւոր է դատել ուրիշին։ Աւետարանում ասուած է թէ (այստեղ Տէր-Նսային տուեց իւր խղալի երեսին լուրջ արտայայտութիւն) «մի դատէք և մի դատեսջիք»... լսո՞ւմ էք... մի դատէք, ձեզ էլ չեն դատիլ. մեր դատաւորը երկնային Տէրն է և ոչ թէ մարդիկ... չէ, տղէրք... մեզ Սարգսի նման մարդիկ հարկաւոր են, ան-

հրաժեշտ են, մանաւանդ այս րոպէիս, երբ ամեն կողմից մեզ սպառնում են զանազան փորձանքներ...

Տէր-Եսային լռեց։

Նա սպասում էր ամբոխի հետաքրքրութեանը։

Եւ նա չսխալուեց։

—Ի՞նչ փորձանքներ... ինչ կայ ասա, ասա տէր-հայր, ասա, կանչեց վրդովուած ժողովը։

—Ի՞նչ կայ... բանն էլ դրանումն է, որ... որ (նա դիտակցաբար ծամծմում էր բառերը), որ այս տարուց սկսած Ռուսաց ամենազօրմած կայսրը մեզանից էլ զինուոր պիտի առնէ. հրամանը արդէն եկած է քաղաք և նոյեմբերից մեր 21 տարեկան տղաները պիտի գնան զինուոր։

Եւ Տէր-Եսային հպարտօրէն նայեց իւր չուրջը։

Յաղթութիւնը անցնում էր նրա կողմը։

Այդ լուրը ելէկտրական արագութեամբ անցաւ ամբոխի միջով։

Ոչ ոք չէր կարող իրեն հաշիւ տալ տէր հօր ասածների մասին։ Ոչ ոք չէր կարող հաւատալ այդ նորութեան ճշմարտութեանը։

—Ի՛նչ... զինուոր... մեզանից... երբ... մենք այսքան, հարիւր տարիներից աւելի... վայելում ենք զանազան արտօնութիւններ... մենք գիւղացիներս...

Այս և սրա նման հարցեր անդադար ծագում էին հանդիսականների ուղեղում և չգտնելով մի որևէ հաւանական բացատրութիւն, իսկոյն տեղի էին տալիս նոր հարցերի, նոր երկբայութիւնների։

—Այո, շարունակեց Տէր-Եսային, հրամանը արդէն եկած է, այդ ճշմարիտ է. ուրեմն որքան միջոցները ներում են, մենք պիտի առաջուց պատրաստուենք այս բոլոր փորձանքներին. մենք պիտի ընտրենք մի այնպիսի մարդ, որ նախ օրէնքները իմանար և երկրորդ, որ քա-

ղաքում ունենար բարեկամ ռուս աստիճանաւորներ, այսպիսով մենք կը կարողանանք մի բան չինել. իսկ ես միայն մէկին եմ ճանաչում, որ համապատասխանում է այս բոլորին. դա աղա Սարգիսն է. կ՚ընտրէ՞ք նրան, թէ ոչ. տուէ՛ք պատասխան, եթէ կամենում է՛ք որ ձեր երիտասարդները, ձեր սիրելի որդիքը և եղբայրները միան ձեզ մօտ և չգնան զինուոր։ Ընտրեցէ՛ք աղա Սարգսին, եթէ ոչ—ասացէ՛ք մի ուրիշի անունը—դէ...

—Թող Սարգիսը մնայ... թող մնայ, կանչեց ամբոխը միաբերան։

—Ուրեմն ընտրում է՛ք։

—Այո՛... այո...

—Ես կը հրամայեմ վաւերացնել ձեր ընտրութիւնը։

—Հրամայիր... մենք համաձայն ենք։

Սեղանին մօտեցաւ գիւղական վարչութեան քարտուղարը, մի ծառայութիւնից վռնդած ռուս ստորին, միշտ կիսահարբած զինուորական։

Մի րոպէից նրա ձեռը թռչում էր թղթի վերայով, ուր նա արձանագրում էր ժողովի ընտրութիւնը։

Սարգիսը կրկին ընտրուեցաւ Մեծ-Ղարա...սա գիւղի տանուտէր երեք տարի ժամանակամիջոցով։

Հանդիսականները խումբ խումբ մօտենում էին նրան, շնորհաւորում և դիմում «ղաբաղջի» Ղուկասի հիւրընկալ գինետունը, ուր առհասարակ վերջնականապէս աւարտվում էր ամեն մի ընտրութիւն։

Ծերունի Գրիգորը չմօտեցաւ Սարգսին և շտապով դուրս եկաւ սենեակից։

Գէորգ Սանբէգեանցը զանդաղ դիմեց դէպի վարժատան դուռը։

Նրա մէջ արդէն վերջացել էր երկու հակառակ ոյժերի պատերազմը. ամեն ինչ թմրել էր երիտասարդ

հոգու մէջ. Նա գտնվում էր այն տրամադրութեան մէջ, երբ ամեն ինչ կարծես մոռացվում է և փաստերը, երևոյթները և տպաւորութիւնները փոփոխակի անցնում են մարդուս առաջից առանց մի որևէ ներգործութեան, չթողնելով ոչ մի միտք ոչ նրա ուղեղում, ոչ սրտում։

Միայն մի նախադասութիւն կարծես մեխուած լինէր նրա գլխում, այդ նախադասութիւնը չէր թողնում, չէր հեռանում նրանից, նա տանջում էր նրան ժողովում. նա տանջում էր նրան և այժմս. նա հնչում էր նրա ականջում. նա գրուած էր հրեղէն տառերով նրա աչքերի առաջ, ամեն տեղ, առաստաղում, գետնի վերայ, հանդիսականների երեսներում, ամեն տեղ։

—«Հացի խնդիր, հացի խնդիր»—գոռում էր օդը.—«Հացի խնդիր, հացի խնդիր» —իբրև արձագանք լըսվում էր ամեն տեղից.—«Հացի խնդիր, հացի խնդիր—կրկնում էր և ինքը Սանրէգեանցը։

Զ.

Վերոյիշեալ դէպքից անցել էր մի շաբաթ։

Տէր-Եսայու տան պատուհանները չնայելով, որ ծածկած էին, այնուամենայնիւ հիւրերի մի ստուար բազմութիւն այդ օրը հիւրասիրվում էր առհասարակ անհիւրասէր տէր հօրից։

Այդտեղ էին Մահտեսի-Սարգիսը, Մեծ-Ղարա...սա գիւղի տանուտէրը, «ղաբաղչի» Ղուկասը իւր ընտանիքով և մի տասն կամ տասնհինգ հոգի Սարգսի կողմնակից գիւղացիներից։

Գլորաձև «տրապէզ»-ի *) շուրջը նստած, նրանք արդէն վերջացրել էին ճաշը և սկսում էին Բաքոսի զոհաբերութեան սրբագործութիւնը։

*) Սեղան։

Արաղը և գինին չէչ չէչ դարսած էին սեղանի վերայ։ Բաժակները մի առ մի պարապվում էին և նորից լցվում. հիւրերի երեսները կարմրած էին. ամեն տեղից լսվում էր բարձրաձայն ծիծաղ, գոռում գոչում...

Կանայք զատուած էին այր մարդիկներից և շրջապատել էին մրգեղէնների, կաղինի, «հալվայ»-ի և մուրապայի սեղանը։ Այստեղ խօսակցութիւնը և հասարակութեան տրամադրութիւնը մի քանի աստիճանով ցած էր քան տղա-մարդիկների բաժնում. այստեղ խօսում էին ճիշտ կանացի խնդիրների, նորութիւնների, չորերի մասին և ժամանակ առ ժամանակ ծամում էին բացակայ բարեկամների միսը։

—Դէ, տէր-հօր կենացը, տղէրք, ապա տեսնենք, բարձրացաւ տեղից բաժակը ձեռին տանուտէրը և հրաւիրեց հիւրերին։

—Տէր-հօր կենացը... տէր-հօր կենացը, լսուեցաւ ամեն կողմից։

—Շատ ապրէք, Աստուած ձեզ երկար կեանք տայ, բացականչեցին մի քանիսը։

Եւ բաժակները հետզհետէ պարպուեցան։ Տէր-Եսայեն բարձրացաւ տեղից, շնորհակալութիւն յայտնեց և դատարկեց իւր բաժակը։

—Ապա... մի երգ... տեսնենք... տէր պապա, դարձաւ նրան «ղաբաղչի» Ղուկասը։

—Հա... այդ լաւ ասացիր... մի երգ ասա, տէր-հայր... մի երգ...

Տէր-Եսայեն թոյլ չտուեց, որ խնդիրքը կրկնուի, սըրբեց բերանը, մի քանի անգամ ակամայ հազաց և սկսեց.

«Առաւօտ լուսոյ
Արեգակն արդար
Առ իս լոյս ծագեա»։

Լսուեցաւ նրա ճաթման՝ մի քիչ խռպոտ ձայնը։

Ամբոխը ուշադրութեամբ լսում էր նրան.

—Չէ... չէ... այս հարկաւոր չէ... գիտէք... այն միւսը... թագաւորի մասին, ընդհատեց մէկը, որին աւելի էր սիրել այդ րոպէին Բաքոսի չաստուածը։

Տէր-հայրը, որ արդէն սկսել էր ապշել և հիանալ իւր սեպհական ձայնի ելևէջերով, անբաւական կերպով ընդհատեց երգը, նայեց յանդուգն գիւղացու վերայ և սկսեց.

«Մեզնից շատ առաջ
Կար մի թագաւոր,
Հոգւով դեռ արի
Գըլխով ալեոր...»

—Կեցցէ տէր-հայրը... ես նրա հոգուն մեռնեմ, մէջ մտաւ Բաքոսի սիրելին և քաշուեց դէպի Տէր-Եսային և ականերև ցանկութիւնով համբուրեց նրա աջը։

Գինու շիշը գլորուեց գետին։

Տէր Եսային կամաց-կամաց համբուրուեց նրա հետ և ամեն ինչ կրկին կարգի եկաւ, մի այնպիսի կարգի, որպիսին կարելի էր պահանջել մի արբած, գիւղական հասարակութեան կողմից։

Հիւրերի գլուխները ծանրացել էին։

—Է՛հ, փառք Աստուծոյ, փառք Աստուծոյ... հասար «մուրազ»-իդ *), Սարգիս-ջան, դարձաւ քահանան տանուտէրին։

—Հա... գոհանամ Աստուծոյ... ձեզանից պիտի շնորհակալ լինիմ...

—Ի՞նչ... ես ինչ եմ արել... մի տղայական պարզամտութեամբ նկատեց Տէր-Եսային և նայեց իւր շուրջը։

—Չէ... այդպէս չասէք... դուք շատ օգնեցիք... եթէ

*) Իղձ, ցանկութիւն։

դուք չլինէիք՝ անիծեալ Գրիգորը ամեն ինչ տակն ու վերայ կանէր։

—Ի հարկէ... ճշմարիտ է... լսուեցաւ սեղանի ծայրից։

—Մենք շատ շնորհակալ ենք ձեզանից, տէր հայր... մենք չենք մոռանալ։

—Ոչինչ... ոչինչ... չարժէ... ես լաւ, պատուական մարդիկներին միշտ պատրաստ եմ օգնելու, միայն թէ ինձ էլ խեղճիս չմոռանան ու օգնեն... այնպէս չէ՞... դէ, ուրեմն խմենք աղա Սարգսի թանկագին կենացը։

Եւ քահանայի ձեռի բաժակը բարձրացաւ դէպի վեր։

—Սարգսի կենացը... ուռա՜, լսվում էր ամեն կողմից։

Աղաղակը այնքան բարձրաձայն էր, որ միւս սենեակի դռները բացուեցան և ներս թափուեցան կանայք։

—Հա... լաւ արիք, որ եկաք... մօտեցէք... դարձաւ նրանց Ղուկասը։

—Դու էլ միշտ բաներ ես մոգոնում... ինչ ես ուզում մեզնից, նկատեց նրա կինը մի անբաւական ձայնով։

Ղուկասը չպատասխանեց նրան և դարձաւ մի դեռ շատ երիտասարդ գիւղացու. որ եկեղեցում կատարում էր դպրի պաշտօնը։

—Ծօ... Ծերօն... ապա տեսնենք... իմ սիրած երգս։

Ծերօնը նայեց Տէր-Եսայու երեսին։

—Ոչինչ... երգիր, թոյլատրեց տէր հայրը։

«Հայոց աղջկներ... եր... եր
Ձեր հոգուն մատաղ... ա՛ղ... աղ։

Սկսեց Ծերօնը մի անմշակ, բայց գեղեցիկ, աղդու ձայնով։

Ժամանակը անցնում էր։

Սեղանի վերայ դարսած էր պարապ շիշերի մի շարք։

Տէր-Եսայու հիւրերու երեսը արդէն կարմրել էր։ Բաքոսի սիրելին արդէն գլուխը կախ սկսում էր նիրհել։

ժամանակ առ ժամանակ լսվում էին բարձրաձայն ծիծաղ, հայհոյանք և զանազան մարգատաչար ֆրազներ։

Գիշերը վերայ հասաւ։

Կամաց կամաց ամպերի տակից երեաց լուսինը, մի առ մի սկսեցին փայլել աստղերը և ամեն ինչ մի քանի րոպէից ներկուեցաւ մի արծաթափայլ կաթնագոյն լոյսով։

Ժամը 1-էր, երբ ցրուեցան Տէր-Նասյու հիւրերը։

Է.

Ծերունի Գրիգորի խիղճը այդ քանի օրերը չունէր րոպէական անգամ հանգիստ։ Նա չէր կարող ներել իրեն, ներել Նրա համար, որ թոյլ տուեց կրկին տանուտէր ընտրելու Մահտեսի-Սարգսին։ Ժամանակ առ ժամանակ Նրա մտքով անցնում էր մինչև անգամ, թէ արդեօք աւելի լաւ չէր լինի, եթէ Սանբէգեանցը պարզէր գիւղական հասարակութեանը Սարգսի բարքն ու վարքը. կարելի է այդպիսով նա կը կարողանար ստեղծել մի հակառակ կուսակցութիւն, որ կ'ընտրէր մի ուրիշին։

Այո, այդ միտքը երբեմն անցնում էր ծերունի Գրիգորի ուղեղով, բայց չգտնելով ոչ մի քիչ թէ շատ հաւանական բացատրութիւն, նա այսպէս էլ մնում էր իբրև լոկ միտք և չէր կերպարանափոխվում կենդանի խօսքերի։

Բայց ամենից շատ Գրիգորը բարկացած էր Տէր-Նասյու վերայ, Նրա խարդախ վարմունքի պատճառով։

—Այդ անիծածը կատարեալ Յուդայ է, կրկնում էր նա ինքն իրեն, նա այնպէս ցոյց էր տալիս գիւղացիների առաջ, կարծես Նրանց օգուտը գերադասում էր իւր անձնական, ստոր շահերից և ինչպէս գիտէ նա

ծածկել իւր խարդախ մտքերը և դառնալ անմեղ գառն... ծծ... անիծած սատանայ։

Եւ Գրիգորի լայն, մեծ ճակատի վերայ հաւաքվում էին փոքրիկ, միմեանց հետ փաթաթուող կնճիռներ. դրանք ծերունու բարկութեան ամենանկատելի նշաններն էին։

Մարդկային հոգին և սիրտը, ինչպէս և ամեն ինչ բնութեան մէջ, ունին իրենց օրէնքները։

Կան րոպէներ, երբ մարդս մի որ և իցէ բերկրութիւն է զգում անձնական, կամաւոր տանջանքների մէջ։

Նա գիտակցաբար խոցոտում է իւր ցաւերը, իւր վշտերը և դրանում գտնում է մի մոռացութիւն, մի երջանկութիւն անգամ։

Այդ իսկ հոգեկան տրամադրութեան մէջ գտնվում էր և Գրիգորը։

Չկարողանալով ներել ինքն իրեն, ծերունին շարունակում էր մտրակել իւր «ես»-ը։

—Խեղճ գիւղացի, շարունակում էր մտածել նա, ոչ միայն քեզ չէ խաբում, չէ կողոպտում. տանուտէրդ ծծում է քո արիւնդ. վաշխառու վաճառականը գալով քաղաքից, կանխիկ տալիս է քեզ մի չնչին գումար և գնում է դեռ արտում գտնուող ցորենդ, քո դառն աշխատանքի, քո քրտնքի արդասիքը. անցնում է մի քանի ժամանակ, վաճառականի փողը մսխվում է քո կենսական պահանջներիդ վերայ և մասամբ էլ մնում է գինետան մէջ և դու կրկին մնում ես առանց փողի, առանց ցորենի... խեղճ... խեղճ գիւղացի։

Եւ ծերունի Գրիգորի աչքերը ստանում էին աւելի լուրջ, աւելի խիստ արտայայտութիւն։

Այդ բաւական չէ, շարունակում էր նա հիւսել իւր մտքերի կապը, այդ բաւական չէ և ահա եկել է Նոր հրաման Ն... քաղաքից, թէ 1872-ից սկսուած, այսինքն

միւս տարուց, պէտք է զինուոր առնեն մեզանից էլ… հայերիցս էլ. այսպիսով քո վիճակը աւելի դառնացաւ… երիտասարդները կը գնան զինուոր և արտերի, վար ու ցանքը աշխատութիւնը կը մնայ հալ ու մաշ ծերերի վերայ… ի՞նչ կարող են անել նրանք… արտերը կը մնան անմշակ… կը սկսուի սովը, հարկերը կը մնան նոյն քանակութեամբ և գիւղը պարտքերի և ապառիկների ծանրութեան տակ կը դառնայ աւերակ… այո… ամայի աւերակ։

Եւ այդ «աւերակ» բառը կարծես խոցոտում էր Գրիգորի սիրտը և նա կամաց, կարծես գտնելով մի որևէ հաճութիւն այդ ցաւերի մէջ անդադար շարունակում էր կրկնել «աւերակ» բառը…

Այս մտքերն էին, որ զբաղեցնում էին ծերունի Գրիգորին, երբ ներս մտաւ Սանրբէգեանցը։ Նա մօտեցաւ Գրիգորին, մեկնեց իր ձեռը և դիտելով նրա տխրադէմ, լուրջ երեսը, լուռ նստաւ նրա մօտ։

Մի քանի րոպէ անցան լռութեան մէջ։

—Ի՞նչ ես էլի մտածում, դարձաւ վերջապէս Սանրբէգեանցը Գրիգորին։

—Ոչինչ… ուրախանում եմ, հեգնօրէն նկատեց վերջինը։

—Ուրախանո՞ւմ ես… այդ չէ երևում…

—Է՛հ… ի՞նչ ասեմ… ո՞ր կողմը նայես, ամեն տեղ էլ ոչ մի մխիթարական բան չես տեսնիլ… Սարգիսը տանուտէր… զինուորագրութիւն… Տէր-Եսային… ո՞րը ասեմ…

Եւ Գրիգորի հայեացքը կարծես մխուեց Սանրբէգեանցի երեսին։

—Ի՞նչ արած… եթէ մեր ձեռքում լինէր դրա հնարը, ի հարկէ մի ճար կանէինք, բայց արի տես որ մենք անզօր ենք, բոլորովին անզօր…

—Չէ… անզօր չենք… այլ կամք չունինք, ցանկութիւն… չենք ուզում մի քիչ աշխատելու վտանգի ձգել մեր անձնական հանգստութիւնը… մեր հօսը… բարկացած նկատեց Գրիգորը և սկսեց քայլել անկիւնից անկիւն։

Սանրբէգեանցը կարմրեց։

Նա կարծեց, որ այդ վերջի կծու հեգնական խօսքերը վերաբերում են իրեն։

—Ի՞նչ ես կամենում ասել, հարցրեց նա։

—Ի՞նչ… մի՞թէ չե՞ս հասկանում… եթէ մենք ունենայինք կամք, մենք կարող էինք ընտրել ուրիշին. եթէ մենք ունենայինք ցանկութիւն աշխատելու հասարակութեան օգտին, մենք խնդիր կտայինք Էջմիածին Տէր-Եսայու արարքների, նրա հաս և չհասի խարդախութիւնների մասին։ Բայց մենք լռում ենք, լռում ենք իբրև ստրուկ… և դու դեռ հարցնում ես էլ…

Գրիգորը շարժեց գլուխը։

—Ուրեմն քո առարկութիւններդ ինձ էլ են հասնում, մինչդեռ ինքդ էիր, որ չթողիր ժողովում խօսել, նկատեց Սանրբէգեանցը։

—Ո՛չ. ես քո մասին չեմ խօսում… քո դրութիւնդ ներում է քո անգործութիւնդ… իսկ ես… ես և ինձ նման շատերը… ի՞նչ ենք անում մենք… ոչինչ և ոչինչ։

Եւ նրա ալեզարդ գլուխը տխուր խոնարհեցաւ ցած։

Սանրբէգեանցը լուռ էր։

Իրաւ է նրա ասածը, իրաւ, անցնում էր Սանրբէգեանցի մտքով, անգործութիւն… ա՜հ… ի՞նչ անտանելի բառ է… անգործութիւն…

Սենեակում տիրեց լռութիւն։

Բակից հասաւ մի բարձրաձայն, ուրախ, երիտասարդական քրքիջ։

—Հա՜... հա... հա... տեսէք... ի՜նչ գեղեցիկ է կարօն... հա՜... հա... հա...

Ծիծաղողը Գրիգորի միակ 18 տարեկան Մաշուկ աղջիկն էր։

Այդ ո՞ւր ես այդպէս ներկել քեզ... հա՜... հա... հա... շարունակում էր նա ծիծաղել։

Մի րոպէից Մաշուկը մտաւ ներս։

Գրիգորը բարձրացրեց գլուխը և նայեց նրա երեսին. Մաշուկի ձայնը կտրուեց։

—Ի՞նչ ես հարայ-հուրայ տալիս, նկատեց Գրիգորը։

—Ոչինչ։

—Ինչպէս թէ ոչինչ... ասա...

—Մեր կարօն... բոլորովին ալիւրոտ է... այնպէս ծիծաղելի է դառել։

—Ո՞ւր է նա։

—Բակում... ձու է բերել մեզ համար։

—Կանչիր ներս, ինքդ էլ վերջացրու ծիծաղդ... ամօթ է...

Մաշուկը կարմրեց, գլուխ տուեց և հազիւ լսելի քայլերով դուրս եկաւ սենեակից։

Նրան կարելի չէր անուանել գեղեցկուհի, ոչ. դրա համար նա ունէր շատ և շատ պակասութիւններ, բայց այնուամենայնիւ նրա ամբողջ կազմուածքի, նրա երեսի գծագրութեան մէջ երևան էր գալիս մի այնպիսի համակրական բան, մի այնպիսի պարզ, անկեղծ, անմեղ արտայայտութիւն, որ ակամայ քարշում, հրապուրում էր դիտողին։ Երկար սև մազերը օղակաձև գանգուրներով ընկնում էին նրա ուսերի վերայ. կարմրագոյն, վարդի նման թշերը տալիս էին մի գեղեցիկ տեսք նրա սպիտակ, մի քիչ նիհար երեսին. իսկ սև, մեծ, գլորակ աչ-

քերը վառվում էին խիտ լայն յօնքերի տակից հազիւ նկատելի կրակի պայծառ ցոլքով։

Երկարահասակ, կանոնաւոր կազմուածքով, նա ներկայացնում էր գիւղական գեղեցկուհու տիպարը։

Նրա հագուստը լրացնում էր նրա արտաքին փայլը։

Կարմիր, մահուդից շինած ոսկեհուռ «ֆէսը» գեղեցիկ նստում էր նրա փոքրիկ գլորիկ ճակատով գլխի վերայ և անդադար շլկշլկացնում էր իւր շուրջը կարած ոսկի «տերտիպլիկներ»-ով. *) անթև, կապոյտ վերնազգեստը, որ նաշխած էր սպիտակ թաւշեայ թելերով, շրջապատելով նրա նեղ նազուկ իրանը, ընկնում էր ցած անհամար, փրփրուն ծալքերով, կարմիր կաշուց շինած հողաթափները հագած էին նրա փոքրիկ ոտերի վերայ և դուրս էին ցցվում իրենց երկայն, սրածայր քթերով։

Այդ հագուստի մէջ Մաշուկը հրապուրիչ էր և նա կարող էր գիւղում համարել մի քանի երիտասարդներ, որոնք ուրախութեամբ կանուանէին նրան իրենց կին։

Մաշուկը, որին առհասարակ կանչում էին Մաշօ, մօտեցաւ կարօյին և մի անբաւական ձայնով նկատեց։

Միշտ քեզ համար ինձ նկատողութիւն են անում... կարօ... և նայելով նրա ալիւրոտած հագուստին ու երեսին, նա չկարողացաւ շարունակել իւր ծանրակշիռ յանդիմանութիւնը և կրկին բարձրաձայն ծիծաղեց։ Կարօն նոյնպէս ծիծաղում էր։

—Դէ՜... գնա, հայրս քեզ է կանչում։

—Ի՞նչ կայ։

—Ես ի՞նչ գիտեմ—գնա.

Եւ Մաշօն բարձրացնելով գետնից ձուերով լի զամ-

---

*) Ոսկի փողեր։

բուղը դիմեց տան երկրորդ բաժինը, որ կատարում էր պահարանի դեր։

Կարօն երկար նայեց նրա ետևից, նրա ծառի նման տատանուող մէջքին և երբ Մաշօն անհետացաւ տան չէմքում, նա մտաւ Գրիգորի սենեակը, համբուրեց ծերունու ձեռը, բարևեց Սանբէգեանցին և կանգնեց դրան մօտ։

Կարօն Գրիգորի ամենամօտ բարեկամի որդին էր, որ իւր հօր մահից յետոյ ծերունուց իբրև որդեգիր էր ընդունուել։

—Նստիր, կարօ... ինչ կայ... ասա տեսնեմ։

—Ոչինչ։

—Հայը ինչպէս է։

—Փառք Աստուծոյ... լաւ է... միայն թէ կարողանայինք անանձրև ժողովել նրան։

—Հա... իսկ գարին։

—Ոչինչ... լաւ է։

—Փառք Աստուծոյ, ուրեմն։

Գրիգորը լռեց։

Երկտասարդներից ոչ մէկը չէր խօսում։

—Մայրդ առողջ է, սկսեց կրկին Գրիգորը։

—Առողջ է...

Լռութիւնը կրկին տիրեց սենեակում։

Երևում էր, որ Գրիգորը կամենում էր մի բան հաղորդել կարօյին, բայց չէր վստահանում և հարևանցօրէն հարցնում էր ուրիշ առարկաների մասին։

—Լսել ես, կարօ, վերջապէս նկատեց նա։

—Ի՞նչ։

—Լսե՞լ ես... Ն... հրաման է եկել։

—Ի՞նչ հրաման։

—Հրաման, որ այս տարուց սկսած մեզանից էլ զինուոր են առնելու... լսե՞լ ես։

Կարօն մնաց շշկլուած։

—Ինչպէ՞ս... թէ զինուոր...

—Զինուոր էլի... պիտի ծառայենք թագաւորին։

Կարօն աշխատում էր մարսել այդ միտքը և ըստ երևոյթին չէր կարողանում։

—Հէ՛ր... ինչ կասես։

—Ի՛նչ ասեմ... վերջապէս շշնջաց Կարօն մի տխուր ձայնով, երևի այդպէս է հարկաւոր, թագաւորը մեզանից լաւ գիտէ։

—Ի՛նչ խօսք... բայց դու զինուոր կը գնա՞ս։

—Կը գնամ... ինչ կայ... եթէ առնեն՝ կը գնամ։ կրկնեց նա երկու անգամ կարծես կամենալով սիրտ տալ իրեն։

—Ախր, դժուար է ծառայութիւնը, որդեակ, դու դեռ չգիտես։

—Ի՞նչ արած... ոչինչ, որ դժուար է։

—Իսկ մօրդ ինչպէս կը թողնես մենակ։

Այդ հարցը երևի դեռ չէր ծագել Կարօյի ուղեղում. նա կարմրեց, շփոթուեց և չգտնելով ոչ մի պատասխան, դարձրեց իւր երեսը Գրիգորի քննող հայեացքից։ Նրա աչքերը լցուել էին արտասուքով։

—Հէ՛ր... մօրդ ինչպէս կը թողնես, կրկնեց իւր հարցը Գրիգորը։

Նա կարծես վճռել էր տանջել Կարօյին։

—Մօ՞րս... մօրս ձեզ կը թողնեմ, հազիւ արտասանեց նա և արտասուքի հեղեղը ցայտեց նրա աչքերից։

Նա թևով սրբեց նրանց և վերկացաւ տեղից։

Հեծկլտանքը խեղդում էր նրան։

—Ամօթ է, կարօ ջան, ամօթ է, դեռ կարելի է մնաս, ինչի ես կնոջ նման լալիս։

Կարօն որոնում էր գլխարկը։

Սանրէգեանցը լուռ դիտում էր այդ յաղթանդամ, արևառ. երեսով, երկարահասակ, գեղեցիկ երիտասարդին, որ այդ տղայական պարզութեամբ ցոյց էր տալիս ուրիշների առաջ իւր ցաւերը, իւր արտասուքը և չէր աշխատում ծածկել իւր հոգեկան դրութիւնը։

—Բնութեան պարզ որդիք, անցաւ նրա մտքով։

Տէրունի Գրիգորը կանչեց Մաչօյին։

Երբ վերջինը մտաւ ներս, նրա միշտ վազվզող աչքերը իսկոյն ընկան Կարօյի երեսին։

—Ի՞նչ է, հայրիկ։

—Սեղանը ձգիր... ճաշը պատրաստ է։

—Այո։

—Ասա մօրդ, թող գայ... ճաշենք։

Կարօն մօտեցաւ Գրիգորին և համբուրեց նրա ձեռը։

—Ո՞ւր... կաց ճաշելու...

—Ոչ։

—Կաց... դէ... ո՞ւր ես գնում։

—Ոչ... մայրս սպասում է ինձ։

Տալով իւր հրաժարականը Սանրէգեանցին, Կարօն դուրս եկաւ սենեակից Մաչօյի հետ։

Սրահում Մաչօն դարձաւ նրան.

—Ի՞նչ պատահեց, հարցրեց նա մի անհանգիստ ձայնով։

—Ոչինչ։

—Ասա... Կարօ... ասա։

Մաչօյի ձեռները փաթաթուեցան նրա վզով։

Կարօն կարծես սպասում էր դրան։

Արտասունքները կրկին փայլեցին նրա աչքերում և թրջեցին Մաչօյի ձեռները։

—Ասա .. սիրելիս... ասա,

—Զինուոր պիտի առնեն։

—Ի՞նչ զինուոր... ո՞ւմ։

—Զինուոր, ինձ։

—Քեզ, հարցրեց Մաչօն մի ճնշուած ձայնով։

—Հա... ինձ... ուրիշներին էլ՝

—Ոչ... ոչ դու կը մնաս, սիրելիս, դու չես երթալ։

Կարօն յուսահատ շարժեց գլուխը։

—Այնպէս չէ՞... կը մնաս... այո՞։

—Ես ինչ գիտեմ... ոչ... կերթամ... մնաս բարև... Մաչօ... մնաս բարև, սիրելիս...

Եւ նրանց շրթունքները միաւորուեցան մի անվերջ, կրակոտ համբոյրներով։

Կարծես ամբողջ աշխարհը անկարող էր բաժանել այդ երկու միմեանց սուրբ երիտասարդական սիրով սիրող էակներին։

Անցաւ մի րոպէ։

Կարօն դուրս եկաւ բակը, թամբեց ձին և մի ակնթարթում անհետացաւ Մաչօյի աչքից։

իսկ նա կանգնած դեռ երկար նայում էր նրա ետևից։

Ը.

Կարօյի խօսքերը չփոթեցին Մաչօյի մինչ այդ խաղաղ, անվրդով, երջանիկ հոգեկան աշխարհը. Նրա մըտաւոր և բարոյական հորիզոնում երևաց մի մութ կէտ, մի ստուեր, որ իբրև հարց պահանջում էր իւր լուծումը, իսկ Մաչօն անկարող էր տալ պահանջուած լուծումը, և այդ իսկ անկարողութեան պատճառով նա բարոյապէս տանջվում, մաշվում էր. Նա աշխատում էր բացատրել իրեն տանջող երևոյթը, քննել նրան այսպէս կամ այնպէս, բայց վերջ ի վերջոյ կրկին չէր հասնում ոչ մի քիչ թէ շատ հաւանական եզրակացութեան և կրկին չմարսած մտքերի, անկապ, միշտ փոփոխուող երևոյթների, տպաւո-

րութիւնների և փաստերի խաօսը տիրում էր նրա ուղեղին. Նա աշխատում էր վերջապէս չմտածել այդ մասին, հեռացնել իրենից այդ միտքը, բայց կրկին նա գտնվում էր անզօր, կրկին այդ մութ կէտը պարզ երևան էր գալիս նրա առաջ։ Մաչօն վճռեց տեսնել կարօյին և նրանից խնդրել որ և է բացատրութիւն։

Այդ վճիռը կարծես մի քիչ հանգստացրեց նրան. Նա վերցրեց սեղանից իւր ձեռագործը և սկսեց սպասել մութը հասնելուն։

Ծերունի Գրիգորը տանը չէր, իսկ Մաչօյի մայրը—Շուշանը զբաղուած էր տնային գործերով, նա պատրաստութիւններ էր տեսնում ընթրիքի համար, այնպէս որ, ոչ ոք չէր խանգարում Մաչօյի առանձնութիւնը։

Դրսում սկսել էր արդէն մթնել, երբ Շուշանը աւարտեց իւր գործը և յայտնելով Մաչօյին, որ գնում է Սանբէգեանցի մօտ տեսութեան՝ մեկնեցաւ տնից։

Մաչօն մնաց մենակ։

Նա գիտութեամբ չէր վառում սեղանի վերայ դրուած նաւթային լապտերը։

Սենեակի մէջ տիրող խաւարը մի տարօրինակ, տխրեցուցիչ կերպով ներգործում էր նրա վերայ։

Այդ խաւարը իւր գերեզմանական լռութեամբ համապատասխանում էր Մաչօյի հոգեկան դրութեանը։ Անցաւ մի տասն րոպէ։

Մաչօն բացեց պատուհանը և ինքը դուրս եկաւ սրահ, որ նայում էր դէպի բակը։

Երկնքում տեղ տեղ սկսել էին փայլել աստղերը։

Լուսնեակը դեռ չէր երևում։

Գիւղի փողոցներից հասնում էր նրա ականջին արտերից վերադարձող կովերի և գոմէշների երկարատև բառաչումը։ Շները անդադար հաջում էին։

Օդը խառնուել էր խրճիթների երդիկներից բարձրացող թանձր ծուխի գոլորշիների հետ։

Ահա եկաւ և Մաչօյենց կովը։

Մաչօն սկսեց կթել։

Աւելի մթնեց։

Գլորակ, ոսկեփայլ լուսնեակը ազատուելով իւր ամպային քօղից, դուրս եկաւ պարզ կապուտակ երկնքում և լուսաւորեց բնութիւնը իւր մեղմ կաթնագոյն լոյսով։

Գիւղը պատրաստվում էր գիշերային քնի։

Ամեն ինչ լուռ էր։

Բակի ցանկի ետևը երևաց մի ստուեր։

Մաչօն նկատեց այդ։

Ստուերը—կարօյինն էր։

Նա զգուշութեամբ մօտեցաւ սրահին, ցածր ձայն տուեց և բռնելով Մաչօյի ձեռքից, սկսեց դիտել նրա երեսը։

Երկուսն էլ լուռ էին։

Նոյն հոգեկան տրամադրութեան տակ ճնշվում էր և կարօն։

Նոյն հարցերը մաշում էին և նրան, նոյն երկբայութիւնները, նոյն անյայտ, մթին և անորոշ ապագայի հարցը մղեց նրան դէպի Մաչօն։

Նա պէտք ունէր խօսելու, խոստովանելու։

Այդ նրա հոգեկան պահանջն էր։

Մաչօն քնքշաբար փայփայում էր նրա սև, խիտ մազերը։

—Դէ... ինչպէս ես, վերջապէս հարցրեց կարօն։

—Ինձ ինչ է պատահել, որ վատ լինեմ, այ դու ինչպէս ես, պատասխանեց տխրաձայն Մաչօն։

Կարօն լուռ էր։

—Է՛հ, նկատեց Նա, պրծաւ էլի բանս... ամէն ինչ կորաւ։

—Ինչպէ՞ս թէ... ամէն ինչ..

—Ի՞նչ հապա... կառնեն զինուոր, կը քշեն Աստուած գիտէ ուր։

—Կարելի է չառնեն։

—Ինչպէս թէ չառնեն... խօ հրամանը եկած է։

—Հա, բայց...

—Ի՞նչ ուրեմն, ի հարկէ կառնեն։

Եւ Կարօյի աչքերում փայլեցին երկու խոշոր արտասուքի կաթիլներ, որոնք թրջելով նրա թշերը, ընկան Մաշօյի թեւի վերայ։

—Ինչի՞ ես լալիս, սիրելիս, Աստուած ողորմած է։

—Ողորմած է, կրկնեց տխուր ժպիտը բերնին Կարօն, ողորմած է, շատ ողորմած, որ այսպէս անխնայ տանջում է ինձ, հալածում է...

—Այդպէս չասես... Աստուծուց միթէ կարելի է անբաւական լինել... Մեղք է, մեղք, Կարօ ջան։

—Մեղք է... բայց մեղք չես դու, սիրելիս, ի՞նչ կլինի քո վիճակդ առանց ինձ... ում վերայ թողնեմ քեզ երբ զինուոր երթամ... քեզ ուրիշին կտան և ես... ես... այն ժամանակ... ես չգիտեմ ի՞նչ կը լինի, բայց... բայց...

Եւ Կարօն դողաց իւր ամբողջ, յաղթանդամ մարմնով։

Նրա աչքերը փայլեցին մի վատ, չար կրակով. երեւում էր, որ այդ պարզ բնութեան աւելի պարզ որդին սիրում էր Մաշօյին իւր անտաշ, կոպիտ, բայց զգայուն սրտի ամէն ուժերով. երեւում էր, որ Մաշօն նրա համար կեանքի և մահուան խնդիր էր։

Եւ այդ էր ահա, որ այնպէս շփոթում էր, մինչև անգամ վախեցնում էր նրան։

Նա չէր փախչում զինուորական ծանր ծառայութիւ-

նից. Նա պատրաստ էր տանել ամէն չարչարանքներ, ամէն նեղութիւններ, միայն թէ իրեն չբաժանէին Մաշօյից, միայն թէ տային իրեն մի առհաւատչեայ, որ Մաշօն իրենն է և չէ կարող ուրիշ ոչ ոքին պատկանել։

—Խեղճ գլուխդ ժողովիր... ինչեր ես դուրս տալիս. ամօթ չէ՞... ով կարող է ինձ առնել... ես ոչ ոքին չեմ գնալ, նկատեց անբաւական ձայնով Մաշօն։

—Չես գնալ—հեգնօրէն կրկնեց Կարօն, քեզ հարցնողը ով է... քեզ ակամայ մարդու կտան... ահա քո մօրեղբայրդ... քեզ չեն էլ հարցնիլ...

Եւ նա դարձրեց իւր երեսը նախ փողոց, ապա նայեց պլպլող աստղերին։

Գիշերը կախարդիչ էր։

Բնութիւնը կատարում էր իւր խորհրդաւոր, տօնային հանդէսը։

Նա հրապուրում էր դիտողին, նա քաշում էր դէպի իրեն, դէպի իւր պարզ, լայնածաւալ ծոցը իւր հրապուրիչ, զգացական գեղեցկութիւնով։

Օդը լցուած էր կանաչեղէնի և թարմ խոտի սուր բուրմունքներով. այդ օդը գրգռում էր մարդու հանգիստ դրութիւնը, արիւնը սկսում էր աւելի շուտ եռալ, ջղերը լարվում էին, գլուխը սկսում էր պտոյտ գալ...

Նոյնը պատահեց և Մաշօյին։

Նրան պաշարեց մի նոր, դեռ անծանօթ զգացմունք։

Նա այնպէս թեթև զգաց իրեն, որ կարծես այն րոպէին կարող էր թռչել հեռու, հեռու այստեղից։

Մի րոպէից այդ թեթևութիւնը անցաւ և նրա տեղը բռնեց մի ճնշող ծանրութիւն։ Նրա գլուխը այրվում էր։

Ականջներում մի ինչ որ սաստիկ խփում էր և այդ ցաւը արձագանք էր գտնում նրա ուղեղի մէջ։

Աչքերի առաջ հետզհետէ երևում էին կարմիր, կանաչ, դեղին շրջանակներ։

Շրթունքները և լեզուն ցամաքած էին։

Նա ծանր շնչում էր։

Կարօն բռնեց նրա իրանից և տարաւ մի մեծ, հին թթենիի մօտ, որի ստուերի տակ գտնվում էր մի նըստարան։

Լուսնեակի հետաքրքիր ճառագայթները չէին հասնում այստեղ. խաւարը ինքնակալ տիրում էր այս փոքրիկ անկիւնում։

Մաշօն անզօրացած նստաւ։

Կարօն մնաց կանգնած։

Նրանք լուռ էին։

Հեռուից, դրացի բակի ծառերի միջից լսվում էր մի երգ. դա սիրահար սոխակի ողբն էր։

Անցաւ մի քանի րոպէ, սոխակը լռեց և գիշերային խորհրդաւոր լռութեան մէջ յայտնի լսուեցաւ ջերմ, անկեղծ համբոյրների ձայնը։

Կարօն պինդ սեղմեց իւր գրկում Մաշօյին, լսուեցաւ բռնի խեղդուած հեծկլտանք...... և ամեն ինչ լռեց։

Սիրոյ Աստուածը քարշեց իւր թանձր քօղը այս տեսարանի վերայ։

Նա կատարում էր իւր զոհաբերութեան խորհրդաւոր արարողութիւնը։

Միայն ծեր թթենին էր ականատես պատահածին, բայց նա սուրբ պահեց Մաշօյի և Կարօյի գաղտնիքը......

Թ.

Անցաւ մի քանի շաբաթ և մօտեցան ամառնային վերջի օրերը։

Դաշտային պարապմունքների ամենատաք միջոցն էր։

Հունձը սպասում էր իւր հնձողին։

Ամբողջ Մեծ-Ղարա...սա գիւղը դադարկուել էր։

Կանայք և մարդիկ օր ու ցերեկ դաշտումն էին։

Ծերունի Գրիգորը նոյնպէս աշխատում էր. իսկ Մաշօն ծանր, ֆիզիքական աշխատանքի մէջ մի տեսակ մոռացութիւն էր որոնում։

Երբ յոգնած, քրտնքած նա մթին պառկում էր բացօթեայ անհամար աստղերով փայլող երկնքի տակ, իսկոյն նրա բաց աչքերի առաջ պատկերանում էր մի ուրիշ գիշեր, նոյնպէս լուսնեակ գիշեր, ուրիշ աստղեր, ուրիշ խօսքեր, ուրիշ դրութիւններ...

Ահա թթենին, ահա Կարօն, լսվում են համբոյրների ձայներն, ահա թթենու մեղմ, միակերպ սօսաւիւնը... այս ինչ է, մի՞թէ կրկին... Բայց ոչ, անցնում է մի րոպէ և կրկին երևան է գալիս արտը իւր անհուն տարածութեամբ, կրկին քամին սողալով անցնում է հացահատիկների վերայով և ալեկոծում է, շարժում է նրանց մակերեւոյթը և կրկին Մաշօյի վերայ իջնում է մի հանգիստ, անվրդով խաղաղութիւն. կրկին ամեն ինչ նրանում հանդարտվում է և մտքերն ու երկբայութիւնները և ապագայի հազար ու մի անյայտ անլուծելի խնդիրները։

Ֆիզիքական աշխատութիւնը յաղթում էր բարոյական մտաւոր շարժմանը։

Շուտ-շուտ նրան այցելում էր Կարօն, եր ժամ գալիս էր Սանրէգեանցը և այդպիսի րոպէներին ծերունի Գրիգորի ընտանիքը բոլորվում էր խարոյկի շուրջը և սկսում էին ուրախ, անհոգ զրոյցներ, կատակներ, երգեր...

Այդ ուրախութեան ժամերին Մաշօն ընկնում էր ինքնամոռացութեան մէջ և միանում էր ուրիշների ծիծաղին, կատակներին։

Ընթրիքից յետոյ Գրիգորը փայտը ձեռին սկսում էր

խառնել արդէն մարող խարոյկը և միևնոյն ժամանակ պատմել իւր պատմութիւնը. Նա նկարագրում էր ինչպէս գաղթել էին իրենք 40 տարի առաջ Ղրիմից, ինչ արկածներ է պատահել, ինչպէս ընդունել են նրանց 1779-ի գաղթականները, ինչ վէճեր, անբաւականութիւններ են ծագել հողի բաժանման ժամանակ և այլն։ Գրիգորը այդ փաստերի ականատեսն էր եղած։ Սանրէգեանցը ուշադրութեամբ լսում էր նրան և ստէպ ստէպ մի ինչ որ գրում էր իւր յիշատակարանի մէջ։

Նա կազմում էր հայերի գաղթականութեան պատմութիւնը։

Այդպիսի մի երեկոյ, երբ Գրիգորի ընտանիքի բոլոր անդամները շրջապատել էին ուրախ այրուող խարոյկը, նրանց մօտեցաւ Կարօն։

Նա դեռ չիջած ձիուց դարձաւ Գրիգորին և ասաց, որ տանուտէրը վաղը առաւօտ կանչում է նրան «պրավլենի» (գիւղական վարչութիւն)։

—Ի՞նչ կայ... չգիտես, Կարօ, հարցրեց Գրիգորը։

—Չէ... միայն ասաց, որ կանչեմ... գործ կայ, ասաց։

—Լաւ... այդ ինչ է ուզում ինձանից, ինքն իրեն նկատեց Գրիգորը և մի րոպէի ընդհատուած խօսակցութիւնը կրկին շարունակուեցաւ։

Կարօն դարձրեց յետ իւր ձին և մօտեցաւ Մաշօյին։

Վերջինը նստած էր խարոյկից հեռու և զբաղուած էր ընթրիքի մսի կտրատելով։

Կարօն մտրակով նրան նշանացի արեց։

Մաշօն վեր կացաւ տեղից և հետևեց նրան։ Երկուսն էլ կորան խաւարի մթութեան մէջ։

—Գիտես, Մաշօ ջան, ինչի՞ է կանչում Սարգիսը հօրդ, դարձաւ նա նրան իջնելով ձիուց։

—Չէ... ի՞նչ կայ...

—Ասում է, որ հօրդ վերայ քանի տարուայ ապառիկ թագաւորական հարկ կայ... ասում է հարկաւոր է վճարել։

—Ինչպէս թէ ապառիկ, երբ ամեն տարի հայրս տուել է այդ հարկը։

—Ա՛յ... գնա, խօսիր... ասում է թէ ոչ... 68, 69 և 70 թուականներին չէ տուած ասում է։

—Լաւ... ախր... ինչո՞վ վճարենք, երբ ոչ գարին է ծախուած, ոչ էլ ցորենը։

Տիրեց րոպէական լռութիւնը։

Կարօն ուղղում էր իւր ձիու թամքը։

—Չգիտեմ... ասում է անպատճառ... այլապէս ասում է կը ծախեմ եզները, ձին, կովերը և իրեն էլ բանտը կը ձգեմ։

Մաշօյի երեսով անցաւ մի տխուր ժպիտ։

—Շատ է դուրս տալիս պառաւ շունը, արտասանեց նա պինդ սեղմած ատամների միջով։

—Չէ... ախր հանաք չէ... խօ Սարգիսը քո հօր ամենաոխերիմ թշնամիներից մէկն է և ի հարկէ ամեն ջանք կը թափէ մի կերպ նրան վնասելու համար... այ բանը ինչումն է։

—Ուրեմն ինչպէս անենք որ...

Կարօն լուռ մտածում էր։

—Գիտես, Մաշօ... ես մի քիչ հաւաքած փող ունիմ... ես մտադիր էի այդ մեր հարսանիքին ծախսելու... բայց եթէ հարկաւոր լինի... ես... ուրախութեամբ...

Մաշօյի շնորհակալութեամբ լի հայեացքը ընկաւ Կարօյի վերայ։ Վերջինը պինդ սեղմեց նրա իրանը և քարշելով դէպի ինքը՝ համբուրեց նրան։

Մաշօն չէր ընդդիմանում։

—Ըրեւմն այդպէս... եթէ չհասնի ես մի կերպ կը ճարեմ մնացեալը։

—Կարելի է Սանբէգեանցը ունի, նկատեց միամիտ Մաչօն։

Կարօն ոչինչ չպատասխանեց։

Միմիայն մթութեան մէջ փայլեցին նրա աչքերը. այդ պատահում էր միշտ, երբ նա բարկանում էր։

Կարօն միշտ Սանբէգեանցի մէջ տեսնում էր իւր հակառակորդը. միատեղ միացած, նրանք խորդացան միմեանցից, հեռացան, այն իսկ օրից, երբ Սանբէգեանցը թողեց իւր հայրենի Մեծ-Ղարա...սան և մտաւ ճեմարան։

—Նա ուսումով է այժմս, կրկնում էր միշտ Կարօն. նա ինչ գործ ունի մեզ պէս կոպիտ, տգէտ գիւղացիների մօտ։

Իսկ Սանբէգեանցը ոչինչ առիթ չէր տուել այդպէս խօսելու. նա վարվում էր նրա հետ այնպէս, ինչպէս և առաջ, մտերիմ մանկութեան ժամանակ։

Բայց Կարօյի նախանձն էլ ունէր իւր հիմքը և պատճառը. Սանբէգեանցը և Մաչօն մեծացել էին միատեղ. մանկութեան խաղերը, ուրախութիւնները, և տխրութիւնները նրանք միշտ բաժանել էին իրենց մէջ հաւասարապէս։

Նրանք գիտէին միմեանց բնաւորութիւնը, ճաշակը, սովորութիւնները, նրանք սովոր էին միմեանց։

Գրիգորը վաղուց արդէն իւր մտքում գրել էր իւր Մաչօյին տալ Սանբէգեանցին։

Դեռ վերջինի հօր կենդանութեան ժամանակ քանիցս անգամ խօսուել էր այդ մասին և երկու մտերիմ բարեկամները միշտ մեծարում էին միմեանց «խնամի» անունով։

Սանբէգեանցը գիտէր այդ։

Նա ինքը ժամանակով յափշտակուած էր Մաչօյի հրապուրիչ գեղեցկութիւնով։

Բայց անցան տարիներ և նրա սէրը սառեց։

Դա ունէր իւր հիմնաւոր պատճառները։

Սանբէգեանցը տարիների ընթացքում հասարակ անտաշ գիւղացուց դարձաւ մի զարգացած մարդ. նրա մտաւոր աշխարհը լայնացաւ, նրա հայեացքները փոխուեցան, նրա պահանջները բազմացան։

Նա որոնում էր իւր ապագայ կնոջ մէջ իւր կեանքի ընկերուհին, իւր օգնականը, նոյնը, ինչ որ ինքն էր։

Նա ունէր իւր ստեղծած իդէալը։

Իսկ Մաչօն մնաց անզարգացած, անուս, անտաշ, նա չէր հասկանում Սանբէգեանցին և չէր կարող հասկացնել նրան իւր կարծածը, զգացածը. և երբ պատահում էր որ Սանբէգեանցը ոգեւորուած սկսում էր պատմել նրան կնոջ նշանակութիւնը և կոչումը, նրա իբրև մօր՝ պարտականութիւնները, նրա իրաւունքները, երբ մի խօսքով նա սկսում էր պարզաբանել հազար անգամ ծամծմուած կանանց հարցը, Մաչօն լայն բաց էր անում իւր սեւորակ աչքերը և տղայական պարզամտութեամբ նայում էր Սանբէգեանցի երեսին։ Վերջինի խօսքերը անցնում էին նրա ուղեղով՝ չթողնելով ոչ մի տպաւորութիւն այնտեղ և չգտնելով ոչ մի արձագանք նրա սրտում։ Ինչի՞ վերայ էր մտածում այդ րոպէներին Մաչօն—Աստուած գիտէր։

Սանբէգեանցը տեսնում էր այդ, բայց միևնոյն ժամանակ նա աշխատում էր զարգացնել Մաչօյին, լայնացնել որքան կարելի է նրա մտաւոր հորիզոնը, բայց ի զո՜ւր... նրա ջանքերը մնում էին անպտուղ, ապարդիւն և Մաչօն մնում էր իբրև ծառ, վայրենի, բայց գեղեցիկ բոյսի աճեցական կեանքով։

Այդ երեւոյթը սկզբից տանջում էր Սանբէգեանցին,

բայց վերջիվերջոյ նա եկաւ այն եզրակացութեան, որ այդ անկարելի է, որ գեղջկուհի Մաշօն մնալու է միշտ գեղջկուհի Մաշօ իւր նահապետական նոյնութեամբ։

—Եւ այդ կարծեմ աւելի լաւ է, մտածում էր նա ինքն իրեն, կարելի չէ կործանել մի մարդու պաշտած կուռքը, աստուածը և չտալ նրան մի ուրիշը... աւերակները կարող չեն տալ կենդանութիւն... Աստուած գիտէ, ինչ հողի վերայ կընկնեն իմ քարոզածներս... կը տան նրանք արդիւնք, կը ստացուի հունձ, թէ... ոչ։

Եւ այդ համոզմունքը օրէօր սաստկանում, զօրանում էր Սանրէզեանցի մէջ։ Կարօյի այժմեան լուռ և անտեղի բարկութեան պատճառը և չարժառիթը Սանրէզեանցն էր։

Նա Մաշօյի հարցին պատասխան չտուեց և նստելով ձին և սաստիկ մտրակելով նրան, անհետացաւ գիշերային խաւարի մէջ։ Երբ Մաշօն մօտեցաւ խարոյկին, Սանրէզեանցը արդէն գնացել էր. իսկ Գրիգորի ընտանիքը և վարձած օրական մշակները բարձրաձայն խնդմփացնում էին։ Խարոյկի մարող լոյսը արիւնաշաղախ գոյնով ներկում էր իւր շուրջը և երկար, սրածայր, ֆանտաստիկական ստուերներով խաղում էր քնածների արեւակէզ երեսների վերայ։

Մի րոպէից յետոյ պառկեց և Մաշօն։

Ժ.

Միւս առաւօտ ծերունի Գրիգորը փոխեց իւր ամենօրեայ շորերը աւելի նորերի և ուղևորուեցաւ դէպի գիւղի հրապարակը։ Նա գնում էր Մահտեսի Սարգսի հրամանով դէպի գիւղական վարչութիւնը։ Երբ Գրիգորը մտաւ այնտեղ, դեռ ոչ ոք չէր եկած. միայն ռուս-պահապանը յօրանջելով և ստէպ ստէպ խաչակնքելով իւր երեսը, սրբ-

բում էր սեղանների, աթոռների և պատերի մի մատաչափ փոշին։ Գրիգորը նայեց իւր շուրջը, ձգեց մի թռուցիկ հայեացք կայսեր պատկերի վերայ և հանելով իւր մորթէ գլխարկը, որ ծածկում էր նրա գլուխը ամբողջ տարին ամառը և ձմեռը, դուրս եկաւ սրահ. այնտեղ արդէն հաւաքուել էին մի քանի գիւղացիներ. դրանք խնդրատուներ էին։ Գրիգորը նրանց մէջ նկատեց Կարօյին և մօտեցաւ նրան.

—Ի՞նչ է, դու ինչ ես շինում այստեղ։

—Ոչինչ։

—Գործի ես եկել։

—Չէ։

—Հապա՞։

Այնպէս, ուզեցի իմանալ, թէ ինչո՞վ կը վերջանայ քո գործը։

—Ինչո՞վ կարող է վերջանալ... ես լաւ գիտեմ, որ ամեն տարի վճարել եմ պատկանեալ հարկը։

—Բայց ասում է թէ...

—Շատ բան է ասում, երևի կաշառք է ուզում... չէ... սխալուել է... ես այնպիսիներից չեմ։

Եւ Գրիգորը բարկացած նայեց իւր շուրջը։

Տան սանդուղքներով բարձրանում էր Մահտեսի-Սարգիսը իւր գրագրի հետ։

Խնդրատուները բարձրացան իրենց տեղերից և բարեւեցին նրան։

Սարգիսը հազիւ պատասխանեց նրանց բարևին։

Գրիգորը մնաց անշարժ։

Սարգսի հայեացքը հանդիպեցաւ նրա հայեացքին.

Նրանք լուռ բաժանուեցան միմեանցից։

Մի կէս ժամից Գրիգորին կանչեցին վարչութեան դահլիճը, որ տանտիրոջ ընդունարանի դերն էր կատա-

րում։ Այստեղ, Սարգիսը ցոյց տուեց մի հաստ մատեանի վերայ։

—Այստեղ չէ նշանակուած, թէ դու 68, 69 և 70 թուականների թագաւորական հարկերը վճարած ես, նկատեց Սարգիսը, չբարձրացնելով գլուխը մատեանից։

—Չգիտեմ... ես վճարել եմ, պատասխանեց Գրիգորը։

—Եթէ վճարած լինէիր, այստեղ գրուած կլինէր։

—Չգիտեմ ինչու չէ գրուած... բայց ես վճարել եմ։

—Լա՞ւ գիտես, որ վճարել ես։

—Լաւ գիտեմ, այո։

—Իսկ ես պարտական եմ նորից առնել այդ փողը քեզանից։

—Ինչի՞,

—Որովհետև ինձնից պահանջում են ապառիկները։

—Ես երկու անգամ վճարելու ոչ կարողութիւն ունիմ և ոչ էլ ցանկութիւն։

—Հարկը պէտք է վճարել այլապէս...

—Ի՞նչ այլապէս...

—Այլապէս մենք հարկադրուած կը ծախենք եզներդ, ձիդ, կովդ...

—Իսկ եթէ ես չտամ։

Եւ Գրիգորի երեսը ստացաւ մի լուրջ արտայայտութիւն, նրա աչքերը նայում էին խիստ և կրակոտ։

—Չտա՞ս... օ՛օ... մենք դեռ կը տեսնենք այդ։

—Կը տեսնենք... հա... կը տեսնենք...

—Ուրեմն դու մերժում ես մեր պահանջը։

—Ես կաշառք չեմ տալիս։

—Ինչպէս թէ կաշառք... դու խելքդ գլուխդ ժողովիր, այ Գրիգոր, վերջը վատ կը լինի։

Եւ Սարգիսը վեր կացաւ տեղիցը... նրա շրթունքները հազիւ նկատելի կերպով դողում էին։

—Ես չգիտեմ ինչ կը լինի... այդ դեռ կը տեսնենք, բայց ես կրկնում եմ իմ խօսքերս... ես վճարել եմ թագաւորական տուրքը և կաշառքներ չեմ տալիս։

—Լռի՛ր։

Եւ Մահտեսի-Սարգիսը մի քայլ մօտեցաւ Գրիգորին։ Վերջինը կարծես արձանացած լինէր. նա խաչաձև ծալել էր իւր ձեռքերը կրծքի վերայ և հեգնօրէն նայում էր Սարգսին։

—Գրագիր, արձանագրիր այս խօսքերը... կաշառք. կը տեսնենք ինչ կը պատասխանես հաշտարար դատաւորին... անպիտան։

—Նոյնը։

—Ի՞նչ։

—Կաշառակե՛ր։

Սարգսի համբերութիւնը հատաւ, նա կամենում էր յարձակուել Գրիգորի վերայ, բայց այդ րոպէին երկու զօրեղ ձեռքեր բռնեցին նրա ուսերից. դա գրագիրն էր, մի մարդ՝ որ ունէր անչափ ազդեցութիւն տանուտիրոջ վերայ։

—Դու կը փչացնես բանը... նստիր։

—Անիրաւ... պառաւ շուն, մրթմրթում էր ինքն իրեն Սարգիսը։

Կարօն մինչ այդ հանգիստ դիտում էր խօսակցութիւնը, բայց երբ վերջինը ստացաւ մի այդպէս սուր ուղղութիւն, նա մօտեցաւ Գրիգորին և համոզում էր վճարել։

—Ինչի՞ ախր, տուել եմ մի անգամ... նա իւր ոխն է ուզում հանել ինձանից, ես լաւ գիտեմ։

Կարօն ինքն էլ հասկանում էր այդ, բայց կամենում էր մի կերպ վերջ տալ այդ տգեղ անցքին։ Նրա ուղեղում ծագեց մի միտք, նա դարձաւ Գրիգորին և

առաջարկեց գնալ տուն. մի րոպէից նրանք մեկնեցան վարչութիւնից։

Նոյն գիշեր Կարօյին կարելի էր նկատել Սարգսի տան առաջ։ Նրանք մի ինչ որ բանի վերայ ցած ձայնով խօսում էին. Սարգիսը չէր համաձայնում. այն ժամանակ Կարօն հանեց իւր ծոցից մի փաթեթ և տուեց Սարգսին։ Վերջինս յանձնեց նրան մի թուղթ.—դա Սարգսի խնդրագիրն էր։ Կարօն ճղեց թուղթը և հեռացաւ Սարգսից։

Վերջինը սկսեց համարել փաթեթի մէջ գտնուող փողերը։

Այնտեղ 25 րուբլի էր։

Դա Կարօյի հարսանիքի փողերն էին։

ԺԱ.

Ծերունի Գրիգորը չիմացաւ Կարօյի արած զոհաբերութիւնը, նա այնպէս էր կարծում, որ Մահտեսի-Սարգիսը խելքի էր եկել և չէր կամեցել շարունակել իւր խարդախ վարմունքը. Կարօն էլ իւր կողմից ոչինչ չասաց Գրիգորին։ Միայն Մաշօն էր, որ գիտէր այդ. և Կարօն աւելի ևս բարձրացաւ նրա աչքում, դրանից յետոյ նա աւելի սիրեց նրան, սկսեց աւելի պաշտել։

Բայց Կարօն դեռ չէր կարողանում մոռանալ Սանբէգեանցին. նա կարծում էր, որ Մաշօն եթէ չէ սիրում, գոնէ պատւում է երիտասարդ ուսուցչին, համակրում է նրան. իսկ համակրանքը շատ հեշտ կարող է փոխուել սիրոյ և այն ժամանակ ամեն ինչ կորած էր, այո ամեն ինչ։

—Չէ, հարկաւոր է անկեղծ խօսել այդ մասին, մըտածում էր Կարօն, տեսնենք ինչ է զգում Մաշօն դէպի Սանբէգեանցը. և այդ միտքը օրէ օր զօրանալով նրա-

նում չէր թողնում նրան հանգիստ։ Նա ցանկանում էր տեսնել Մաշօյին և այդպիսով վերջ տալ իւր երկբայութիւններին. Նա ստէպ ստէպ գնում էր արտը, բայց դժբաղդաբար միշտ այնպէս էր պատահում, որ նրանք անկարող էին միայն մնալ և խօսել։ Այդ աւելի յուսահատեցնում էր Կարօյին։

Վերջապէս երբ հասան օգոստոսի վերջի օրերը, Գրիգորի ընտանիքը վերադարձաւ գիւղ և առաջին իսկ գիշերը Կարօն տեսնուեցաւ Մաշօյի հետ։

Նրանք կրկին նստած էին հին թթենու տակ։

Երկինքը ամպած էր, ոչ աստղերն էին երևում այնտեղ՝ ոչ լուսինը. խաւարը պատել էր Մեծ-Ղարա...սան։

—Ես մի բան եմ կամենում հարցնել, Մաշօ ջան, նկատեց անհաստատ, թոյլ ձայնով Կարօն։

—Ի՞նչ։

—Գիտես... ես... ես կարծում եմ, որ դու ինձ չես սիրում։

—Ե՞ս։

—Այո... դու ուրիշին հաւանում ես։

—Ես... ուրիշին... ինչե՞ր ես ասում։

—Ես նկատել եմ այդ... մի խաբիր ինձ։

Եւ Կարօյի ձայնը հետզհետէ դառնում էր աւելի զօրեղ, աւելի հաստատ։

—Ես երբէք չեմ խաբած քեզ և խաբելու էլ պէտք չունիմ, եթէ ես չսիրէի քեզ՝ անկեղծ կը խոստովանէի այդ։

—Ուրեմն... Սանբէգեանցը...

—Ի՞նչ Սանբէգեանցը... ինչե՞ր ես դուրս տալիս. Ես... ոչ... ես յարգում եմ նրան. նա այնպէս խելօք է, այնպէս ուսումնական... նա ամեն բան գիտէ... գիտէ ինչ կայ լուսնի վերայ, ասում է աստղերը մեր աշխարհից

մեծ են... այո... ես պատւում եմ նրան, բայց ես... ես չեմ հասկանում նրան, նրա ասածները... ես ինքս խո ոչինչ չգիտեմ... ես... ես միայն քեզ եմ սիրում, իմ հոգիս, իմ կեանքս, իմ աննմանս։

Եւ Մաշօյի մի քիչ առեառ ձեռները փաթաթուեցան կարօյի վզովը։

Վերջինը ուրախութիւնից չէր կարողանում խօսել։

Հոգսերի, տարակուսանքների մի ամբողջ բեռը կարծես գլորուեցաւ կարօյի վերայից, նա իրեն զգում էր այնպէս թեթև, այնպէս երջանիկ, նա այն րոպէին սիրում էր ամենքին առանց բացառութեան, նա եթէ կարողանար կը գրկախառնէր ամբողջ մարդկութիւնը։ Նա ոգևորուած երջանկութիւնից, շլացած սեղմում էր Մաշօյին իւր հսկայական կրծքին, «հոգիս... անգինս, սիրելիս» անդադար կրկնում էր նա և նրանց համբոյրների ձայնը պարզ լսվում էր գիշերային մթութեան մէջ։

—Այ, եթէ զինուոր էլ չգնամ... ես կը լինիմ բոլորովին բաղդաւոր... իսկոյն մենք կսարքենք մեր հարսանիքը և կսկսենք ապրել միասին։ Օ՛ ինչ լաւ կը լինի, այնպէս չէ՞, Մաշօ ջան։

—Այնպէս է, բայց ինչո՞վ հարսանիք ես ուզում սարքել, երբ փողերդ տան տիրոջ տուիր։

—Ոչինչ... կը ծախեմ գարիս և կրկին փող կունենամ։ Ի՞նչ ես դարդ անում, առողջ ու սաղ լինինք, փող միշտ կունենանք։

Եւ նա բռնելով Մաշօյի իրանից, քարշեց նրան դէպի ինքը։

Այդ իսկ րոպէին Գրիգորի տան սրահում երևաց Շուշանը։

—Մաշօ... Մաշօ... ո՞ւր ես, կանչում էր նա։

—Իսկոյն, մայրիկ, այստեղ եմ։

—Ինչ ես շինում... եկ պառկենք։

—Թութ եմ ուտում, խաբեց Մաշօն և տալով իւր հրաժարականը կարօյին, բաժանուեցաւ նրանից։ Լուսինը դուրս եկաւ ամպերի տակից և լուսաւորեց Գրիգորի բակը այն ժամանակ, երբ Մաշօն արդէն ներսն էր։

Շուշանը չտեսաւ կարօյին։

Իսկ վերջինը ցատկելով ցանկից, ուղևորուեց դէպի Ղուկասի հիւրընկալ, լուսաւորուած օղետունը։ Անցնելով վարժատան մօտից, նա տեսաւ Սանբէգեանցին, որ մի ինչ գրում էր և խփելով պատուհանը՝ դուրս կանչեց նրան.

—Գնանք, մի շիշ գարեջուր խմենք, հրաւիրեց կարօն։

—Ի՛նչ է պատահել քեզ, որ այդպէս ուրախ ես։

—Ոչինչ։

Եւ կարօն ժպտաց։

—Չէ... ես ժամանակ չունիմ... տեսնում ես գրում եմ։

—Ի՛նչ է այդ։

—Թղթակցութիւն լրագրի համար։

—Ուր պիտի ուղարկես։

—Թիֆլիս։

—Ուրեմն չես գայ էլի.

—Չէ։

—Դէ եթէ այդպէս է, ես ինքս կը բերեմ քեզ մօտ. լա՞ւ։

—Բեր։

—Կարօն մի ակնթարթում անհետացաւ և բերեց չորս շիշ գարեջուր։

Երիտասարդների բարեկամութիւնը նորոգուեցաւ։

Գիշերուայ ժամը երկուսն էր, երբ նրանք բաժանուեցան։

Կարօն մի քիչ հարբած էր։

Նա երերալով գնում էր իր տունը, որ գտնվում էր գիւղի ծայրում։

—Չէ՛ Սանդրէգը լաւ տղայ է, մտածում էր նա շարժելով իր ձեռները, շատ լաւ տղայ է, իսկ ես դեռ նախանձում էի նրան, ոխ ունէի նրա դէմ, յիմար… յիմար Կարօ։

Մի կէս ժամից նա արդէն մտաւ իր բակը։

ԺԲ.

Սեպտեմբեր ամիսն էր։ Բնութիւնը հետզհետէ հանում էր իր շքեղ կանաչազարդ ամառնային շորերը և երեւան էր գալիս իր տգեղ մերկութեամբ։ Գետինը ծածկուած էր թափուած, դեղնած տերևների թերթիկներով. ամեն տեղ տիրում էր տխրութիւնը, ամեն տեղ թագաւորում էր ամայութիւնը։ Կանաչ արօտը այրուել էր արևից և անզօր կռացրել էր իր գլուխը անգութ մանգաղի տակ, արտերը մերկացել էին և սևին տալիս դաշտային անհուն տարածութեան մէջ. աշունը մտնում էր…

Մեծ-Ղարա…սան սկսեց իր թմրած, անկրթոլ կեանքը, աւարտելով երկրագործական պարապմունքները։ Գիւղացիները ծուլապատիկ նստած՝ ամբողջ օրեր անց էին կացնում անվերջ խօսակցութեան, պատմութիւնների, հէքիաթների և թղթախաղի մէջ։ Աշունը և ձմեռը ագահութեամբ կլանում էին նրանց ամառուայ դառն աշխատանքի պտուղները։

Երիտասարդները դուրս չէին գալիս օդէտներից և նոյնպէս մեծերից վարակուելով, խաղում էին անվերջ «օթուզբիրը» *) և դրա նման խաղեր։

Կանայք և աղջիկներն էին միայն որ պարապում էին

*) Օթուզբիր—նշանակում է երեսուն մէկ (թղթախաղի անունն է։

գործով. նրանք կարում էին, մանում էին և կամ գործում էին։

Գրիգորի տան կեանքը հոսում էր իր սովորական հունով, ոչինչ չը զանազանելով միւս գիւղացիների կեանքից, այն տարբերութեամբ, որ թղթախաղը մուտք չէր գործել այստեղ. Գրիգորը չէր սիրում խաղալ։ Աշնանային երկար գիշերներին նրա մօտ գալիս էին Սանդրէգեանցը… Կարօն մօր հետ և ահա հասարակութիւնը բաժանուելով երկու խմբի՝ սկսում էր իր ճիշտ ընտանեկան, անկեղծ խօսակցութիւնները։ Շուշանը, Կարօյի մայրը և Սանդրէգեանցի մայրը կազմում էին մի առանձին, կանացի խումբ, իսկ Գրիգորը, Սանդրէգեանցը և Կարօն մի ուրիշ։ Մաշօն մտնում էր մերթ այս և մերթ այն խմբին և ամեն տեղ մասնակցում էր խօսակցութեան և տալիս էր նրան ուղղութիւն, ասում էր երկու երեք խօսք և հեռանում էր միւս խմբին—նա ճիշտ նոյնպէս վարվում է և այնտեղ։

Գրիգորի ընտանիքը ձանձրութիւն չէր զգում։ Այդպիսի մի գիշեր, երբ արդէն ամենքը հաւաքուած էին Գրիգորի սենեակում, ներս մտաւ համարեա վազելով Կարօն. նա շնչում էր ծանր. քրտինքը ծածկել էր նրա ճակատը. նա կարմրել էր, երեւում է որ մի ծանրակշիռ բան ունի հաղորդելու հասարակութեան։

—Գիտէք… այսօր առաւօտ հրամանը եկած է. նա չէր կարողանում խօսել։

—Ի՞նչ հրաման, հարցրեցին ամեն կողմից։

—Հրաման… որ մի հատ որդին զինուոր գնալու չէ, Կարօն անդադար սրբում էր իր քրտինքը։

—Մի՞թէ… ով ասաց քեզ, նկատեց Գրիգորը։

—Ռուս գրագիրը… բայց դա դեռ գաղտնիք է… նա ինձ այնպէս ասաց։

—Ուրեմն, դու կմնաս էլի, ուրախաձայն բացագանչեց Մաչօն։ Այդ ձայնը պարունակում էր իւր մէջ ամեն ինչ, և անչափ ուրախութիւն և սէր և գոհութիւն ճակատագրից։

—Իհարկէ... իհարկէ։

Կարօյի մայրը՝ Սրբուհին բարձրացաւ տեղից և գըրկախառնելով որդուն սկսեց լալ։

Դրանք ուրախութեան արտասուքներ էին։

Կարօյի հաղորդած նորութիւնը շլացրեց ամենքին։ Գրիգորի ընտանիքում արդէն համոզուած էին, որ մի երկու ամսից Կարօն գնալու է զինուոր. Նրանք չգիտէին ընդհանուր զինուորագրութեան կանոնները։ Այդ էր պատճառը, որ այժմ ամենքը ուրախ էին, մնացած Կարօն կարծես յարութիւն առաւ նրանց համար։ Գրիգորը շնորհաւորեց Կարօյի մօրը և ինքը համբուրեց նրան։

Ուղարկեցին գինի բերելու։

Ծառային ասացին, որ կանչէ Սանրբէգեանցին. վերջինը յայտնեց իւր անկեղծ ուրախութիւնը և ամենքը նստան ընթրելու։ Երբ գինին սկսեց իւր ներգործութիւնը, Կարօն նշանացի արեց Մաչօյին և վերջինը դուրս եկաւ սենեակից։

Կարօն բարձրացաւ տեղից և համբուրելով Գրիգորի ձեռը յայտնեց իւր մտադրութիւնը Մաչօյի վերաբերմամբ և խնդրեց նրան կնութեան։

Գրիգորը ցած թողած իւր գլուխը, մտածում էր...

—Դու սիրո՞ւմ ես, նրան հարցրեց նա վերջապէս։

—Այո, հայր։

—Իսկ նա։

—Հարցրեցէք։

Ոչ, նա իրաւունք չունի իմ առաջս խոստովանելու իւր սէրը... եթէ դու ասում ես, ես հաւատում եմ։

Եւ ծերունին լռեց։

—Կարօն անհամբեր սպասում էր նրա վճռին։

—Ուրեմն, հայրիկ...

—Ուրեմն, բաղդաւոր եղէք. ապրեցէք...

—Նայիր Կարօ ջան, ես տալիս եմ քեզ իմ միակ զաւակս, լաւ նայիր նրան... չմաշես... չտանջես որդուս... Դուք այսուհետև իմ զաւակներս էք... ապրեցէք, երջանիկ եղէք և ուրախացրէք մեզ պառաւներիս։

Գրիգորի աչքերից թափվում էին արտասուքի խոշոր կաթիլները, Կարօն համբուրեց նրան և Շուշանի ձեռը։ Սանրբէգեանցը շնորհաւորում էր նրան։

—Կանչեցէք Մաչօյին, հրամայեց Գրիգորը։

—Մի րոպէից ներս մտաւ Մաչօն։ Նա գիտէր բանը ինչումն է, և աշխատում էր որքան կարելի է միամիտ արտայայտութիւն տալ իւր երեսին. նա թողել էր աչքերը ցած և կարմրած մօտեցաւ հօրը։

—Մաչօ, աղջիկս... ահա քեզ Աստուծոյ նշանակած փեսացուդ... սիրիր նրան, հնազանդ եղիր, երջանիկ եղէք որդեակներս։

Եւ Գրիգորը միաւորեց նրանց ձեռները։

Մաչօն մօտեցաւ իւր փեսացուին և նրանք միասին գնալով հանդիսականների առաջ համբուրում էին նրանց ձեռները և օրհնութիւն էին ստանում։ Ամենքը ուրախ էին և զուարթ։

Այդ օրը կատարուեցաւ Մաչօյի նշանադրութիւնը. հարսանիքը լինելու էր ձմեռը։

ԺԳ.

Ուսուցիչ Սանրբէգեանցը այն մարդերից էր, որոնք կազմելով ժամանակի ընթացքում մի որև է գաղափար, մի որև է իդէալ, աշխատում են միշտ իրագործել այդ գաղափարը, տալ նրան շունչ և մարմին և կանգ չեն

առնում ոչ մի արգելքի, ոչ մի դժուարութեան առաջ, այդպիսի մարդկանց համար համոզմունք բառը լոկ բառ չէ միայն, նրանք գիտեն այդ բառի արժէքը և այնպէս էլ վարւում են կեանքում. Սանբէջգեանցը հոգով և մարմնով հայ էր, նա լաւ գիտէր իւր ազգի պակասութիւնները, նա տեսնում էր նրա անզարգացած լինելը, նրա յետադէմ, խաւարամիտ բարքն ու վարքը, տեսնում էր այդ ամենը, բայց կրկին սիրում էր հայ ազգը, հայ մարդուն, սիրում էր, որովհետև այդ ազգի մէջ նա տեսնում էր այնպիսի յատկութիւններ, որոնք, եթէ կանոնաւոր մշակուէին միայն, պիտի տային ազգային գոհացուցիչ արդիւնքներ, այդ էր Սանբէջգեանցի աշխարհահայեցողութեան ամենանշանաւոր կէտը, նա ձգտում էր մի օգուտ տալ իւր խեղճ ազգին, մի գործնական օգուտ որևիցէ հասարակական ասպարիզում և յանուն դրա պատրաստ էր զոհել ամեն ինչ. Նա ուսումնասիրել էր իւր ազգի անցեալը, դեռ աշակերտութեան միջոցին վարժարանի նստարանի վերայ, նա ընկղմւում էր հայ ազգի անցեալի լայնածաւալ, փառաւոր աշխարհը, նա ցաւում էր իւր ազգի ցաւերով և չարչարանքներով. նա ուրախանում էր իւր ազգի փառաւոր, երջանիկ ուրախ օրերով. Սահակի, Եղիշէի, Վարդանի, Վահանի, Մեսրոպի պատկերները, այդ հսկայ հերոսների, այդ մտքի, գաղափարի և բարոյականութեան մարտիրոսների պատկերները անցնում էին նրա աչքի առաջ և բորբոքում էին նրա երիտասարդական վառ երևակայութիւնը։

Երբ Սանբէջգեանցը աւարտեց ճեմարանը և մտաւ կեանքի շրջանը, նա չմոռացաւ իւր մանկութեան սիրելի հերոսներին. ընդհակառակը, նա աւելի ես սիրեց նրանց և նրանց գործերը և հայրենիքի մատուցած ծառայութիւնները, այն մտքերը, որոնք երբեմն շփոթ շրջում էին

նրա ուղեղում, որոնք իբրև ցնորքներ տանջում էին նրան շատ անգամ ճեմարանի ննջարանում, այժմ պարզուեցան և դարձան նրա կարծիքը, համոզմունքը, գաղափարները. Նա երդուեց ծառայել ազգին։ 1870-ական թուականներում հայ հասարակութեան մէջ կարելի էր նշմարել մի շարժում, մի մտաւոր շարժում դէպի ուսում և լուսաւորութիւն. դա 1850-ական և 60-ական թուականների արձագանքն էր։ Ամեն տարի եւրոպական և ռուսական համալսարանները թողնում էին հայ ուսումնաւարտ երիտասարդներ, որոնք վերադառնալով հայրենիք, քարոզում էին իրենց այնտեղից ձեռք բերած գիտութիւնները, կազմում էին զանազան ընկերութիւններ, ոտքի էր ելնում արդէն կանգնել հալ ու մաշ եղած հայ թատրոնը, տպւում էին գրքեր, լոյս էին տեսնում լրագրներ, հասարակութիւնը զարթնել էր իւր քնից և բանում էր։ Սանբէջգեանցն ես ենթարկուեց ընդհանուր տիրող հոսանքին։ Թիֆլիսում մի հայ լրագրում սկսեցին լոյս տեսնել մի շարք «գաւառական նամակներ», որոնք մեծ ազդեցութիւն ունեցան հասարակութեան վերայ. Առանց ստորագրութեան, առանց փքուն, ճռճռան ֆրազների, այդ նամակները ծանօթացնում էին ընթերցողին հայ գիւղական կեանքի հետ, հայ գիւղացու, նրա նիստ ու կացի, նրա ձգտումների, նրա առօրեայ պահանջների և պակասութիւնների հետ։ Եւրոպայի հողի վերայ կրթուած և սնուած երիտասարդները չգիտէին, ճշմարիտը խոստովանած, իրենց հայրենիքը, նրա ժամանակակից դրութիւնը, նրանք եթէ գիտէին էլ մի բան, դա կարդացել էին գրքերում, իսկ անստորագիր «գաւառական նամակները» տալիս էին նրանց այդ ծանօթութիւնները նոյն իսկ կեանքի աղբիւրից, նոյն իսկ գիւղից և Սանբէջգեանցի այդ ասպարիզում բերած օգուտը ակներև էր։

Բայց Սանբէգեանցը չունէր դադրում. գործելը—դարձել էր նրա պահանջ։

Բեսարաբիայի վիճակի հոգևոր կառավարութեան հրամանով Սանբէգեանցը թողեց Մեծ-Ղարա...սան, թողեց Գրիգորին, Մաշօյին, կարօյին և իւր մօր հետ տեղափոխուեցաւ սուրբ Խաչ վանքի երեքդասեան ուսումնարանը. ուր նա ինքը մի օր եղած էր աշակերտ, այստեղ գործելու ասպարէզը աւելի լայն էր։ Ամենայն սրբութեամբ կատարելով իրեն յանձնած գործը, նա գտնում էր դեռ ժամանակ սարքել տօներին գրականական երեկոներ և ներկայացումներ։ Ն... քաղաքի բեմը տարին չորս հինգ անգամ տեսնում էր հայ ներկայացումներ, լսում էր իւր մայրենի լեզուն և սովորում էր նրան։ Նա կազմեց երիտասարդներից մի շրջան, որ տիրում էր հայ ոգին, խօսքը և լեզուն։ Նրանք ոգևորուած միևնոյն գաղափարներով, քարոզում էին ուսում և այդ խօսքը նրանց նշանաբանն էր։

Եւ իրաւ, ամեն մի հայ ընտանիքում սկսուեց դրանից յետոյ մայրենի լեզուի ուսումնասիրութիւնը, խորթ կիսառուս, կիսաթուրք բարբառը տեղի էր տալիս հայ ոճի գողտրիկ դարձուածներին։

Ահա ինչ էր Սանբէգեանցի իղձը, և նա իրագործեց նրան, նա չհպարտացաւ, նա չմոռացաւ ինքն իրեն բնաւ, դա մնաց նոյն խոնարհ, նոյն համակրելի հազուագիւտ բարոյականութիւնով, լուսամիտ, լաւ ընկեր Սանբէգեանցը, ինչպէս և առաջ ճեմարանի փակ, նեղ շրջանի մէջ։

ԺԴ.

1872 թուականը ցուրտ էր և ձիւնոտ։

Մեծ-Ղարա...սան թաղուել էր հետզհետէ կուտակուող ձիւնի ահագին բլուրների մէջ։

Ցրտերը հասնում էին մինչև 28 և 29 աստիճանի։

Եթէ երդիկներից ամեն առաւօտ բարձրացող ծուխը չլինէր, կարելի էր կարծել, որ Մեծ-Ղարա...սան ամբողջապէս մեռած է։

Ոչ ոք չէր երևում փողոցներում։

Միայն քամին էր, որ արձակ սահում էր ամայի փողոցներով և բարձրացնելով արծաթափայլ ձիւնային փոշին՝ կատաղաբար մռնչում էր խրճիթների խարխուլ պատուհանների դռների տակ։

Մեծ-Ղարա-սայից մի քիչ հեռու գտնուող անտառը ներկայացնում էր ձմրան ժամանակ մի հիանալի պատկեր։

Զրկուած տերևներից նա կարկառել էր իւր հսկայական, ձիւնոտ ճիւղերը ամեն կողմ և կարծես քարացել մնացել էր իւր ձմերային խոր, հանգիստ քնի մէջ։

Երբ արևը ձգում էր իւր սակաւ, անջերմ ճառագայթները անտառի վերայ, վերջինը սկսում էր ցոլալ իւր պսպղուն ցոլքի մութ կարմրագոյն ոսկեփայլ գոյնով։

Միշտ և հանապազ այստեղ քամին երգում էր իւր անվերջ մռնչիւն-մեղեդին։

Այս անտառը ահա 10 տարի էր, որ թագաւորական էր։

Նա գտնվում էր Մեծ-Ղարա...սա գիւղի տանուտէրոջ իրաւասութեան տակ։

Գիւղացիները չէին կամենում յարգել օրէնքի պահանջը և շատ անգամ գնում էին անտառից փայտ գողանալու։

Ծերունի Գրիգորը նոյնպէս պատկերանում էր այդ անտառագող մարդիկների շարքին։

Նա գողանում էր իւր անխախտ համոզմունքից դրդուած. նա չէր կարող հասկանալ, որ անտառը իբրև

պարգև Աստուծոյ, կարող է պատկանել մի անհատի, լինի դա անգամ թագաւորը։

Նա նայում էր անտառի վերայ իբրև մի resnullius-ի վերայ. Նրա կարծիքով անտառը ստեղծուած էր գիւղացիների առօրեայ պէտքերի համար։

Եւ նա քանիցս անգամ առնում էր այնտեղից փայտ և կամ ածուխ էր հանում։

Մի օր նա լծեց իւր սահնակը և ուղևորուեց անտառ։

Արդէն մի հսկայ—ծերունի ծառ տապալուելու վերայ էր նրա կացնի տակ, երբ վերայ հասաւ Մահտեսի-Սարգիսը։

Երկու թշնամիներ, երկու ոխերիմ թշնամիներ պատահեցան միմեանց սուս, ամայի անտառում։

Նրանք անշարժ կանգնած նայում էին միմեանց վերայ։ Գրիգորի ձեռը պինդ սեղմել էր կացինը և ցնցողաբար դողում էր։

—Ի՞նչ ես անում այստեղ։

Ի՞նչ... ոչինչ։

—Ի՞նչպէս թէ ոչինչ... ինչ իրաւունքով կտրում ես ծառը։

—Այնպէս։

—Գողանալո՞ւ ես եկել... հա,

Գրիգորը լուռ էր։

—Ի՞նչ ես պապանձուել... խօսիր թէ չէ։

—Թէ չէ ինչ։

—Թէ կը կապեմ քեզ ու կը տանեմ վարչութիւնը... Չգիտես որ անտառը թագաւորինն է.

—Ինձ ինչ... ինձ փայտ է հարկաւոր, ես էլ առնում եմ։

—Ա՛յ քեզ բան... լաւ է... տուր կացինդ ինձ։

—Ինչի՞։

Եւ Գրիգորի ձեռները աւելի պինդ սեղմեցին կացնի ծայրը։

—Տո՛ւր, ասում եմ։

—Չեմ տալ։

—Տո՛ւր։

Գրիգորը մի կողմ ձգեց կացինը և մօտ՚ցաւ Սարգսին։

Նրա աչքերում խաղում էր մի վատ, չար կրակ։

—Լսի՛ր... լսում ես... լսի՛ր, թէ ոչ...

Նրա ձայնը կտրվում էր, շնչառութիւնը նուաղում էր։

—Լսի՛ր, անպիտան։

Եւ նա բռնեց Սարգսի կապայի օձիքից և մօտեցնելով ծառին սկսեց խեղդել։

Գազանը զարթնել էր Գրիգորի մէջ։

Անցեալի ամեն դառն փաստերը անցան մի ակնթարթում Գրիգորի աչքերի առաջ։ Նա յիշեց Սարգսի վարմունքը, նրա կեղտոտ գործերը և կամենում էր մի անգամից վերջ տալ այդ ամենին։

Սարգիսը սկսեց օգնութիւն կանչել։

Անտառը միայն խուլ, կարծես հեգնական արձագանք տուեց, ոչ ոք չեկաւ։

Գրիգորը տապալեց գետին Սարգսին, պինդ սեղմեց նրա կոկորդից և երբ վերջինը կտրեց իւր ձայնը, նա վերկացաւ նրա վերայից և նստելով սահնակը ուղևորուեցաւ դէպի գիւղ։

Մի կէս ժամից ուշքի եկաւ և Սարգիսը, նայեց իւր շուրջը, աշխատեց մտաբերել եղելութիւնը և դանդաղ քայլերով հեռացաւ տուն։ Կացինը մնաց ընկած ծառի մօտ։

ԺԵ.

Այս անցքից անցել էր մի շաբաթ։

Գրիգորը գտնվում էր սաստիկ հոգեկան տանջանքների մէջ։

Վախը չէր դրա պատճառը, ոչ։

Գրիգորին տանջում էր խիղճը։

Ինչքան էլ որ չլինի, բայց և այնպէս Սարգսի մէջ նա տեսնում էր մի մարդ, որին նա կամեցել էր խեղդել, սպանել։

Այդ միտքը հանգիստ չէր տալիս ծերունուն։

Պառկած անկողնում, նա գտնվում էր մի անվերջ մտատանջութեան մէջ, նա մտրակում էր իւր անվայել արարքը, իւր գաղանաբարոյ «ես»-ը։

Ի՞հ... ի զուր, ի զուր տաքացայ, հարկաւոր չէր, մըտածում էր նա անդադար։

Գրիգորը հիւանդ էր։

Կուրի ժամանակ նա մրսել էր։

Առաջի րոպէները նա չնկատեց այդ, բայց երբ վերադարձաւ տուն, նա զգաց, որ մի ինչ որ խոցոտում է, ծակում է նրա ներսը, փորը և աղիքը։

Նա հիւանդացել էր թոքերի բորբոքումով։

Հիւանդութիւնը ծանր էր և վտանգաւոր։

Շուշանը, Մաշօն, կարօն չէին հեռանում նրա անկողնից, նրանք առաջարկում էին նրան զանազան դեղեր, միջոցներ, բայց Գրիգորը ամեն անգամ լուռ, յուսահատ շարժում էր իւր ալեզարդ գլուխը։

Կարծես նա համոզուած էր, որ կարողանալու չէ առողջանալ։ Ամենազօրութեան գիւղական զանազան բժիշկ

պառաւներ, աղօթողներ, մոմ թափողներ, սիրտ չափողներ, գիր բացողներ անպակաս էին նրա տնից։

Անցնում էին օրեր, շաբաթներ։

Հիւանդութիւնը աւելի ես սաստկանում էր։

Գրիգորը սաստիկ փոխուել էր։

Այդ յաղթանդամ մարդը, որ երբէք դեռ չէր հիւանդացել իւր կեանքում, բոլորովին մաշուել, հալուել էր։ Նրա մազոտ մարմնից դուրս էին ցցուել նրա ոսկորները։

Երեսը սաստիկ նիհարացել էր։

Միայն աչքերն էին, որ կարծես աւելի ես ցոլում էին երկար սպիտակ յօնքերի տակից։

Այդ ցոլքը մահաբեր էր։

Ծերունու ժամերը արդէն հաշուած էին։

Մի օր նա ինքը խնդրեց, որ կոչեն քահանային։

—Տէր Եսայուն, հեզնական թոյլ ձայնով նկատեց նա։

Քահանան եկաւ և բերեց իւր հետ աւետարանը և սուրբ ճաշակը։

Սենեակում, ուր պառկած էր հիւանդը, տիրում էր խորին, հանդիսաւոր լռութիւն։

Հիւանդը ապաշխարեց, ստացաւ թողութիւն իւր երկրաւոր մեղքերի և հազիւ կարողացաւ ճաշակուել։

Մաշօն սկսեց հեկեկալ։

Շուշանը, կարօն հետևեցին նրա օրինակին։

Գրիգորը մեռնում էր անձայն, լուռ ու մունջ ինչպէս մի անգամից մարում է ճրագը, որ այրուել է մինչև վերջը, այնպէս էլ մեռաւ Գրիգորը։ Ոչ խռպոտ հեկեկանքներ, ոչ սաստիկ ցնցումներ, ոչինչ չպատահեց։

Հողը ստացաւ իւր արգասիքը, իւր ստեղծագործութիւնը։

Երկու օրից գիւղական եկեղեցու բակը լցուել էր ժողովուրդով, զանգակների տխուր մեղեդին յայտարարում էր որ այսօր Գրիգորի թաղման օրն է։

Սպիտակ հասարակ փայտից շինած դագաղը դուրս հանեցին եկեղեցուց և տարան գերեզմանատուն։

Շուշանը և Մաշօն սաստիկ, բարձրաձայն լալիս էին։

Կարօն անմիտ նայում էր դէս ու դէն և մեքենայաբար գնում էր դագաղի ետևից, նրա արտասուքի աղբիւրը արդէն ցամաքել էր։

Մի կէս ժամից՝ սև խոր փոսը ընդունեց իւր գիրկը ծերունի Գրիգորի մարմինը։

Եւ կրկին ու կրկին կատարուեցաւ մեր ունայն աշխարհում Աստուծոյ ահեղ, խորհրդաւոր խօսքերը. «Հող էիր և ի հող դարձիր»...

ԺԶ.

Գրիգորի մահից յետոյ, նրա որբ ընտանիքը ապրում էր առանց մի որ և է փոփոխութեան իւր առօրեայ կեանքում։

Բայց այդ կարող չէր երկար տևել։

Գործող, արդիւնաբերող ձեռները պակասում էին այդ ընտանիքին։

Գրիգորը չկար։

Ուրեմն հարկաւոր էր մի կերպ հայթայթել օրուայ ապրուստը։

Գիւղը չէր տալիս այսպիսի պարապմունքներ։

Հարկաւոր էր կամ մտնել մի որ և իցէ հարուստ գիւղացու մօտ ծառայութեան և դրա փոխարէն ստանալ մի փոր հաց և կամ տեղափոխուել քաղաք, ուր Մաշօն կարող էր ստանալ թէև չնչին, բայց այնու ամենայնիւ ամսական ռոճիկ. Կարօն չհամաձայնուեց ոչ մէկին այդ

երկու պայմաններից, նա դնելով իւր յոյսը ապագայ հունձի առատութեան վերայ, աշխատում էր մի կերպ մխիթարել Շուշանին և Մաշօյին.—Ոչինչ... ոչինչ, ասում էր նա, Աստուած ողորմած է մի կերպ կապրենք... խօ առանց հացի չենք մնալ։

Շուշանը յուսահատ շարժում էր գլուխը։

—Կապրենք... հեշտ է ասել... Ա՛խ, մեզ ապրեցնողը սև հողումն է, նկատում էր Շուշանը և սկսում էր լալ։

Լացը վերջի ժամանակը դարձել էր նրա հոգու պահանջը։

Նա լալիս էր միշտ, առաւօտեան, երբ դեռ Մաշօն քնած էր լինում, գիշերը անկողնի մէջ, միշտ, միշտ...

Մաշօն չէր կարող տանել մօր լացը։

Նրա աչքերը իսկոյն լցվում էին արտասուքով և նրա առաջ մանրակրկիտ ճշտութեամբ երևան էր գալիս իւր հօր պատկերը, անկողնում, մաշուած, յուսահատ շարժելիս իւր ալէզարդ գլուխը։

Ինչի՞ այդ րոպէն էր միշտ պատկերանում նրա առաջ, ասել դժուար է։

Կարօյի և Մաշօյի հարսանիքը յետաձգուեցաւ Գրիգորի մահուան պատճառով։

Ե՞րբ էր լինելու այդ, ոչ ոք չգիտէր։

Ոչ Կարօն էր խօսում այդ մասին, ոչ Մաշօն. նրանք կարծես լռելեայն համաձայնուել էին առ այժմ ոչինչ չյիշել հարսանիքի վերաբերմամբ։

Սանդէգեանցը իմացել էր Սուրբ Խաչ վանքում իւր բարեկամի մահուան լուրը և մի նամակով յայտնում էր Շուշանին իւր ցաւակցութիւնը։

Այդ նամակը դարձաւ Շուշանի համար աղբիւր նոր արտասունքների, նոր հառաչանքների։

Մահտեսի-Սարգիսը ոչինչ չպատմեց անտառի մէջ եղած անցքի մասին։

Գիւղում ոչ ոք չգիտէր Գրիգորի և նրա մէջ պատահած կռիւը, բայց նա իւր մտքում վճռեց անպատճառ իւր վրէժը հանել Գրիգորի ընտանիքից։

Նրա մահից յետոյ Սարգսի համար բացվում էր լայն ասպարէզ վրէժխնդրութեան։

Ամէն մի քայլում նա կարող էր իրագործել իւր մտադրութիւնը։

Ի՞նչ դիմադրութիւն կարող էին ցոյց տալ մի խեղճ, պառաւած կին և մի մատաղահաս աղջիկ։

Կարօյից Սարգիսը չէր վախում։

Նա գիտէր իւր ոյժը։

Եւ նա ամբողջ ժամերով հիւսում էր դրութիւնների մի ամբողջ շարք, ուր յաղթողը պիտի հանդիսանար ինքը, Մեծ-Ղարա...սա գիւղի տանուտէրը. իսկ յաղթուողը Գրիգորի ընտանիքը։

Եւ նա արդէն կարծում էր, որ հասել էր իւր վերջնական եզրակացութեան, երբ մի գեղեցիկ օր Տէր-Եսայու ասած խօսքերը բոլորովին խորտակեցին նրա երեւակայութեան օդային ամրոցը։ Այսպէս պատահեցաւ այդ։

ԺԷ.

Մի օր, երբ Սարգիսը մի թմրած ծուլութեամբ անձնատուր էր եղած իւր սովորական կիսօրեայ dolcefarniente-ին տան դուռը բացուեցաւ և ներս մտաւ Տէր-Եսային։ Նա գտնվում էր մի ուրախ տրամադրութեան մէջ,

Նա վերադառնում էր կնունքից, ուր տանտիրոջ հիւ-

րասիրութիւնը և լաւ ընդունելութիւնը թողել էին տէր հօր վերայ իւր ակներև հետեանքները։

Նա մի քիչ արբած էր։

—Ա՛խ... պարոն տանուտէր... քէֆդ, հա՛լդ... ի՞նչպէս ես, հարցրեց նա և պարզեց իւր ձեռը Սարգսին։

—Ոչինչ... ապրում ենք է՜լի... մեզ ի՞նչ է եղած, մենակ մարդ ենք... մի կերպ անցկացնենք օրերս...

—Մենակ մարդ ենք... մեղաւորը ո՞վ է... կարծես քո ձեռքումը չէ դրա վճիռը...

—Ի՞նչպէս թէ։

Շատ պարզ է, քեզ ո՞վ է ստիպում մենակ ապրել։

Եւ տէր-հայրը լռեց։

Նա դարձրեց իւր խորամանկ, միշտ վազվզող աչքերը Սարգսի երեսին և ժպտաց։

Վերջինը լուռ էր։

—Էհ... գինի չունի՞ս... ապա տեսնենք... հրամայիր։

—Իսկոյն։

Եւ Սարգիսը կանչեց իւր միակ ծառային, որի պաշտօնը կատարում էր մի ծեր, պառաւ կին, իւր հեռու ազգականը։

—Մարիամ... բե՛ր մի շիշ գինի, դարձաւ Սարգիսը նրան։

—Իսկոյն, աղա, պատասխանեց պառաւը և լրջօրէն դիտելով քահանայի երեսը՝ հեռացաւ սենեակից։

—Հա... ի՞նչ էի ասում... քո մասին էր խօսքս, եթէ կամենաս, վաղը մենակ չես լինիլ։

Ի՞նչպէս, հարցրեց Սարգիսը։

—Այնպէս... կարգուիր։

Սարգիսը ծիծաղեց։ Այնքան անհասանելի և անկարելի թուեցին նրան Տէր Եսայու խօսքերը։

Կարգուիր էլի, կրկնեց քահանան։

—Ի՞նչպէս թէ կարգուեմ, ախր...

Ի՞նչ ախր—մախր... ասում եմ կարգուիր։

Գինին արդէն բերուած էր և Տէր-Եսային ստէպ ստէպ լցնում էր իւր բաժակը։

Նրա երեսը կարմրել էր։

—Ինչե՞ր ես ասում, նկատեց Սարգիսը, միթէ իմ հասակումս...

—Ինչպէ՞ս թէ քո հասակումդ... կարծես 70 տարեկան ծերունի լինիս։

—Չէ, բայց...

—Բայց—մայց չկայ, ասում եմ կարգուիր։ Ի՞նչ կայ... Աստուած վկայ լաւ կանես։

Սարգսի մտքերը ստացան մի հակառակ ուղղութիւն, նա կարծես սկսեց մի քիչ կասկածել, բայց կրկին հաւանական էր գտնում քահանայի խօսքերը։

—Ախր, ի՞նչ է քո կեանքդ... չան կեանք, ոչ ընտանիք, ոչ զաւակներ, ոչ ջահել գեղեցիկ կին...

Եւ Տէր-Եսային լկտօրէն ծիծաղեց և խփեց Սարգսի փորին։ Նրա աչքերը ցոլացին մի խուզալի, կրքոտ ցոլքով։ Սարգիսը նոյնպէս ծիծաղեց։

—Աստուած է վկայ խօսքերիս, որ լաւ կանես, գոնէ անունդ կը մնայ աշխարումս քո զաւակներիդ մէջ, մի օր կը մեծանան, քեզ օգնական կը դառնան... Այ, Սարգիս, լսիր ինձ, չես սխալուիլ... դէ կենացդ։

Եւ Տէր-Եսային պարպեց իւր բաժակը։

Սարգիսը շուարած, անմիտ, մեքենայաբար նայում էր նրա երեսին։

—Խմի՛ր և լա՛ւ մտածիր՝ թէ ի՛նչ եմ ասում։

—Լաւ, բայց ո՞վ ինձ կգայ, նկատեց նա վերջապէս մի թոյլ, անհաստատ ձայնով։

—Ո՛վ. միթէ Մեծ-Ղարա...սում աղջիկ չկայ։ Ինչե՛ր

ես ասում, տօ, ամաչիր, ով, ո՞վ չի կամենալ դառնալ քեզ նման հարուստ և պատուաւոր, առաջի մարդու կինը... ասա ո՛վ։

Սարգիսը տրորվում էր, նա չգիտէր ի՞նչ պատասխան տար։

—Քո գինդ ինքդ չգիտես... ուզո՞ւմ ես ընտրեմ քեզ հարսնացու։

Սարգսի մէջ պատերազմում էին երկու հակառակ ոյժեր։

Սեղանի վերայ կրկին երևացին գինով լի երկու շիշեր։

—Հա՛... ուզում ես... ասա։

—Է՛հ, տեսնում եմ որ քեզ հետ խօսել դժուար է, նկատեց մի կեղծ անբնական ձայնով Սարգիսը և թափեց Տէր-Եսայու ուսը։ Նրանում վերջացել էր հակառակ ոյժերի կռիւը, այլ ևս ոչ մի երկբայութիւն, ոչ մի տարակուսանք չէր կարող խափանել նրա զարթած կիրքը։

Նա բաւականութիւն էր որոնում. Նա պատկերացնում էր իւր առաջ ապագայ ընտանեկան կեանքի ուրախութիւնները, երջանիկ օրերը և սաստիկ ցանկանում էր իրագործել իւր բաղձանքը, իւր զգայական ցանկութիւնները։

—Վաղուց պէտք է այդպէս լինէր, նկատեց մի ուրախ բարձր ձայնով Տէր-Եսային և պարպեց իւր բաժակը։

—Այժմս տուր մի քիչ մտածեմ թէ արդեօք ո՞րը մեր աղջիկներից աւելի համապատասխանում է քեզ... ո՞րը... ո՞րը...

Եւ Տէր-Եսային ընդունեց մի լուրջ դրութիւն և ընկաւ մտատանջութեան մէջ։

—Այո... այն... չէ... լաւ է, բայց...

Այդ և սրա նման բառերը մերթ ընդ մերթ թռչում էին նրա շրթունքներից։

—Հա… այ քեզ կլին գտայ, բացագանչեց նա և թեքուելով Սարգսի կողմը՝ մի ինչ որ փսփսաց նրա ականջին։

Նրանց խօսակցութեան ժամանակ մի քանի անգամ կրկնուեցաւ Մաչօյի անունը։

Խօսքը նրա վերայ էր։

Սկզբից Սարգսի երեսը ընդունեց մի բացասական և միևնոյն ժամանակ տարակուսող արտայայտութիւն, բայց քանի որ Տէր-Եսային պնդում էր, պարզում էր և հաստատում էր իւր միտքը, այնքան ևս տարակուսանքի սև ամպերը հեռանում էին Սարգսի ճակատից, խորշումները անհետացնում էին և նա սկսում էր, ի նշան համաձայնութեան, շարժել իւր գլուխը…

—Ինչպէս է… լաւ է ասածս, վերջապէս հարցրեց Տէր-Եսային, վերկենալով տեղից։

—Լաւ է լաւ, միայն թէ…

—Վստահացիր ինձ, քեզ խօսք եմ տալիս, որ եթէ այդ գործը գլուխ չհանեմ, իմ անունը Տէր-Եսայի թող չլինի։

—Լաւ… լաւ… հաւատում եմ, նկատեց ծիծաղելով Սարգիսը և առնելով ճրագը ճանապարհ ձգեց իւր թանկագին հիւրին։

Բաժանուելու ժամանակ նրանք համբուրուեցան։

Արդէն կէս գիշեր էր։

Լուսնեակի ճառագայթները թափանցելով ձմեռնային պղտոր մթնոլորտը, ընկնում էին ձիւնոտ գետնի վերայ և փշրուելով անհամար, կանաչ կարմիր գոյներով փայլող փշրանքրերի, ներկում էին նրան մի արծաթափայլ գոյնով։

Երկինքը անամպ էր և ծածկուած աստղերով։

Սարգիսը ուշադրութիւն դարձրեց բնութեան գեղեցիկ պատկերի վերայ և գոցելով սրահի դուռը, մտաւ իւր սենեակը և պառկեց։

Նա վրդովուած, յուզուած էր։ Նա հազիւ կարողացաւ քնել այդ գիշեր։

ԺԸ.

Տէր-Եսային ապրում էր Մեծ-Ղարա…սա գիւղի հրապարակի վերայ գտնուող փոքրիկ տնակում։ Այդ տնակը գտնւում էր եկեղեցու կից և գիւղական հասարակութեան կողմից տրուած էր նրան առանց վարձի. բաղկացած երեք, բաւականին մեծ և լոյս սենեակներից, այդ տունը շինուած էր և յարմարացրած ծխական ուսումնարանի համար, բայց վերջիվերջոյ մի մութ քօղաւորած գաղտնիքի շնորհիւ անցած էր Տէր-Եսայու ձեռը. իսկ ուսումնարանը զետեղուած էր եկեղեցու բակում։

Տէր-Եսային Ն… քաղաքի մի կօշկակարի որդին էր։

Նա ծնուել էր և մեծացել դառն աշխատութեան և անվերջ զրկանքների մէջ։

Նրա հայրը մի արբեցող մարդ էր, որ իւր աշխատած փողի մեծ մասը միշտ թողնում էր Ն… քաղաքի անհամար օղատներից մէկում. և դառնում էր տուն առանց փողի, առանց մսի, հացի և այլն, և իսկոյն սկսւում էր կռիւը մարդու և կնոջ մէջ։

Հայհոյանքներ, նախատինքներ, լաց,—ահա ինչով էր վերջանում այդ տեսակ, ոչ սակաւաթիւ, դէպքերը։

Քիչ էր պատահում, որ կօշկակարի ընտանիքը անցնում էր իւր օրերը քաղցած և ծարաւ։

Երեխան, որ այդ ժամանակ արդէն ութ տարեկան էր, տեսնում էր այդ ամենը և նրա մանկական սրտում այդ անբարոյական անցքերը տպաւորւում էին ամենայն ճշտութեամբ։

Նա օրէցօր փչանում էր։

Նրա բնաւորութիւնը դառնում էր կոշտ, չար նախանձոտ։

Փողոցը, որ այդ դասի երեխաների համար կատարում է ուսումնարանի դեր, նոյնպէս ներգործեց կօշկակարի երեխայի վերայ։

Նա այդտեղ սովորեց ընտիր հայհոյանք, ամեն տեսակ չարութիւններ և խարդախութիւններ։

Նա ընկերների հետ սկսեց գողանալ ուրիշի պարտէզներից միրգ, վարդ, և երբ ուրիշ երեխաները լցնելով իրենց գրպանները գողացած մրգերով քաշվում էին մի առանձնացած՝ ամայի տեղ և սկսում էին ուտել, կօշկակարի որդին ծախում էր մի քանի կոպէկի իւր գողութիւնով ձեռք բերածը և տանում էր այդ փողերը իւր մորը։

Վերջինը երբէք չէր հարցնում որտեղից է այդ ամենը, երբէք չէր խրատում։

Այսպէս անցաւ Տէր-Եսայու մանկութիւնը։

Նա տաս տարեկան էր երբ ձրիաբար ընդունուեցաւ Ն... քաղաքի ծխական ուսումնարաններից մէկը։

Աւարտելով այնտեղ, նա մտաւ եկեղեցի և սկսեց կատարել դպրի պաշտօնը։

Անցան տարիներ և նա դարձաւ տիրացու և յետոյ ձեռնադրուեցաւ քահանայ և ուղարկուեցաւ Մեծ-Ղարա...սա։

Նրա ծնողները վաղուց արդէն մեռած էին։

Նա ապրում էր իւր ընտանիքով։

Տէր-Եսայու մանկութեան մէջ ստացած տպաւորութիւնները տուին առատ պտուղ։ Նա դարձաւ կոշտ, կոպիտ, անհամակրելի բնաւորութեան տէր մի մարդ։ Իւր

նեղ ընտանեկան շրջանում նա հանդիսանում էր իբրև ինքնակալ բռնաւոր։

Ամենքը վախենում էին նրանից, ամենքը դողում էին նրա առաջ։

Նրա կինը, որ մի խեղճ, մաշուած, կրաւորական անձնաւորութիւն էր, որ չգիտէր հրամայել և միշտ միայն հրամաններ էր լսում, դերձել էր նրա հլու հպատակը, ստրուկը։

Նա այնքան վախենում էր նրանից, որ այդ վախը փոխուել էր մի սնոտիապաշտ անձնանուէր երկրպագութեան։

Գիւղում նոյնպէս բարձր էր Տէր-Եսայու հեղինակութիւնը, մանաւանդ յայտնի շրջանում։

Միայն մի անձն կար, որ լաւ էր ճանաչում նրան և վարվում էր նրա հետ իբրև հաւասարի հետ։

Դա Թեթև Թափող Նազլու-խանն էր, մի պառաւ կին, որի անունը ծանօթ էր ամեն մի Մեծ-ղարա...սեցի գիւղացու։ Նազլու-խանը այն բնաւորութիւններից էր, որքան հին ժամանակներում կարող էին կատարել զանազան պատգամախօսների դեր, միջին դարերում նրանց անպատճառ կայրէին սուրբ հայրերի ինկվիզիցիօնական խարոյկների վերայ, իսկ այժմս, մեր XIX դարում նրանք պարապելով զանազան կախարդութիւններով, աղօթքներով, կարդումներով, միևնոյն ժամանակ շատ լաւ են կատարում լրագրի դերը։ Ամեն մի նորութիւն նախ և առաջ յայտնի էր լինում նրանց և յետոյ արդէն հեռագրական արագութեամբ տարածվում էր ամբողջ գիւղում։

Նրանք մտնում են ամեն մի տուն, մտնում են ամենամտերիմ բարեկամի իրաւունքներով, ամեն ինչ իմանում են, գիտում են, փորփորում են և յետոյ իրենց կա-

մեցածի և իրենց անձնական շահի համեմատ օգտվում են այդ փաստերից, եղելութիւններից, նորութիւններից։

Այդ Նազլու-խանն էր, որ Տէր-Եսայու հրաւէրով եկաւ նրա մօտ։

Տէր-Եսայու և Սարգսի խօսակցութիւնից անցել էր մի շաբաթ, քահանան դիմաւորեց իւր Թանկագին հիւրին և տարաւ նրան տան ամենավերջի սենեակը։

Նրանք մենակ էին, ոչ ոք չէր խառնում նրանց։

Նազլու-խանը բարևեց տէր հօրը և նստելով մինդարով ծածկած թախտի վերայ, սկսեց տղայական պարզամտութեամբ հարևանցօրէն հարցնել բոլորովին աննշան բաների մասին։

Տէր-Եսային նոյնպէս չէր յայտնում գլխաւոր խնդիրը, որի համար և հրաւիրել էր Նազլու-խանին։

Դա մի խաղ էր. ուր երկու դերասաններն էլ շատ լաւ էին խաղում իրենց դերերը։

Վերջապէս Տէր-Եսային մշօրէն նայեց պառաւի երեսին և ասաց.

—Գիտե՞ս, Նազլու-խան, ինչի՞ եմ կանչել քեզ։

—Որտեղի՞ց գիտենամ... Աստուած գիտէ. խորամանկ ձայնով պատասխանեց պառաւը և սկսեց դիտել տէրհօր երեսը։

—Ա՛յ... բանը ինչումն է... մեր տանուտէրը, Մահտեսի-Սարգիս աղան կամենում է կարգուել։

—Ի՞նչպէս... այդ պառաւը, նկատեց ծիծաղելով Նազլու-խանը և նրա կարծես ոսկորացած երեսը ծամռուեց։

—Հա... ի՞նչ ես զարմանում... ինչո՞վ է նա պառաւ... դեռ քառասունուհինգ տարեկան է։

—Դէ... լաւ... լաւ... ասա, ո՞ւմ է ուզում։

—Ո՞ւմ... այ բանն էլ դրանումն է... շատ դժուար է

գլուխ բերել այդ գործը, բայց ի՞նչ արած... մի կերպ հարկաւոր է... ես խոստացայ։

—Վարձատրութիւնը որքան է, հարցրեց Նազլու-խանը։

—Շատ է... շատ... մի՛ վախիր։

Եթէ այդպէս է, ինչի՞ չէ... ասա աղջկայ անունը... կարելի է հեշտ էլ լինի...

—Չէ... չեմ կարծում... աշխատանքդ մեծ պիտի լինի Նազլու-խան... նայիր...

—Մի՛ վախենար... առաջի անգամը չէ... չգիտե՞ս, որ ինձ Նազլու-խան են կանչում։

Եւ պառաւը չեշտեց վերջի խօսքերը։

—Լաւ... լսիր... նա կամենում է իրեն կին առնել Գրիգորի աղջիկը։

—Ո՞ր Գրիգորի... Գողոխենց... այն որ մեռաւ։

—Հա։

Նազլու-խանը ընկաւ մտածմունքի մէջ։

Տէր հայրը լուռ սպասում էր նրա վճռին։

—Ճշմարիտ է, որ դժուար է... ախր Մաչօն Կարօյի հարսնացուն է...

—Այդ ոչինչ... դու այն ասա, որ Շուշանը չ՛ուզենայ տալ իւր աղջիկը իւր մարդու թշնամի Սարգսին...

—Այդ այդպէս է, բայց կարելի է հարկադրել։

—Ի՞նչպէս։

—Ախր նրանք այժմս մեծ դժուարութեան մէջ են, դրացի Մաթաղը ասաց, որ մինչև անգամ մսի և կերակուրի կարօտութիւն են քաշում... կարօն չունի փող... յոյսը դրել է հունձի վերայ...

—Եթէ այդպէս է, կարելի է։

Բայց Տէր-Եսային իրեն միայն յայտնի պատճառներից դրդուած չշարունակեց իւր միտքը և լռեց։

—Կարծում ես, որ նրանց կարելի է մի կերպ նեղել և յետոյ խոստանալ փող, ապրուստ և այդպէս ձեռք բերել Մաշօյին, հարցրեց Նաղլու-խանը։

—Հա… ճիշտ այդպէս… այլապէս անկարելի է… և այդ գործը ես յանձնում եմ քեզ… դու վաղը կերթաս Շուշանի մօտ և կը յայտնես Սարգսի առաջարկութիւնը։ լսիր, ի՞նչ կը պատասխանէ և ինձ կասես… հասկացա՞ր։

—Հա… ուրեմն վաղը ես կը բերեմ պատասխանը… միայն չմոռանաս… այս հեշտ գործ չէ… աշխատանքս ի զուր չանցնի…

—Չէ… չէ… հանգիստ եղիր… գնա… ուրեմն… և Տէր-Եսային բարձրացաւ իւր տեղից։

Նաղլու-խանը հագաւ իւր սև «չալը», առաւ իւր երկար փայտը և դուրս եկաւ սենեակից. «սրահում դրուած էր ճաշի «տրապէզ»ը. Տէր-Եսայու կինը հրաւիրեց Նաղլու-խանին ճաշի։

—Չէ… ժամանակ չունիմ, շնորհակալութիւն, պատասխանեց նա և դուրս եկաւ փողոց։

Տէր-Եսայու ուղեղը զբաղուած էր Սարգսի հարսնախօսութեան հարցով։

Ճաշի ժամանակ նա լուռ էր։

ԺԹ.

Միակերպ, սաստիկ միակերպ անցնում էին օրերը, շաբաթները, ամիսները հանգուցեալ Գրիգորի ընտանիքում։

Գրիգորի մահը կարծես քարացրեց Շուշանին։

Այդ խեղճ, բարի կինը այլ ևս չէր արտասւում, բայց այնուամենայնիւ խորին տխրութիւնը, սուգը միշտ բռնում էին նրա հոգին և սիրտը։

Ոչինչ նրան չէր հետաքրքրում, նա թողել էր մինչև

անգամ իւր տնային գործը, պարապմունքը և առանձնացած, անզգայ դէպի ամեն մի կենսական հարց և երևոյթ, նա համբերութեամբ սպասում էր իւր մահին. նա ամեն ժամ խնդրում էր Աստուծուց մահ։

Այդ նրա կարծիքով կազատէր տանջանքներից։

Նա սաստիկ ծերացել, թուլացել էր։

Նրան անկարելի էր ճանաչել։

Ժամանակով նրա սև, խիտ մազերը սկսել էին սպիտակել, տեղ տեղ թափուել։

Նրա աչքերը արտասուքից փչացել էին։ Մի սպիտակ բան ծածկել էր աչքերի սևը։

Շուշանը սկսել էր վատ տեսնել։

Կուրութիւնը սպառնում էր նրան։

Մաշօն նոյնպէս տխուր էր. միայն նրա տխրութիւնը փարատւում էր տնային անվերջ աշխատանքով։

Ֆիզիքական աշխատութիւնը մոռացնել էր տալիս նրա հոգեկան վիշտը։

Նա վախենում էր երես առ երես նայելու ապագային։

Նա երբէք չէր տալիս իրեն հարց, թէ ինչ է լինելու իւր վիճակը։

Նա ապրում էր օրէց օր։

Սէրն էր միայն, որ կենդանութիւն էր տալիս համարեա անկենդան Մաշօյին։

Կարօն ստէպ ստէպ այցելում էր այս ընտանիքը, որը Գրիգորի մահը յանձնեց նրա խնամքին։

Նա բերում էր իւր հետ այդ մութ, ճիշտ վանական կեանքի շրջանը, յոյս, կենդանութիւն և եթէ ոչ ծիծաղ, գոնէ տխուր ժպիտ. Մաշօն այն օրերը, երբ նրանց մօտ էր լինում, Կարօն կերպարանափոխւում էր։

Այն, ինչ որ պատահեց նրանց մէջ ծեր թթենու

տակ, կապեց անխզելի կապերով այդ երկու արարածներին։

Սիրահարական յարաբերութիւնները չարունակվում էին նրանց մէջ։

Եւ երբ պատահում էր, որ Մաշօն սկսում էր վհատել, գանգատուել փողի պակասութեան, չքաւորութեան վերայ, Կարօն միշտ աշխատում էր քաջալերել նրան և խրախուսել։

Կարօյի խօսքերը տալիս էին Մաշօյին մի բարոյական ոյժ, որ անհրաժեշտ էր նրան անվերջ զրկանքների հետ պատերազմելու միջոցին։

Բայց քանի ժամանակը անցնում էր, այնքան էլ աւելի ստէպ ստէպ աղքատութիւնը զարկում էր Շուշանի խրճիթի դուռը։

Եւ երբ մի գեղեցիկ գարնանամուտ օր ներս մտաւ Նազլու-խանը, Շուշանի ընտանեկան գործերը սաստիկ խառնուած էին։

Ահա երկու օր էր, որ նրանք նստած էին առանց փողի։

Կարօն նոյնպէս ոչինչ չունէր և այս քանի օր է չէր երեւում։

Նազլու-խանը մտաւ ներս, լուրջ դիտեց չուրջը և նրա չորացած, մոխրագոյն շրթունքներով անցաւ մի կծու, բայց ուրախ ժպիտ։

Աղքատութիւնը աչքի էր ընկնում։

—Բարև ձեզ... բարև ձեզ... այս տունը աղէկութիւն *)... ինչպէ՞ս էք... լա՞ւ էք, առողջ էք։

Շուշանը հազիւ գլուխ տուեց Նազլու-խանին։

Մաշօն վազեց նրա առաջ և համբուրեց նրա ոսկոր դարձած, խորշոմած ձեռը։

*) Սովորական մի խօսք, որ ասվում է բարեւի հետ։

—Հա՜... շատ ապրես, զաւակս, Աստուած քեզ բարի դուռ բանայ *)... ի՞նչ էք անում...

—Ի՞նչ անենք... այս անբաղդութիւնը, որ պատահեց, սպանեց մեզ...

—Ի՛նչ արած... կամքը Աստուծոյ է... եթէ մեր ձեռում լինէր դրա միջոցը, ի հարկէ... բայց արի տես որ մարդս ոչինչ չէ կարող անել, յայտնում էր իւր կարեկցութիւնը Նազլու-խանը։

—Չէ... ախր նա դեռ շատ էր հարկաւոր մեզ... իւր զաւակներին... որբ մնացինք, անտէր, անօգնական։

Եւ արտասուքի հեղեղը կրկին թրջեց Շուշանի անփայլ, հիւանդոտ աչքերը։

—Է՛հ... Աստուած տուեց, Աստուած առաւ... մեռնեմ Աստուծոյ զօրութեանը, նրա սուրբ անուանը ղուրպան **)... Աստուած ողորմած է, մի ճար կանէ ու կօգնէ ձեզ... ի՞նչ ես այդպէս մաշվում... տես հարսնացու աղջիկ ունես, կկարգես ու կերթաս հարուստ փեսայիդ մօտ կապրես, քեզ միթէ՞ շատ է հարկաւոր... մի փոր հաց և մի ձեռք հագուստ... Չէ, Շուշան, այդպէս չասես... մեղք է...

Եւ Նազլու-խանի խօսքերը այնքան սրտակից, այնքան մտերմական էին, որ կարելի էր կարծել, որ իսկապէս բխում են նրա սրտից։

Շուշանը շարժեց գլուխը։

—Չէ... չէ... դեռ մարդուս, Աստուած լուսաւորի նրա հոգին, գերեզմանի հողը թաց է, դեռ նրա հոգին չէ դադարել թափառելուց... դեռ տարին չէ անցած... հարսնախօսութիւնը, զաւակ կարգելը մեր գործը չէ... թող ուրիշները անեն այդ։

*) Օրհնութեան մի տեսակ։

**) Մատաղ։

—Ես խօ չեմ ասում այժմս... կարելի է ամառը կամ ձմեռնամուտին... իսկ մարդ արդէն կայ... լաւ մարդ... հարուստ... պատուաւոր...

—Չէ... չէ... իմ աղջիկս ունի արդէն փեսացու... շնորհակալութիւն, որ նեղութիւն ես քաշել, նկատեց Շուշանը և վերկացաւ տեղից, որ հրամայէ մի բան բերել Նազլու-խանի համար։

Մաշօն մի րոպէից դրեց սեղանի վերայ մի աման մուրապայ և քանի մի տեսակ չոր մրգեղէն, որ պարտքի էր առել խանութպանից.

—Համեցէք, Նազլու-խան, համեցէք խնդրեմ, հրաւիրեց Շուշանը։

—Էհ... Աստուած լուսաւորէ մարդուդ հոգին... լոյս իջնի նրա գերեզմանը, ասաց Նազլու-խանը և կպցրեց իւր չրթունքներին օղիի բաժակը։

Նազլու-խանը ուտում էր մտածում էր իւր գործի անաջող ելքի մասին։

—Շատ դժուար է գլուխ բերել այս... շատ դժուար է, անդադար անցնում էր նրա մտքով։

Երբ կեր ու խումը վերջացաւ, Նազլու-խանը վերկացաւ տեղից, շնորհակալութիւն յայտնեց և դառնալով Շուշանին ցած ձայնով նկատեց։

—Եթէ այնպէս ծախելու մի բան ունիս։ կանչիր... կը ծախեմ... օղ կամ ապարանջան... ինչ ուզում է լինի գնողներ կան։

Շուշանը ոչինչ չպատասխանեց։

—Էհ... ցտեսութիւն... շատ ապրիք, ասաց Նազլու-խանը և քաշելով գլխին իւր անբաժան սև շալը, հեռացաւ ծերունի Գրիգորի տնից։

—Եթէ... ծախելու... բաներ ունիս... անցաւ Շուշանի

մտքով... Աստուած իմ, միթէ արդէն այդ օրին հասանք, ասաց նա ինքն իրեն և տխուր, լուռ քաշուեցաւ իւր սովորական անկիւնը։

Ի.

Նազլու-խանի գալուստը չփոխեց Մաշօյին։

Նա գիտէր որ Նազլու-խանը նախ՝ շատ սակաւ էր լինում իրենց մօտ և երկրորդ՝ միշտ նրա գալուստը անպատճառ ունենում էր իւր յայտնի նպատակը և հետևանքները։

Մաշօն հետաքրքրւում էր իմանալ բանի էութիւնը։

Նա կարծեց, որ մայրը ինքը առաջինը կսկսի խօսել այդ մասին։

Բայց Շուշանը կարծես մունջ լինէր։

Այն ժամանակ Մաշօն ինքը դիմեց նրան.

—Ի՞նչ էր ուզում Նազլու-խանը, մայրիկ, հարցրեց նա վերոյիշեալ դէպքից մի քանի օր յետոյ։

—Ոչինչ... եկել էր էլի... վաղուց է չէր եղել մեր տանը։

—Չէ... ասա խնդրեմ... ես կամենում եմ իմանալ...

—Ասում եմ քեզ՝ բան չկայ։

—Չէ ախր, մայրիկ, ես գիտեմ որ նա այնպէս չի գալ։ Օ՛խ, տէր Աստուած։

—Ասա... տեսնում ես, ես անհանգիստ եմ։

—Դէ... լաւ... գլուխս տարար էլի... ծախու բաներ հարցրեց... չունեմ արդեօք։

—Յետո՞յ։

—Յետոյ... քեզ մի փեսացու էր ճարել։

Արիւնը խփեց Մաշօյի երեսին և նրա թշերը սաստիկ կարմրեցան։

—Իսկ դո՞ւ... դու ի՞նչ ասացիր։

—Վայ ինձ… ինչ պէտք է անէի… ասացի, որ դու արդէն նշանուած ես, որ կարօն մեր փեսացուն է։

Մաչօն ոչինչ չպատասխանեց։ Նա լուռ կամենում էր հեռանալ մօրից, երբ նրա ականջին հասնում էին վերջի խօսքերը։

—Ասում էր թէ հարուստ, պատուաւոր մարդ է… ձեզ, ասում էր, աղքատութիւնից կը հանէ…

Մաչօն նայեց իւր մօր վերայ և դանդաղ քայլերով դուրս եկաւ սրահը։

Նրա ներսում, այնտեղ, սրտի մօտ մի ինչ որ խեղդում էր նրան. նրա շնչառութիւնը արգելվում էր, նա ագահութեամբ սկսեց ծծել օդը։

—Հարուստ է, ապա—նրա մտքով, մեզ էլ կը հարըստացնէ… այ ինչով է կամենում որսալ ինձ… խեղճ… չգիտէ, որ ես սիրում եմ, սաստիկ, սաստիկ սիրում եմ կարօյիս… հոգիս, աղաւնիս, եթէ դու այստեղ լինէիր, դու թոյլ չէիր տալ, որ անպատուեն քո Մաչօյին… այնպէս չէ…

Եւ նրա աչքերը լցուեցան արտասուքով։

Խառնուշփոթ կերպով անցնում էին նրա ուղեղով տխուր, սգաւոր մտքերը։

—Մենք աղքատ ենք… կարծում են որ մայրս կը ծախէ ինձ մի փոր հացի համար… սխալվում ես դու, այ անկուշտ փեսայ… բայց ով է այդ ինձ խնդրողը, ով է, թշուառ…

Եւ նախատինքների հեղեղը թափվում էր անծանօթ փեսայի գլխին։

—Ես լսեցի… նա հարցնում էր օղերի մասին… արդեօք չենք ծախել… օօ… նա կամենում է իմանալ մեր աղքատ դրութիւնը և յետոյ.. բայց եթէ իրաւ նա հասնի իւր նպատակին… եթէ իրաւ ինձ բաժանեն կա-

րօյից և տան ուրիշին, այն ժամանակ, Աստուած իմ, այն ժամանակ…

Խուլ հեկեկանքները խեղդեցին նրա ձայնը։

Նա սկսեց լալ։

—Չէ… ես լաւ է կը մեռնեմ… ջուրը կ՚ընկնեմ, կը խեղդուեմ, բայց իմ կարօյից չեմ բաժանուիլ… երբէք… ախ… ինչու նա չէ գալիս… այս չորս հինգ օր է, որ ես նրան չեմ տեսել… արի, հոգիս, արի, կարօ ջան…

Եւ նա արտասուախառն աչքերով նայեց դէպի բակը։

Այնտեղ ոչ ոք չկար։

Մի րոպէ էլ մնաց կանգնած սրահում Մաչօն. կրկին յուսահատ նայեց բակը և դանդաղ քայլերով մտաւ ներս։

Շուշանը իւր աչքերի վատ տեսնելու պատճառով ոչինչ չնկատեց, նա չիմացաւ, որ մի րոպէ առաջ Մաչօն լացել է։

ԻԱ.

Գարունը մօտենում էր։

Օրէց օր արևը սկսում էր աւելի և աւելի տաքացնել։

Նրա ճառագայթների ազդեցութեան տակ հալվում էր ձմեռուայ ձիւնը և կազմելով փոքրիկ, կեղտոտ լճակներ դեռ չհալուած սպիտակ ձիւնային դաշտի մէջ, սևին էր տալիս ահագին տարածութեան վերայ։

Հողը ագահութեամբ ծծում էր ջուրը. նա սկսել էր իւր աննկատելի, բայց անդադրում, հրաշալի գործունէութիւնը։

Փողոցներում սաստիկ ցեխ էր։

Գիւղացիները մինչև անգամ անկարող էին արտահանել քաղաք իրենց արդիւնաբերութիւնները։

Ամեն մի հաղորդակցութիւն Ն… քաղաքի և Մեծ-Ղարա…սա գիւղի մէջ ընդհատուած էր։

1873 թուականի գարունը սկսուել էր շատ վաղ։ Դա վատ նշան էր համարվում։

Գիւղում կարծում էին և համոզուած էին համարեա, որ այդ տարուայ ցանքսը լինելու էր շատ վատ։

—Հացը կը փտի, ասում էին գիւղացիները։

«Հացը կը փտի»—այդ միտքը պաշարել էր ամեն մէկին, որ իւր ամբողջ հարստութիւնը, իւր դառն քրտնքի արգասիքը յանձնել էր հողի քմահաճութեանը։

Կարծես այդ ամենը բաւական չէր խեղճ գիւղացու համար և ահա սկսուեցան երևալ զանազան տարափոխիկ հիւանդութիւններ։

Երեխաները անդադար մեռնում էին։

Գիւղում տիրում էր լացը։

—

Այդ միջոցին Նազլու-խանը կարողացաւ տեսնուել Տէր-Եսայու հետ.

Նա յայտնեց նրան Շուշանի դրութիւնը, նրա աղքատութիւնը և ասաց որ Մաչօն արդէն նշանած է։

—Չգիտեմ.. կը կարողանանք գլուխ հանել այդ գործը… կարծում եմ միայն որ շատ դժուար կը լինի, վերջացրեց նա իւր խօսքը։

—Հարկաւոր է նեղել… օրէց օր նեղել… այդ միակ միջոցն է, նկատեց տէր հայրը։

—Ի՞նչպէս։

—Շատ հասարակ… պէտք է ասել խանութպանին, որ ձրի ոչինչ չտայ նրանց… գիւղական վարչութիւնից հարկաւոր է մարդ ուղարկել, որ Գրիգորի հողն առնեն Շուշանի ձեռից… որովհետև արու զաւակ, այսինքն հոգի, որ կարող էր կազմել հարկային մի անհատ, չկայ նրանց ընտանիքում… միևնոյն ժամանակ անհրաժեշտ է միշտ

նրանց ականջին երգել միևնոյն երգը, ինքն իրեն անում էր իւր դատողութիւնները և հաշիւները Տէր-Եսային։

Նազլու-խանը ոչ մի բառ չթողեց նրա խօսակցութիւնից։

—Այս բոլորը ես կը յայտնեմ Սարգիս աղային… տեսնենք այն ժամանակ ինչպէս կը կարողանայ այդ յիմար, անխելք Շուշանը դիմադրել մեր ցանկութիւններին… Թէ կարծում է Կարօյի՞ մօտ օգնութիւն գտնել… ինչ հարուստ մարդ է գտել… նա ինքն էլ ինչ արածը չգիտէ… ոչ թէ ուրիշ ընտանիք էլ պահել կարողանայ։

—Հա… եթէ այդպէս… կարելի է որ գլուխ հանենք բանը. նկատեց Նազլու-խանը և վերկենալով տեղից պատրաստուեց գնալու։

Տէր-Եսային հանեց գրպանից մի քանի հատ թուղթ փող և դրեց նրա ձեռը։

Նա աշխատում էր օր առաջ հասնել իւր բաղձանքին։

Կաշառքը ունեցաւ իւր ազդեցութիւնը։

ԻԲ.

Նազլու-խանի նման կանայք միշտ և ամեն տեղ կատարում են մի տեսակ յայտարարութիւնների դեր. մանաւանդ այդ ընդունուած է և տարածուած է գիւղում։ Նազլու-խանի նման երեւոյթները շատ բնական են մեր հայ գիւղերում. Նրանք արգասիք են գիւղական հասարակութեան մտաւոր և բարոյական ամենաստոր զարգացման։ Այդ տեսակ կանայք միշտ և հանապազ դառնում են ընտանեկան վրդովմունքների, անհամաձայնութիւնների և մինչև անգամ քայքայման պատճառ։ Չունենալով իրենց սրտում ոչինչ սուրբ, ոչինչ նուիրական, նրանք ամենայն խստութեամբ ոտնակոխ են անում

ուրիշի սրբութիւնը, ուրիշի երջանկութիւնը. դրանք գազաններ են, որոնք եթէ կուշտ են—չեն խածնում, իսկ եթէ սոված—վայ անցորդի գլխին. Նրանց ճանկերից ազատուիլը այնուհետեւ շատ դժուար է դառնում խեղճի համար։ Եւ այդ էր պատճառը, որ մի գեղեցիկ օր ամբողջ Մեծ-Ղարա...սա գիւղը իմացաւ, որ Սարգիս-աղան, տանուտէրը, ուզել է Շուշանի աղջիկը, Մաշօյին և ստացել է մօր հաւանութիւնը։ Այդ մի սուտ էր, որ հնարել էր և յայտարարել Նազլու-խանը. դա արած էր դիտմամբ,

Նա կարծում էր, որ երբ այդ լուրը իբրև արդէն իրագործուած փաստ և եղելութիւն, հասնի Շուշանի ականջին, նա, վերջինը, կամայ-ակամայ կը համաձայնուի նրանց առաջարկութեան և իւր աղջկայ բարի անուան և նամուսի խաթրին, կտայ նրան Սարգսին կնութեան։

Սխալւում էր արդեօք Նազլու-խանը թէ ոչ,—դժուար է ասել։

Նամուսը, իրաւ, մեր հասարակութեան, մանաւանդ դա յետ ընկած, անզարգացած խաւերում, մի ոյժ է, որի վերայ հիմնվում են անձնական, ընտանեկան և մինչև անգամ հասարակական յարաբերութիւնները։

Գիւղական մութ անկիւններում ինքնակալ տիրում է նամուսի վախը. այնտեղ նամուսին պաշտում են, նրա առաջ խունկ են ծխում և զոհեր են բերում...

Եւ իրաւ, երբ այդ լուրը հասաւ Շուշանի ականջին, նա մնաց շուարած։

Նրա ընտանեկան գործերը սաստիկ չփոթ և խառն դրութեան մէջ էին։

Արդէն ծախուած էր ամեն ինչ, ինչ որ կարելի էր միայն ծախել։

Կարօն էր, որ վերջի երկու ամիսը պահում էր այդ խեղճ, որբ ընտանիքը։

Նա անում էր այդ այնպէս, կարծես կատարում էր իւր վերայ դրած պարտականութիւնները։

Բայց դժբաղդաբար այնպէս չէին նայում դրա վերայ նրա մայրը, քոյրերը և ազգականները։

--Մինչև երբ դրանք նրա վզին պիտի լինին, գանգատվում էին նրանք, մինչև երբ... միթէ տեսնուած բան է, որ փեսացուն պահէ իւր հարսի ընտանիքը... մենք էլ խեղճ, աղքատ մարդիկ ենք, մեզ էլ հարկաւոր է... Այդ գանգատը անյայտ խուլ ճանապարհներով, ի հարկէ զարդարած և ազաւաղած, հասել էր Շուշանի և Մաշօյի ականջին։

Նրանք վիրաւորուած էին. մանաւանդ Մաշօն չէր կարողանում մարսել այդ անպատուութիւնը։

—Ուրեմն իմ աչքս են հանում այդ փողերով, ասում էր նա ինքը իրեն, ուրեմն իմ երեսիս են տալիս... ամօթում են, և նա սկսում էր լալ, լալ մենակ, բռնի խեղդուած, անձայն արտասուքներով։

—Ի՞նչ երեսով նայեմ ես նրան, շարունակում էր նա. ինչ երեսով... ախր ամօթ է... ամօթ... Եւ նա անզօր լռում էր։

Այդպիսի րոպէներին Մաշօյի աչքերի առաջ պատկերանում էր նրա հանգուցեալ հայրը, ծերունի Գրիգորը։

Ահա նա պառկած է անկողնում, մաշուած, նիհարացած, մահուան կնիքը ճակատին, ահա նա այնպէս կշտամբողական հայեացքով նայում է Մաշօյի երեսին և շարժում է իւր ալեզարդ գլուխը։

Ի՞նչ է կամենում ասել նա, ինչ...

Իհարկէ նա ամօթում է իւր աղջկանը, նա չէ ներում նրան։

—Հայր... հայրիկ... բայց ինչ անեմ ես... երբ... երբ ես այնպէս սիրում եմ նրան... ախր նա իմ կեանքս է...

Եւ կրկին արտասուքի հեղեղը թրջում է նրա աչքերը… կրկին ցնորքը պաշարում է նրան։

—Մի՞թէ… բաժանուել նրանից… այսպէս… առանց պատճառի… միանգամից… ոչ… ոչ այդ վեր է իմ ուժերից… անհամեմատ վեր։

Եւ նա վախեցած կտրում է իւր մտածողութեան, այդ տխուր, մութ մտքերի թելը։

—Բայց ի՞նչ… ի՞նչ… Աստուած իմ, ազատիր ինձ այս դրութիւնից և կամ… կամ առ իմ հոգիս…

Անցնում էր մի քանի րոպէ լռութեան մէջ, բայց տխուր մտքերը հանգիստ չէին տալիս Մաշօին…

Նա պէտք ունէր խոստովանքի։

Նա զննում էր իւր «ես»-ը։

—Բայց եթէ այդպէս… ինչ կը լինի մօրս դրութիւնը… ախր նա կը մեռնի սովից և ծարաւից… ախր մենք աղքատ ենք, բոլորովին աղքատ։

Եւ երբ Շուշանը հարցնում էր Մաշօյի արցունքների պատճառը, խեղճ աղջիկը ոչինչ չէր պատասխանում նրան։

Նա յուսահատ նայում էր նրա երեսին և կրկին լալիս։

Օրերը անցնում էին արցունքների և տանջանքների մէջ։

Այդ կարող չէր երկար տևել։

Հարկաւոր էր միանգամից վերջ տալ այդ անել դրութեան։ Հարկաւոր էր տեսնել Կարօյին։

Հացի խնդիրը օրէցօր սաստկացնում էր իւր անողորմ պահանջները։

ԻԳ.

Շուշանի տանը կերուել էր արդէն վերջի հացի կտորը, երբ մայր ու աղջիկ երես առ երես, անկեղծ

խոստովանեցին իրենց տանջող, մաշող մտքերը և վըշտերը։ Վերոյիշեալ դէպքից անցել էր մի շաբաթ։

—Մաշօ ջան… դու տեսա՞ր Կարօյին, հարցրեց մի օր Շուշանը։

—Ոչ, մայրիկ… նա ինձ պէտք չէ այլ ևս։

—Ի՞նչպէս…

—Այնպէս…

Եւ նրա ձայնը սկսեց դողալ։

—Ախր… մենք ոչինչ չունինք… վաղը ինչ ճաշենք, ինչ ուտենք։

Եւ պառաւի աչքերում, որոնք ահա մի շաբաթ է որ սաստիկ ցաւում էին և աղօտ էին տեսնում, երևացին երկու խոշոր արտասուքներ։ Ցերոնի Գրիգորի այրին լալիս էր աղքատութեան առաջ։

Նա ցնցուեց։

—Ոչինչ… մայրիկ… մի լար… վաղը մենք կունենանք ամեն ինչ։

—Ի՞նչպէս։

—Ես համաձայն եմ… դառնալ… Սարգսի… կինը։

Պառաւը սկսեց բարձրաձայն լալ։

Մաշօն համարեա ուշաթափվում էր։

Մեռելային սպիտակութիւնը ծածկել էր նրա առանց այն էլ սպիտակ, կապոյտ մատնաչափ բիծերով, երեսը։

Այդ րօպէին նա գիտութեամբ, կամաւ փշրում էր իւր կեանքը, նա դամբանական էր կարդում իւր երջանիկ անցեալին, իւր յոյսերին, ակնկալութիւններին…

—Այսպէս… ամեն ինչ… վերջացած է… կարող ես ասել Նազլու-խանին… որ ես… համաձայն եմ… միայն այսօր ինձ հարկաւոր է տեսնել… Կարօյին… ա՛խ… հոգիս… սիրելիս… ո՞ւր ես… ինչո՞ւ թոյլ ես տալիս, որ քո Մաշօդ… այսպէս… կորչի…

Հեծկլտանքները խեղդում էին նրան։

Նա դողում էր ամբողջ մարմնով։

—Հանգստացիր, զաւակս, դեռ ինչ կայ... տեսնենք կարօն ինչ կասէ, մխիթարում էր Շուշանը։

—Հարկաւոր չէ... հարկաւոր չէ... ինչ կարող է նա անել, երբ մայրը չէ ուզում ինձ...

Կրկին հեկեկանքներ, կրկին արցունքներ։

Դրսում սկսել էր մթնել։

Խաւարը տիրել էր սենեակում։

Եղանակը վատ էր և քամի։

Թանձր անձրևը մաղում էր երկնքից։

Նրա կաթիլները զարնուելով պատուհանի ապակիներին, ընդհատում էին իրենց տխուր մեղեդիով գիշերային լռութիւնը։

Մաշօն անկողնումն էր։ Մութ, սև, տխուր մտքերը պաշարել էին նրան։

Դժուար էր, շատ դժուար նրա զոհաբերութիւնը։

Կը կարողանա՞յ արդեօք հաստատ մնալ իւր խօսքին թէ ոչ...

Ո՞րը կը յաղթէ, սէրը, անհուն, վառ սէրը, թէ... թէ որդիական պարտաճանաչութիւնը։

—

Միւս առաւօտ արդէն ամեն ինչ վճռուած էր։

Նազլու-խանը տարաւ Շուշանի պատասխանը Մահտեսի-Սարգսին։

Վերջինը առել էր արդէն իւր կարգադրութիւնները։

Այն թուղթը, որի մէջ ասուած էր որ Շուշանից պիտի խլուի Գրիգորի տուած հողը, արդէն պատրաստ էր և սպասում էր ստորագրութեան։

Մանրավաճառին խստիւ հրամայուած էր ոչինչ ծրի չտալ այդ ընտանիքին։

Եւ երբ Նազլու-խանը, իբրև մի աւետիչ, բերեց այդ ուրախ լուրը, Սարգիսը տեսաւ որ ամեն ինչ իզուր է արդէն։

Գործը այնպէս էլ գլուխ եկաւ։

Նա ճղեց թուղթը և սկսեց արագ արագ ման գալ վարչութեան սենեակում։

Երբ նա արդէն հասել էր իւր բաղձանքին, մի ինչ որ անհանգստացնում, վախեցնում էր նրան։

Դա ապագայի հարցն էր։

Ամուսնութիւնը ակներև է, որ բանի էր։

Մաշօն սիրում էր Կարօյին։

Այդ յայտնի էր Սարգսին։

Կը մոռանա՞յ արդեօք նա նրան թէ ոչ. կը կարողանա՞յ սիրել իրեն, Սարգսին... Ահա ինչն էր տանջում բաղդաւոր տանուտէրին։

Նա ընկաւ մտածմունքի մէջ, երբ Նազլու-խանի ձայնը սթափեցրեց նրան։

—Դէ... «բարի սահաթի լինի», *) Սարգիս աղա, բաղդաւոր լինիս... Աստուած ձեզի միասին ծերացնէ։

—Հա... ինչ հա... շնորհակալութիւն, առ այս քեզ, ասաց նա, և մի կարմիր թուղթ փող անցաւ Նազլու-խանի ձեռը։

Վերջինը նայեց աչքի ծայրով փողի վերայ և իսկոյն ձգեց գրպանը։

Կարծես նա անբաւական լինէր։

—Էհ... մնաս բարև, ասաց նա և դուրս եկաւ սենեակից։

Մահտեսի-Սարգիսը ոչինչ չպատասխանեց։

Նա շարունակում էր ման գալ սենեակում անկիւնից անկիւն։

---

*) Մաղթանք։

ԻԴ.

Մաշօն Սարգսի հարսնացուն է։

Այդ արդէն փաստ էր, որ գիտէր Մեծ-Ղարա...սայի ամենավերջի փողոցի երեխան անգամ։

Գիտէր ուրեմն և Կարօն։

Առաջի անգամ երբ նա լսեց այդ զարհուրելի լուրը, նա չհաւատաց։

Բայց օրէցօր լուրը աւելի և աւելի հաստատվում էր։

Դրա մասին արդէն սկսեցին խօսել Կարօյի ընտանիքում։

Կարօն երբ իմացաւ, որ եղելութիւնը ճիշտ է, մնաց քարացած։

Մի բան կոտրուեց նրա ներսում։

Կարծես տաք ջուր էին ածել նրա գլխին։

Նա շուարած էր։

—Ի՞նչպէս... միթէ... իմ Մաշօս... իմ հոգիս... ուրիշին, մեքենայաբար մրթմրթում էին նրա ներքին ջերմութիւնից այրուած, չորացած շրթունքները։

—Ոչ... ոչ... այդ անկարելի է... դա կը լինէր շատ անխիղճ, դա կը սպանէ ինձ... Մաշօ... Մաշօ... միթէ... դու... բայց արտասուքները խեղդում էին նրան և նա անզօրացած ընկնում էր բակի նստարանի վերայ։

Սառը քրտինքը ծածկել էր նրա ճակատը և ամբողջ մարմինը։

Աչքերը, այդ սուր, կրակոտ աչքերը, փայլում էին մի ֆոսֆորական կրակով։

Նա ջերմում էր։

—Գնամ... իրենից հարցնեմ... կարելի է սուտ է... կարելի է ինձ խաբում են... հա... իմացայ... ինձ խաբում են, որ ես նրան չառնեմ... օօ... ես գիտեմ... դա

նրանց գործն է... նա աղքատ է... հա... բայց ով... մենք դեռ կը տեսնենք։

Եւ նրա գլուխը անզօր կռանում էր ցած։

Զարմանալի երևոյթ. երբ նա արդէն վճռում էր գնալ անձամբ տեսնել Մաշօյին, երբ նա արդէն վեր էր կենում նստարանից, մի անյաղթելի ոյժ մղում էր նրան յետ և կրկին թուլացած ընկնում էր ցած։

Ինչից էր նա վախենում...

Միթէ այդ ամենը իրագործուած փաստ չէր...

Միթէ դեռ կարելի էր կասկածել...

Անցեալի, երջանիկ, լոյսերով լի անցեալի պատկերը մի ակնթարթում անցաւ Կարօյի աչքերի առաջ։ Ահա Մաշօն իւր հրապուրիչ, դիւթական գեղեցկութեամբ լուսնեակ գիշեր, փայլուն աստղեր, ծեր թթենին, ջերմ համբոյրներ, իսկ այնտեղ, հեռու, հեռու սոխակի սիրտ կտրտող սիրոյ ողբը։

—Օ՛օհ... Աստուած իմ, և ես կորուցի այս... ամենը... իմ կեանքս փչրուեց... էլ ինչո՞ւ ապրել... ինչո՞ւ։

Կարօն կրկին սկսեց լալ։

Արտասուքները հեղեղի նման թափվում էին նրա աչքերից։

Նա կատաղաբար հարուածում էր ինքն իրեն։

Ոչ մի ցաւ, ոչ մի աղաղակ։

Գազանը զարթել էր նրանում։

Եւ այդ գազանը մահացու կերպով վիրաւորուած էր։

Կարօն բարձրացաւ տեղից և երերալով հազիւ արեց մի քանի քայլ և տապալուեց գետին։

Նա խրեց իւր երեսը հողի մէջ և սկսեց խուլ հեկեկալ։

Անցան ժամեր։

Վերայ հասաւ գիշերը։

Արդէն ցրուեց։

Բայց Կարօն անշարժ պառկած էր գետնի վերայ։

Նրա ձայնը կտրուել էր։

Նա արթուն էր։

Նա անձայն ողբում էր իւր սև օրը և երբեմն երբեմն մռնչում էր, մռնչում էր գազանի նման։

Նրա հեկեկանքների խուլ ձայնն էր, որ ընդմիջում էր գիշերային խոր, կարծես մեռելային լռութիւնը։

ԻԴ.

Մեծ-Ղարա...սա գիւղի տանուտէրը պատրաստուել էր որքան կարելի է շքեղ և փառաւոր կատարել իւր հարսանիքը։

Ամբողջ գիւղը համարեա կանչուած էր։

Ամեն պատրաստութիւն տեսնուած էր։

Գինին, օղին, մատաղը, խորովածը—ամեն ինչ լինելու էր տանուտիրոջ հարսանիքին։

Ասում էին մինչև անգամ, որ Սարգիս աղան հրաւիրել է Ն... քաղաքից մի քանի Թափառական երաժիշտներ։

—Որքան լաւ և ուրախ կը լինի, ասում էին միմեանց դեղջկուհիները, որքան կը պարենք։

—Դու ինչ ես հագնելու... ծո՞ր չորդ։

—Ես նոր եմ անիլ տուել... ինչ լաւ է... այ, կտեսնես։

—Նախանձում եմ քեզ... իսկ ես չունիմ ոչինչ հագնելու։

Այս և սրա նման խօսակցութիւններ կարելի էր լսել գիւղի ամեն անկիւնում։ Ամենքը անհամբեր սպասում էին հարսանիքի օրին։

Հասաւ վերջապէս և նշանակած օրը։

Եկեղեցու զանգերը աւետեցին գիւղացիներուն այդ մասին։

Խուռն ամբոխը լցուել էր եկեղեցու բակը։

Աչքի էին ընկնում կանացի կարմիր, կանաչ, դեղին շորեր։

Սպասում էին հարսի և փեսայի գալստեան։

Ահա երևացին և նրանք։

Մաշօն այլանդակուած, սաստիկ սպիտակ երեսով շրջապատուած իւր ընկերուհիներով, շքեղ զարդարած, դանդաղ քայլերով մտաւ ներս։

Սարգիսը նոր շորերը հագին հպարտօրէն, աքաղաղի նման, գնում էր առաջ։ Նրա խղճալի երեսը այս վերջի օրերս կարծես աւելի խղճուել էր. նրա վերայ կարելի էր նշմարել մի անհուն երջանկութեան ժպիտ. Սարգիսը անչափ ուրախ էր։ Այն վախը, որ երբեմն կար նրա սրտում, արդէն անցել էր։ Նա հասաւ իւր նպատակին։

Ժամասացութիւնը սկսուեց։ Քահանան արդէն կարդում էր պատշաճաւոր գլուխը Աւետարանից, երբ Մաշօն սաստիկ ճիչ արձակեց և գլորուեցաւ գետին։ Նա ուշաթափ էր։ Ամբոխը սկսեց տրտնջալ. այդ վատ նշան էր։

Հարսին մի կերպ ուշքի բերին և խնդրելով Տէր-Եսայուց մի կերպ շուտ աւարտել կարգումը, դուրս եկան եկեղեցուց։

Մաշօն Սարգսի կինն էր։

ԻԵ.

Անցել էր երկու շաբաթ։

Կարօն այդ միջոցին համարեա տանը չէր ապրում։

Նա հեռանում էր դաշտը և ժամերով, նստած այնտեղ, մտածում էր, ինչեր էին անցնում նրա ուղեղով...

Աստուած գիտէ։

Նա չէր կարող մարսել այն դժբաղդութիւնը, որ հասել էր նրա գլխին։

Մաշօն, նրա ամենասիրելի Մաշօն — ուրիշին, — այդ միտքը գնդակի նման մտել էր նրա բորբոքուած ուղեղը և տանջում էր նրան։ Մի րոպէ անգամ այդ միտքը չէր տալիս նրան հանգիստ։

Հասնում էր գիշերը և Կարօն վերադառնում էր տուն։ Այնտեղ նա ոչ ոքի հետ չէր խօսում։

Միւս առաւօտ, վաղ, անլուայ նա կրկին գնում էր դաշտը, կրկին ամբողջ օրը մաշվում, տանջվում և գիշերը վերադառնում տուն։ Նա արդէն չէր լալիս։ Անցնելով ամեն օր «դժբաղդի» Ղուկասի օղատան առաջից, Կարօն զգում էր, թէ ինչպէս մի ոյժ մղում էր նրան այնտեղ, ցեխոտ, ցուրտ փողոցից դէպի այն տաք, լուսաւորած սենեակը, ուր լսվում էին ուրախ, անհոգ երգեր և բարձրաձայն ծիծաղ։ Կարօն մի րոպէ կանգնում էր մինչև անգամ օղատան դռների մօտ և յետոյ կարծես սպանելով իւր մէջ ցանկութիւնը, նա շտապով հեռանում էր այնտեղից։

Անցնում էին օրեր և Կարօն զգում էր ինչպէս այդ ցանկութիւնը օրէցօր սաստկանում էր իւր մէջ և դառնում էր պահանջ։

Մի մութ, ամպոտ գիշեր, երբ նա վերադառնում էր դաշտից, անձրևը սաստիկ թրջեց նրան ճանապարհին։ Նա դեռ հասած չէր օղատան, երբ զգաց որ սաստիկ մրսել է. նա դողում էր. ատամները ակամայ խփվում էին միմեանց. նա կապուտկել էր ցրտից. իսկ այդ րոպէին փայլեց նրա աչքերի առաջ օղատան հիւրընկալ լոյսը և նա մտաւ ներս։

Սենեակում նստած էին մի քանի երիտասարդ գիւղացիներ. նրանք արդէն արբած էին։

—Ամ... Կարօ... բարի եկար, հազար բարի, դիմաւորեցին նրանք Կարօյին։

—Բարև, հազիւ պատասխանեց նա և նստելով մի սեղանի մօտ. նա պահանջեց օղի։

Ղուկասը զարմացած բերեց շիշը և նայեց նրա երեսին։

Կարօն չնկատեց անգամ նրան. նա առաւ շիշը և դողդոջուն ձեռներով, լցրեց իւր բաժակը և ագահութեամբ պարպեց նրան։

Երկրորդ և երրորդ բաժակը հետևեցին միմեանց։

Մի տաքութիւն փռուեցաւ նրա մարմնի ամբողջ կազմուածքի մէջ. այդ տաքութիւնը արագ անցնելով նրա ջղերով հասաւ նրա գլխին։ Շիշը համարեա պարապ էր։

Ինչո՞ւ այդպէս հպարտացել ես, Կարօ, որ չես պատասխանում մեզ, հարցրեց մի գիւղացի, բարձրանալով տեղից և լկտօրէն, յանդուգն նայեց նրա վերայ։

Կարօն նախ բարձրացրեց իւր ծանրացած կոպերը, լուռ նայեց գիւղացու երեսին և դառնալով Ղուկասին, պահանջեց երկրորդ շիշը։

Օղի... խռպոտ ձայնով հրամայեց նա։

—Տեսէք... տեսէք... դա էլ մարդ է դառել, դարձաւ իւր ընկերներին յանդուգն գիւղացին,—խեղճ, ինչո՞վ ես պարծենում։

—Լռի՛ր... որոտաց Կարօյի ձայնը և նա պինդ սեղմեց իւր ձեռքերով սեղանի ծայրը։

Այդ րոպէին Ղուկասը բերեց օղին և վերջ տուեց խօսակցութեան։ Կարօն սկսեց լուռ խմել այդ տաքացնող, թմրեցուցիչ ըմպելին։ Նրա գլուխը աւելի ծանրացաւ, աչքերը ծանրութիւնից փակվում էին։ Այդ միջոցին երիտասարդների խմբում բարձրացաւ մի ծիծաղ,

Կարօն բարձրացրեց գլուխը և սկսեց մտիկ տալ. Նրա ականջին հասաւ իւր անունը։

—Ի՞նչպէս ասացիր, Սանդրօ, ինչպէս։

—Ասում եմ, որ այդ յիմարը իւր հարսին Սարգսին կին տուեց… երևի չատ է վաստակել, որ հպարտացել է։

Խօսքը Կարօյի մասին էր։

—Հա… հա… հա, լսուեց ամեն կողմից։

Կարօն հասկացաւ ամեն ինչ։ Արիւնը խփեց նրա գլխին, նրա աչքերի առաջ երևացին կարմիր, կանաչ շրջանակներ։

—Խլեց Սարգիսը ձեռից էլի… չէ՞ք հասկանում, շարունակում էր Սանդրօն։

Կարօն վեր կացաւ տեղից, առաւ աթոռը և քարշեց Սանդրօյի գլխին։ Վերջինս վայր ընկաւ։

Ինքը Կարօն երերալով դուրս եկաւ օդեանից։

Ղուկասը կամենում էր խօսել փողի մասին, բայց տեսնելով նրա դրութիւնը, թողեց իւր մտադրութիւնը։ Գիշերուայ ցուրտ քամին խփեց Կարօյի ճակատին։ Նա բացեց իւր աչքերը և սկսեց օդ ծծել։

—Խլեց էլի ձեռիցը, անդադար անցնում էր նրա բորբոքուած ուղեղով, խլեց էլի… և նա հեղնօրէն ժպտում էր։ Մի րոպէից յետոյ այդ ժպիտը փոխվում էր զազրական կատաղութեան և Կարօն սկսում էր խփել իւր գլխին։ Արիւնը սաստիկ եռում էր նրանում։

Քամիի մռնչոցը հասնում էր նրա ականջին. այդ մեղեդիի մէջ նա յայտնի լսեց իրեն տանջող խօսքերը.

—Խլեց էլի ձեռիցը, կարծես մլաւում էր քամին։

—Խլեց էլի… խլեց, կրկնում էր Կարօն։

Նա ինքն էլ չգիտէր ուր էր գնում. նա կորցրել էր տան ճանապարհը։

Մի քանի րոպէից նա դուրս եկաւ հրապարակ։ Անձրևը դադարել էր և կազմել էր հրապարակում կեղտոտ լճակներ։ Կարօն ուղղակի մտնում էր այդ լճակների մէջ, հազիւ դուրս էր գալիս անտանելի ցեխից և կրկին գնում էր։ Նա յոգնած էր։ Նրա մարմնի կէսը, գլխից սկսած քրտնած էր, իսկ միւս կէսը մէջքից մինչև ոտները արդէն սառել էին լճակների ջրերի մէջ և կարծես անզգայացել էին։ Նա հազիւ շունչ էր առնում։

Վերջապէս նա կանգնեց մի տան առաջ։

Դա Սարգսի տունն էր։ Կարօն ճանաչեց նրան։

—Խլեց… էլի… ձեռիցը, անցաւ նրա ուղեղով և նա կատաղարար նայեց տանուտիրոջ տանը և բակին, ուր բարձած էին յարդի և խոտի կոյտեր։

Մի միտք ծագեցաւ Կարօյի ուղեղի ամենահեռաւոր անկիւնում։ Այդ միտքը րոպէ առ րոպէ պարզվում էր և զօրանում էր։

—Խլեց… հա… խլեց… տեսնենք դեռ… շշնջաց նա և իջաւ Մահտեսի-Սարգսի բակը։

Այնտեղ ոչ ոք չկար։

Նա մօտեցաւ խոտերին։

Դողդոջուն ձեռով նա հանեց գրպանից մի բան և սկսեց քսել պատին։

Դա լուցկի էր։

Պատը թաց էր և ծծումբը չէր վառում։

Նա սկսեց քսել իւր չորերին.

Գիշերային մթութեան մէջ փայլեց մի փոքրիկ կապոյտ կրակ։

Լուցկին վառուեց։

—Խլեց… էլի… խլեց… անդադար կրկնում էին Կարօյի չորացած շրթունքները։

Նա մօտեցրեց լուցկին խոտին, որ դիզած էր տան մօտ և որի գագաթը հասնում էր տան յարդեայ կըտուրին։

Խոտը մի քիչ թաց էր և լուցկին չվառած նրան՝ մարեց։

—Անէծք... շշնջաց Կարօն և կրկին տարաւ իւր ձեռը գրպանին։

Կրկին գիշերուայ խաւարի մէջ փայլեց կապուտակ կրակը։

Կարօն կրակը մօտեցրեց խոտին։

Այս անգամ վերջինը սկսուեց այրուիլ։

Կարօն կռացաւ և սկսեց փչել։

Երևացին կրակի բոցեր։

Կարօյի շուրջը լուսաւորուեց։

Նա շարունակում էր փչիլ, փչիլ անդադար։

Խոտը այրվում էր։

Կրակի սրածայր, բոցեղէն լեզուները արդէն լիզում էին տան կտուրի յարդը, երբ Կարօն վերկացաւ տեղից։

Նա չփախաւ։

Նա խաչեց իւր ձեռները և սկսեց դիտել կրակի լոյսը։

Անցաւ մի քանի րոպէ։

Թանձր ծուխը լցուել էր բակը։

Նա արդէն խեղդում էր Կարօյին։

—Խլեց... էլի... խլեց... հա... հա... հա... ցնորուած ծիծաղում էր Կարօն։

Իսկ կրակը շարունակում էր անխնայ, կատաղաբար լափել Մահտեսի-Սարգսի տունը։

Գիւղում արդէն նկատել էին հրդեհը։

Լսուեցան ձայներ, աղաղակներ։

Բակին մօտենում էին։

Կարօն կրկին չփախաւ։

Բակը լցուեց գիւղացիներով։

Մահտեսի-Սարգիսը ինքը գիշերուայ շապիկը հագին զարհուրած դուրս վազեց տանից։

—Ազատեցէք... ազատեցէք... այրվում ենք, աղաղակում էր նա։

—Ինչից է այս, աշխատում էր պարզել եղելութիւնը իրեն ամբոխը...

Մի քանիսը բերեցին ջուր տակառներով և սկսեցին հանգցնել կրակը։

Հանգցնողներից մէկը մօտենալով կրակին, անզգուշութեամբ դիպաւ Կարօյին։

—Տեսէք... տեսէք... այստեղ մարդ կայ, բացագանչեց նա վախեցած։

Ամբոխը, իբրև մի մարդ, մօտեցաւ կրակին։

—Ո՞ւր է... ո՞ւր է... բռնեցէք... դրան կոչեց Մահտեսի-Սարգիսը։

Կարօն անշարժ կանգնած էր։

Նա կարծես արձանացած լինէր։

Նրա երեսը ցնցողաբար ծամռվում էր, իսկ շրթունքները կրկնում էին իրենց անվերջ, միակերպ—«խլեց... էլի... ձեռիցը... խլեց...»

Կարօյին բռնեցին։

Նա չընդդիմացաւ։

Նրան կապում էին, երբ խելագարուածի նման բակը մտաւ մայրը։

—Կարօ ջան, որդիս... այդ ինչ ես արել... զաւակս... ինչ...

Կարօն չնայեց անգամ նրա վերայ։

Նա անշարժ նայում էր Սարգսի տան պատշգամբին։

Այնտեղ, սպիտակ շորերով, լուսաւորուած հրդեհի բոցեղէն լոյսով, իբրև մի գիւթական յաւերժահարս, կանգնած էր Մաշօն։

Կարօն չէր հեռացնում նրանից իւր լայն բացած, անմիտ աչքերը։

—Խլեց... էլի... ձեռիցը... խլեց...

—Կարօն է կրակ տուել, Կարօն... անցնում էր ամբոխի միջով։

Ամէնքը շուարած էին։

—Ձիաւոր ուղարկեցէք քաղաք... թող ոստիկանապետին կանչէ. լսո՞ւմ էք, գոռում էր գիւղացիներից մէկը։

Կարօյի մայրը կարծես ցնորուած լինէր։

Նա նստել էր թաց գետնի վերայ և անձայն, լուռ լալիս էր։

Հրդեհը արդէն մարում էր. տեղ տեղ միայն յանկարծ երևում էին հրային բոցեր, որոնք բարձրանալով վեր, իսկոյն ընկնում էին ցած, փշրուելով անհամար, փոքրիկ, կարմիր կայծերի։

Երկինքը սկսել էր կապուտել, երբ կապած Կարօյին տարին դէպի «վարչութիւն»։

Ճանապարհին նա կրկնում էր իւր — «խլեց... էլի... ձեռիցը... խլեց» խորհրդաւոր խօսքերը։

—

Մի երկու շաբաթից Կարօյի գործը քննվում էր Թագ...գի նահանգական դատարանում։ Դահլիճը լիքն էր հանդիսականներով։ Ամէնքին գրաւեց այդ գործը, որ կրում էր իւր վերայ սիրահարական բնաւորութիւն։ Ամբոխի համակրութիւնը դատապարտեալի կողմն էր։ Ինքը

Կարօն ըստ երևոյթին հանգիստ էր։ Նա սաստիկ փոխուել էր։ Այդ երկու շաբաթուայ մէջ նա 10, 15 տարով ծերացել էր. նա կռացել էր և դիտում էր իւր ձեռները. նա չէր նայում ամբոխին. մինչդեռ հազարաւոր աչքեր կարծես կամենային կարդալ նրա երեսի վերայ նրա ոճրագործութեան տխուր պատմութիւնը։ Դատախազը խիստ էր դէպի Կարօն իւր ճառի մէջ։

Նա աշխատում էր այդ գործին տալ մի այնպիսի գոյն, որ մօտ լինէր անհնազանդութեան իւր գլխաւորին և կառավարութեան պաշտօնակատարին։

Փաստաբանը խօսեց մի ազդու ճառ։

Նա քննեց և պարզեց Կարօյի հոգեկան, ներքին աշխարհը և նկարագրեց նրա անբաղդ սիրոյ տխուր պատմութիւնը։

Դատաւորները մեղադրեցին Կարօյին։

Նա դատապարտուած էր ութ տարուայ տաժանակիր աշխատանքի։

Նա քշվում էր Սիբիր......

ԳԷՈՐԳ ՁՈՒԲԱՐ.

ՆԱ ՍՊԱՍՈՒՄ Է ԴԻՆՈ

(Պատկեր)։

Ամռան վերջն է…

Խան..սարա հայ գիւղը ամբողջապէս թաղուել է մուգ կանաչում։ Հարաւային արևի կիզիչ ճառագայթները՝ թափանցելով եթերային պարզ կապուտակը, առատօրէն լուսաւորում են շրջակայ լեռների ապառաժոտ, մերկ գագաթները և կիսամութ, չարմուռ ստուերներով խաղում են նոցա բարձրաւանդ ստորների միջտ մռայլ միշտ խոնաւ փեշերքում. այդ ճառագայթներից մի քանիսը ուրախ-ուրախ արտափայլում են Ալա..զան գետակի հանգիստ, խաղաղ ջրերում և միանգամից լցուելով մօտակայ անտառի ներսը լուսափայլ, պսպղուն ցոլքերով սկսում են չողչողալ դարևոր ծառերի թերթիկների ու ժամանակից արդէն կանաչած, բորբոսնած թփերի վերայով…

Շքեղ հարաւային բնութիւնը, կարծես, թմրել, քնել է արևի ճառագայթների այդ կիսօրեայ, փայփայող ջերմեան տակ. երբեմն երբեմն միայն լեռների ստորոտներից փչող քամին մեղմ, ալիքաւոր տատանումներով օրօրում է ցորենի ոսկեայ հասկերը ու վրդովելով մի րոպէ հացահատիկների խաղաղ ծովը կրկին կորչում է լեռների հեռաւոր խորքերում…

Գիւղի մօտակայ բարձրաւանդ բլրից օձաձև պտոյտ-

ներով իջնում է ցած ձոր այգեստանը և իւր փեշերքով անհետանում է կանաչազարդ հովտի անհուն տարածութեան մէջ։

Օգոստոս է։

Խաղողը սկսում է հասնել. նորա լիք-լիք հատիկները անզօր, ծանրացած կռացել են գետնին և, կարծես, ամաչած ծածկուել են սրածայր եռանկիւնի թերթիկներով և տեղ-տեղ միայն գոհարի նման ցոլում են արեգակի փայլուն ճառագայթների տակ։

Թաց, պարարտ հողը սրտի խորքերից լոյս աշխարհ է հանել իւր առատ բերքերը և կանչում է իւր մշակ-գիւղացուն. և այդ գիւղացին, այդ հողի որդին լսել է իւր մօր ձայնը ու ահա դուրս է եկել դաշտը. նորա մանգաղը, գութանը, խոփը, գերանդին արագ-արագ բանում են այդ հողի վերայ և նորա աղի քրտինքը կաթ կաթ ոռոգում է գետինը։

Բայց գիւղացին ուրախ է, սրտանց ուրախ։ Նա անհոգ, զուարթ երգում է իւր պապերի աւանդած երգը և նորա «հարալօ»-ի բարձրաձայն ելևէջները խուլ արձագանքներով կրկնվում են հովտի հեռաւոր անկիւններում...

Այո՛, ուրախ է հայ գիւղացին, ուրախ է ամբողջ Խան..սարան։ Միայն մի մարդ չէ մասնակցում այդ ընդհանուր հրճուանքին. դա—գեղջկուհի Սաթինիկն է, Հասօյի կինը. նա չգիտէ այլ ևս ուրախանալ. նորա ուրախ օրերը անցել-գնացել են. նա մոռացել է անգամ այդ օրերը... Նա դուրս չէ եկել դաշտը. նա համարեա մենակ է մնացել գիւղում. այնտեղ, դաշտում Սաթինիկը գործ էլ չունի. ոչ ցորեան, ոչ այգի, ոչինչ չունի նա. այո՛, կար ժամանակ, երբ նա էլ Հասօյի հետ գնում էր

դաշտը, ուրախ, զուարթ աշխատում մինչև արևամուտը, ցորեան էր հաւաքում, խուրձեր կապում, կալսում, խաղողը կտրում, օղի քաշում, այո՛, նա անում էր այդ ամէնը, բայց շատ և շատ առաջ, երբ դեռ Հասօն Խան..սարայումն էր և Սաթինիկի որդին, Գրիգորը, փոքրիկ էր, շատ փոքրիկ... Այժմ Հասօն չկայ. ահա հինգ տարի է համարեա, ինչ նա հեռացել է, մեկնել է Խան..սարայից օտարութիւն՝ մշակութիւն անելու համար։

Ի հարկէ, Հասօն երբէք չէր թողնիլ իւր հայրենի Խան..սարան, կինը, իւր խարխուլ տնակը, եթէ միայն գիւղական պարսիկ բէգը չնեղէր, չհարկադրէր նորան։ Հասօն փող էր առել բէգից։ Երաշտութիւնը խանձել, չորացրել էր մի տարի նորա ցանքը. Հասօյի ընտանիքը մնացել էր առանց հացի. նա կարող էր սովամահ լինել։ Հասօն ճարահատեալ դիմել էր բէգին և ահագին տոկոսներով փող էր վերցրել նորանից. եկաւ ժամանակը վճարելու. Հասօն չունէր փող. բէգը սկսեց սպառնալ, նեղել, ճնշել։ Անվճար տոկոսների փոխարէն Հասօն ամէն տարի, գարնանը, ձրի աշխատում էր բէգի դաշտերում, պարտէզներում և կրկին չէր կարողանում ազատուել պարտքից. այդ կարծես անվերջ պարտքի գլուխը մնում էր ու մնում։

Շուտով Հասօյի եզները, ոչխարները նոյնպէս անցան բէգի ձեռը։ Մերկ մնաց խեղճ Հասօն, ձգեց արօրը, խոփը, իւր քրտինքով պարարտած հողը, խաչակնքեց երեսը և վճռեց գնալ ու պանդխտութեան մէջ գտնել իւր բաղդը։ Նա լսել էր, որ Բագուի նաւթագործարաններում միշտ կարելի է գործ գտնել և լաւ փող ձեռք բերել. հաւատաց Հասօն և գնաց... գնաց ու մինչև այժմս չէր վերադարձել։ Սաթինիկը լաւ մտաբերում էր այդ օրը։ Հասօն և մի քանի նոյնպէս նորա մշակ ընկեր-

ները դուրս եկան գիւղական փոքրիկ մատուռից, մատաղ արին և տալով իրենց վերջին հրաժարականը ազգականներին, գիւղացիներին, ամբողջ խան..սարային եկան մեծ ճանապարհը. նոքա գնում էին ոտով. երբ հասան գիւղի ծայրը, Հասօն դարձաւ Սաթինիկին, առաւ նորա գրկից փոքրիկ Գրիգորին և համբուրելով երեխային ասաց.

—Լաւ նայիր նրան... ես շուտով կըգամ..

Եւ արտասուքի նման մի բան ցոլաց Հասօյի արևառ, կոշտացած երեսի վերայ։

—Լաւ նայիր դրան...

Այդ Հասօյի վերջին խօսքերն էին. դրանից յետոյ Սաթինիկը չտեսաւ իւր Հասօյին։ Նորա հետ գնացած ընկերները վաղուց վերադարձել էին խան..սարա. նոքա ասում էին, որ Հասօն անցել է Ռուսաստան. ուր է այժմս նա—նոքա չգիտեն. մի քանիսները աւելացնում էին, որ Հասօն հիւանդացել էր այնտեղ, ամիսներով չէր վեր կացել տեղից և այլն։

Սաթինիկը անհանգիստ էր. անյայտութիւնը տանջում էր նորան։ Նորա ժամանակով գեղեցիկ, առողջ դէմքը թալկացել, մաշուել էր. նորա սև, վառվռուն աչքերը խորը ներս էին ընկել կոպերի մէջ. նորա անգոյն շրթունքներից վաղուց արդէն թռել էր անհոգ ժպիտը. փոքր կնճիռները ծածկել էին նորա երեսի մորթը. մաշոցքը դրել էր իւր անխղելի կնիքը Սաթինիկի խորշոմած ճակատին. պառաւել էր օր առաջ խեղճը, ուժից ընկել..

—Ո՞ւր էր Հասօն.. ողջ էր արդեօք... ինչ պատահեց նորան—Աստուած գիտէ։

Եւ այդ միտքը անդադար մաշում էր Սաթինիկին։

—«Լաւ նայիր դրան... ես շուտով կը գամ», միշտ զարթնում էր խեղճի ուղեղում։

—«Ես կը գամ... կը գամ», լսվում էր նորա ականջներին։

Եւ Սաթինիկը սպասում էր։

Շարունակ իրար ետևից անցնում էին օրեր, ամիսներ, տարիներ. իսկ Հասօն չկար ու չկար...

Գրիգորը մեծացել էր։

Նա արդէն 8 տարեկան էր. զրկանքը և աղքատութիւնը, որ նոյն իսկ օրօրոցից ծանօթ էին Գրիգորին, սովորեցրին նորան աշխատել. երեխան օգնում էր մօրը, փայտ էր բերում անտառից, թոնիրը վառում, իրենց միակ կովը և մի քանի ոչխարները դաշտ քշում. նա արդէն գիւղացի էր, նա արդէն բանող էր, մ ե ծ էր, չնայելով որ դեռ նոր էր բոլորել իւր եօթներորդ գարունը։

Գրիգորը բնութիւնից մի ծանրակշիռ միշտ մտածող, միշտ լուռ տղայ էր. մանկական ուրախ, անհոգ խաղերը շատ քիչ էին զբաղեցնում նորան. նա երբէք չէր գնում հասակակիցների հետ անտառ, չէր բարձրանում նոցա պէս ծառերի վերայ և չէր քանդում թռչունների բոները, չէր գողանում նոցա անփետուր ձագիկները. նա չէր սիրում մասնակցել այդ շրջմոլիկների կողոպուտ արշաւանքներին այգիների ու պարտէզների վերայ։ Գրիգորը քշում էր իւր ոչխարները կանաչ զառիվայրի ստորոտը և, այնտեղ պառկած մէջքի վերայ ամբողջ ժամերով, անընդհատ դիտում էր պարզ-կապուտակ, սիրաշունչ երկինքը. նորա հայեացքը ընկնում էր յանկարծ մի մոխրագոյն ամպի կտորի վերայ, որ բաժանուելով իւր երամից մենակ սահում էր եթերական բարձունքի մէջ, և Գրիգորը չէր հեռացնում իւր լայն բացած աչքերը այդ լողացող ամպից։ Նա հետևում էր նորա միշտ փոփոխուող

ֆանտաստիկական գծագրութիւններին, և երեխայի լարուած երևակայութիւնը սկսում էր տալ այդ ամպին զանազան նմանողութիւններ։ Ահա նա կուտակուեց, հաւաքուեց մի տեղ. որքան նման է նա գիւղացի Սագօի հնացած «փափախին». ահա ամպը փռուեց, լայնացաւ և հարևան Թուրք Ֆաթմայի «չադռայի» նման սկսեց մեղմ տատանուել, այդ ամէնը արագ անցնում է Գրիգորի լարուած երևակայութեան մէջ և նա շարունակում է լուրջ դիտել այդ մոխրագոյն ամպի փոքրիկ, վազող կտորը։ Մի քանի ժամանակից ամպը հեռանում է, կորչում է Գրիգորի աչքերից, բայց վերջինը դեռ երկար, երկար նայում է նորա ետևից.....

Կէս օր է։ Արեգակի այրող ճառագայթները չեշտակի ընկնում են վերևից։ Սաստիկ տաք է։ Փոշիանման, հազիւ նկատելի ստուերներով տատանվում է տաքացած, խոնաւութիւնից զուրկ օդը։ Գրիգորը դանդաղ բարձրանում է արօտից, հաւաքում է իւր փոքրիկ հօտը և քշում է նորան մօտակայ աղբիւրը. մինչ ոչխարները բարձր, ուրախ մայելով մօտենում են ջրին, Գրիգորը կռանում է աղբիւրի ափին և ականջ է դնում նորա կարկաչահոս, խորհրդաւոր չլչլոցին. Նա ուշադրութեամբ լսում է աղբիւրի երգը. Նորան ծանօթ է այդ մեղեդին. այդ աղբիւրը կարծես խօսում է Գրիգորի հետ....

Արևը սկսում է կամաց կամաց մայր մտնել. Նորա վերջին, արիւնագոյն ճառագայթները հրեղէն բոցերով ներկում են շառագունած արևմուտքը։ Գրիգորը թողնում է իւր սիրած զառիվայրը և դանդաղ քշում է իւր հօտը դէպի գիւղը։

Դրսում մթնում է,

Կախարդիչ հարաւային գիշերը երևան է գալիս իւր հրաշալի գեղեցկութեան ամենադիւթական հրապոյրնե-

րով։ Գլորակ լուսնեակը երևում է մութ-կապոյտ երկնակամարում և իւր արծաթափայլ ճառագայթները չեշտակի ձգում է քնած բնութեան վերայ. անհամար, պսպղուն աստղերը սկսում են ուրախ ուրախ ցոլել հորիզոնի անհուն, լայնածաւալ բարձունքում. շրջակայ լեռների գագաթները քօղաւորվում են գիշերային նօսր, թափանցիկ մշուշով, ուր մեղմ արտափայլումներով շողշողում է լուսնի կաթնագոյն լոյսը....

Խան. .սարան կամաց կամաց քնում է։

Գրիգորը արթուն է. Նա բարձրանում է իրենց խրճիթի տափարակ տանիքի վերայ և ժամերով մնում է այնտեղ. Նա դիտում է հեռուի ամպամած սարերը, կիսալուսաւորուած հովիտները և ձորերը, մութ, սևի տուող ժայռերը և հեռու, հեռու հորիզոնում մի նեղ արծաթեայ ժապաւէնի նմանող խաղաղ, հանդարտ Ալա. .զան գետը։ Մի խորին, անբացատրելի զգացմունք տիրում է Գրիգորին, նորա մանկական, զգայուն սիրտը լցվում է անհուն, սուր հրճուանքով. Նա զմայլում է հրաշալի բնութեան կախարդիչ գեղեցկութիւնով. Նա իւր սրտի բոլոր ոյժերով միանում է այդ բնութեան ցնծութեանը, նա ճանաչում է, գիտէ այդ բնութիւնը, գիտէ համարեա օրօրոցից և սիրում է նորան, սիրում սաստիկ...

Անցնում է մի քանի րոպէ։

Կէս գիշերային լուսնեակը ծածկվում է ամպերով և մօտակայ պարտէզներից մէկում սոխակը սկսում է իւր բերկրացող, ցնծացող սիրոյ սիրտ ճմլող երգը. Նորա զմայլեցուցիչ, դիւթական դայլայլիկները խորը արձագանք են գտնում Գրիգորի բերկրացող սրտում. Նա լուռ, անշարժ լսում է սոխակի մեղեդին և արտասուքի շիթերը սկսում են փայլել նորա մեծ, սևորակ աչքերի թերթիկներում....

Վաղուց լռել է սոխակը, ահա լսվում է կէս գիշերային խորհրդաւոր լռութեան մէջ գիւղի աքաղաղների երկարատեւ, ճաթան աղաղակը, բայց Գրիգորը դեռ լուռ, անշարժ, զմայլած կանգնած է տանիքի վերայ։

Եւ ջերմ, շուտ շուտ բաբախում է նորա փոքրիկ, մանկական սիրտը....

Սաթինիկը սիրում է իւր «մինուճար» Գրիգորին. աւելի, նա պաշտում է նորան։ Հասօյի անհետանալուց յետոյ իւր փոքրիկ որդու մէջ ամփոփեց անբաղդ մայրը, իւր բոլոր սիրտը, սէրը և յոյսը. Գրիգորն էր, որ կապում էր խեղճ Սաթինիկին այս ունայն աշխարհի հետ. Գրիգորից ջոկ ոչինչ այս աշխարհում չէր հրապուրում, չէր քաշում դէպի իրեն չարչարուած, տանջուած Սաթինիկին։

—«Լաւ նայիր դրան... ես շուտով կը գամ», անցնում էր համարեա միշտ անբաղդ կնոջ մտքովը։

—«Ես... շուտով... կը գամ». կրկնում էր ինքը իրեն Սաթինիկը և արտասուքի երկու, այրող կաթիլները թաց էին անում նորա օր առաջ հալումաշ եղած երեսը։

Նա սպասում էր Հասօյին, սպասում էր ամէն օր...

Ա՛յ... նա կը գայ... կը տեսնէ իւր որդուն... ինչպէս կ՚ուրախանայ երևի խեղճը... կը ճանաչէ՞ նա Գրիգորիս... ախր, երբ նա գնաց, Գրիգորը շատ փոքր էր.. այո... նա կը գայ.. և Տէր Աստուած ինչպէս լաւ կապրենք մենք.. բէգը կրկին հող կը տայ... կը ցանենք... այգեստանում կը բանենք... Գրիգորս կը մեծանայ... կը կարգենք.. Տէր Աստուած... Տէր Աստուած... շշնջում էր ինքն իրեն Սաթինիկը։

Բայց շարունակ անցնում էին օրեր, շաբաթներ, ամիսներ, իսկ Հասօն չկար ու չկար...

Սաթինիկը տխուր նստած անկիւնում սկսում էր լալ, լալ անձայն. նա գաղտնի սրբում էր իւր ցնցոտիներով անվերջ, անզուսպ արտասուքները։

Գրիգորը նկատում էր այդ. նա մօտենում էր մօրը, փաթաթւում էր նորա վզին և ուղղակի նայելով նորա թաց աչքերին՝ հարցնում էր.

—«Ե՞րբ կը գայ հայրս... ես ուզում եմ նորան տեսնել... դու ասացիր, որ շուտով... ինչու չկայ... հը...», աւելացնում էր երեխան և չէր հեռացնում իւր քննողական հայեացքը մօր լացած աչքերից. իսկ այդ աչքերը սկսում էին աւելի և աւելի լցուել արտասուքով. մի բան մօտենում էր խեղճ Սաթինիկի կոկորդին, սկսում էր ճնշել, խեղդել, և նա տխուր պատասխանում էր.

—Կը գայ, հոգիս, կը գայ, աչքիս լոյսը... համբերիր... կը գայ...

Եւ Գրիգորը համբերում էր, համբերում էր. օրեր, ամիսներ, տարիներ. իսկ հայրը չկար ու չկար...

Գրիգորը արդէն 12 տարեկան է.

Դա մի առողջ կազմուածքով, կարմիր թշերով բարձրահասակ պատանի է. միայն նորա աչքերը սաստիկ անփայլ են. ոչինչ, ոչինչ չէ արտայայտում այդ, կարծես, ապակեայ աչքերի տխուր, անշարժ հայեացքը. այդ աչքերը երբէք չեն ծիծաղել, չեն ժպտել. խոր մելամաղձոտութեան թախիծը միշտ երևում էր այդ մեծ, սևորակ, բայց անկենդան աչքերում. Հարևան պառաւները, երբ նկատում էին Գրիգորի այդ անշարժ հայեացքը, տխուր շարժում էին գլխով և կամաց փսփսում.

—Չէ… չէ… Մնացական չէ… ապրողներից չէ…

Եւ խորհուրդ էին տալիս Սաթինիկին «բաշխել» Գրիգորին Սուրբ Տիրամօրը։

—Բաշխիր… բաշխիր… այ.. կը տեսնես.. փորձանքից հեռու կը պահէ, Սաթինիկ ջան, տղուդ բաշխիր..

Սաթինիկը չէր լսում նորանց խրատներին։

Գրիգորը մեծանալով հասկացաւ իւր թշուառութիւնը, իւր որբութիւնը. այդ տանջում էր նորան։ Նա տեսնում էր, որ ուրիշ երեխաները ունին հայր, մայր, ազգականներ, որ նոքա բաղդաւոր են, երջանիկ են. իսկ ինքը… ինքը որբ է, չունի հայր… այսինքն ունի, բայց երբէք տեսած չէ նորան.. ուր է նա—Գրիգորը չգիտէ. մայրիկը ասում է, որ նա շուտով կը գայ. նա միշտ ասում է շուտով, բայց հայրիկը չէ գալիս. ինչու. բարկացել է իրենից վերայ… թէ… թէ նա բոլորովին չկայ և Գրիգորը որբ է..

Այդ միտքը անդադար ծագում էր պատանու ուղեղում։

Նա աշխատում էր լուծել նորան, գալ մի որոշ եզրակացութեան. բայց չէր կարողանում։

Այդ անկարողութիւնը մաշում էր նորան և նա կրկին դիմում էր մօրը։

—Մայրիկ… ասա… ես հայր ունիմ… հը… ունիմ… ախր.. ինչու թողել է մեզ ու չէ գալիս… հը…

—Կը գայ, հոգիս, սպասիր… այ, ձմրանը կը գայ։

Նա լաւ մարդ է… հա… շարունակում էր իւր հարց ու փորձը Գրիգորը։

—Նա… լաւ է… լաւ… հոգիս, պատասխանում էր Սաթինիկը և շտապով դուրս էր գալիս գոմը։

Գրիգորը ընկնում էր մտատանջութեան մէջ։

—Նա լաւ մարդ է, անցնում էր նորա մտքով, լաւ…

ահ, որչափ կամենում եմ տեսնել նորան, խօսել նորա հետ, համբուրել.. ես հօ երբէք տեսած չեմ նորան.. այ, եթէ գայ հայրս, փողոցի երեխաները էլ չեն ծիծաղիլ վերաս… չեն հրհռալ… չեն բարկացնիլ.. անիծած Եփրեմը սուս կը կենայ այն ժամանակ.. ես էլ կ՚ունենամ իմ հայրը… մենք միասին կ՚ապրենք… ես կ՚օգնեմ նորան… կ՚աշխատենք… ինչ լաւ է… էլ խեղճ մայրս լաց չի լինիլ… նա ախր միշտ.. միշտ լալիս է… Բայց ինչու.. ինչու չէ գալիս… հայրս.. ահ, որչափ կը սիրէի ես նորան… հարիկ.. իկ.. իկ.. հայրիկ, մի ինչ որ զանցառութեան մէջ կրկնում էր գիշերները Գրիգորը և վեր կենալով տաք քուրսու տակից լայն բացած, շաչ աչքերով նայում էր շուրջը։

Խրճիթում մութ էր։

Սաթինիկը անհանգիստ անկանոն շնչում էր անկիւնում. նա կիսաքուն էր. նա լսում էր, որ Գրիգորը զարթել է։

—Ի՞նչ է, Գրիգոր, ինչու ես վերկացել։

—Ոչինչ, մայրիկ, ջուր եմ ուզում..

—Խաչակնքիր երեսդ, երբ պառկես, ասում էր Սաթինիկը և լռում։ Գրիգորը մտնում էր գոմը, ջուր էր խմում և կրկին գալիս էր ու պառկում. բայց քունը դեռ երկար, երկար փախչում էր նորա աչքերից։ Լուսաբացին նա արդէն քշում էր ոչխարները դաշտ։

Այսպէս անընդհատ սպասողութեան մէջ անցնում էին մօր և որդու օրերը. նոքա յոյս ունէին կրկին տեսնել Հասօյին. մինթէ նա չէր ասել մեկնելուց առաջ—«ես շուտով կը գամ»—և նա կը գայ, անպատճառ կը գայ. երևի մի բան պատահել է, որ նա ուշացաւ. կարելի է փող ձեռք չէ բերել. ինչ կայ, պարապ, առանց փողի գալու հօ չէ..

Այդպէս կարծում էր Սաթենիկը. նա համոզուած էր, որ Հասօն կը գայ և իրենց կեանքը կսկսի հոսել իւր առաջուայ խաղաղ, կանոնաւոր հունով։

Նա ամէն օր իւր աղօթքի մէջ խնդրում էր Տիրոջից, որ շուտով վերադարձնէ իրեն իւր մարդուն, իւր Հասօյին։

Սուրբ Աստուած, սուրբ Աստուած... Քեզ մատաղ... քո անունին ղուրբան, կրկնում էր նա չորացած, գունատ շրթունքներով... Թող գայ Հասօն... թող գայ... ես էլ ույժ չունեմ... սուրբ Տիրամայր... ողորմիր անմեղ ղաւակիս «արև-ուն»... թող գայ խեղճ հայրը... թող գայ...

Ու խուլ հեկեկանքները կտրում էին նորա ձայնը։

Բայց կրկին անցնում էին օրեր, շաբաթներ, ամիսներ. իսկ Հասօն չկար ու չկար...

Հասաւ և ձմեռը։

Խան..սարան թաղուեց ձեան ահագին տարափների տակ. դաշտը, մարգագետինները, այգեստանը, շրջակայ բլուրները և լեռները ծածկուեցան ձեան ցուրտ, սպիտակ քօղով։ Անտառի հսկաները վաղուց մերկացել էին իրենց չքեղ կանաչից և տխուր տարածել էին իրենց սև, թաց ճիւղերը մշուշոտ, խոնաւ օդում։

Բնութիւնը ամայացել էր. ամէն ինչ նորանում, կարծես, քարացել, արձանացել էր. միայն ցուրտ քամին էր, որ ազատ սահելով դաշտային անհուն տարածութեան մէջ, անդադար բարձրացնում էր ձիւնոտ փոշին, խաղում էր նորա հետ, պտտեցնում էր նորան, կատաղի շուացնում էր և մի անդամից խփելով գետնին ցիր ու ցան էր անում նորան հազար ու մի փոքրիկ, պսպղուն, զմրուխտեայ փշրանքների...

Գրիգորը չէր մոռացել մօր խօսքերը. նա սպասում էր, որ ձմեռը գալու է հայրը։

—Նա... կը գա՞յ... հա՞, հարցնում էր նա անդադար։

Սաթենիկը լուռ կռացնում էր իւր գլուխը։

Մի քանի րոպէից Գրիգորը կրկին դառնում էր մօրը։

—Ե՞րբ։

—Ա՛յ... շուտով, պատասխանում էր վերջինը և պինդ համբուրում էր Գրիգորի ճակատից։

Հասօյի երեսի վերայ ձգած ընտանիքը առհասարակ ապրում էր աղքատութեան մէջ, մանաւանդ ձմրանը սաստկանում էին աղքատութեան զրկանքները։

Հացը թանկանում էր, խոտը նոյնպէս. թոնրի համար հարկաւոր էր փայտ։

Գրիգորը գնում էր անտառ և մինչև մէջքը համարեա թաղուելով ձեան տարափների մէջ, բերում էր ծառի կտորտանքները. նա աշխատում էր ուժից դուրս. նորա ցնցոտին, որ հազիւ ծածկում էր նորա մարմինը, չէր պատսպարում նորան ցրտից։ Անտառում նա միշտ մրսում էր և դողում էր։ Մի օր նա քրտնած, փայտի ահագին բեռը շալակին, տնքալով մտաւ իրենց խրճիթը. նա կարմրել էր. տաք քրտինքը ծածկել էր նորա ճակատը, երեսը, մարմինը և ոլոր կաթիլները ընկնում էին ցած. նա ծանր շնչում էր...

Գրիգորը այնուամենայնիւ մրսում էր. սարսռանման դողը անցնում էր նորա անդամներով։

Նա ձգեց փայտերը թոնրի մօտ և մօտեցաւ քուրսուն։

Նորա գլուխը ծանր էր և սաստիկ ցաւում էր. մի բան կարծես անդադար խփում լինէր նորա այրուող գլխին։ Նորա ականջներում անդադրում լսվում էր մի խուլ, անորոշ շվշվոց. նա գլխովն առաւ հնացած «եօրղանը» և պառկեց։

—Ի՞նչ է, Գրիգո՛ր... ինչո՞ւ ես պառկում, հարցրեց Սաթենիկը։

—Ոչինչ... հոգնեցայ... մի քիչ... պատասխանեց Գրիգորը և կողքի եկաւ։

Նորա աչքերը փակվում էին։ Նա զգում էր, ինչպէս մի սուր բան ծակոտում էր ներսը, կուրծքը. նա կարծում էր, որ այդ շուտով կ՚անցնի։ Նա աշխատեց քնել. թմրութիւնը պաշարեց նորան։

Հասաւ գիշերը։ Գրիգորի տաքութիւնը սաստկացաւ. նորա միշտ անփայլ, խորը ներս ընկած աչքերը ցոլում էին մի անսովոր հիւանդոտ կրակով. նորա անգոյն շրթունքները չորացել էին։ Նա անդադար թաց էր անում այդ այրուող շրթունքները. Սաթինիկը յուսահատ նստած էր յատակի վերայ, քուրսու մօտ և անձայն աղօթում էր։

Հիւանդը մի րոպէ բանում էր իւր ծանրացած կոպերը, նայում էր շուրջը և կրկին փակում։

Ոչ մի ձայն, ոչ մի խօսք չէր հանում նա։ Նա պինդ սեղմել էր իւր չորացած, անգոյն շրթունքները։

—Ի՞նչդ է ցաւում... զաւակս... հը... կողքդ... ասա... քեզ մատաղ... հարցնում էր դողացող ձայնով Սաթինիկը։

Գրիգորը կարծես չէր լսում նորա հարցը։

Նա լուռ էր։ Խրճիթի խեղդող, ծանր լռութեան մէջ յայտնի լսվում էին հիւանդի շնչառութեան շուտ շուտ, անկանոն ևլևէջները։ Ժամանակ առ ժամանակ միայն նորա կրծքից թռչում էին խուլ, խռպոտ հեծկլտանքներ։

Սաթինիկը առնում էր իւր ափերի մէջ հիւանդի ձեռքը և կամաց տրորում։

Այդ ձեռը այրվում էր։

Լուսաբացին հիւանդը մի քիչ խաղաղուեց. կիսաքուն թմրութիւնը պաշարեց նորան։

Սաթինիկը վազեց եկեղեցի և բերելով այնտեղից «օրհնած ջուրը» խմեցրեց Գրիգորին։

Մթին եկաւ տէրտէրը, կարդաց մի գլուխ Աւետարանից. «Վասն առողջութեան»—յոյս տուեց Սաթինիկին և գնաց։

Իսկ հիւանդը անշարժ, կարծես, փայտացած պառկած էր իւր տեղում։ Գրիգորը այդ մի քանի օրուան մէջ ակներև լղարել էր. նորա կայտառ թշերի կարմրութիւնը տեղի էր տուել անգոյն սպիտակութեանը. նա ինքը, կարծես, փոքրացել, քամուել էր։

Երրորդ օրը նորան այցելեց Խան... սարայում յայտնի, հռչակաւոր «դալլաք» պառաւ Հերիքնազը. նա լուրջ, ծանրակշիռ կերպով դիտեց հիւանդի երեսը, նորա խորը ներս ընկած վառվռուն աչքերը և քանի մի անգամ շարժեց իւր ալեզարդ, արդէն կռացած, դողացող գլուխը։

—Ի՞նչ է... ծաղի՞կ է... կարմրո՞ւկ է... ի՞նչ է... ասա, Հերիքնազ-ջան, Քրիստոսի խաթրին.. տղաս ձեռքիցս գնում է... ասա... աղերսում էր Սաթինիկը։

—Աստուծոյ պատիժ է, լուրջ, մի խորհրդաւոր ձայնով պատասխանեց Հերիքնազը, միայն մէկ ճար կայ... «Տիրամօր հողից պէտք է խմեցնել... Ես կը բերեմ.. ունիմ ինձ տանը...»

Եւ նա կրկին նայեց հիւանդի հալումաշ եղած երեսին։

—Լաւ չէ... լաւ չէ... Աստուած փրկէ.. Աստուած օգնական, շշնջաց նա և դուրս եկաւ խրճիթից։

Կէսօրին հիւանդին խմեցրին Տիրամօր հողը ջրով խառնած։

Հիւանդը չհանգստացաւ. նորա տաքութիւնը աւելի ևս սաստկացաւ. խռպոտ հեծկլտանքները արդէն անդադար թռչում էին նորա կրծքից։

Գիշերը Գրիգորը սկսեց զառանցել։

—Տեսնո՞ւմ ես… մայ… այն ամպը… ինչպէս հանդարտ լողում է նա կապուտակ երկնքում… կարծես արծիւ լինի… մայ… Նա երկու մաս բաժանուեց… որքան նման է նա մեր խնձորենուն… մայ թերթիկները… ճիւղերը… ահա… նա կորաւ… նա չկայ… տես… տես… նա չկայ… ո՞ւր են ոչխարներս… ո՞ւր են ոչխարներս, յանկարծ սթափւում էր Գրիգորը և նստում անկողնում։

Հանգստացի՛ր, որդիս… պառկի՛ր… ասում էր լալով Սաթինիկը և զգուշութեամբ պառկացնում էր հիւանդ Գրիգորին։ Մի քանի րոպէ անցնում էր լռութեան մէջ։

Լուսամուտի առաջ գտնուող ծառի վերայից յանկարծ թռաւ արթնացած ագռաւը և մի քանի անգամ երկարատև, տխուր կրկռաց։

Սաթինիկը վախեցած, ցնցողաբար խաչակնքեց երեսը։

—Ա՛յ… առուակը… ինչպէս գեղեցիկ է հոսում նա կանաչի միջով… Նորանում երևում է երկինքը… ինչպիսի ոլոր պտոյտներով կորչում է նա հեռուն, հեռուն… ո՞ւր է գնում նա… մայ… նա խուլ կարկաչում է… նա երգում է… լսո՞ւմ ես… լսում ես… մայ…

Եւ խռպոտ հեծկլտանքները կրկին ծածկում էին հիւանդի անզօր, թոյլ ձայնը։

Սաթինիկը ծնկաչոք աղօթում էր։

Այդ աղօթքը և պաղատանք էր և անողորմ կռիւ Աստուծոյ հետ. նա խնդրում էր, պահանջում էր Աստուծուց, որ չառնէ իւր միակ Գրիգորին։

—Թող… թող նորան ինձ մօտ… ո՞նց ես ապրեմ առանց Գրիգորիս… Տէ՛ր Աստուած, լսիր ինձ մեղաւորիս… մեղքացիր…

Դրսում կրկին կրկռաց չարագուշակ ագռաւը։

Հիւանդը լայն բաց արեց իւր շաչ աչքերը, ցնցուեց և համր ճչաց։

—Հա՛յրս… հա՛յրս… մայ… նա եկաւ… տես, և միանգամից ընկնելով մէջքի վերայ մնաց անշարժ, կարծես քարացած։

Խրճիթում տիրեց խորհրդաւոր լռութիւն։ Գրիգորի անմեղ հոգին արդէն սաւառնում էր դէպի Ամենակարողի յաւիտենական բարձունքը։ Սաթինիկը մօտեցաւ Գրիգորին. ոչ լաց, ոչ հեկեկանք. խեղճը կարծես ցնորուած լինէր. նա արձանացած, անմիտ շարունակում էր նայել Գրիգորի սրուած երեսին, ուր անխիղճ մահը արդէն փչել էր իւր սառը շունչը։

Կրկին խան… սարան թաղուել է թարմ կանաչի մէջ. կրկին վերածնուած բնութիւնը զարդարուել է և ցընծում է. կրկին լսվում է անտառի խորհրդաւոր սօսափիւնը… կրկին հայ գիւղացին ուրախ ուրախ երգում է իւր երգը, կրկին նորա բարձրաձայն «հարալօն» ծածկում է օդը…

Խաղողը արդէն կռացրել է իւր ծանրացած որթերը գետնին և սպառնում է մօտեցող այգեքաղին. կրկին դանդաղ լողում է արևը կապուտակ հօրիզոնում և իւր ճառագայթների ոսկեփայլ արտափայլումներով խաղում է կարկաչահոս վտակի պարզ, զուլարար ջրերում…

Կրկին եկել է չքեղ, հարաւային ամառը…

Գրիգորի փոքրիկ, անշուք գերեզմանը ծածկուել է թարմ կանաչով, որի միջից ամօթխած բարձրացնում է իւր գլխիկը համեստ շուշանիկը. մեղմ զեփիւռը տատանում է նորա հոտաւէտ թերթիկները. մօտակայ ծառի

վերայ երբեմն երբեմն նստում է սոխակը և սկսում է իւր երգը. համնում են արդեօք Գրիգորի նեղ, մութ գերեզմանը նորա ուրախ դայլայլիկները. լսում է նա...

Սաթլնիկը պառաւել է։

Նա ապրում է սաստիկ աղքատութեան մէջ։

Նա մուրալով հայթայթում է իւր օրուայ ապրուստը։

Նա մի քիչ ցնորուել է։

Գիւղում նորան կանչում են «Գիժ Սաթօ»։

Բայց Գիժ Սաթօն կրկին համոզուած է, որ մի օր Հասօն կը վերադառնայ վերջապէս իւր հայրենական խան...սարան։

Գիժ Սաթօն սպասում է դեռ...

ԳԷՈՐԳ ԶՈՒԲԱՐ.

ԱՌԱԿՆԵՐ ՄԵԾԵՐԻ ՀԱՄԱՐ

I.

ՑԻՄ՛ԱՐ ՈՉԽԱՐՆԵՐ.

Շատ, շատ տարիներ սրանից առաջ լեռնաւանդ երկրներում ապրում էր մի խաչնարած և Աստուծոյ ողորմածութեամբ ապրում էր բաղտաւոր և երջանիկ։ Միշտ առողջ, միշտ ուրախ և գոհ իւր ճակատագրից. նա նա սիրում էր իւր ոչխարները, իւր գառնուկները, փայփայում էր նրանց, պահպանում թշնամի—գայլերի յարձակումներից և այդպէս խնամելով իւր հօտը, նա օրէց օր աւելացնում էր նորա թիւը աճեցնում էր նորան... և ոչխարները հասկանում էին այդ. տեսնում էին բարեսիրտ. խաչնարածի իրենց վերայ ունեցած հոգսը և իրենց ոչխարային սրտերի խորքերում մտածում էին դէպի իրենց հովիւը սիրոյ և երախտագիտութեան ամենավառ զգացմունքները։ Եւ ինչպէս կարող էին նոքա ապերախտ մնալ դէպի իրենց միակ պաշտպանը... ճշմարիտ է, որ այն հին, անցած—գնացած ժամանակներում էլ, ինչպէս և մեր օրերում, ոչխարները չունէին բաղտաւորութիւն պատկանել մարդկային սեռին և ուրեմն նոցա երախտագիտութեան զգացմունքը այնքան նուրբ և զգայուն չէր, ինչպէս մերը, բայց այնուամենայնիւ նոքա լաւ էին տեսնում և հասկանում, որ իրենց խաղաղ և անդորր կեանքի, իրենց երջանիկ և ուրախ օրերի միակ պատճառը—խաչնարածի քաջութիւնը, խելքը և բարի սիրտն էր, և մանաւանդ, որ այդ բաղդաւոր ոչխարները ամեն

բոպէ կարող էին համոզուել երեւոյթի ճշմարտութեան մէջ... հարկաւոր էր միայն մի փոքր դիտողութիւն, լինի դա անգամ ոչխարային, դիտողութիւն հարեւանցօրէն համեմատելու իրենց անձնական կեանքը ուրիշ, օտար ոչխարների կեանքի հետ, ոչխարների, որոնք իրենց խաշնարածի անհոգութեան և նրա այլեայլ բարոյական պակասութիւնների պատճառով համարեա ամեն մի բոպէ դողում էին իրենց ոչխարային հոգիների ապահովութեան մասին և շատ անգամ, երբ նոքա վհատած, ուժից ընկած, անզօր պաշտպանվում էին իրենց ոխերիմ թշնամիներից, նոցա բորբոքուած ուղեղում ծագում էր մի սուր, անաջող միտք։

—Իրա՞ւ... ունէ՞ինք արդեօք իրաւունք ապրելու... թէ... թէ... և այդ իսկ միջոցին խեղճ ոչխարը սարսափելով վերջացնել իւր խօսքերը, փակում էր իւր յուսահատ, լայնացած, չաչ աչքերը և սարսռալով անձնատուր էր լինում գայլի արիւնահեղ ճանկերին.... գտնո՞ւմ էր նա այնտեղ իրեն մաշող հարցի լուծումը,—չգիտենք...

Ահա այդ «ունէ՞ինք արդեօք իրաւունք ապրելու... թէ...» երբէք չէր անցնում մեր երջանիկ ոչխարների մտքով, երբէք։ Նոքա ծնվում էին, ապրում էին, մեծանում էին, ծերանում էին և սատակում էին, ճշտապէս կատարելով հինաւուրց Աստուածային «աճեցէք և բազմացարո՛ւք»-ի օրէնքները և պահանջները առանց որ և է հարցերի, մտատանջութիւնների և տարակուսանքների. առանց երկրայելու նոքա առնում էին կեանքից միայն այն, ինչ որ նա տալիս էր իրենց և աւելի քաջ, քանթէ XIX դարում, երբ ոչ թէ քիչ շատ պատուական ոչխարը, այլ մինչև անգամ յետին տզրուկը և ճանճը ունեին իրենց անխախտ համոզմունքները, ասում ենք, աւելի քաջ մեր հերոսները համոզուած էին, որ այդ այդպէս էլ պիտի

լինի, որ երջանկութիւնը այս աշխարհումս մշտնջենական է և իրենց, ոչխարների, ճակատագիրն է, որ այդ ամենը շատ բնական է և իբրև նոյն իսկ բնութեան օրէնք կարող չէ լինել այլապէս։

Եթէ մինչև անգամ մէկը աշխատէր ձգել նոցա ոչխարային սրտերում տանջող երկրայութեան սերմը, մենք հաւատացած ենք, որ նորա, այդ մէկի, ջանքերը կը մնային ապարդիւն և մեր բաղդաւոր, երջանիկ ոչխարները պինդ ծիծաղելով հարցնողի երեսին, անպատճառ կասէին։

—Արդեօք առա՞ջ էր, պարոն...

Եւ այդ «արդեօք առա՞ջ էր, պարոն»ը այնպէս կըծու, այնպէս հեգնօրէն արտասանում էին համոզմունքի տէր և բաղդաւոր համարուող ոչխարները, որ հարցնողը սկսում էր տեղնուտեղը կարմրել և ամաչելով խոստովանում էր, որ իրաւ, այդ ջանքերը և անտեղի են և յիմար...

Եւ այսպէս ուրեմն երկրայող պարոնը հիւանդ է և մեր ոչխարները բոլորովին, բոլորովին բաղդաւոր...

Բայց «ամէն սկիզբ ունի իւր վախճանը»—ասուած է դեռ հին ժամանակներում և այդ փիլիսոփայութեան ճշմարտութիւնը զգացին տարաբաղդաբար և մեր ոչխարները։

Անցան բաղդաւորութեան, ապահով երջանկութեան օրերը և անդարձ տարին իրենց հետ ժամանակով խելօք, բարեսիրտ խաշնարածի և խելքը և քաջութիւնը և բարեսրտութիւնը. ծերացաւ, պառաւեց խեղճը, ընկաւ ուժից, կամաց-ակամայ թողեց իւր պաշտօնը, իւր խնամատար հովանաւորութիւնը և քաշուեցաւ մի կողմ. հլու համբերութեամբ սպասելով ահաւոր մահուան անխիղճ մանգաղին...

Եւ մի գեղեցիկ օր մեր ոչխարները մնացին բոլորովին որբ.

Խաշնարածը մեռաւ։

Երեսի վերայ թողուած հօտում սկսուեցան տրտունջ, անհամաձայնութիւններ, երկպառակութիւններ...

—Ի՞նչ կլինի մեր վիճակը. ախ, ինչ կլինի մեր վիճակը, տրտնջում էին դեռ փոքրիկ, անզարգացած գառնուկները և յուսահատ նայում էին մեծերի երեսին, մեծերը արձակում էին մի ինչ որ է անորոշ, խուլ հնչիւն, որ կարելի էր թարգմանել և «այո» և «ոչ»․ի և մի անբնական, կեղծ, չինծու սառնասրտութեամբ դիտում էին փոքրիկ, չուարած գառների անհանգստութիւնը։ Բայց այդ սառնասրտութեան, այդ կարծես անվրդով հանգստութեան տակից յայտնի երևում էր և նոցա, այդ մեծ ոչխարների, անսովոր յուզմունքը. և նոքա նոյնպէս տանջվում էին այդ «ախ, ինչ կլինի մեր վիճակը»—սարսափելի, անորոշ հարցով և նոքա ևս մեքենայաբար դարձնելով իրենց յուսահատ աչքերը մեծ և մեծ այծերի վերայ, վզերը ճկած նայում էին նոցա երեսին, կարծես այնտեղ որոնում լինէին իրենց մաշող հարցի լուծումը. և երևի, ժամանակով բաղդաւոր ոչխարները գտնում էին այնտեղ, այծերի մօտ, իրենց փրկութիւնը. գտնում էին, որովհետև, ճշմարիտ, այծերը այնպէս անվրդով և հանգիստ պահում էին իրենց, այնպիսի մի հպարտ արժանաւորութեամբ շարժում էին իրենց երկար մօրուքը այդ համաոչխարային տագնապի միջոցին, որ մի րոպէ անգամ կարելի չէր կասկածել նոցա մեծութեան և անվեհերութեան մասին, մանաւանդ որ այդ «անվեհերութիւնը և մեծութիւնը» խոշոր տառերով արձանագրուած էր նոցա լուրջ, խելօք, այծային ճակատների վերայ և միայն այդ փոքրիկ անհեռատես գառներն էին, որ չէին

տեսնում այդ, և իզուր ընկնում էին յուսահատութեան և անվերջ տարակուսանքի մէջ։

—Է՜հ... չէք տեսնում... ինչ է... մենք ենք ձեր միակ յոյսը և ապաւէնը... մենք ենք... միայն մենք... կարծես ասում էին այծերը մի այնպիսի վճռողական եղանակով, որ չէր պահանջում ոչ բացասական պատասխան և ոչ զանազան անտեղի «բայց»-եր, «ի հարկէ»-ներ, «սակայն»-ներ և այլն...

—Ի հարկէ դուք էք... միաբերան պատասխանում էին արդէն ծերացած, փորձառու ոչխարները և յանդիմանօրէն նայում էին փոքրիկ, անխելք, շաշուած լակոտների վերայ։

—Դուք էք... միայն դուք...

Եւ սակաւ առ սակաւ վախը, յուսահատութիւնը և մաշող, տանջող երկբայութիւնը հեռանում էր, անհետանում էր նոցա սրտերից և այնտեղ կրկին տիրում էր ճիշտ ոչխարային անվրդով, երջանիկ, խաղաղ անզորութիւնը։ Իսկ այծերը ինքնահաւան բաւականութեամբ շարժում էին իրենց երկար, սրածայր, սպիտակ մօրուքները։

—Ա՜խ, ի․չ կլինի մեր վիճակը, ախ, յանկարծ լսվում էր լռութեան մէջ անփորձ, վախկոտ գառնուկների բոլորովին անտեղի տրտունջը...

—Այծերն են մեր փրկիչները... այծերը, չնչասպառ գոռում էին ոչխարներից աւելի հնատեսները և ցոյց էին տալիս այծերի վերայ։

—Ա՜խ, ինչ կը լինի մեր...

—Այծերը, այծերը, այծերը, անընդհատ լսվում էր ամեն կողմից։

—Բայց ախըր, մենք...

Այծերը և մենք ձեռք ձեռքի տուած, եղբայրական

սերտ կապերով կապուած... սկսում էին ոգևորուած, մի ինչ որ ինքնամոռացութեան զանցառութեան մէջ ոչխարները և ծածկում էին իրենց աղաղակներով գառնուկների թոյլ, անզօր ձայները և հեծկլտանքը...

Եւ կրկին այծերը անվրդով, ինքնահաւան շարժում էին իրենց երկար, սրածայր մօրուքը...

Անցան օրեր, ամիսներ և գառնուկները առաջին անգամը չէր, որ տխուր, յուսաբեկ, ճմլուած սրտով յիշում էին իրենց մեռած խաշնարածին՝ ինքնավար այծերը, որոնց հեռատես և փորձառու ոչխարները ընտրել էին իրենց տէր և պաշտպան, ի տեսև հանեցին հօտի յոյսերը, ապագայի բաղձանքները և ցանկութիւնները։ Օր ըստ օրէ աւելի և աւելի յաճախ կրկնվում էին թշնամի գայլերի անընկալել այցելութիւնները. օր ըստ օրէ սաստկանում էր նոցա անգութ, յանդուգն վարմունքը խեղճ, բայց ժամանակով բաղդաւոր, ոչխարների հետ. օր ըստ օրէ բազմապատկվում էր նոցա չարաչար բռնաբարութիւնների և անմեղ զոհերի թիւը։

Դաշտում, ձորերում, անտառում մութ, ամպած գիշերները լսվում էր գառների և ոչխարների օրհասական, սիրտ պատառող բառաչումը. գայլերի արիւնաթաթախ ճանկերում. լսվում էր և խառնուելով մի ուրիշ անդրադարձի վերջին, մահուան խռխռոցի հետ կրկնվում էր մի հեռու, խուլ անորոշ արձագանքով...

— Իսկ այծերը...

Օ՛օ... այծերը, և ո՞վ կարող էր սպասել, հանդիսացան իբրև ամենաճարպիկ, քաղաքակիրթ այծեր. Նոքա մտերմացան թշնամի գայլերի հետ, գրաւեցին նոցա սէրը, համակրութիւնը և անընդհատ, պարբերական զի-

ջումների «պօլիտիկայ»-ի շնորհիւ կարողացան պահպանել իրենց կաշին, կեանքը, հոգին, բարքն ու վարքը և մինչև անգամ իրենց այծային ժողովրդական լեզուն և աւանդութիւնները։

Նոքա հրապարակաւ խոստովանում էին, որ իրենց ընտրած ինքնավարութեան և միջազգային յարաբերութիւնների եղանակը հիմնուած է ժամանակիս քաղաքակրթութեան ամենաանհրաժեշտ պայմանների վերայ և կարող չէ լինել այլապէս։

—Իրերի այժմեան դրութիւնը, նկատում էին նոքա մշօրէն, և բնութեան անխախտ օրէնքները, ցոյց են տալիս մեզ, որ կեանքը մի անվերջ, սաստիկ պատերազմ է, ուր յաղթողը ուժեղն է. իսկ յաղթուողը—անզօրը... օրինակ ձեզ և Եւրոպան և Ասիան... ուրեմն եթէ ժամանակ առ ժամանակ մեր հօտերից պակասում են ոչխարներ, որոնք զոհ են գնում յարգոյ գայլերի անմեղ ցանկութիւններին...

Բայց այդ իսկ րոպէին ձորում կրկին լսվում էր բառանչող ոչխարի վերջին օրհասական, խռպոտ ճիչը և այծերը երբեք աւելորդ էին համարում շարունակել իրենց պարզաբանութիւնները..........

Եւ պակասում էր օրէց օր երբեմն ոչխարաշատ հօտը, անհետանում էին, փչանում էին ցեղային առանձնայատկութիւնները և դեռ, Աստուած գիտէ ինչ հրաշքով, կենդանի մնացած, թշուառ միշտ դողացող, միշտ չաղ ողորկ խարների և գառնուկների հիւանդ լարուած, բորբոքուած ուղեղով շուտ շուտ անցնում էր միշտ տանջող, միշտ մաշող, բայց երբեք միշտ և անպատասխան հարցը։

Ունինք արդեօք իրաւունք ապրելու.... թէ... թէ...

II.

ՄՈՌԱՑՈՒԱԾ ՇՈՒՆ.

Ամառ է. արևելեան կիսօրեայ կիզող ճառագայթները անողորմ այրում են չորացած, տեղ տեղ ճեղքըռտուած գետնի հողը. անտանելի շոգը փռուել է անշարժ, թըմբրած, տաքացած օդում և կարծես արձանացած, քարացած ծառերի ճիւղերը անզօր կռացել են գետնին իրենց փոշոտ, մուգ-կանաչ թերթիկները։ Ամեն կեանք, ամեն շարժողութիւն կարծես անշունչ, անզգայ թմրել է բնութեան, այդ հրաշալի արևելեան բոթեան կրակոտ համբոյրների և օրօրող, թովչարար գրկախառնութեան մէջ... Միայն շատրուանն է, որ պսպղեցնում է իւր ծիածանագոյն կաթիլները և անվերջ մեղեդիական խոխոջիւնով չփոթում է արևելքի միջնօրեայ անդորրութիւնը։ Փաշայի պալատի լայն, քարած բակում ոչ ոք չէ երևում. միայն հեռու, մութ անկիւնում, պատի ստուերի տակ պառկած է մի շուն. Նրա ցից ցից կանգնած մազերը Աստուած գիտէ երբ թաթախուել են ցեխի մէջ և ժամանակից չորանալով այնպէս էլ մնացել են և կախուել են երկար կեղտոտ կտորտանքներով։ Մեծ երկաթեայ օղակներից հիւսած շղթան անցնելով շան վզովը պինդ ամրացրած էր քարաշէն պատից։

Շունը արթուն է. Նրա կրակոտ աչքերը անդադար վազվզում են բակի մի կողմից միւսը և միայն երբեմն կանգ են առնում կամարակապ արաբական ճաշակով շինուած և զարդարած դրան վերայ. շունը հսկում է. Նրա կիսաբաց բերանից կախ է ընկել երկար, կարմիր լեզուն. Նա ստէպ ստէպ խորը շունչ է քաշում. Նա կամենում է զովացնել իրեն տանջող ծարաւը. բայց ի զուր, Նրա շուրջը չկայ ոչ մի կաթիլ ջուր, ամանը, որ դրած է Նրա մօտ, դեռ երեկուանից բոլորովին դատարկ է. Նա

կրկին սկսում է շրջել իւր փայլող, սուր աչքերը և Նրա հայեացքը ընկնում է շատրուանի վերայ. պարզ, սառը ջուրը բարձրանալով այնտեղ դէպի վեր ընկնում է ցած փշրուելով հազար ու մէկ ցոլացող, գունաւոր կաթիլների. շան աչքերը ագահութեամբ նայում են դէպի շատրուանը. Նրանք աշխատում են հասնել, մօտենալ այդ կարծես կախարդական զովարար շրջանակին, ուր այնպէս հով է և ուր ջուրը այնպէս պարզ... Շունը անհաստատ բարձրանում է տեղից, չաչ մթնած աչքերով նայում է ջրի պսպղուն ելևէջներին և ամբողջ մարմնով մղվում է առաջ և առաջ... բայց մի քայլ և ահա սկսում է չխկչխկալ երկաթեայ շղթան և պինդ սեղմել Նրա վիզը. շունը կանգ է առնում, անմիտ նայում է դէս ու դէն և գլուխը կոր, ծարաւի բորբոքը սրտում դառնում է իւր տեղը...

Իսկ շատրուանը կրկին և կրկին թափում է իւր «կարկաչահոս մարգարիտները»...

Շունը պառկեց և Նրա ցամաքած, այրուող ուղեղում ծագեց մի միտք։

—Է՜հ, իրաւ որ կեանքս շան կեանք է, մտածում էր Նա, ոչ գիշերը հանգստութիւն, ոչ ցերեկը, դեռ տանջուիր էլ, կարծես մաշուածս քիչ է. և ինչ արժէր դըռնապան Ալիին լցնել ամանս ջրով և յետոյ երթալ Բոսֆորի ափը... չէ... արի տես որ անպատճառ հարկաւոր է տանջել ինձ, չարչարել, ծարաւ պահել և ինչ է, որ շուն եմ... էհ, մարդիկ, մարդիկ... և Նա հեգնօրէն ծռմռեց իւր շնային երեսը։

—Ու ինչո՞վ եմ վատ, ասէք խնդրեմ, այն փոքրիկ միշտ սանրած, միշտ լուացած լակոտներից, որոնց փաշայի հարեմխանայի խանումները այնքան սիրում են, փայփայում են և միշտ անուշեղէններով են կերակրում։

Հայաստանի Ազգային գրադարան
NL0445834